ՄԵԼՔՈՆՅԱՆ
ՔՐԻՍՏԻՆԵ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ՍՓՅՈՒՌ-ՔԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՆՉԵՎ ԽՍՀՄ ՓԼՈՒԶՈՒՄԸ



ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա 103652

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՆՉԵՎ ԽՍՀՄ ՓԼՈՒՋՈՒՄԸ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱՀԱՆՁ
ԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆ
ՃԱՐՏԱՐԱԳԵՏ
2018

МИНИСТЕРСТВО ДИАСПОРЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

КРИСТИНЕ МЕЛКОНЯН

АРМЯНСКИЙ ВОПРОС И АРМЯНСКАЯ ДИАСПОРА ДО РАСПАДА СССР

ЕРЕВАН
ЧАРТАРАГЕТ
2018

MINISTRY OF DIASPORA OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUT OF ORIENTAL STUDIES
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

CHRISTINE MELKONYAN

THE ARMENIAN QUESTION AND THE ARMENIAN DIASPORA BEFORE THE COLLAPSE OF THE USSR

YEREVAN
CHARTARAGET
2018

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3
Մ 537

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է
ՀՀ Սփյուռքի նախարարության հրամանագրով,
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Մելքոնյան Ռ.Ֆ.

Մ 537 Հայկական հարցը և սփյուռքահայությունը մինչև ԽՍՀՄ թլուզումը / Ռ. Մելքոնյան; ՀԱՊՀ.-եր., Ճարտարագետ 2018. – 168 էջ:

Գրքում քննարկվում են 1940–1980-ական թվականներին միջազգային ասպարեզում հայկական հարցի և հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման շուրջը ծավալված գործընթացները: Մասնավորապես դիտարկվում են 1945–1947 թթ. խորհրդա-թուրքական հարաբերություններում ծագած ճգնաժամն ու հայկական հարցի հետ կապված հայոց նկեղեցու և Սփյուռքի ձեռնարկած միջոցառումները: Լուսաբանվում է 1960-ական թվականների սկզբին՝ Մեծ եղեռնի 50-րդ տարելիցի նախօրեին, սփյուռքահայության նառանդուն պայքարը հայկական հարցի լուծման և հայերի ցեղասպանության միջազգային ճանաչման համար: Համակողմանի ներկայացվում են 1960–1980-ական թվականներին միջազգային կառույցներում և օտարերկրյա խորհրդարաններում հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործընթացները, ինչպես նաև միջազգային հանրության ու Թուրքիայի արձագանքները:

Գիրքը նախատեսված է մասնագետների և ընթերցող լայն հանրության համար:

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3

ISBN 978-9939-72-640-3

© Մելքոնյան Ռ. Ֆ. 2018

Մ ՈՒ Տ Ք

Հայկական հարցը օտարի տիրապետությունից Հայաստանի ազատագրման, Հայկական լեռնաշխարհում անկախ պետականության վերականգնման, հայ ժողովրդի համախմբման ու այդ նպատակներին հասնելու համար մղված ազգային-ազատագրական պայքարի հիմնահարցերի ամբողջականությունն է[1]: Ներկայումս այն ընկալվում է որպես պատմական արդարությունը վերականգնելու հայության ձգտումը:

Հայկական հարցը մեծապես ուսումնասիրվել է պատմական տարբեր փուլերում: Ստեղծված գրականությունն առանձնանում է ոչ միայն ժամանակի առումով, այլև մեթոդաբանական մոտեցումներով, պատմական նյութի քննության հավաստիության և օբյեկտիվության աստիճանով, որոնք պայմանավորված են ինչպես հետազոտողների մեթոդաբանական տարբեր դպրոցների պատկանելությամբ, այնպես էլ այլ խնդիրներով (գիտական կամ քաղաքական իրադրությունից ելնելով): Նկատենք, սակայն, որ հետազոտողների կողմից խորհրդային տարիների Հայկական հարցի չուրջ սփյուռքահայերի գործունեությունը ուսումնասիրվել է հալանցիկ ձևով, ինչով էլ պայմանավորված է խնդրո առարկա թեմայի ուսումնասիրման կարևորությունը: Քանի որ թեմայի ծավալը բավականին մեծ՝ այն ներկայացվում է ակնարկի տեսքով, սակայն մի ժամանակ մի շարք իրադարձությունների վրա մեծ չեչտադրում ենք արել, քանզի դրանք մինչ օրս խորությամբ ուսումնասիրված չեն եղել:

Նկատի ունենալով աշխատանքի սահմանափակ ծավալը՝ գրքում առանձին չի դիտարկվել Հայկական հարցի վերաբերյալ Սփյուռքում գործող հայկական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների գործունեությունը, ինչպես նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսության և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միջև առկա հայտնի խնդիրներն ու դրանց անդրադարձը Հայկական հարցին: Միաժամանակ, օգտվելով այն հանգամանքից, որ 2013 թ. մեր կողմից հրատարակվել է «ԽՍՀՄ-Թուրքիա հարաբերությունները. Հայկական հարցը, սևծովյան նեղուցների խնդիրը և դաշնակից պետությունները (1945-1947 թթ.)» վերնագրով մենագրությունը, ինչպես նաև որոշ հայ պատմաբանների կողմից բավականին մանրամասն ուսում-

[1] Հայկական հարցի Հանրագիտարան, Երևան, 1996, էջ 59:

նասիրվել են 1960-1980-ական թվականներին Հայկական հարցի լուծման և Հայոց ցեղասպանության ճանաչման ուղղությամբ Խորհրդային Հայաստանում տեղի ունեցած զարգացումները, 1970-ական թվականներից Սփյուռքում սկսված ղինյալ պայքարը, նախընտրել ենք ավելի սեղմ ներկայացնել դրանք, փոխարենը շրջանառության մեջ ենք դրել արխիվային նոր փաստաթղթեր, նաև սփյուռքահայ և օտարալեզու մամուլից քաղված նյութեր, որոնք հնարավորություն են տալիս հիմնավոր պատկերացում կազմել 1940-1980-ական թվականներին Հայկական հարցում Սփյուռքի դերի և գործունեության վերաբերյալ:

***

Որպես Արևելյան հարցի բաղկացուցիչ մաս՝ Հայկական հարցը միջազգային դիվանագիտական փաստաթղթի տեսքով ձևակերպվեց 1878 թ. Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ և Բեռլինի վեհաժողովի պայմանագրի 61-րդ հոդվածներով: 16-րդ հոդվածը նախատեսում էր բարփոխումներ կատարել Արևմտյան Հայաստանում, որի երաշխավորը պետք է դառնար ռուսական բանակը: Մինչդեռ 61-րդ հոդվածով այդ բարեփոխումների երաշխավոր էին դառնում եվրոպական պետությունները, այսինքն՝ բարեփոխումները մեծ տերությունների բազմաթիվ հնարավորություններ ընձեռեցին Թուրքիայի ներքին գործերին միջամտելու, նրա վրա դիվանագիտական և քաղաքական ճնշումներ գործադրելու համար:

Հայերը, հիասթափված Բեռլինի վեհաժողովի արդյունքներից և եվրոպական պետությունների վարած քաղաքականությունից, իրենց միակ փրկությունը տեսնում են թուրքական բռնապետության դեմ ղինված պայքարում: 1880–ական թվականների վերջին և 1890–ականների սկզբին իրար ետևից ասպարեզ եկան հայ ազգային կուսակցությունները, որոնք հետապնդում էին մեկ հիմնական նպատակ՝ օսմանյան տիրապետությունից աղատագրել իրենց բռնաղավթված հայրենիքն ու հայ ժողովրդին, լուծում տալ Հայկական հարցին: Արդյունքում՝ Արևմտյան Հայաստանում ազգային-աղատագրական պայքարն ուժեղացավ, ապստամբություններ տեղի ունեցան Զեյթունում, Վանում, Վասպուրականում, Սասունում, Ալաշկերտում: Օսմանյան իշխանությունները, գիտակցելով, թե ինչ լուրջ վտանգներով է հղի հայաբնակ մարզերում բարենորոգումներ անցկացնելու եվրոպական պետությունների պահանջը, ոչ միայն չկատարեցին

Բեռլինի վերհաժողովում ընդունված 61-րդ հոդվածը, այլև հայերի նկատմամբ ուժեղացրին սոցիալական ու ազգային ճնշումները: Այլ կերպ ասած՝ սուլթան Աբդուլ Համիդ II-ը, հասկանալով Հայկական հարցի դերը մեծ տերությունների քաղաքականության մեջ, որոշեց այն լուծել յուրովի՝ հայ բնակչության ֆիզիկական բնաջնջմամբ:

1890–ական թվականների սկզբներին սուլթանական կառավարությունն ամենայն մանրամասնությամբ մշակեց ջարդերի ծրագիրը՝ հայկական կոտորածները բարձրացնելով պետական մակարդակի[2]: Որոշվեց նախ՝ հաշվեհարդար տեսնել հայ ազատագրական շարժման գլխավոր օջախներից մեկի՝ Սասունի հետ. 1894 թ. հունիս–օգոստոս ամիսներին այստեղ կազմակերպված կոտորածներին զոհ գնաց ավելի քան 10 հազար մարդ: Սասունի իրադարձությունները զայրույթ առաջացրին միջազգային հանրության շրջանում և վերջինիս պահանջով Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կառավարությունները 1894 թ. նոյեմբերին ձևավորեցին հատուկ հանձնաժողով կազմեցին՝ Սասունի կոտորածներն ուսումնասիրելու համար: Վերստին առաջ քաշվեց Հայկական հարցը, և 1895 թ. մայիսի 11-ին մեծ տերությունները Թուրքիային ներկայացրին բարենորոգումների ծրագիր, որը պատմության մեջ հայտնի է «մայիսյան» անվանումով:

Աբդուլ Համիդը, համոզված լինելով, որ մեծ տերությունների միջև առկա հակասությունների պատճառով առաջարկված ծրագիրը մնալու է թղթի վրա, որոշեց շարունակել հայերի կոտորածները: Այդ ընթացքում սպանվեց ավելի քան 300 հազար հայ, բռնի մահմեդականացվեց և տարբեր երկրներ տարագրվեց շուրջ 200 հազարը: Ըստ Վ. Դադրյանի, 1894–1896 թթ. կոտորածները նախազգուշացում էին հայերի համար, քանի որ «այստեղ պատմական շարունակականություն կար, որի ներսում դահիճ/զոհ հարաբերության հանցավոր բնույթը ոչ միայն պահպանվել էր, այլ նաև տարիների ընթացքում ընդգծվել՝ հասնելով մինչև զոհի, այսինքն՝ Օսմանյան կայսրությունում բնակվող հայերի ամբողջական վերացման»[3]:

1908 թ. երիտթուրքական հեղաշրջման արդյունքում Օսմանյան կայսրությունում իշխանության եկած «Միություն և

---

[2] Տե՛ս Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876- 1920 թթ.), Երևան, 2009, էջ 167:

[3] Dadrian V., The History of the Armenian Genocide. Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus, Providence, R.I., Berghahn Books, 1995, p. 161.

առաջադիմություն» կուսակցությունը չարունակեց քրիստոնյաների հանդեպ բռնությունների դարավոր քաղաքականությունը, որն առավել ցայտուն արտահայտվեց հայերի պարագայում: Արդյունքում՝ 1909 թ. ապրիլին երիտթուրքերն իրագործեցին Ադանայի նահանգի հայերի կոտորածը, որին զոհ դնաց ավելի քան 30 հազար հայ[4]:

Բալկանյան պատերազմում Թուրքիայի պարտությունից հետո՝ 1912–1914 թթ., Հայկական հարցը կրկին դարձավ մեծ տերությունների և Օսմանյան կայսրության միջև բանակցությունների առարկա: Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու խնդրի շուրջ սկսվեց գործընթաց, որը չարունակվեց մինչև Առաջին աշխարհամարտի սկիզբը:

Առաջին համաշխարհային պատերազմի հենց սկզբին միանալով Կենտրոնական ուժերին՝ Օսմանյան պետությունը ձգտում էր պահպանել իր տիրապետությունը տասնյակ ժողովուրդների վրա, դրավել Կովկասն ու իրականացնել իր պանթյուրքիստական, հեռուն դնացող հայտնի ծրագրերը, որը կլուծեր նաև Հայկական հարցը: Արդյունքում՝ պատերազմի տարիներին երիտթուրքերի իրականացրած զանգվածային տեղահանության և 1,5 մլն հայի կոտորածի հետևանքով լիովին հայաթափվեց հայերի պատմական հայրենիքը՝ Արևմտյան Հայաստանը: Պատերազմի ավարտին ավելի քան 2900 հայկական բնակավայրեր դատարկված էին[5]:

1918 թ. թուրքական զորքերը փորձեցին դրավել նաև Արևելահայաստանը, բայց Սարդարապատի, Ղարաքիլիսայի և Բաշ Ապարանի հերոսական ճակատամարտերում հայկական ուժերը կանխեցին նրանց առաջխաղացումը ու վերացրին հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման վտանգը:

Այդ նույն օրերին՝ մայիսի 28-ին, հռչակվեց Հայաստանի Հանրապետության ստեղծումը: Եվ չնայած ծանր պայմաններին՝ դա հայ ժողովրդի պատմության կարևորագույն իրադարձություններից էր, քանզի բազմադարյան կորստից հետո վերականգնվում էր ազգային անկախ պետականությունը: Միաժամանակ մայիսի վերջին Բաթումում վերսկսված հայ-թուրքական բանակցություններն ավարտվում են հունիսի 4-ին հաշտության պայմանագիրով, որի

[4] Սիմոնյան Հր., Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ), Երևան, 2009, էջ 336:
[5] Հովհաննիսյան Ա., Հայերի ուծեղրկման գործընթացը Օսմանյան կայսրությունում և քեմալական Թուրքիայում, Երևան, 2016, էջ 16:

համաձայն նորաստեղծ Հայաստանի Հանրապետության տարածքը սահմանափակվում էր Երևանի գավառի մի մասով և հարակից մի քանի շրջաններով՝ 10 հազ. կմ² տարածությամբ[6]: Այս սահմանը պահպանվեց մինչև համաշխարհային պատերազմի ավարտը՝ 1918 թ. նոյեմբերը: Անտանտի և Օսմանյան կայսրության միջև հոկտեմբերի 30-ին կնքված Մուդրոսի զինադադարից հետո թուրքական զորքերը հեռացան Հայաստանի Հանրապետության և Կարսի մարզի տարածքից, վերականգնվեց Ռուսաստանի և Օսմանյան կայսրության միջև եղած 1914 թ. սահմանը, Հայաստանի տարածքը հասավ չուրջ 55 հազ. կմ²:

1919-1920 թթ. Հայաստանի Հանրապետության կառավարության առաջնային հիմնախնդիրներից էր Հայկական հարցի լուծումը՝ մեկ միասնական պետության կազմում միավորելով Հայաստանի արևելյան ու արևմտյան հատվածները: Արդյունքում՝ Հայկական հարցը հայտնվեց 1919 թ. Փարիզի հաշտության վեհաժողովի օրակարգում: Հայաստանի ու հայ ժողովրդի շահերն այստեղ պաշտպանելու համար Փարիզ մեկնեց Հանրապետության պատվիրակությունը՝ Ավետիս Ահարոնյանի նախագահությամբ: Ավելի վաղ՝ 1912 թվականից, Փարիզում գործում էր մեկ այլ՝ Հայ ազգային պատվիրակություն՝ եգիպտահայ մեծահարուստ, հասարակական գործիչ Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ[7]: Այս երկու պատվիրակությունը մեծ աշխատանք կատարեցին Հայկական հարցի նախապատրաստման ու վեհաժողովին ներկայացնելու ուղղությամբ: Ի վերջո, 1920 թ. օգոստոսի 10-ին Ֆրանսիայի Սևր քաղաքում Առաջին համաշխարհային պատերազմում հաղթած դաշնակից պետությունները, այդ թվում՝ Հայաստանը, հաշտության պայմանագիր կնքեցին սուլթանական Թուրքիայի հետ: Վերջինս ճանաչում էր Հայաստանի լիիրավ անկախությունը, առաջին հանրապետությանն էր վերադարձվում պատմական հայրենիքի մի զգալի մասը, ամրագրվում էին պատերազմի հանցագործներին պատժելու և հասցված վնասի փոխհատուցման դրույթները: Ըստ պայմանագրի՝ Թուրքիան ու Հայաստանը համաձայնել են Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում երկու պետությունների միջև սահմանազատումը թողնել ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի որոշմանը: ԱՄՆ-ի նախագահը 1920 թ. նոյեմբերի 22-ին իր որո-

[6] Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, ԲԴ, 1997, էջ 255-256:
[7] Կիրակոսյան Ա., Հայկական հարցը և Հայոց ցեղասպանությունը, Երևան, 2006, էջ 20:

չումը հանձնել է եվրոպական տերություններին: Ըստ դրա՝ Հայաստանը պետք է ստանար Վանի ու Բիթլիսի վիլայեթների ավելի քան կեսը, Էրզրումի վիլայեթի հիմնական մասը, Տրապիզոնի վիլայեթի արևելյան հատվածը՝ ներառյալ համանուն քաղաքը: Ընդհանուր առմամբ՝ այդ տարածքը 90 հազ. կմ² էր, և Հայաստանի Հանրապետության համար ապահովում էր ելք դեպի Սև ծով:

Այսպիսով՝ Սևրի պայմանագրով լուծվելու էր անկախ ու միացյալ Հայաստանի ստեղծման հարցը: Սակայն քեմալական Թուրքիան ոչ միայն չի ճանաչում սուլթանական կառավարության ստորագրած պայմանագիրը, այլև 1920 թ. աշնանը պատերազմական գործողություններ է սկսում Հայաստանի Հանրապետության դեմ, գրավում մի շարք տարածքներ: Հայաստանի կառավարությունը ստիպված էր 1920 թ. դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում ստորագրել «Հաշտության պայմանագիրը» Թուրքիայի հետ, որով պատերազմը համարվում էր ավարտված և որոշվում էին երկու պետությունների միջև սահմանները: Թուրքիային էին անցնում Կարսի մարզը և Սուրմալուի գավառը (ավելի քան 20,7 հազ. կմ²), իսկ Նախիջևանի, Շարուրի, Շահթախթիի շրջանները հայտարարվում էին ժամանակավորապես Թուրքիայի հովանավորության ներքո, ուր հետագայում հանրաքվեի միջոցով հաստատվելու էր հատուկ վարչություն: Նույն օրը Խորհրդային Ռուսաստանի ճնշմամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հրաժարվեց իշխանությունից: Հայաստանի նոր խորհրդային կառավարությունը չճանաչեց Ալեքսանդրապոլի հաշտության պայմանագիրը:

Հայաստանի խորհրդայնացումից հետո՝ 1921 թ. մարտի 16-ին, Մոսկվայում Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի միջև ստորագրվում է բարեկամության և եղբայրության պայմանագիրը, որով Թուրքիային է զիջվում Հայաստանի տարածքները՝ Կարսը, Սուրմալուն, Արդահանը և Արդվինը: Նույն թվականի հոկտեմբերի 13-ին Կարսում մի կողմից՝ Թուրքիայի, մյուս կողմից՝ Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի միջև ստորագրվում է պայմանագիր, որով հիմնավորվում և վերահաստատվում է Մոսկվայի պայմանագրի դրույթները: Դրանով Թուրքիայի և վերոհիշյալ երեք հանրապետությունների միջև հաստատվում են պետական նոր սահմանները, ինչը պահպանվում է մինչ օրս:

Ինչ վերաբերում է Սևրի պայմանագրի ճակատագրին, ապա քեմալականները, օգտվելով միջազգային նոր իրադրությունից, 1922–1923 թթ. Լոզանի խորհրդաժողովում հասան վերջինիս վերա-

նայմանը: Մասնակից պետությունները՝ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան, Հունաստանը, Ճապոնիան, Ռումինիան, Հարավսլավիան, ինչպես նաև դիտորդի կարգավիճակով՝ ԱՄՆ, ճանաչեցին Մուստաֆա Քեմալի՝ Անկարայի կառավարությունը, և նրա իրավունքն այն բոլոր տարածքների վրա, որոնք Սևրի պայմանագրով տրվելու էին Հայաստանին: Ավելին, նրանք ճանաչեցին Թուրքիայի նոր սահմանները, որոնք ընդգրկել են նաև Արևելյան Հայաստանի չրջանները՝ Կարսը, Արդահանը, Արդվինն ու Սուրմալուն:

Լոզանի խորհրդաժողովի աշխատանքների ընթացքում քննարկվում է նաև Հայկական հարցը: Հայաստանի Հանրապետության պատվիրակությանը պաշտոնապես չի թույլատրվում մասնակցել խորհրդաժողովին: Այդուհանդերձ, Ազգային պատվիրակության հետ համատեղ մեծ տերություններին ներկայացվում է մի հուշագիր, որն առաջարկում էր Հայկական հարցի երեք հնարավոր լուծում.

- Հայկական ազգային օջախի ստեղծում,
- Հայաստանի ընդարձակում՝ նրան կցելով Արևմտյան Հայաստանի մի մասը դեպի ծով ելքով,
- Հայկական ազգային օջախի ստեղծում Կիլիկիայում:

Խորհրդաժողովի ընթացքում ազգային փոքրամասնությունների հարցի կապակցությամբ մեծ տերություններն անդրադառնում են նաև Հայկական ազգային օջախի գաղափարին: Թուրքական պատվիրակությունը, սակայն, կտրականապես մերժում է վերջինիս հետ կապված առաջարկները՝ պատճառաբանելով, որ Թուրքիայի ո՛չ արևելյան նահանգներում, ո՛չ էլ Կիլիկիայում չկա որևէ տարածք, որի բնակչության մեծ մասը թուրքեր չլինեն: Հայկական հարցը վերջին անգամ շոշափվում է 1923 թ. հուլիսի 17-ի նիստում և, վերածվելով Հայ գաղթականության հարցի, փոխանցվում է Ազգերի լիգային: Հարկ է նշել, որ Լոզանի պայմանագրում չի հիշատակվում ո՛չ Հայաստանը, ո՛չ էլ հայերը:

Հետագայում Հայկական տարածքների պահանջատիրության հարցն իրենց վրա վերցրին ցեղասպանությունից փրկված և աշխարհի բազմաթիվ երկրներում ապաստան գտած արևմտահայության բեկորները, որոնց գործունեությունն ավելի գործուն դարձավ 1940-ական թթ.: Աշխարհասփյուռ հայության համար այն դառնում է հայկական հողերի՝ հայրենիքի վերադարձնելու պայքարի հարց, որը 1970-ական թվականներից արտահայտվում է ցեղասպա-

նության միջազգային ճանաչմանն ու հատուցմանն ուղղված չարժման ձևով:

Այսպիսով, թուրքական իշխանություններին հաջողվեց հալածանքի, բռնի մահմեդականացման, զանգվածային կոտորածների և տեղահանության քաղաքականության միջոցով, որի գագաթնակետը 1915 թ. Մեծ եղեռնն էր, մաքրել հայ բնակչությունից գրեթե ամբողջ կայսրության տարածքը: Հայ ժողովրդի դեմ իրագործված ոճիրը լիովին համապատասխանում է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1948 թ. «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժելու մասին» հատուկ կոնվենցիայի բնորոշմանը, ըստ որի՝ «Ցեղասպանության տակ հասկացվում են այն գործողությունները, որոնք կատարվում են լրիվ կամ մասնակիորեն այս կամ այն ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խումբը ոչնչացնելու մտադրությամբ»[8]:

[8] Ռոչարյան Վ., Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում, Երևան, 2014, էջ 9:

ԳԼՈՒԽ I

ՀԱՑԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ - ԹՈՒՐՔԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԸ (1940-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ)

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին՝ (1939-1945 թթ.), Թուրքիայի կողմից ֆաշիստական Գերմանիայի օգտին հետևողականորեն իրականացված, այսպես կոչված, «ակտիվ չեզոքության» քաղաքականությունը պատերազմի ավարտից հետո հանդեցրեց խորհրդա–թուրքական հարաբերությունների վատացմանը, ինչը նպաստավոր պայմաններ էր ստեղծում Հայկական հարցի բարձրացման և լուծման համար: Արդյունքում միջազգային ասպարեզում երկարատև լռությունից հետո, 1945 թվականին Խորհրդային Միությունն առաջ է քաշում Թուրքիայի կողմից բռնազավթված հայկական հողերի հարցը և այն դարձնում մեծ տերությունների քննարկման առարկա: Սկզբնական շրջանում խոսքը վերաբերում էր ոչ թե ամբողջ Արևմտյան Հայաստանի տարածքին (թեպետ սփյուռքահայությունը մեծ տերություններից պահանջում էր իրականացնել 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի պայմանագիրը), այլ միայն Կարսին ու Արդահանին, որոնք 1921 թ. Մոսկվայի ու Կարսի պայմանագրերով տրվել էին Թուրքիային:

Հետպատերազմյան տարիներին ծագած՝ ինչպես սևծովյան նեղուցների, այնպես էլ հայկական վերոհիշյալ տարածքների հարցերը ոչ հրապարակայնորեն արծարծվել էին դեռևս 1940 թ. նոյեմբերին՝ ԽՍՀՄ արտգործնախարար Վ. Մոլոտովի Բեռլին կատարած պաշտոնական այցի ընթացքում: Գերմանական կողմը «Թուրքիային վերաբերող զրույցում ասում էր, թե իրենք դեմ չեն նույնիսկ, որ ԽՍՀՄ-ը Թուրքիայից վերցնի Կարսը և Արդահանը»[9]: Ըստ Նյուրնբերգյան փաստաթղթերի՝ Վ. Մոլոտովը համաձայնվում է Թուրքիայի վրա համատեղ ճնշում գործադրելու գերմանական առաջարկի քննարկմանը[10]: Հիմնվելով այս իրողության վրա՝ մի շարք պատմաբաններ պնդում են, թե իրականում Ա. Հիտլերը Վ. Մոլոտովին տվել է Թուրքիայի դեմ գործելու լիակատար ազատություն և նույնիսկ առաջարկել է օգնություն, սակայն խորհրդային կողմը,

[9] Mendelssohn P., The Nuremberg Documents, London, 1946, p. 258.
[10] Նույն տեղում, 259 էջ:

ճկուն քաղաքականություն վարելով, դա մերժել է[11]: Հետաքրքիրը է, որ արդեն մեր օրերում որոշ ադրբեջանցի հեղինակներ փորձում են կեղծել պատմությունը և ապացուցել, որ Թուրքիայի հետ կապված հարցերը խորհրդա-գերմանական բանակցություններում քննարկվել են ոչ թե Ա. Հիտլերի, այլ ԽՍՀՄ ղեկավար Ի. Ստալինի նախաձեռնությամբ[12]: Ինչևէ, փաստն այն է, որ խնդրո առարկա հարցը լայն քննարկման նյութ է դառնում ավելի ուշ՝ Երկրորդ աշխարհամարտի ավարտից անմիջապես հետո, 1945 թվականին:

Այս հիմնախնդրի վերաբերյալ բրիտանական դիվանագիտական շրջանակներում դեռևս մինչ պատերազմի ավարտն արդեն առաջին կանխատեսումներն էին արվում: Այսպես, 1945 թ. սկզբներին Մեծ Բրիտանիայի արտգործնախարարության պատրաստած «Ռուսաստանի արտաքին քաղաքականության պատմական միտումները» վերնագրով փաստաթղթում ըստ ամենայնի վերլուծվում և գնահատվում էին խորհրդա–թուրքական հարաբերությունները և նշվում էր, որ երկու երկրների միջև գոյություն ունեցող խնդիրներից առաջնայինը սևծովյան նեղուցների վերահսկումն է, երկրորդականը՝ կովկասյան սահմանի փոփոխությունը: Լոնդոնը վստահ էր, որ Մոսկվան այդ հարցը ևս դնելու է Անկարայի առջև[13]: Անգլիական «The Economist» թերթը 1945 թ. հունվարին իր «Ռուսաստան և Միջին Արևելք» խորագրի տակ անվերապահ գրել է. «Խորհրդային Հայաստանը վերջապես կարող է պահանջել վերանայել 1921 թ. Թուրքիայի և Ռուսաստանի միջև կնքված Կարսի պայմանագիրը»[14]:

Հարց է ծագում. իսկ ինչու՞ հայկական տարածքների խնդիրը միջազգային ասպարեզում արդիական դարձավ միայն 1945 թվականին և ինչու՞ խորհրդային կողմը 1940 թ. հրաժարվում էր այն քննարկելուց: Աշխարհում ի՞նչ տեղաշարժեր էին կատարվել այդ ընթացքում: Պատասխանը մեկն է. փոխվել էր քաղաքական իրադրությունը, միջազգային ասպարեզում ԽՍՀՄ-ն այլևս չէր դիտվում իբրև մեկուսացված երկիր, այլ հանդես էր գալիս որպես աշխարհակալ տերություն, որի բանակը համարվում էր անպարտելի:. Ըստ

---

[11] Նույն տեղում:

[12] Гасанлы Дж., СССР-Турция: от нейтралитета к холодной войне. 1939–1953, М., 2008, с. 76.

[13] Служба Внешней Разведки Российской Федерации, Архив СВР России, Сборник документов (1935-1945), М., 2006, с. 168.

[14] «The Economist» (London), 23. I. 1945.

այդմ՝ փոխվել էր Խորհրդային Միության վերաբերմունքը Թուրքիայի նկատմամբ, այդ երկրների միջև նախկին բարեկամական հարաբերությունների մասին այլևս խոսք չէր կարող լինել: Պատերազմի տարիներին Անկարայի ոչ կոռեկտ պահվածքին ակնդետ հետևող Մոսկվան այդ կերպ փորձում էր ներկայացրել իր «վերջնադիրը»:

Բացի այդ, Խորհրդային կառավարությունն իր առջև խնդիր էր դրել վերականգնել ցարական Ռուսաստանի 1914 թ. պետական սահմանները[15]: Այդ ծրագիրն իրագործելու ճանապարհին անհրաժեշտ էր վերահաստատել Ռուսաստանի և Օսմանյան կայսրության միջև մինչև Առաջին համաշխարհային պատերազմը եղած 1914 թ. պետական սահմանը, այսինքն՝ վերադարձնել Կարսն ու Արդահանը: Դա նույնպես հիմնավոր պատճառ էր, որ 1945 թ. Հայկական հարցը միջազգային հարաբերություններում կրկին քննարկման առարկա դարձավ: Արդյունքում 1945 թ. մարտի 19–ին ԽՍՀՄ-ի արտգործնախարար Վ. Մոլոտովը Թուրքիայի դեսպան Ս. Սարպերին տեղեկացնում է, որ Խորհրդային Միությունը մտադիր է չեղյալ հայտարարել 1925 թ. դեկտեմբերի 17-ին Փարիզում կնքված խորհրդա-թուրքական բարեկամության պայմանագիրը[16]: Այն ստորագրելուց հետո երեք անգամ տարբեր ժամկետներով երկարաձգվել է: Տարիների ընթացքում պայմանագրի կետերը լրացվել են, ավելացվել են նոր հավելվածներ, որոնք կարգավորում էին երկու երկրների միջև ծագած խնդիրները: Վերջին անգամ այն երկարաձգվել էր 1935 թ. նոյեմբերի 7-ին՝ 10 տարով, այսինքն՝ մինչև 1945 թ. նոյեմբերի 7-ը: Պայմանագրի համաձայն՝ կողմերը պարտավորվել էին այն չերկարաձգելու դեպքում նախօրոք՝ վեց ամիս շուտ, այդ մասին տեղեկացնել իրար: Ըստ այդմ, Խորհրդային Միությունը, ինչպես նախատեսված էր, մարտին Թուրքիային տեղեկացնում է իր մտադրության մասին՝ պատճառաբանելով, որ աշխարհաքաղաքական իրավիճակը փոխվել է, և իրենք ցանկանում են փոփոխություն մտցնել փաստաթղթում[17]: Հանդիպման ժամանակ ԽՍՀՄ-ում Թուրքիայի դեսպան Ս. Սարպերը փորձում է պարզել, թե խոսքը ի՞նչ փոփոխությունների մասին է, սակայն որոշակի պատասխան չի ստա-

---

[15] Балиев А., Мечта о "Великой Армении". В 1945–1948 гг. Сталин готовился отобрать у Турции армянские земли. - Аналитический интернет-журнал РПМонитор, http://www.rpmonitor.ru/ru/detail_m.php?ID=9766, 2008.

[16] Внешняя политика Советского Союза в период Великой Отечественной войны, т. III, М., 1946, с. 146.

[17] «Известия» (Москва), 25. III. 1945.

նում: ԽՍՀՄ–ի արտգործնախարար Վ. Մոլոտովը միայն ասում է. «Նախ, ցանկալի է իմանալ Անկարայի արձագանքն այս որոշման վերաբերյալ, որից հետո էլ կկոսենք նախապայմանների մասին»[18]:

Մինչ արևմտյան մամուլը կատարված իրողության չուրջ բուռն քննարկումներ էր ծավալել, թուրքականը, հետևելով կառավարության հրահանգին, լռում էր[19]: Միայն 18 օր անց՝ 1945 թ. ապրիլի 7-ին է թուրքական կողմը արձագանքում Խորհրդային Միության հայտարարությանը: Կառավարության անունից Անկարայում ԽՍՀՄ–ի դեսպան Ս. Վինոգրադովին տեղեկացնում են, որ ընդունում են 1925 թ. պայմանագիրը չերկարաձգելու ԽՍՀՄ-ի որոշումը և պատրաստ են կնքել նոր պայմանագիր՝ ցանկացած պայմանով: Մոսկվայից Անկարա ժամանած Թուրքիայի դեսպան Ս. Սարպերի և ԽՍՀՄ–ի դեսպան Ս. Վինոգրադովի միջև սկսվում են ոչ պաշտոնական բանակցություններ, որոնց արդյունքում կողմերը համաձայնության են գալիս, որ կնքվելիք նոր պայմանագիրն իր էությամբ չի տարբերվելու նախորդից[20]:

Վերադառնալով Մոսկվա՝ Ս. Սարպերը հունիսի 7–ին հանդիպում է ԽՍՀՄ–ի արտգործնախարար Վ. Մոլոտովի հետ: Ի պատասխան թուրքական կողմի այն հայտարարությանը, թե իրենք պատրաստ են ցանկացած պայմանով նոր պայմանագիր կնքել Մոսկվայի հետ, ԽՍՀՄ-ը ներկայացրել է իր պահանջները՝ տեղեկացնելով, որ մինչև նոր պայմանագիրը ստորագրելն անհրաժեշտ է լուծել ինչպես սևծովյան նեղուցների վերահսկման հարցը, այնպես էլ կարգավորել խորհրդա-թուրքական սահմանը[21]: Եվ չնայած թուրքիան ձգտում էր վերականգնել խորհրդա-թուրքական պայմանագիրը, սակայն նեղուցների ու սահմանի մասին պահանջներն անընդունելի էին նրա համար: Ուստի, դեսպան Ս. Սարպերը հիշեցնում է, որ «Խորհրդային Միության համաձայնությամբ սահմանների կարգավորման դաշնագիրը կնքվել է 1921 թ. (խոսքը Կարսի պայմանագրի մասին է. – *Ֆ.Մ.*)»[22]: Ի պատասխան՝ Վ. Մոլոտովը նկատում է. «Բայց այդ ժամանակ Խորհրդային Միությունը

---

[18] Arcayürek C., Şeytan Üçgeninde Türkiye, Ankara, 1987, s. 290.

[19] Նույն տեղում:

[20] Zubok V., Pleshakov C., Inside the Kremlins Cold War. From Stalin to Khrushchev. Harvard University Press, 1996, p. 91.

[21] Родионов А., Записки посла СССР в Турции 1974–1983 гг. – Новая и новейшая история, М., 1999, № 1, с. 126.

[22] Архив внешней политики Российской Федерации (այսուհետ՝ АВП РФ), ф. 06, оп. 7, п. 2, д. 31 (Из дневника В. Молотова. Прием посла Турецкой Республики С. Сарпера. 07. 06. 1945 г.), л. 1–2.

թուլլ էր, իսկ այժմ ուժեղ է: Այդ պատճառով էլ պայմանագրում փոփոխությունների առաջարկ է արվել»[23]:

Հանդիպումից անմիջապես հետո Թուրքիայի դեսպանը հեռագիր է ուղարկում Անկարա՝ ներկայացնելով ԽՍՀՄ-ի առաջ քաշած պահանջները[24]: Նույն օրը Վ. Մոլոտովը նույն բովանդակությամբ հեռագիր է հղում Անկարայում ԽՍՀՄ-ի դեսպան Ս. Վինոգրադովին: Եվ ահա, հաշված օրեր անց՝ հունիսի 12-ին, Թուրքիայի վարչապետ Շ. Սարաջօղլուն մոսկովյան բանակցությունների մասին մանրամասներ է հայտնում ԱՄՆ-ի դեսպան Է. Վիլսոնին: Վերջինս էլ իր կառավարությանն ուղղված գրությունում գրում է, թե ԽՍՀՄ-ի պահանջները Թուրքիայում լուրջ քննարկման առարկա են դարձել, և որ Անկարան պատրաստվում է Վ. Մոլոտովի հետ հաջորդ հանդիպմանը[25]:

Կողմերի միջև երկրորդ հանդիպումը կայացել է հունիսի 18-ին: ԽՍՀՄ արտգործնախարարը Թուրքիայի դեսպանին կրկին հայտնել է, թե իրենց երկրների միջև կնքվելիք նոր պայմանագիրը հնարավոր է միայն հունիսի 7-ին ներկայացված պահանջների ընդունման դեպքում՝ պատճառաբանելով, թե Խորհրդային Հայաստանը հողի կարիք ունի[26]: Ըստ փաստաթղթերի՝ հանդիպման վերջին րոպեներն անցել են բավական լարված: Հունիսի 22-ին Անկարայում ԽՍՀՄ-ի դեսպան Ս. Վինոգրադովը Թուրքիայի կառավարությանը մեկ անգամ էլ է տեղեկացնում, որ պաշտոնական Մոսկվայի տեսակետը չի փոխվել, և որ իր երկիրը պատրաստ է նոր պայմանագիր կնքել, եթե Անկարան ընդունի առաջարկված պայմանները[27]: Ըստ թուրք պատմաբան Ա. Դելիօրմանի՝ Ս. Վինոգրադովն ասել է, որ պահանջվող Կարսն ու Արդահանն անհրաժեշտ են ոչ թե Խորհրդային Ռուսաստանին, այլ Խորհրդային Հայաստանին, քանի որ վերջինիս տարածքը չատ փոքր է[28]: Պաշտոնական Անկարայի պատասխանը եղել է այն, որ չի կարող ընդունել Թուրքիայի շահերը ոտնահարող պահանջներ[29]:

---

[23] Նույն տեղում:

[24] Akalın C., Soğuk Savaş ABD–Türkiye–1. Olaylar –Belgeler 1945–1952, İstanbul, 2003, s. 198.

[25] Foreign relations of the United States diplomatic paper (այսուհետ՝ FRUS), Diplomatic Papers, 1945. The Near East and Africa, v. VIII, Washington, 1969, p. 1234.

[26] АВП РФ, ф. 06, оп. 7, п. 2, д. 31 (Из дневника В. Молотова. Прием посла Турецкой Республики С. Сарпера. 18. 06. 1945 г.), л. 33.

[27] «Ազդակ» (Բեյրութ), 11. V. 1993:

[28] Deliorman A., Türklere Karşı Ermeni Komiteciler, İstanbul, 1973, s. 206.

[29] Российско – турецкие отношения: история, современное состояние и перспективы, М., 2003, с. 59.

Այսպիսով, 1945 թ. մարտի 19-ին ԽՍՀՄ-ի կողմից 1925 թ. դեկտեմբերի 17-ի խորհրդա–թուրքական բարեկամության պայմանագրի չեղարկումը բարենպաստ պայմաններ էր ստեղծել միջազգային ասպարեզում Հայկական հարցի վերարծածման համար: Կրկնենք. թեպետ Թուրքիան ձգտում էր վերականգնել խորհրդա–թուրքական պայմանագիրը, սակայն ամենևին ո՛չ՝ հայկական հողերի վերադարձի հաշվին: Պաշտոնական Անկարան պնդում էր, որ Կարսն ու Արդահանը 1921 թ. իրենց են անցել իրավականորեն, քանի որ մինչև 1877-1878 թթ. ռուս–թուրքական պատերազմն այդ տարածքները պատկանել են Օսմանյան Թուրքիային, և միայն 1878 թ. են դրանք անցել Ռուսաստանին: Նման «հիմնավորմամբ», ըստ թուրքերի, խնդրո առարկա տարածքները «թուրքական» են, բացի այդ, այնտեղ հիմնականում բնակվում են թուրքեր, և ոչ թե՝ հայեր: Թուրքական մամուլը գրում էր. ... «Խորհրդային պահանջները բացահայտ ուժի քաղաքականության անցկացում է»՝ վստահեցնելով, թե ԽՍՀՄ-ն իր քայլերում վճռական չէ, քանի որ վախենում է հանդիպել ուժեղ դիմադրության[30]:

Այնուամենայնիվ, հասկանալի է, որ Թուրքիան հայտնվել էր դժվարին իրավիճակում, որից դուրս գալու համար նրան անհրաժեշտ էր ձեռք բերել հզոր դաշնակից, որը կօգներ դիմակայելու Խորհրդային Միությանը: Թուրքիայի համար այդպիսի դաշնակիցներ դարձան Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ը: Թեպետ, հանուն արդարության, հարկ է նշել, որ վերջիններս սկզբնական շրջանում խորհրդա–թուրքական հարաբերություններում աչքաթող չեղոքություն պահպանել: Այդ են վկայում 1945 թ. ապրիլին Սան Ֆրանցիսկոյում կայացած ՄԱԿ-ի հիմնադիր ժողովում թուրքական պատվիրակության անդամ Ն. Էրիմի հաղորդումները. «Խորհրդային Միութեան յուշադիրէն ետք, Թուրքիա Մ. Նահանգներուն դիմեց եւ հաղորդեց թէ Ստալինի պահանջներուն ժխտողական պատասխան պիտի տայ. կրնա՞ք մեզի օգնել»[31]: Ըստ թուրք դիվանագետի, ԱՄՆ-ը պատասխանել է. «Պատերազմէն հոգնած ենք, զինուորները արձակում կը պահանջեն, տասը հազար մղոնը կտրելով ձեզի օժանդակութեան հասնիլ անկարելի է. համաձայնեցէք Խորհրդային Միութեան հետ»[32]: Անկարայի կառավարությունն օգնության խնդրանքով դիմել է

---

[30] ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ. Обзор турецкой прессы, февраль-июнь, Об отношениях между Турцией и СССР, 1946, с. 3.
[31] «Ազդակ», 5. X. 1977:
[32] Նույն տեղում:

նաև Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Ա. Իդենին, որը համաձայնեցրել է ամերիկացիների հետ՝ ասելով. «Ու՛ր որ է՝ բանակին մեջ յեղափոխութիւն պիտի ծագի, համաձայնեցէ՛ք Խորհրդային Միութեան հետ»[33]:

Խնդրո առարկա հարցում Մեծ Բրիտանիայից օգնություն խնդրելու նպատակով 1945 թ. հուլիսին Լոնդոն մեկնած Թուրքիայի արտգործնախարար Հ. Սաքան հայտնվել էր բավականին ծանր կացության մեջ: Արտգործնախարար Ա. Իդենը նրան հասկացրել էր, որ ցանկանում է նեղուցների հարցը զատել «թուրք-սովետական դաշնագրի վերականգնման խնդրէն, այսինքն Կարսի և Արդահանի Ռուսիոյ թողուելու հարցէն»[34]: Այս առաջարկը, իհարկե, անընդունելի էր Անկարայի համար, քանի որ նրա համար նեղուցներն ու արևելյան նահանգները նույն կարևորությունն ունեին: Լոնդոնում նույնպես Հ. Սաքան չեչտել էր, որ իրենք ցանկանում են բարելավել խորհրդա-թուրքական հարաբերությունները, սակայն դա չեն կարող անել Կարսի ու Արդահանի կորստի գնով[35]:

Այս ամենը, սակայն, չխանգարեց, որ ԽՍՀՄ-ի կողմից Թուրքիային ներկայացված պահանջները քննարկվեն մեծ տերությունների ղեկավարների բոլոր հանդիպումների ընթացքում (և՛ պաշտոնական, և՛ ոչ պաշտոնական ձևով): Դրանք առաջին անգամ արծարծվեցին 1945 թ. հուլիսին՝ Պոտսդամի խորհրդաժողովում: Նախ՝ Թուրքիային ներկայացված պահանջների հարցի շուրջ խոսվել է ԽՍՀՄ–ի և Մեծ Բրիտանիայի արտգործնախարարների հուլիսի 16–ի առանձնազրույցի ընթացքում[36], այնուհետև քննարկումը շարունակվել է հուլիսի 22-23–ին Պոտսդամում ԽՍՀՄ-ի ղեկավար Ի. Ստալինի, Մեծ Բրիտանիայի վարչապետ Ու. Չերչիլի և ԱՄՆ-ի նախագահ Հ. Տրումենի հանդիպման ժամանակ[37]:

Թուրքիայից տարածքային պահանջը և խորհրդա-թուրքական նոր սահմանի գծման հարցը Պոտսդամում իր լուծումն այդպես էլ չստացավ, քանի որ մեծ տերությունները որոշեցին դա թողնել երկու երկրների հայեցողությանը, այսինքն՝ խնդիրը պետք է լուծվեր երկկողմ բանակցությունների ընթացքում: Այնուամենայնիվ, նկատենք, ողջ հայությանը հուզող հողային պահանջը հայտնվեց

---

[33] Նույն տեղում:
[34] «Ժողովուրդ» (Փարիզ), 18. VIII. 1945:
[35] Նույն տեղում:
[36] Советский Союз на международных конференциях периода Великой Отечественной войны, т. VI, М., 1980, с. 37.
[37] Նույն տեղում, էջ 134-149:

մեծ տերությունների բանակցային սեղանին, դրվեց չընդառաջության մեջ:

1945 թ. հուլիսին սփյուռքահայ և արտասահմանյան մամուլը, անդրադառնալով Պոտսդամում տեղի ունեցած վերոդրյալ հանդիպումներին, մի նախադասությամբ հաղորդում էր, որ խորհրդաժողովում խոսվել է նաև Հայաստանի սահմանների մասին: Սակայն այս խնդրի շուրջ քննարկումների մանրամասները երկար տարիներ չէին հիշատակվում խորհրդային գրականության մեջ: Հարկ է հիշեցնել, որ դրանք չէին ընդգրկվել նույնիսկ 1970 թ. Երևանում հրատարակված Պոտսդամի խորհրդաժողովի փաստաթղթերի ժողովածուում, ի տարբերություն այն նյութերի, որոնք անդրադարձել էին նեղուցների հարցին[38]: Առաջիններից մեկը ԱՄՆ-ի նախագահ Հ. Տրումենն էր, որ տարիներ անց իր հուշերում հիշատակել է Պոտսդամում մեծ տերությունների ղեկավարների միջև Կարսի ու Արդահանի հարցի շուրջ տեղի ունեցած մտքերի փոխանակման մասին[39]:

Պոտսդամի խորհրդաժողովից հետո էլ Խորհրդային Միությունը, բնականաբար, շարունակում էր Թուրքիայի նկատմամբ որդեգրած տարածքային պահանջներին վերաբերող քաղաքականությունը: Այսպես, օգոստոսի 18-ին ԽՍՀՄ-ի արտգործնախարարության պատրաստած փաստաթղթի համաձայն՝ Թուրքիան պարտավոր էր Հայաստանին ու Վրաստանին վերադարձնել 26000 կմ^2 տարածք, որից 20500 կմ^2 նախատեսված էր Հայաստանի, իսկ 5500 կմ^2՝ Վրաստանի համար[40]: Ավելի ուշ՝ հոկտեմբերին, Ի. Ստալինը հաստատել է պահանջված տարածքների ապագա ղեկավարներին. Կարսի մարզկոմի քարտուղար է նշանակվել Ա. Քոչինյանը, իսկ Վրաստանի համար նախատեսվող տարածքներինը՝ Մ. Ցխակայան[41]:

Միևնույն ժամանակ ԽՍՀՄ կառավարությունը, ըստ էության, վերանայել է Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Վրաստանի միջև վերադարձվելիք տարածքների հարցում նախապես արված բաժանումը: Այդ է վկայում դեկտեմբերի 14-ին Թբիլիսիի «Կոմունիստ» թերթում վրաց ակադեմիկոսներ Ս. Ջանաշիայի և Ն.

---

[38] Թևհրան, Յալթա, Պոտսդամ: Փաստաթղթերի ժողովածու, Երևան, 1970, էջ 442–443:

[39] Truman H., Memories by Harry Truman, Year of Decision, New York, 1965, p. 413–414.

[40] Балиев А., Мечта о «Великой Армении». В 1945–1948 гг. Сталин готовился отобрать у Турции армянские земли. - Аналитический интернет-журнал РПМонитор, http://www.rpmonitor.ru/ru/detail_m.php?ID=9766, 2008.

[41] Նույն տեղում:

Բերձեռնիչվիլու՝ «Թուրքիայի նկատմամբ ունեցած մեր օրինական պահանջների մասին» վերնագրով հրապարակված նամակը[42]: Դրանում նրանք Թուրքիային ներկայացրած իրենց հողային պահանջները «հիմնավորել» են՝ «քննութեան առնելով» վրաց պատմութեյունը, սկսած խեթերից ու սուալրիներից՝ հասցնելով մինչև արդի ժամանակաշրջանը: Նամակն ավարտվում է հետևյալ տողերով. «Վրացի ժողովուրդը պետք է ետ ստանա իր հողերը, որոնցից երբեք չի հրաժարվել և երբեք էլ չի հրաժարվի: Մենք նկատի ունենք Արդահանը, Արդվինը, Օլթին, Տարտումը, Սպերը, Բայբուրթը, Գյումուշհանեն և Արևելյան Լազիստանը»[43]: Դրանից պարզ է դառնում, որ վրացիները բացի Կարսից, Թուրքիայից պահանջված մյուս տարածքները վրացական էին համարում, ավելին՝ առաջ էին քաշում նոր պահանջներ: Անշուշտ, հասկանալի է, որ այս ամենն արվել է Ստալինի դիտութեյամբ, քանի որ առանց նրա նախօրոք թուլյտվութեյան ոչ ոք չէր համարձակվի նման բովանդակութեյամբ հոդված տպագրել: Դա է հաստատում նաև այն փաստը, որ դեկտեմբերի 20-ին «Պրավդա», «Իզվեստիա» և «Կրասնայա Զվեզդա» թերթերը վրացերենից թարգմանելով ռուսերեն՝ արտատպել են այդ նամակը:

Այսպես կոչված, «վրացական պահանջները» էլ ավելի խորացրին ԽՍՀՄ-ի և Թուրքիայի միջև եղած ճգնաժամը: Դեկտեմբերի 20-ին Թուրքիայի մեջլիսում ղորավար Քյազիմ Կարաբեքիրը, անդրադառնալով ԽՍՀՄ-ի տարածքային պահանջներին, հայտարարել է. «Լենինը և Չիչերինը չատ անգամ են կրկնել, որ Կարսի դաշնագրով գծված սահմանները վերջնական են: Իսկ եթե Ռուսաստանը ցանկանում է վերագրավել Կարսի լեռնադաշտը, ապա դա նշանակում է, որ ձգտում է ապահովել ամբողջ Փոքր Ասիայի մեջ իր ներկայութեյունը»[44]: Ըստ նրա, սևծովյան նեղուցները Թուրքիայի կոկորդն են, իսկ Կարսի «լեռնադաշտը» երկրի ողնաշարն է, եթե վերջինս կոտրեն, ապա «իրենք ընդմիշտ կկորչեն»: Այդ պատճառով թուրքերը պատրաստ են կռվելու և զենքով պաշտպանելու իրենց հողերը, չեչտել է Կարաբեքիրը[45]: Այդ ամենն ասելով՝ թուրք ղորավարը միմիայն հաստատում էր Թուրքիայի պաշտոնական տեսակետը, քանի որ մինչ այդ՝ նոյեմբերի 1-ին, մեջլիսում

---

[42] «Правда» (Москва), 20. XII. 1945.
[43] Նույն տեղում:
[44] «Ժողովուրդ», 26. XII. 1945:
[45] Նույն տեղում:

նուչնանման հայտարարությամբ հանդես էր եկել Թուրքիայի նախագահ Ի. Ինյոնյուն: Նա ասել էր. «... բացեիբաց կհայտարարենք, որ որևէ մեկուն պարտք չունինք վճարելիք, մեր իրավունքներուն և հողերուն վրայ կապրենք պատվավոր մարդու պես և կը մեռնենք պատվավոր մարդու պես»[46]:

Խորհրդային Միությունը, անտեսելով Թուրք պաշտոնյաների ռազմատենչ հայտարարություններն ու չարունակելով Թուրքիայի նկատմամբ իր պահանջատիրությունը, միաժամանակ ակտիվացնում է իր հարաբերությունները սփյուռքահայության հետ: 1945 թ. հունիսի վերջին թուլյատրելով Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրությունները՝ Խորհրդային Միության ղեկավար Ի. Ստալինը, կարծես թե, դնում է արտերկրում բնակվող հայերի հետ համագործակցության հիմքը:

Հիշեցնենք, որ 1938 թ. Խորեն Ա Մուրադբեկյանցի մահից ի վեր Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց կաթողիկոսի աթոռը թափուր էր, և խորհրդային կառավարությունը չէր չտապում նոր կաթողիկոսի ընտրության հարցում: Սակայն 1945 թ. սկզբներին նկատվում են որոշ տեղաշարժեր: Ապրիլի 19-ին Խորհրդային Միության ղեկավար Ի. Ստալինն ընդունում է 1941 թ. Ազգային-եկեղեցական ժողովի կողմից Մայր Աթոռի ազգընտիր տեղապահ ընտրված Գևորգ արք. Չորեքչյանին[47]: Այս հանդիպումը նշանավորվեց նրանով, որ վերջինս կաթողիկոսական ընտրություններ անցկացնելու թույլտվություն ստացավ: Ըստ ամենայնի, Ի. Ստալինը գիտակցում էր, որ դա հոյակապ առիթ է աշխարհով մեկ սփռված հայկական գաղթօջախներից Երևանում պատվիրակություններ հավաքելու համար, որոնք կօժանդակեին Մոսկվային՝ Թուրքիային ներկայացրած հողային պահանջների հարցում: Եվ Կրեմլն իր հաշվարկներում չսխալվեց. Հայ առաքելական եկեղեցին, որը Հայոց պետականության չգոյության պայմաններում միշտ էլ ստանձնել էր քաղաքական իշխանության գործառնություններ, այս անգամ էլ խնդրո առարկա հարցում ճեռնարկեց սպասված անհրաժեշտ քայլերը:

Կաթողիկոսի ընտրությունը, ինչպես ասվեց, կայացել է 1945 թ. հունիսի վերջին: Հունիսի 16-ին Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի դահլիճում բացվել է Ազգային–եկեղեցական ժողովը,

---

[46] «Ժողովուրդ», 04. XI. 1945:

[47] ՍՍՌՄ Ժողովրդական Կոմիսարների Սովետի նախագահ Ի.Վ. Ստալինի զրույցը Ամենայն Հայոց Հայրապետության Ազգընտիր Տեղակալ Տ. Գևորգ արքեպիսկոպոսի հետ. - «Էջմիածին» (պաշտոնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսության), 1945, Գ-Դ, էջ 3: «Սովետական Հայաստան», 20. IV. 1945:

որին մասնակցում էին աշխարհի չորս ծայրերից Հայաստան ժամանած 113 եկեղեցական ու աշխարհիկ պատգամավորներ[48]: Հունիսի 22-ին կաթողիկոս է ընտրվել Գևորգ արք. Չորեքչյանը, իսկ 24-ին կատարվել է կաթողիկոսի օծումը: Հունիսի 26-ի Ազգային–եկեղեցական ժողովի մասնակիցները Ի. Ստալինին ուղղված խնդրագիր են պատրաստել, որտեղ հիմնականում անդրադառնում էին Թուրքիայի տարածքում գտնվող հայկական հողերի՝ Խորհրդային Հայաստանին միացնելու հարցին: Ավելին, սփյուռքահայերը ցանկանում էին ներգաղթել Հայրենիք[49]:

Ազգային–եկեղեցական ժողովի մասնակիցների այս նամակը բացահայտ ապացույց էր, որ համայն հայությունը միասնական է ԽՍՀՄ-ի կողմից Թուրքիային ներկայացված հողային պահանջատիրության հարցում: Սփյուռքահայերը մինչ այդ արդեն ստեղծել էին ազգային խորհուրդներ և այդ հարցում առանձին–առանձին իրենց պայքարն էին մղում: Կաթողիկոսի ընտրությունը սկիզբ դրեց պահանջատիրության հարցի բարձրացման: Ս. Էջմիածնից վերադառնալուն պես՝ պաղեստինահայության պատգամավորը Երուսաղեմում հրապարակային հայտարարությամբ է հանդես գալիս, նշելով, որ աշխարհիկ պատգամավորների մի մասը պատիվ է ունեցել հանդիպելու Խորհրդային Հայաստանի արտգործնախարար Ս. Կարապետյանին, նա հայտնում է, որ արտաքին գերատեսչության ղեկավարը ամրապնդել է պատգամավորների հույսերը և վստահեցրել, «որ չուտով կարելի պիտի ըլլայ Արարատը դիտել երկու կողմեն...»[50], որը սփյուռքահայության համար ներշնչանքի թեմա է դառնում: Անշուշտ, Ս. Կարապետյանն այս հայտարարությունն արել է Մոսկվայի գիտությամբ, քանի որ առանց Ի. Ստալինի թույլտվության ոչ ոք չէր համարձակվի նման խոստումներ չուայլել: Ակնհայտ է, որ Հայաստանի ղեկավարությունն այս կերպ աշխատանք էր տանում սփյուռքահայության չրջանում և փորձում էր ստանալ նրանց աջակցությունը: Դա է վկայում նաև Ազգային–եկեղեցական ժողովի՝ վերը հիշատակված նամակի հետ կապված ԽՄԿԿ Կենտկոմի օրգան «Պրավդա» օրաթերթի արձագանքը: Թերթը գրել է. «Արտասահմանի մեկուկես միլիոն հայությունը Էջմիածնի Ամենայն Հայոց կաթողիկոսի և Հայաստանի կառավարության միջոցով դիմում է հղել, որպեսզի իր ծննդավայր Հայրենիքը հանդի-

[48] «Սովետական Հայաստան», 17. VI. 1945:
[49] Նույն տեղում:
[50] Զաքարեան Ց., Կարս (պատմա-աշխարհագրական տեսութիւն), Երուսաղէմ, 1946, էջ 8:

սացող Վանը, Բիթլիսը և Կարինը կցվեն Խորհրդային Հայաստանին: Կասկած չկա, որ Խորհրդային Հայաստանի ժողովուրդն ու կառավարությունը չէին կարող այլ կեցվածք ընդունել արտասահմանյան եղբայրների հանդեպ, եթե ոչ նրանց առջև լայն բացել հայրենիքի դռները... Մեծ անարդարություն էր նույնիսկ Ռուսական Կովկասի մաս կազմող Սուրմալուի, Կարսի և Արդահանի նահանգները թուրքերին տալը... Կովկասահայության իրավունքն է Սուրմալու, Կարս ու Արդահան, իսկ թրքահայության իրավունքն է Վան, Բիթլիս ու Կարին վիլայեթների պահանջելը»[51]:

Խորհրդային Հայաստանից դուրս ապրող հայերի համար տեղի ունեցածը կարևոր իրադարձություն էր: Նրանց կարծիքով վերջապես սկսվել է ողջ Հայության միավորման գործընթացը, հուսալով, թե հայկական հողային պահանջատիրության հարցում ԽՍՀՄ-ին աջակից կլինի համաշխարհային հանրությունը, որը դատապարտում է Առաջին աշխարհամարտի տարիներին հայերի նկատմամբ իրականացված ողբերգությունը:

Այսպես, Հայկական տարածքներն իրենց իրական տիրոջը վերադարձնելու պահանջի պաշտպանությամբ նախ հանդես եկան եկեղեցական կազմակերպությունների ներկայացուցիչները: Ս. Էջմիածնի Համաժողովին հրավիրված Մեծ Բրիտանիայի Քենթերբերիի տաճարի վանահայր Հյուրեթ Ջոնսոնը Երևանից մեկնելուց առաջ՝ հունիսի 29-ին, խորհրդային և արտասահմանյան լրագրողներին տված մամուլի ասուլիսում ասել է. «Ես լիովին և ի սրտե համաձայն եմ, որ Թուրքիայի կողմից խլված մարզերը պետք է որքան հնարավոր է շուտ վերադարձվեն Հայաստանին: Ամերիկահայերի Ազգային խորհրդի դեկլարացիան, իմ կարծիքով, միանգամայն արդարացի է ու հիմնավոր»[52]: Հ. Ջոնսոնի խոսքը Անկարայի համար անակնկալ էր. այն ընդունվել էր որպես անգլիական եկեղեցու պետ Քենթերբերիի արքեպիսկոպոսի կողմից արված պաշտոնական հայտարարություն: Ավելին, Թուրքիայի նախագահ Ի. Ինյոնյուն Լոնդոնից բացատրություններ էր պահանջել: Իրավիճակը հարթվել է միայն այն ժամանակ, երբ Թուրքիայում բրիտանական դեսպանը՝ Մորիս Փիթերսոնը, լուսանկարներով և փաստերով ապացուցել է, որ Ջոնսոնը արքեպիսկոպոս չէ: Ավելի ուշ Լոնդոնը պաշտոնական հայտարարությամբ է հանդես եկել և վստահեցրել, թե անգլիա-

[51] «Правда», 18. VIII. 1945.
[52] «Սովետական Հայաստան», 30. VI. 1945:

կան եկեղեցու հոգևորականների հայտարարությունները պաշտոնական ուժ չունեն[53]:

Մինչդեռ Հ. Ջոնսոնը մեծ ընդունելության է արժանացել Մոսկվայում: Հուլիսի 6-ին նա հանդիպել է Ի. Ստալինին, որին պատմել է Էջմիածնում կայացած Ազգային-եկեղեցական ժողովի մասին[54]: Չի բացառվում, որ նրանք անդրադարձել են նաև հայկական տարածքների հարցին: Ի դեպ, տասը օր անց՝ հուլիսի 16-ին, Պոտսդամում Մոլոտով–Իդեն հանդիպման ժամանակ ԽՍՀՄ-ի արտաքին գերատեսչության ղեկավարն անգլիացի պաշտոնակցին հիշեցրել է, որ անգլիական կառավարությունը բազմիցս հանդես է եկել ի պաշտպանություն հայերի, իսկ բոլորովին վերջերս էլ, ասել է նա, հայերի հողային պահանջը պաշտպանել է դոկտոր Հ. Ջոնսոնը[55]:

Ամերիկայի հայկական ավետարանական միությունը 1945 թ. սեպտեմբերին Պրովինդեսում (Ռոդ Այլենդ նահանգ) կայացած նիստում ընդունած ուղերձով դիմել է Լոնդոնում հավաքված Մեծ տերությունների արտգործնախարարներին: Դրանում ասվում է. «Մենք՝ Ամերիկայում հայկական ավետարանական միության հոգևորականներս, հավաքված հատուկ նիստում, խնդրում ենք Արտգործնախարարների խորհրդին հանուն արդարության և մարդասիրության դիտարկել հայ ժողովրդի դարավոր պահանջը, որը դարերի ընթացքում տառապել է թուրքական լծի տակ: Հայ ժողովուրդը, որը ժամանակին եղել է հպարտ ու մեծ ազգ և մեծ ներդրում է արել քաղաքակրթության ու քրիստոնեության գործում, վերջին 50 տարիների ընթացքում բնաջնջվում է թուրքերի կողմից իրականացվող մասսայական սպանությունների, աքսորների, խտրականությունների և դույքի անօրինական բռնագրավման միջոցներով: Կենդանի մնացած մեր ժողովրդի մի մասը առաջին համաշխարհային պատերազմից հետո թուրքական քաղաքականության հետևանքով ցրված է աշխարհի բոլոր ծայրերում: Մենք խնդրում ենք արդարություն ցույց տալ այս հայերին, ինչպես հնարավոր անելով նրանց վերադարձը Թուրքիայում գտնվող իրենց

[53] Մսըրլյան Զ., Համաշխարհային երկրորդ պատերազմի վախճանը և հայերը. – «Հայկազյան հայագիտական հանդես», Պէյրութ, 1993, էջ 184:
[54] «Սովետական Հայաստան», 7. VII. 1945:
[55] Корхмазян Р., Территориальные проблемы советско-турецких отношений на Берлинской (Потсдамской) конференции руководителей трех союзных держав – СССР, США и Великобритании. – «Страны и народы Ближнего и Среднего Востока», Ереван, 1996, № 16, с. 23.

վաղնջական հողերը, այնպես էլ վերադարձնել այդ հողերն ազատության և անվտանգության մեջ ապրող Խորհրդային Հայաստանին»[56]: Փաստաթուղթը ստորագրել էին միության քարտուղար Ա. Գեորգեզյանը և նիստը նախագահող Վ. Էռնազյանը:

Տարածքային պահանջատիրության խնդրի հետ միաժամանակ քննարկվել է նաև Խորհրդային Հայաստան հայերի ներգաղթը կազմակերպելու հարցը: Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ն դա դիտում էին որպես «խորհրդային ծրագիր»՝ չնչտելով, թե այս կերպ ԽՍՀՄ-ը ցանկանում է իրականացնել իր զավթողական ծրագրերը: Սակայն ներգաղթի վերաբերյալ ԽՍՀՄ-ի կառավարության ընդունած որոշումը նախ քաղաքական քայլ էր՝ համաշխարհային հանրության շրջանում արդարացնելու Անկարային ներկայացրած տարածքային պահանջները, քանի որ, կրկնենք, մեծ տերությունների ղեկավարների միջազգային պաշտոնական և ոչ պաշտոնական բոլոր հանդիպումներում խորհրդային կողմը ներկայացնում էր, որ դա անհրաժեշտ է ոչ թե Խորհրդային Միությանը, այլ Խորհրդային Հայաստանին, որի տարածքը փոքր է, որի պատճառով չի կարող բավարարել հայրենիք վերադառնալու սփյուռքահայերի բուռն ցանկությունը:

Եվ չնայած ներգաղթ կազմակերպելու հարցը Մոսկվա-յում բարձրացվել էր դեռ 1945 թ. ապրիլին, սակայն միայն նոյեմբերի 21-ին է պաշտոնապես հայտարարվել սփյուռքահայերի ներգաղթը դեպի Խորհրդային Հայաստան կազմակերպելու մասին[57]: Հայտարարությունից մի քանի օր անց՝ նոյեմբերի 27-ին, Ամենայն Հայոց Գևորգ Ջ կաթողիկոսը հուշագրով դիմել է ԽՍՀՄ-ի ղեկավար Ի. Ստալինին, ԱՄՆ-ի նախագահ Հ. Տրումենին և Մեծ Բրիտանիայի վարչապետ Կ. Էտլիին՝ պահանջելով Թուրքիայի կողմից դրավված հայկական տարածքները վերադարձնել Խորհրդային Հայաստանին: Փաստաթղթում նշված էր, թե Մեծ եղեռնից հետո «ի լրումն հայ ժողովուրդի գլխին եկած դժբախտությունների, թիւրքեր 1920 թուին ուխտադրուժ կերպով յարձակեցին ու խլեցին Հայաստանի կարեւոր կենսական մասերը՝ Ղարսը, Արտահանը, Սուրմալուն: Սովետական նորածին Միությունը աղատեց հայկական պատմական հողերի մի փոքր մասը, որով փրկեց նա այնտեղ

---

[56] Վրթանես Ջ., Հայկական հարցը այսօր, Նյու Յորք, 1945, էջ 147:

[57] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 74 (ՍՍՀՄ Ժողովրդական կոմիսարների սովետի 1945 թ. նոյեմբերի 21-ի, նո. 2947 որոշումը «Արտասահմանյան երկրներից հայերի ներգաղթի հետ կապված միջոցառումների մասին»), թ. 1:

ապրող հայերին վերահաս բնաջնջումից: Այսպէսով ստեղծուեցաւ Հայկական Սովետական Ռեսպուբլիկան (Հանրապետութիւնը)...»[58]: Ամենայն հայոց կաթողիկոսը գրում էր, որ հայ ժողովուրդն իր դառն փորձից դիտի՝ ներկա կամ հին Թուրքիայի մէջև տարբերութիւն չկա, ու միակ ելքը Թուրքահայաստանի ազատագրումն ու կցումն է Խորհրդային Հայաստանին: «Ուստի, վերստին խնդրում ենք, որ Թիւրքիայի Հայկական վիլայէթները միացուին Սովետական Հայաստանին, որպէսզի հայութիւնը ամբողջանայ՝ հաւաքուելով հայրենի երկրում և ապահովութեան ու խաղաղութեան մէջ շարունակէ իր ընդհատուած քաղաքակրթութեան աշխատանքը եւ ի յայտ բերէ իր անուրանալի ստեղծագործական պոտենցիալը»[59]: Ըստ էութեան, հուշագրում Ամենայն հայոց կաթողիկոսի ներկայացրածն ավելին էր, քան Կարս–Արդահանի պահանջը. արված ճեւակերպումով նա պահանջում էր Սևրի դաշնագրով երաշխավորված հայկական հողերը:

Նոյեմբերի 29-ին Էջմիածնում հրավիրած մամուլի ասուլիսում Գևորգ Զ-ն խորհրդային կենտրոնական և հանրապետական թերթերի թղթակիցներին տեղեկացրել է, թե ինչու է դիմել նման քայլի: Նա հայտարարել է. «Արտասահմանի հայութեան ճակատագրի մասին մեր հոգատարութիւնը և նրանցից ստացած բազմաթիվ նամակներն ու հեռագրերը մեզ մղեցին դիմելու երեք տերութիւնների ղեկավարներին՝ Ստալինին, Տրումենին և Էտլիին՝ խնդրելով վերացնել բազմաչարչար հայ ժողովրդի վերաբերմամբ թուլլ տրված պատմական մեծ անարդարութիւնը: Մեր դիմումով մենք խնդրում ենք Թուրքիայից վերցնել նրա կողմից բռնի կերպով զավթված և այժմ ամայի հողերը, վերադարձնել նրանց վաղեմի տերերին և այդ հողերը միացնել Սովետական Հայաստանին: Դա գաղթական հայերին հնարավորութիւն կտա մի ընտանիքի մեջ ապրելու իրենց արյունակից եղբայրների հետ, աշխատելու և զարգացնելու իրենց ազգային կուլտուրան»[60]:

Ամենայն հայոց կաթողիկոսը չի բավարարվել միայն հայտարարութիւններով, հատուկ կոնդակով չեչտել է ներդաղթի կարևորութիւնը և դրա հետ կապված հրահանգներ տվել արտասահմանի թեմական առաջնորդներին: Այսպես, 1946 թ. հուլիսի 1-ին Եվրո-

---

[58] Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոս Տ. Տ. Գևորգ Զ-ի դիմումը երեք մեծ տերութիւնների ղեկավարներին. - «Էջմիածին», 1945, ԺԱ-ԺԲ, էջ 8-10:
[59] Նույն տեղում:
[60] «Սովետական Հայաստան», 2. XII. 1945:

պայում կաթողիկոսի պատվիրակ Արտավազդ արք. Սյուրմեյանին ուղղված հրովարտակում հանձնարարել է. «Մեր առաջարկն է չտապ կարդով տեղական պայմանների համաձայն՝ կազմակերպել նիւթական աջակցութեան հարցը և գործի անցնել, եւ ձեր ձեռնարկների եւ նոցա ելքի մասին պարբերաբար իրազեկ անել մեզ ի գիտութիւն, ի միամտութիւն և յաջակցութիւն»[61]: 1947 թ. ապրիլի 20-ին կաթողիկոսը հրապարակել է ընդարձակ մեկ այլ կոնդակ՝ «Հայ ժողովրդի արդար դատի և բռնադատված իրավունքների մասին» խորագրով[62]:

ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Հովհաննիսյանի՝ ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ս. Կարապետյանին ուղղած 1947 թ. ապրիլի 14-ի գրությունից տեղեկանում ենք, որ Գևորգ Զ կաթողիկոսը նամակով դիմել է Անգլիկան եկեղեցու առաջնորդին: Փաստաթղթում ասվում է. «Նա, որպես անգլիական խորհրդարանի անդամ ձայն բարձրացնի ի պաշտպանութիւն հայերի արդարացի պահանջի՝ հայկական հողերը Խորհրդային Հայաստանին միավորելու, որի մասին նա խոսել էր երեք մեծ տերությունների՝ ԽՍՀՄ-ի, Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի, ղեկավարներին հասցեագրված իր ուղերձում»[63]: Անգլիայի հոգևոր առաջնորդին նույն բովանդակությամբ հուշագրով դիմել է նաև Եվրոպայի թեմի առաջնորդ Արտավազդ արք. Սյուրմեյանը: Այդ կապակցությամբ Գևորգ Զ կաթողիկոսը գրել է. «Արտավազդ արքեպիսկոպոսը, այցելության ժամանակ, իր իրավունքների սահմանից դուրս գալով՝ թույլ է տվել իրեն գրավոր հուշագրով դիմել Քենթրբերիի արքեպիսկոպոսին և խնդրել, որ նա՝ Հայկական դատի առթիվ՝ «պատշաճ դիմումներ կատարի իրավասու նախարարներին»: Նրա այս քայլը, բնականաբար, կարժանանա նկատողության: Այս առթիվ մտադիր ենք նաև ընդհանուր շրջաբերականով զգուշացնել բոլոր թեմակալներին՝ օտար եկեղեցիների առաջնորդներին այցելելիս զգույշ լինել և դուրս չգալ իրենց իրավունքների սահմաններից»[64]:

---

[61] «Հառաջ» (Փարիզ), 12. XI. 1946:

[62] ՀԱԱ, ֆ. 454, ց. 1, գ. 157 (Գևորգ Զ կաթողիկոսի «Հայ ժողովրդի արդար դատի և բռնադատված իրավունքների մասին» կոնդակը):

[63] ՀԱԱ, ֆ. 823, ց. 1, գ. 19 (ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Հովհաննիսյանի 1947 թ. ապրիլի 14-ի գրությունը ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ս. Կարապետյանին), թ. 9:

[64] ՀԱԱ, ֆ. 823, ց. 1, գ. 26 (Գևորգ Զ կաթողիկոսի տեղեկագիրը Արտավազդ արք. Սյուրմեյանի Անգլիական եկեղեցու առաջնորդին հուշագրով դիմելու կապակցությամբ), թ. 22:

Ամենայն հայոց կաթողիկոսի նման արձագանքը վկայում է, որ նրա դիվանագիտական բոլոր քայլերը համաձայնեցված են եղել ԽՍՀՄ-ի ղեկավարության հետ, և նա գիտակցել է, որ ցանկացած չհամաձայնեցված քայլ կարող է ճակատագրական լինել հայոց եկեղեցու համար: Այս առումով ուշագրավ է հետևյալ փաստը. Պահպանվել է 1949 թ. Ի. Ստալինին Գևորգ Զ-ի գրած հուշժ գաղտնի նամակը, որտեղ կաթողիկոսը տեղեկացրել է իր ծրագրերի մասին: Նամակում, մասնավորապես, ասվում է. «Սկսել ենք նյութեր հավաքել ու չուտով նաև կազմել հատուկ հուշագիր ՄԱԿ Գլխավոր Համաժողովի Փարիզյան նստաշրջանին ներկայացնելու համար: Հուշագիրը կկազմվի ռուսերեն և հայերեն, կթարգմանվի ֆրանսերեն և անգլերեն ու կտպագրվի նստաշրջանի նախօրեին, կառաքվի ոչ միայն Համաժողովի մասնակիցներին, այլև պարբերական մամուլին, հասարակական կազմակերպությունների, քաղաքական գործիչների, գրողների, եկեղեցիներ և այլն: Հուշագիրը ծառայելու է Թուրքահայաստանի վիլայեթները Խորհրդային Հայաստանի հետ վերամիավորելու հայ ժողովրդի պահանջի պատմա–քաղաքական և միջազգային իրավական հիմնավորմանը: Բոլոր ձեռնարկվող քայլերը անպայման կհամաձայնեցվեն ԽՍՀՄ կառավարության հետ ինչպես հուշագրի բովանդակության ու ձևի, նույնպես պահի ընտրության և համագումարին ներկայացնելու կանոնակարգի առումով: Անհրաժեշտ է Ձեր համաձայնությունը, որպեսզի պահպանելով ձեռնարկվելիք քայլերի խորհրդապահությունը, այնուամենայնիվ սաստկացնենք ու աշխուժացնենք հայ և հայասեր կազմակերպությունների գործունեությունը խորհրդային իշխանության և հայ ժողովրդին ցանկալի ուղղությամբ»[65]: Այսինքն՝ կաթողիկոսը քաջ գիտակցել է, որ միայն խորհրդային կառավարության հետ սերտ համագործակցելով է հնարավոր դրական ինչ–որ արդյունքի հասնել: Կարելի է նաև ամենայն համոզվածությամբ փաստել, որ հայկական տարածքների պահանջատիրության հարցում պաշտոնական Մոսկվային անհրաժեշտ էր հայոց եկեղեցու աջակցությունը: Կրեմլը գիտակցում էր, որ դեռևս պատերազմի տարիներին սփյուռքահայերի կողմից Հայկական հարցի շուրջ սկսած գործընթացը պետք է օգտագործել ի նպաստ իր շահերի, այդ պատճառով Խորհրդային Հայաստանի կառավարության ու հայոց եկեղեցու միջոցով խրախուսեց

[65] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 807 (Գևորգ Զ կաթողիկոսի նամակը Ի. Ստալինին), թթ. 1-7:

1944-1945 թթ. Սիյուռքում ձևավորված հայկական ազգային խորհուրդների գործունեությունը:

1942 թ. վերջերին Սիյուռքում ձևավորվել և լայն ծավալ էր ընդունել «ազգային ուժերի միասնության» դաղափարը: Սիյուռքահայերը հասկացել էին, որ իրենց գործելու ճիշտ ժամանակն է, և որ «խաղասեղանի» վրա դրված է Հայաստանի ապագան: Այս առումով 1943թ. դրական տեղաշարժ էր նկատվել կուսակցությունների և կազմակերպությունների քաղաքական վարքագծում: Կարելի է վստահորեն ասել, որ դրան նպաստել էր երկու հանգամանք. առաջինը՝ Ստալինգրադի ճակատամարտում խորհրդային Միության ունեցած հաղթանակն էր, որը կանխատեսում էր ֆաշիստական բլոկի երկրների պարտությունը, երկրորդը՝ Թեհրանի կոնֆերանսում մեծ տերությունների կողմից՝ սլատերազմում համատեղ գործողությունների և հետպատերազմյան համագործակցության մասին ընդունված որոշումն էր: Շատ տրամաբանական ու բնական էր, որ դաշնակից երկրների հաղթանակի հեռանկարը սիյուռքահայերի մեջ հույսեր էր արթնացրել հայկական հողերի վերադարձման խնդրի շուրջ, քանի որ թեպետ Թուրքիան սլատերազմին չէր մասնակցում, սակայն չեզոքության քողի տակ աջակցում էր առանցքի երկրներին, ավելին, վարում էր հակախորհրդային քաղաքականություն:

Առաջ անցնելով նկատենք, որ սիյուռքահայերի միջավայրում ծագած այս ակնկալիքները չեն վրիպել մեծ տերությունների, մասնավորապես ԽՍՀՄ-ի և Մեծ Բրիտանիայի ուշադրությունից: Այսպես, Սպահանի բրիտանական հյուպատոսը 1945 թ. մարտին հեռագրել էր Լոնդոն՝ հաղորդելով, թե տեղի նորանշանակ հայոց հոգևոր առաջնորդ Վահան վրդ. Կոստանյանը Նոր Ջուղա հասնելուն պես անցել է իր պարտականությունների կատարմանը և իր ելույթում հայտարարել. «ժամանակը հասել է հայերին իրենց հայրենի երկիրը վերադառնալու...»[66]: Իսկ նույն թվականի ապրիլի 11-ին Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Ա. Իդենին Կահիրեից անգլիացի դիվանագետների ուղարկած նամակում էլ ասվում էր. «Մենք տեղեկություններ ենք ստացել այն մասին, թե հայերը և՛ Եգիպտոսում, և՛ Միջին Արևելքում քարոզչություն են տանում: Հայերը երազում են Թուրքիայից աղատագրված տեսնել

[66] Մսըրյան Զ., Հայկական հարցի մասին, Պէյրութ, 1978, էջ 27:

հայկական նահանգները և միացված Հայկական Խորհրդային Հանրապետության հետ...»[67]:

Եվ, ահա, 1943 թ. հոկտեմբերի 8-ից սկսած՝ ԱՄՆ-ում Հայկական դեմոկրատական լիբերալ կուսակցության և Ամերիկայի Հայկական առաջադիմական լիգայի անդամներն աշխատանքներ սկսեցին արտերկրում գործող հայկական կազմակերպությունների միավորման ուղղությամբ[68]: Արդյունքում՝ ստեղծվեցին հայ ազգային խորհուրդներ:

Առաջինը Ամերիկահայ ազգային խորհուրդն էր, որը կազմավորվել է 1944 թ. մարտի 19-ին՝ Հայկական դեմոկրատական լիբերալ կուսակցության, Ամերիկայի Հայկական առաջադիմական լիգայի և Սոցիալ–դեմոկրատական հնչակյան կուսակցության անդամներից: Խորհրդի առաջին նախագահը ռամկավարների առաջնորդ Պետրոս Ս. Թերզյանն էր, որին հաջորդել են Նշան Շահինյանը, Ջեմս Ջանգալյանը: Հաստատվել էր կազմակերպության քաղաքական ծրագիրը, ըստ որի՝ Ամերիկահայ ազգային խորհրդի նպատակն էր համերաշխություն և համագործակցություն ստեղծել գաղութի ներսում, ինչպես նաև աշխատել հայ ժողովրդի դերագույն շահերի պաշտպանության համար[69]: Կողմերը համաձայնվել էին «օգնել (դաշնակիցներին) պատերազմական ջանքերում», «կազմակերպել ձեռնարկներ և օգնել ձեռնարկներու՝ ի նպաստ Սովետ Միության և Սովետ Հայաստանի», «պաշտպանել տարագիր հայերու իրավունքները հարկ եղած բոլոր միջոցներով և աշխատել՝ ի խնդիր անոնց հայկական հողին վրա վերաբնակեցման»: Փաստաթղթի վերջում ասված էր. «Ամերիկահայ ազգային խորհուրդը հայկական իրավունքներու տերը կճանչնա Հայաստանի կառավարությունը»[70]:

Այս խորհրդից զատ ԱՄՆ-ում գործել է նաև ՀՅԴ կուսակցության կողմից ստեղծված Հայկական ազգային կոմիտեն՝ Ռուբեն Դարբինյանի և Սիմոն Վրացյանի ղեկավարությամբ[71]:

Ազգային խորհուրդներ են ստեղծվել հայկական այլ գաղթօջախներում ևս: Այսպես, ֆրանսահայերի ազգային խորհուրդը գլխավորել է գրող, քննադատ, բանասեր, լրագրող և հասարակական

---

[67] Նույն տեղում:
[68] Vertanes Ch., Armenia Reborn, New York, 1947, p. 111.
[69] Atamian S., The Armenian Community, New York, 1955, p. 372.
[70] Թոփուզյան Հ., Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1841–1946), Երևան, 1986, էջ 252:
[71] ՀԱԱ, ֆ. 1, ց. 034, գ. 95 (Նյութեր Սան Ֆրանցիսկոյի հայկական հուշագրի վերաբերյալ), թթ. 283–284:

դործիչ Ա. Զոպանյանը[72], եգիպտահայերինը՝ նշանավոր երգիծանկարիչ Ալ. Սարուխանը[73]: Ազգային խորհուրդներ կազմավորվեցին Սիբիայում ու Լիբանանում, Հունաստանում, Պաղեստինում, Ուրուգվայում և հայկական մնացյալ գաղթօջախներում:

Ֆրանսիայում բնակվող հայերը գործել սկսել էին դեռևս պատերազմի տարիներին: 1944 թ. փետրվարից օգոստոս ամիսներին փարիզահայ երիտասարդների մի խումբ հրապարակել է չորս տեղեկատու թռուցիկ: Դրանցում անդրադառնում էին Հայկական հարցին՝ հանգելով հետևյալ եզրակացության. «Թուրքերու կողմէ 1915ին գործուած ոճիրին հատուցումը այն օրը կատարեալ պիտի ըլլայ՝ երբ աշխարհի չորս կողմը ցրուած Հայերը կարելիութիւն ունենան վերադառնալու իրենց նախնիքներու երկիրը: ... Եւ Հայրենիքին վերատին գտնուած զաւակները պիտի կրնան վերջապէս իրենց ճիգերը միացնել Հայաստանի մէջ մնացող իրենց եղբայրներու ճիգերուն, որոնք կը կատարուին հայրենի հողին վրայ քսանըհինգ տարիէ ի վեր՝ մեծամեծ զոհողութիւններով»[74]:

1945 թ. ապրիլի 5-ին Փարիզում գործող Հայ փախստականների կենտրոնական կոմիտեի նախագահ Ա. Զոպանյանը դիմել էր Ֆրանսիայում ԽՍՀՄ-ի դեսպան Ա. Բոգոմոլովին՝ տեղեկացնելով, որ հայ գաղթականության երազանքն է վերադառնալ պատմական հայրենիք, որը պետք է միանա Խորհրդային Հայաստանին: Ավելին, նա հույս է հայտնել, որ դեսպանը հայ փախստականների այդ ցանկությունը կհասցնի ԽՍՀՄ-ի կենտրոնական և Հայաստանի կառավարություններին, իսկ Խորհրդային Միության պաշտոնյաներն էլ Սան Ֆրանցիսկոյի ՄԱԿ-ի վեհաժողովի օրակարգում կդնեն Թուրքահայաստանի ազատագրման հարցը[75]:

Օգոստոսի 13-ին Ֆրանսիայի ազդային ընդհանուր միության կենտրոնական վարչության (որի 56 անդամներից ներկա էին 45-ը) նախաձեռնությամբ կազմվել է «Թուրքահայ դատի պաշտպանության Հանձնախումբ», որի պատվավոր նախագահն էր պրոֆ. Մ. Մանուելյանը, նախագահը՝ Ա. Զոպանյանը: Ներկաները միաձայն ընդունել են բանաձև, ըստ որի՝

---

[72] Դարբինյան Ա., Հայ ազատագրական չարժման օրերն, Փարիզ, 1947, էջ 14:
[73] Սերոբյան Մ., Մեր պայքարը հայ ազատագրության ուղիով, Կահիրե, 1948, էջ 269:
[74] Հայ ազգային դատը, Թուրքական Հայաստանի ազատագրմանը վերաբերող վավերաթղթեր, Փարիզ, 1946, էջ 111:
[75] Մխիթարյան Ս., Հայկական հարցը արխիվային պրպտումների վերլուծումներով, Փարիզ, 1968, էջ 148:

• Հանձնախումբը պարտավորվում էր պատրաստել թուրքահայ դատի վերաբերյալ հուշագրեր՝ «ներկայացնելու համար ուր որ անկ է»:

• Որպես հիմնական սկզբունք՝ ընդունվել էր, որ թուրքահայ դատի արդար լուծումը հանձնվի մասնավորապես խորհրդային իշխանությանը և, ընդհանրապես, դաշնակից ազգերին:

• Հուշագրերի մեջ պետք է տեղ տրվեր նախորդ պատերազմի ընթացքում թուրքահայերի կրած վնասներին:

• Հանձնախումբն իրավասու էր ընդլայնվելու:

• Հանձնախմբի «դիվանի» հրավերով կազմվել էր օրենսգետների հանձնախումբ, որն անձամբ զբաղվելու էր հուշագրերի պատրաստմամբ: Փարիզում և գավառներում անցկացվելու էին հրապարակային ժողովներ, որի ընթացքում հասարակությանը ներկայացվելու էին կատարված աշխատանքները և հուշագրերի պարունակությունը[76]:

Նույն ժամանակաշրջանում՝ 1945 թ. օգոստոսի 31-ին, Բեյրութում Ա. Մանուելյանի նախագահությամբ ստեղծվել է Սիրիայի և Լիբանանի հայ ազգային խորհուրդը: Իր ապագա գործունեության մասին խորհուրդը հրապարակել է ուշագրավ փաստաթուղթ, որը ստորև բերում ենք ամբողջությամբ.

«Սովիեթ Հայաստանի ուղղությունը ընդգրկող զանազան հոսանքներու ներկայացուցիչներս, հետ խորհրդակցության, որոշեցինք կազմել Սիրիայի և Լիբանանի հայության ազգային խորհուրդ մը՝ գործունեության և ուղղության հիմք ունենալով հետևյալ կետերը.

• Աշխատիլ հայ ժողովուրդի քաղաքական իրավունքներուն պաշտպանության համար՝ առաջին առթիվ զորավիզ կանգնելով... Ամերիկայի հայ ազգային խորհրդի՝ Սան Ֆրանցիսկոյի ժողովին ղրկած հուշագրին, որպեսզի արտասահմանի հայրենազուրկ հայության կարելիություն տրվի վերադառնալ հայրենիք և լծվիլ խաղաղ ու շինարար աշխատանքի:

...Արտասահմանի հայության ազգային բոլոր ցանկություններուն լավագույն թարգմանը, համադրողն ու իրագործողը կհանդիսանա միայն Հայաստանի Սովետական Սոցիալիստական

[76] «Ժողովուրդ», 22. VIII. 1945:

Հանրապետության կառավարությունը: Ազգային խորհուրդը զայն կնկատեր հայկական դատի միակ իրավասու հեղինակությունը, որու նկատմամբ կհայտներ իր անվերապահ վստահությունը:

• Սովետական Հայաստանի հզոր զինակիցը և պաշտպանը և հայ ժողովուրդին երկու անգամ ֆիզիկական բնաջնջումե ազատող ռուս մեծ ժողովրդին հանդեպ Ազգային խորհուրդը կհայտներ անվերապահ վստահություն:

• Ազգային խորհուրդը պարտականություն կհամարեր նյութական և բարոյական բոլոր միջոցներով օգնել Մայր Հայրենիքին, մշակութային կապեր հաստատել անոր հետ և պայքարել բոլոր անոնց դեմ, որոնք մամուլի միջոցով կամ այլ արարքներով կջանան նսեմացնել Սովետական Հայաստանի վարկն ու հեղինակությունը:

• Ազգային խորհուրդը պետք է աշխատի Սիրիո և Լիբանանի ազգային ներքին կյանքի մեջ ստեղծել ներդաշնակություն և միասնականություն:

• Ազգային խորհուրդը պետք է աջակցի Սիրիո և Լիբանանի ազգային–դեմոկրատական չարժման և հայ իրականության մեջ արդելելու որևէ արարք, որ կրնա վնասել Սիրիո և Լիբանանի հայության վարկի և հայ–արաբ խաղաղ հարաբերությանց:

• Ազգային խորհուրդին կրնան հարիլ բոլոր այն քաղաքական կազմակերպությունները, միությունները, առանձին անձինք, որոնք կընդունին սույն հայտարարությունը՝ առանց դավանական և գաղափարական խտրականության»[77]:

Խորհրդի այս կոչին արձագանքեցին Սիրիայի և Լիբանանի հայ կոմունիստները, հնչակյանները, ռամկավարները, լիբանանահայ «Վերածնունդ միությունը» և բազմաթիվ այլ միություններ, խմբակցություններ: Հայ ազգային խորհրդի կենտրոնական վարչությանն ուղղած դիմումներում բոլորը միաբերան հայտնում էին, որ ամբողջությամբ ընդունում են օգոստոսի 31-ի հայտարարությունը և խոստանում ամեն կերպ աջակցել խորհրդին՝ իր նախանշված գործերն իրականացնելիս[78]:

Սիրիայի և Լիբանանի հայ ազգային խորհուրդը ստեղծման առաջին իսկ օրից լայն գործունեություն է ծավալել՝ հիմնականում չարունակելով հանրահավաքներ կազմակերպել: Նկատենք,

[77] «Ժողովրդի ձայն» (Բեյրութ), 2. IX. 1945:
[78] Զորմիսյան Լ., Կուսակցությունները, Պեյրութ, 1965, էջ 283:

որ մինչ խորհրդի ստեղծումը, Բեյրութում արդեն իսկ անցկացվել էին բազմահազարանոց հանրահավաքներ՝ հայկական հողերի վերադարձման պահանջով: Դրանց հանգամանորեն անդրադարձել է արտասահմանյան մամուլը: Ամենահիշարժանը 1945 թ. հուլիսի 29-ին Հայ ազգային խորհրդի և Խաղ արք. Աջապահեանի նախագահութեամբ անցկացված հավաքն է, որից հետո մասնակիցները հեռագիր են ուղարկել Ի. Ստալինին[79]:

Սեպտեմբերի 23-ին խորհուրդը միաժամանակյա բազմահազարանոց հանրահավաքներ է անցկացրել Բեյրութում, Հալեպում, Դամասկոսում և Ջախամում: Միայն Բեյրութում փողոց էին դուրս եկել 10 հազար հայեր: Հանրահավաքի վերջում ներկայացվել է Ստալինին, Տրումենին և Էտլիին ուղղված՝ Սիրիայում ու Լիբանանում ապրող 200 հազար հայերի անունից պատրաստված դիմումը, որում մեծ տերությունների ղեկավարներին խնդրում էին Թուրքիայի տարածքում գտնվող հայկական հողերը հանձնել Խորհրդային Հայաստանին[80]: Հետագայում ևս կազմակերպվել են նման միջոցառումներ:

Հատկանշական է նաև Եգիպտոսի հայ ազգային խորհրդի գործունեությունը, որն առաջնորդվում էր «Հայերը՝ հայերի համար» կարգախոսով: Եգիպտահայ ազգային խորհուրդը 1945 թ. դեկտեմբերի 20-ին հրապարակել է «մանիֆեստ», որում ներկայացվում էր իր ծրագիրը: Խորհուրդն ընդունել էր հետևյալ որոշումները.

• Հիմնվելով հայ ժողովրդի պատմական իրավունքի, մարդասիրության ու ազատության դրույթների վրա և հաշվի առնելով այն փաստը, որ երկու համաշխարհային պատերազմների ընթացքում հանուն քաղաքակրթության հայերը կրել են մեծ կորուստներ՝ պատրաստվում ենք պահանջել Թուրքիայի կողմից զավթված հայկական նահանգների վերադարձը Խորհրդային Հայաստանին:

• Խրախուսել և աջակցել արտերկրում ապրող հայերի վերադարձը Խորհրդային Հայաստան:

• Մեր գործի պաշտպանությունը վստահել Խորհրդային Հայաստանի կառավարությանը, որն արժանացել է Խորհրդային Միության և հատկապես Ի. Ստալինի վստահությանը:

---

[79] Մսըրլյան Զ., Արևմտահայ բռնագրված հողերու հարցը, 1921-1971. - «Հայկազյան հայագիտական հանդես», Պէյրութ, 1971, էջ 26:

[80] «Правда», 28. IX. 1945.

• Ստեղծել մշակութային կապեր մեր հայրենիքի հետ:

• Ստեղծել արտերկրում ապրող հայերի միջև միություն:

• Արտերկրում գործող բոլոր ազգային խորհուրդների համար մշակել միասնաբար գործելու համընդհանուր դիծ և դրա համար ստեղծել կենտրոնական օրգան:

• Հարգել մեզ հյուրընկալած երկրի օրենքները:

• Մեզ կարող են միանալ բոլոր հայկական կազմակերպությունները և կուսակցությունները, պայմանով, որ կհարգեն «մանիֆեստում» թվարկված կետերը[81]:

Հարկ է նշել, որ եգիպտահայերի խորհրդի ընդունած որոշման վերոթվարկյալ կետերը, ըստ էության, համահունչ էին Սիրիայի և Լիբանանի հայ ազգային խորհրդի ընդունած փաստաթղթի ոգուն: Դրան ևս արձագանքել են խորհրդային կարգերը ճանաչած հայկական բոլոր կուսակցությունները՝ «համայնավարները, հնչակյանները և ռամկավարները»[82]:

Վերոթվարկյալ ազգային բոլոր խորհուրդները մեծ նվիրումով և հույսով սկսեցին իրենց գործունեությունը. հրատարակեցին գրքեր ու գրքույկներ, տպագրեցին հոդվածներ, թերթիկներ, պատրաստեցին հուշագրեր և դիմումներ, ի նպաստ Հայոց դատի կազմակերպեցին հանրահավաքներ ու հավաքույթներ: Սակայն պետք է ընդունել այն իրողությունը, որ Ամերիկահայ ազգային խորհուրդն այս պայքարում դարձավ այն ուժը, որը միավորեց աշխարհասփյուռ հայկական բոլոր կազմակերպություններին և ստանձնեց դրանց ղեկավարման դերը:

Ստեղծման առաջին իսկ օրից՝ 1943 թվականից, Ամերիկահայ ազգային խորհուրդը ծավալել է բուռն գործունեություն: Սակայն նրա կատարած ամենակարևոր քայլը ամերիկաբնակ հայերի անունից 1945 թ. ՄԱԿ-ին ներկայացրած «Հայ ժողովրդի գործը» խորագրով պատմական հուշագիրն է: Հարկ է նկատել, որ Հայկական ազգային կոմիտեն խորհրդի հետ զուգահեռ 1945 թ. մայիսի 7-ին ՄԱԿ-ին է փոխանցել իր հուշագիրը՝ «Հայկական հարցի առթիվ» վերնագրով, որը ստորագրել էր Հայաստանի առաջին հանրապետության վարչապետ Սիմոն Վրացյանը[83]: Այս երկու փաստաթղթի բովանդ-

[81] Սերոբյան Մ., Հայաստանի անկախության առթիվ, Կահիրե, 1950, էջ 99:
[82] Նույն տեղում:
[83] «Արևելք Ծարեգիրք» (Հալեպ), 1948, էջ 73-77:

ակությունը նույնն էր. անդրադարձ է կատարվել Հայկական հարցի համառոտ պատմությանը՝ մեծ տեղ հատկացնելով Հայաստանի առաջին հանրապետությանը, Սևրի պայմանագրին, Հայկական հարցի վերաբերյալ Ազգերի լիգայի բանաձևերին, իսկ վերջում պահանջվել է Թուրքիայի կողմից բռնազավթված հայկական հողերի ազատագրումը ու դրանց կցումը Խորհրդային Հայաստանին[84]: «Հայ ժողովրդի գործը» վերնագրով հուշագրում էլ ՄԱԿ-ից պահանջվում էր հայկական հողերի միացումը ազատ, անկախ գոյություն ունեցող Խորհրդային Հայաստանի Հանրապետությանը և արտասահմանում ապրող ու Հայաստան մեկնելու ցանկություն ունեցող հայերի վերադարձը Մայր Հայրենիք: Փաստաթղթում, մասնավորապես, նշվել է. «...Հասել է ժամանակը, որ Թուրքիայի տիրապետության ներքո գտնվող հայկական տարածքը միացվի Հայաստանին, ինչը հնարավորություն կտար տարբեր երկրներում բնակվող մեկուկես միլիոն հայերին վերադառնալ Հայրենիք»[85]:

Այս երկու հուշագրերը մեկ անգամ էլ վկայում էին, որ հետպատերազմյան տարիներին Հայկական ազգային խորհուրդները և Հայկական ազգային կոմիտեն Հայկական հարցում հետապնդել են նույն նպատակները՝ հայկական տարածքների վերադարձը, սակայն այդպես էլ չեն կարողացել համաձայնության գալ: Ավելին՝ 1945 թ. Սիյուռքում գործող կազմակերպությունները ոչ միայն չեն համագործակցել, այլև տեղեկացված չեն եղել միմյանց գործունեությանը ու նման չհամաձայնեցված քայլերը այդ տարիներին իրենց բացասական դերն են ունեցել Հայկական հարցի լուծման գործում: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ Սիյուռքում գործող քաղաքական կուսակցությունները բաժանված էին երկու հակադիր և անհանդուրժողական ուժերի, իսկ Խորհրդային Հայաստանը, չունենալով միջազգային իրավունքի սյուբեկտի կարգավիճակ, չի կարողացել միավորել վերջիններիս: Ավելին՝ ԽՍՀՄ-ի ՀՅԴ նկատմամբ ունեցած դիրքորոշումը ավելի է սրել հայկական ազգային կուսակցությունների միջև գոյություն ունեցող հակասությունները: Հավանական է, նշվածով է պայմանավորված Ազ, որ ի տարբերություն Հայկական ազգային կոմիտեի հուշագրի, Ամերիկահայ ազգային խորհրդի հուշագիրը մեծ արձագանք է գտել ինչպես

[84] Հայ դատի Հանձնախմբ, Հաղորդագրություն Հայ դատի Հանձնախմբի, թիվ 1, օգոստոս 1945, Նյու Յորք, էջ 7:
[85] Armenian National Council of America, The Case of the Armenian People, Memorandum to the United Nations Conference on International Organization in San Francisco, June 4, 1945, New York, 1945, p. 1-7.

արտերկրի հայկական գաղթօջախներում, այնպես էլ Մայր Հայրենիքում: Այն տպագրվել է «Սովետական Հայաստան» թերթում՝ մեծ ոգևորություն առաջացնելով Հայաստանի բնակչության ամենալայն շրջանակներում: Սփյուռքահայության առաջ քաշած հարցերը Խորհրդային Հայաստանում ապրող հայությունը համարում էր միանգամյան բնական ու արդարացի: Եվ այդ էր պատճառը, որ խորհրդային թերթում, ի նպաստ Հայկական դատի, տպագրվել են նամակներ՝ «Արդարության ձայն», «Հասել է ժամանակը», «Մեկուկես միլիոն մարդկանց ձայնը» և նման խոսուն վերնագրերով[86]: Դրանցից հատկապես հատկանշական է անվանի գրող Դ. Դեմիրճյանի հայրենասիրական ոգով գրված նամակը[87]: Խորհրդային Հայաստանում հուշագրի նման ընդունելությունը սփյուռքահայերի համար անսպասելի էր[88], և դա նոր հույսեր առաջացրեց, որ Հայկական հարցը վերջապես կստանա արդարացի լուծում:

Սան Ֆրանցիսկոյի հուշագիրն արձագանք գտավ ոչ միայն Խորհրդային Հայաստանի ու արտասահմանյան, այլև թուրքական մամուլում: «Cumhuriyet» թերթը 1945 թ. մայիսի 9-ին խմբագրականում գրում է. «Հայերը, հանդիսանալով թուրքական հպատակներ, օգտվում են մեր օրենքների բոլոր իրավունքներից, որոնք տարածվում են մեր քաղաքացիների վրա: Այդ դեպքում վերոհիշյալ հաղորդագրությունը կոնֆերանսի (ՄԱԿ-ի վեհաժողովի.- *Ք.Մ.*) հավաքված երկրների ներկայացուցիչներին հայերի դիմումի մասին տեղին չէ և անմիտ է»[89]: Թերթի թղթակիցներից մեկն օրեր անց հանդիպել և զրուցել է Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք Արսլանյանի հետ: Վերջինս նշել է, որ, լինելով հայերի հոգևոր ներկայացուցիչը, զբաղվում է միայն կրոնական հարցերով, և քանի որ քննարկվող հարցը զուտ քաղաքական է, ինքը լիազորված չէ հայ հասարակության անունից այդ առումով ինչ-որ բան ասել[90]: Թե նման պատասխանը որքանո՞վ է գոհացրել թուրք ընթերցողին և Թուրքիայի կառավարությանը, հայտնի չէ, սակայն այն, որ սփյուռքահայերը այս ուղղությամբ չարունակում էին իրենց գործունեությունը, բավականին ցավագին է ընդունվել թուրքերի կողմից:

---

[86] «Սովետական Հայաստան», 15. VI. 1945:
[87] Նույն տեղում:
[88] «Ժողովուրդ», 21. VI. 1945:
[89] ՀԱԱ, ֆ. 1, ց. 034, գ. 95 (Նյութեր Սան Ֆրանցիսկոյի հայկական հուշագրի վերաբերյալ), թ.146:
[90] Նույն տեղում, թթ. 146-148:

ՄԱԿ-ին ներկայացված այս հուշագրերից բացի, հայկական ազգային խորհուրդները համանման խնդրագրեր են ուղարկել նաև Պոտսդամի, Մոսկվայի, Լոնդոնի, Փարիզի և Նյու Յորքի խաղաղության վեհաժողովներին:

Հայկական ազգային կոմիտեն 1945 թ. հուլիսի 5-ին՝ Պոտսդամի խորհրդաժողովի նախօրեին, հուշագիր է ներկայացրել Ստալինին, Տրումենին և Չերչիլին: Այն նախորդից՝ 1945 թ. մայիսի 7-ին ՄԱԿ-ին ներկայացված հուշագրից գրեթե չէր տարբերվում: Դրանում, մասնավորապես, ասվում էր. «Ցանձնախումբս կը հավատայ և կը խնդրէ ձեզմէ արդար լուծում մը հայկական խռովիչ հարցին, այն է՝ կցել ներկայ վերածաղկյալ Հայաստանի Խորհրդային Հանրապետութեան ոչ միայն Կարս և Արտահանի շրջանները, այլև Թուրքահայաստանը, որ դաշնակից պետութեանց առաջարկով սահմանուած է նախագահ Ուիլսընեի կողմէ»[91]:

1945–1947 թթ. սփյուռքահայերը բազմիցս դիմել են մեծ տերությունների ղեկավարներին, այդ երկրների արտաքին գործերի նախարարներին, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին և միջազգային այլ կազմակերպությունների ներկայացուցիչներին, Խորհրդային Հայաստանի ղեկավարներին: Աչխարհի ողջ հայության կողմից տասնյակ հազարավոր նամակներ են ուղարկվել Ի. Ստալինին, Վ. Մոլոտովին, Գ. Հարությունյանին, Ս. Կարապետյանին և ուրիշներին: Հասկանալի է, որ դրանց բովանդակությունը նույնն էր, պահանջը՝ մեկը: Այդ խնդրագրերը լուսաբանվել են ինչպես սփյուռքահայ, այնպես էլ խորհրդային ու արևմտյան մամուլում: Այդ տարիներին արտասահմանյան պարբերականներում լույս են տեսել հայկական հողային պահանջին վերաբերող բազմաթիվ հոդվածներ ու նամակներ. օրինակ, 1945 թ. հուլիսի 4-ին «The New York Times»-ում հրապարակվել է գրող Լևոն Զավեն Սյուրմելյանի նամակը, որտեղ նա պաշտպան է կանգնում ԽՍՀՄ-ի կողմից Թուրքիային ներկայացրած տարածքային պահանջին[92]:

Հայկական հարցի լուծման գործում օտարերկրյա տերությունների աջակցությունը ստանալու ակնկալիքով սփյուռքահայերը 1945 թ. սկսեցին համագործակցել տվյալ երկրի կառավարության անդամների, օրենսդիրների, դիտության և արվեստի ճանաչված ներկայացուցիչների հետ: Այսպես, 1945 թ. աշնանը Ամերի-

[91] Նույն տեղում:
[92] «The New York Times», 4. VII. 1945.

կահայ ազգային խորհուրդը, ի նպաստ Հայ դատի, հավաքել է 20 հազար ստորագրություն և ներկայացրել Սենատ[93]: Նոյեմբերի 9-ին Նյու Յորքի «Բելմոնթ Փլազ» հյուրանոցում մի խումբ նշանավոր ամերիկացիներ էլ ստեղծել են Հայերի իրավունքների պաշտպանության ամերիկյան կոմիտե՝ սենատոր Էդվին Սմիթի (Ամերիկա-խորհրդային բարեկամության ազգային խորհրդի նախկին ղեկավար) նախագահությամբ և կոնգրեսական Ռոբերտ Վ. Սելլրի (Նյու Յորքի բողոքական եկեղեցիների դաշնության գլխավոր քարտուղար) քարտուղարությամբ: Կոմիտեին կից ձևավորվել է Ազգային իրավունքների խորհուրդ, որի 150 անդամների թվում էր նաև մեծ վիպասան Թ. Դրայզերը[94]:

Հայերի իրավունքների պաշտպանության ամերիկյան կոմիտեն լայն գործունեություն է ծավալել: 1945 թ. դեկտեմբերին այդ կոմիտեն դիմում է հղել Մոսկվայում հավաքված երեք մեծ տերությունների արտգործնախարարներին՝ նրանց կառավարություններից պահանջելով բավարարել հայ ժողովրդի արդարացի իրավունքները, այն է՝ վերադարձնել հայկական պատմական հողերը Խորհրդային Հայաստանին և արտասահմանում ապրող հայերին հնարավորություն տալ վերադառնալու իրենց հայրենիքը[95]:

1946 թ. հունվարին կոմիտեն համանման բովանդակությամբ ուղերձ է հղել Լոնդոնում գումարված ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի առաջին նստաշրջանի մասնակից ամերիկյան ներկայացուցիչներին[96]:

Ապրիլի 28-ին Նյու Յորքի «Քարնեգի Հոլլ»-ում հայերի իրավունքների պաշտպանության ամերիկյան կոմիտեն մեծ միջոցառում է կազմակերպել՝ ի նպաստ Հայկական դատի: Իրենց ելույթներում սենատոր Ջ. Թոբին, կոնգրեսականներ Է. Սելլրը, Ջ. Սևիջը և ուրիշներ Հ. Տրումենի վարչակազմից պահանջել են «արդարություն հայերի համար», այն է՝ հայկական հողային պահանջների լուծում[97]: Միջոցառման մասնակիցներն ընդունել են բանաձև, որում ՄԱԿ-ին կոչ էին անում «ուշադրություն ցուցաբերել և արագ լուծել Հայկական հարցն այդ բանաձևի առաջարկությունների համաձայն», այսինքն՝ օժանդակել Արևմտյան Հայաստանի տարածքները Խորհրդային Հայաստանին վերամիավորելու գործին:

---

[93] Ահարոնյան Գ., Մեծ երազի ճամբուն վրայ ..., Պէյրութ, 1964, էջ 67:
[94] Vertanes Ch., Armenia Reborn, pp. 114-115.
[95] Նույն տեղում:
[96] «Զարթոնք», 21. II. 1970:
[97] Նույն տեղում:

Բանաձևի պատճեներն ուղարկվել են ՄԱԿ-ի բոլոր անդամներին, ԱՄՆ-ի նախագահ Հ. Տրումենին և պետքարտուղար Ջ. Բյորնսին[98]:

«Արդարություն հայերի համար» կոչը, սակայն, մնաց անարդյունք, քանզի արդեն 1946 թ. սկսվել էր «սառը պատերազմը»[99]: 1946 թ. մայիսի սկզբին Հայերի իրավունքների պաշտպանության ամերիկյան կոմիտեի նախագահ Է. Սմիթը հանդես եկավ բաց նամակով, որտեղ բացահայտ ասվում էր, որ ամերիկյան քաղաքական ազդեցիկ որոշ շրջաններ դեմ են Հայաստանի պահանջներին, որովհետև այն ծառայում է Խորհրդային Միության ռազմավարական և տնտեսական շահերին: Նա խորհուրդ էր տալիս չմոռանալ, որ նման դիրքորոշումը չի համապատասխանում այն գաղափարներին, որոնց համար կռվել ու զոհվել են ամերիկացիները, ռուսները, անգլիացիները և հայերը: Ըստ Է. Սմիթի՝ «Հայկական հարցը ստեղծվել է Թուրքիայի անցած պատմության մութ էջերում և ոչ թե Խորհրդային Միության մեջ»[100]: Նամակում արծարծված հարցերը նույնպես մնացին անարձագանք:

Սփյուռքահայերի ձեռնարկած գործողություններից ամենահատկանշականը Ամերիկահայ ազգային խորհրդի նախաձեռնությամբ Համաշխարհային հայկական կոնգրեսի հրավիրումն էր, որը կայացել է Նյու Յորքում 1947 թ. ապրիլի 30-ից մայիսի 4-ը: Այդ օրերին խորհրդային, սփյուռքահայ և ամերիկյան թերթերը կոնգրեսի հրավիրման փաստն անվանել են պատմական ու եզակի իրադարձություն: Իրենց ուղերձներում այն բարձր են գնահատել Խորհրդային Հայաստանի ղեկավար այրերը՝ Գ. Հարությունյանը, Մ. Պապյանը, Ս. Կարապետյանը, նաև գիտության ու մշակույթի բազում գործիչներ[101]: Ավելի ուշ, սակայն, խորհրդային պատմաբանները կփորձեն չրջանցել և մոռացության տալ Նյու Յորքում տեղի ունեցած այդ մեծ իրադարձությունը: Սփյուռքահայ պատմաբաններն էլ այն կհամարեն Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Հայկական հարցի լուծման նպատակով ստեղծված ազգային խորհուրդների գործունեության գագաթնակետը:

---

98 Նույն տեղում:

99 Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո սկիզբ առած համաշխարհային աշխարհաքաղաքական, ռազմական, տնտեսական առճակատումը Արևմուտքի և Սոցիալիստական ճամբարի երկրների միջև

100 «The New York Times», 3. V. 1945.

101 Համառոտ տեղեկություն Համաշխարհային հայկական կոնգրեսի ապրիլի 30-մայիսի 4, 1947, Նյու Յորք, 1947, էջ 11-12:

Ինչևէ, Համաշխարհային հայկական կոնգրեսի աշխատանքներին մասնակցելու համար Նյու Յորք էր ժամանել 22 երկրից 720 հայ պատգամավոր՝ հայության օրախնդիր հարցերը քննարկելու համար: Կոնգրեսի օրակարգում ընդգրկվել էին Հայկական հարցը, հայրենադարձության, գաղութահայերի համագործակցության և այլ խնդիրներ: Հայերից բացի, կոնգրեսի նիստերում ելույթներով հանդես են եկել ամերիկյան քաղաքական գործիչները: Օրինակ, սենատոր Զ. Թոբին ասել է. «Արդարությունը պահանջում է, որ Հայաստանը ընդգրկվի նախագահ Վիլսոնի գծած սահմաններում»[102]: Ավելին, մասնակից բոլոր պատգամավորների ելույթներում հնչել է հետևյալ արտահայտությունը. «Ժամանակը եկել է, որ Հայկական հարցը իր վերջնական լուծումը ստանա»[103]: Ամենայն հայոց Գևորգ Զ կաթողիկոսը կոնգրեսին հղած ուղերձում նշել է. «Մենք անվերապահ իրավունք ունենք և՛ պահանջելու, և՛ ակնկալելու մեր արդար դատի պաշտպանությունը մանավանդ այսօր, երբ Ատլանտյան խարտիան և ՄԱԿ-ի կանոնադրությունն ազդարարել են մարդկային իրավունքների, ազգերի ազատագրության, քաղաքական արդարության և այլ բարձր սկզբունքներ»[104]:

Համաշխարհային հայկական կոնգրեսի մասնակիցները խնդրագրերով դիմել են ՄԱԿ-ին և մեծ տերությունների կառավարություններին՝ պահանջելով Հայկական հարցի վերջնական ու արդարացի լուծում[105]:

Նյու Յորքում կայացած Համաշխարհային հայկական կոնգրեսը մեծ դեր է խաղացել սփյուռքահայերի կյանքում. այն միավորել է իրարից անջատ գործող հայկական ազգային խորհուրդները և աշխարհին մեկ անգամ ևս հիշեցրել, որ Հայկական հարցը սպասում է իր արդար լուծմանը:

Հայերի ներկայացրած պահանջը, սակայն, կրկին անտեսվել է Մեծ տերությունների կողմից: Սփյուռքահայերի համար դա հատկապես ակնհայտ է դարձել, երբ Համաշխարհային հայկական կոնգրեսի պատվիրակությունը փորձել է վերոհիշյալ խնդրագիրը հանձնել ԱՄՆ-ի կառավարությանը: 1947 թ. մայիսի 12-ին ԱՄՆ-ի

---

[102] Նույն տեղում, էջ 6:
[103] Նույն տեղում:
[104] Նույն տեղում, էջ 9:
[105] Armenian National Council of America, A Memorandum on the Armenian Question, Prezented to the Council of Foreign Ministers, March 7, 1947, New York, 1947, pp. 1-7; The Resolution to the United Nations Submitted by the World Armenian Congress, New York, 1947, pp. 1-11; An Appeal, To the Member Governments and Their Delegates to the United Nations, July 1, 1947, New York, 1947, pp. 1-5.

պետքարտուղարի տեղակալ Դ. Աչիսոնի հետ կայացած հանդիպման ժամանակ ամերիկացի պաշտոնյան խոսել է Հայկական հարցի լուծման ճանապարհին առկա խոչընդոտների մասին[106]: Աչիսոնն ասել է. «... այն չափով, որ մեծանա և հզորանա Հայաստանը, նույն չափով կաճի ուժը մեր գլխավոր թշնամու՝ Սովետական Միության»[107]: Այլ կերպ ասած՝ Վաշինգտոնը որոշել էր ամեն գնով թույլ չտալ Թուրքիայի մասնատումը:

Ինչևէ, 1947 թ. հետո ԽՍՀՄ-ի կողմից Կարսի և Արդահանի պահանջը միջազգային ասպարեզում այլևս չի շոշափվել: Մեր կարծիքով, այն ամեևին կապված չէ ԱՄՆ-ի՝ Թուրքիայի պաշտպանի դերում հանդես գալու իրողության հետ, ինչպես դա փորձում են ներկայացնել որոշ պատմաբաններ: Վաշինգտոնի սպառնալիքները չեն վախեցրել Ստալինին, քանի որ Թուրքիային ԽՍՀՄ-ի ներկայացրած պահանջները օրակարգից դուրս են եկել միայն նրա մահից հետո: 1953թ. մայիսի 30-ին խորհրդային կառավարությունը հայտարարում է. «Հանուն բարիդրացիական հարաբերությունների պահպանման և խաղաղության ու անվտանգության ամրապնդման Հայաստանի և Վրաստանի կառավարությունները հնարավոր գտան հրաժարվել Թուրքիայի նկատմամբ ունեցած իրենց տարածքային պահանջներից... Այդպիսով, խորհրդային կառավարությունը հայտարարում է, որ Խորհրդային Միությունը տարածքային ոչ մի պահանջ չունի Թուրքիայից»[108]: Սակայն չի կարելի նաև բացառել, որ ԱՄՆ-ում ատոմային ռումբի առկայությունը, «սառը պատերազմը» և 1949 թ. Հյուսիսատլանտյան դաշինքի՝ ՆԱՏՕ-ի ստեղծումը էական դեր են խաղացել այդ հարցում: Փաստ է միայն այն, որ Մոսկվան ստիպված էր ժամանակավորապես սառեցնել «թուրքական ծրագիրը»: Այդ «լռությունը», սակայն, ևս չի նպաստել խորհրդա-թուրքական հարաբերությունների բարելավմանը: Երկու երկրների միջև լարվածությունն էլ ավելի է խորացել, երբ 1951 թ. աշնանը արևմտյան պետությունները որոշեցին Թուրքիային ընդգրկել Հյուսիսատլանտյան դաշինքի մեջ: Թուրքիայի արտգործնախարար Ֆ. Քյոփրուլուն դեկտեմբերի 19-ին մեջլիսում ունեցած իր ելույթում ԽՍՀՄ-ին մեղադրել է միջազգային լարվածություն ստեղծելու մեջ և հայտա-

րարել, որ ՆԱՏՕ-ին անդամակցելով՝ իրենք ապահովագրում են իրենց երկրի անվտանգությունը[109]:

Ամփոփենք. 1946 թ. սկսված «սառը պատերազմը» բացասական անդրադարձ ունեցավ Հայկական հարցի լուծման գործընթացի վրա: Թուրքիան, ի դեմս ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի, ձեռք բերեց դաշնակիցներ, որոնք էլ պարտավորվեցին պաշտպանել Թուրքիայի տարածքային ամբողջականությունը: Ստեղծված պայմաններում Հայկական հարցը հայտնվեց փակուղում և 1950-ականներին վերջինիս լուծման ուղղությամբ զարգացումներ չգրանցվեցին: Ավելին՝ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո սկիզբ առած սառը պատերազմը երկփեղկեց հայկական իրականությունը նաև աշխարհաքաղաքական առումով: Խորհրդային պետության սահմաններում բնակվող հայությունը և Սփյուռքը փաստացիորեն հայտնվեցին երկու հակադիր ճամբարներում: Հայկական հարցում սփյուռքահայության պայքարն առավել դործուն դարձավ 1960-ական թվականների կեսերից՝ Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցի նախօրեին:

[109] Olaylarla Türk dış Politikası (1919–1973), Üçüncü baskı, Ankara, 1974, s. 426–427.

ԳԼՈՒԽ II

ՀԱՑՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՑԱՆ 50-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ ԵՎ ՍՓՑՈՒՌԱՀԱՑԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՑՈՒՆԸ 1960-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1960-ական թվականների սկզբին՝ Մեծ եղեռնի 50-րդ տարելիցի նախօրեին, սիյուռքահայությունը եռանդուն պայքար սկսեց Հայկական հարցը լուծելու և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման համար: Այդ ժամանակահատվածում նկատելիորեն մեծանում է համաշխարհային հանրության հետաքրքրությունը այդ հարցերի նկատմամբ. տարբեր ձևաչափերով քննարկումներ են սկսվում միջազգային կազմակերպություններում, դիտական և հասարակական խորհրդաժողովներում:

ՄԱԿ-ում Հայոց ցեղասպանության հարցի շուրջ հիշատակումները սկսվում են 1960-ական թվականների սկզբին. այդ մասին առաջին անգամ խոսվում է 1961 թ.[110]: Հիմնական հիշատակումները, սակայն, լինում են 1964-1965 թթ. ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդի նիստերում՝ Կիպրոսի հարցի շուրջ ընթացող քննարկումների ժամանակ: Հատկապես հիշարժան են 1965 թ. հունվարի 25-27-ը ՄԱԿ-ի ընդհանուր ժողովում կայացած քննարկումները: Հունվարի 25-ին Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ֆ. Էրքինն իր ելույթում դատապարտում է Կիպրոսում թուրքերի հանդեպ հույների ցուցաբերած անընդունելի վերաբերմունքը և առաջարկում է, որ ՄԱԿ-ը Մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքների հիման վրա քննարկի Կիպրոսի ապագա կարգավիճակը՝ հաշվի առնելով այդ երկրում ապրող իր ազգակիցների իրավունքները: Նա հույներին մեղադրում է թուրքերին կոտորելու համար[111]: Ի պատասխան՝ Կիպրոսի արտաքին գործերի նախարար Ս. Կիփրիանուն նախ հայտարարում է, որ ինքը չի պատրաստվում անդրադառնալ տեղի ունեցած բախումներին, ապա Ֆ. Էրքինին հիշեցնում է Հայոց ցեղասպանության մասին. «Հաշվի առնելով այն փաստը, որ հարցը բարձրացվեց և ինչ-որ մեկը պետք է մտածի, մասնավորապես, այն ժողովրդի (խոսքը Հայերի մասին է.- *Ռ.Մ.*) մասին, որը չի հիշատակվում մյուսների կողմից,

---

[110] «Ազդակ», 4. V. 1965:

[111] UN General Assembly, Nineteenth Session, 1321st Plenary Meeting, Monday, 25 January 1965, New York, p. 8;
http://www.un.org/ga/search/view_doc.asp?symbol=A/PV.1321 ...

ես պարտավոր եմ տեղեկացնել, որ այս տարի ամբողջ աշխարհի հայերը պատրաստվում են նշել 1915 թ. Թուրքիայում 1.5 միլիոն հայերի կոտորածի 50-րդ տարելիցը»[112]:

Մեկ օր անց՝ հունվարի 26-ին, ՄԱԿ-ում Թուրքիայի ներկայացուցիչ Օ. Էրալփը փորձում է հերքել իր երկրին ուղղված մեղադրանքը՝ կապված հայերի ցեղասպանության հետ: Նա հայտարարում է. «Կիպրոսի արտաքին գործերի նախարար Կիփրիանուն հերթական հուսահատ փորձն արեց Թուրքիային վարկաբեկելու ուղղությամբ՝ մեղադրելով թուրքերին անցյալում, այսպես կոչված, հայերի զանգվածային կոտորածներ իրականացնելու համար»[113]:

Հունվարի 27-ին Ս. Կիփրիանուն կրկին արձարձում է Հայոց ցեղասպանության հարցը և հերքում թուրքերի բերած պատճառաբանությունները: Իր ելույթում նա ասում է. «Թուրքիայի ներկայացուցիչը կրկին խոսեց կոտորածի մասին (խոսքը Կիպրոսում թուրքերի կոտորածների մասին է. - *Ք.Մ.*): Ես չեմ առաջինը բարձրացրել այդ հարցը և, ինչպես նշել եմ, փորձել եմ դա չրջանցել: Սակայն երկու օր առաջ ստիպված էի անդրադառնալ հայերի կոտորածներին, որը Թուրքիայի ներկայացուցիչն անվանեց «այսպես կոչված» կոտորածներ: Ավելին, որպեսզի ամբապնդի իր տեսակետները՝ հիմնվել է Առնոլդ Թոյնբի գրքի վրա: Ես խորհուրդ կտամ նրան կարդալ Առնոլդ Թոյնբի բոլոր աշխատությունները, և նա կարող է դրանցում գտնել հայերի կոտորածների վերաբերյալ տեղեկություններ և շատ այլ բաներ, որոնք, վստահ եմ նրան դուր չեն գա»[114]:

Մեկ ամիս անց էլ՝ փետրվարի 22-ին, լրագրողներին տված իր մի հարցազրույցում Ս. Կիփրիանուն, մասնավորապես, ասում է, որ ՄԱԿ-ում առիթ է ունեցել մի շարք երկրների ներկայացուցիչների հետ խոսել Հայկական Դատի մասին, և այդ հարցը մանրամասնությամբ ներկայացնել վերջիններիս: «Նրանցից շատերը մեծապես տպավորված են և մեծ հետաքրքրություն ու համակրանք են ցուցաբերում»[115],- նշում է Կիպրոսի արտգործնախարարը:

Անդրադառնանք, սակայն, ՄԱԿ-ում Թուրքիայի և Կիպրոսի ներկայացուցիչների միջև տեղի ունեցած հրապարակային բանա-

---

[112] Նույն տեղում, էջ 16:
[113] UN General Assembly, Nineteenth Session, 1323rd Plenary Meeting, Tuesday, 26 January 1965, New York, p. 18; http://daccess-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/NL6/605/72/ PDF/ NL660572.pdf? OpenElement
[114] Նույն տեղում, էջ 7:
[115] «The New York Times», 22. II. 1965.

վեճին: Ուշագրավ է, որ դրա ընթացքում ի հայտ են գալիս Հայոց ցեղասպանության հարցում Թուրքիայի որդեգրած ժխտողական քաղաքականության քարոզչության որոշ կարևոր տարրեր, որոնք դրվում են չրջանառության մեջ: Այսպես, Թուրքիայի ներկայացուցիչ Օ. Էրալփը հունվարի 26-ի իր ելույթում, թերևս, առաջին անգամ օգտագործում է «այսպես կոչված, հայերի զանգվածային կոտորածներ» արտահայտությունը: Մի քանի ամիս անց արդեն՝ ապրիլի 24-ին, «Cumhuriyet» թերթում տպագրված «Հայերի անհանգստությունը» («Ermenilerin Rahatsızlığı») վերնագրով հոդվածում այդ արտահայտությունը կրկնվում է[116]: Այնուհետև, «այսպես կոչված, հայերի զանգվածային կոտորածներ» արտահայտությունը Թուրքիայում դրվում է լայն չրջանառության մեջ: Տասնամյակներ շարունակ այն դառնում է թուրքական մամուլի, քաղաքական ու հասարակական գործիչների կողմից Հայոց ցեղասպանությունը ժխտող հիմնական արտահայտությունը: Ըստ ամենայնի, դա կարելի է համարել խնդրո առարկա հարցում Թուրքիայի ժխտողական քարոզչությունը խորհրդանշող կարևոր տարրերից մեկը:

Ավարտելով մեր խոսքը 1960-ական թվականների սկզբին ՄԱԿ-ում Հայոց ցեղասպանության հարցի չուրջ ծագած բանավեճի մասին՝ նկատենք, որ այն որևէ արդյունք չի ունեցել: Չի բացառվում, որ միջազգային նման բարձր աստյանում Հայկական հարցի արծարծման միակ նպատակը կիպրոսյան հարցում Թուրքիայի վրա ճնշում գործադրելն էր: Նաև հավելենք, որ 1968 թ. նոյեմբերի 26-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում ընդունված «Ռազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված ոճրագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետը չկիրառելու մասին» կոնվենցիայում[117], Հայոց ցեղասպանության փաստը նույնիսկ չհիշատակվեց: Հենց այս իրողությունն էլ խթան դարձավ, որ Սփյուռքում գործող հայ քաղաքական ու հասարակական կազմակերպություններն ակտիվ գործունեություն և քարոզչու-

---

[116] «Cumhuriyet» (İstanbul), 24. IV. 1965.

[117] «Ռազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված ոճրագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետը չկիրառելու մասին» կոնվենցիան մասնակիցներին պարտավորեցնում է ձեռնարկել օրենսդրական կամ այլ միջոցներ, որպեսզի աղգային օրենսդրություններում սահմանված վաղեմության ժամկետը և այլ սահմանափակումները չկիրառվեն փաստաթղթում թվարկված հանցագործությունների համար հետապնդման ու պատժի դեպքերում: Կոնվենցիան մարդկության դեմ ուղղված ոճրագործությունների չարքն է դասում նաև ցեղասպանությունը: Մանրամասն տե՛ս UN General Assembly, Convention on the Non-Applicability of Statutory Limitations to War Crimes and Crimes against Humanity, A/RES/2391 (XXIII), http://www.un.org/Docs/asp/ws.asp?m=A/RES/2391%20(XXIII)

թյուն ծավալեն ինչպես ՄԱԿ-ում, այնպես էլ միջազգային այլ կառույցներում: Արդյունքում՝ 1970-ական թվականներին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի Փոքրամասնությունների խտրականության կանխման ու պաշտպանության ենթահանձնաժողովը քննարկումներ կազմակերպեց 1915-1923 թթ. Հայոց ցեղասպանության հարցի շուրջ:

1960-ական թվականներին Հայկական հարցը չահարկվում էր մեծ տերությունների կողմից, երբ ցանկանում էին ճնշում գործադրել Թուրքիայի վրա. այդ հարցը չարունակում էր մնալ լուրջ խաղաքարտ Թուրքիայի դեմ: Այսպես, նկատենք, որ կիպրոսյան հարցի շուրջը Թուրքիայի որդեգրած քաղաքականության և ծավալած գործողությունների հետևանքով թուրք-ամերիկյան հարաբերությունները լարվել էին: Այդ է վկայում 1974 թ. օգոստոսի 22-ին Թուրքիայի վարչապետ Բ. Էջևիտի հայտարարությունը, որում ասվում է. «1964 թ. հունիսի 5-ի՝ ԱՄՆ-ի նախագահ Լինդոն Ջոնսոնը վարչապետ Իսմեթ Ինյոնյուին ուղղած իր նամակում սպառնում էր Խորհրդային Միությանն հարձակման դեպքում չաջակցել ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիային, եթե վերջինս իր զորքերը մտցնի Կիպրոս՝ Հունաստանի դեմ»[118]: Դեռևս 1964 թ. մայիսի 10-ին ԱՄՆ-ի պետքարտուղարության կողմից մշակված «կիպրոսյան հարցին» վերաբերող փաստաթղթում առաջարկվում է վեր հանել Թուրքիային «անհանգստացնող խնդիրները» վերջինիս վրա ճնշում գործադրելու նպատակով[119]: Ճիշտ է, փաստաթղթում չի նշվում, թե ինչ «խնդիրների» մասին է խոսքը, սակայն կարելի է ենթադրել, որ Հայկական հարցը նույնպես ընդգրկված է եղել դրանց մեջ:

Բացի այդ, 1960-ական թվականներին ԽՍՀՄ-ը, օգտվելով թուրք-ամերիկյան լարված հարաբերություններից, փորձում է բարելավել խորհրդա-թուրքական կապերը, վստահեցնելով, որ Թուրքիայից տարածքային որևէ պահանջ չունի: Հայկական հարցի հետ կապված Խորհրդային Միության մոտեցումը կարելի է բնութագրել «երկակի», որը, ըստ էության, պայմանավորված էր նշված ժամանակահատվածում խորհրդա-թուրքական և թուրք-ամերիկյան հարաբերություններում նկատվող փոփոխականության հետ:

---

[118] «Hürriyet» (İstanbul), 23. VIII. 1974.
[119] FRUS, Cyprus; Greece; Turkey, United States Government Printing Office, Washington, 1964–1968, vol. VI, 2000, p. 81.

Նախ՝ արձանագրենք, որ 1960-ականների սկզբներին ԽՍՀՄ-ը խուսափում էր հայկական տարածքների հարցը բարձրացնելուց, չնայած Սիլիցիումի դոլինում գործող քաղաքական, հասարակական կազմակերպությունները բազմիցս դիմել են այդպիսի պահանջ-խնդրանքով: Օրինակ, 1961 թ. մայիսի 7-ին Խորհրդային Հայաստանի 40-ամյակի հանդիսություններին մասնակցելու նպատակով Երևան ժամանած սիլիցիումյան հայ պատվիրակությունների ներկայացուցիչները հանդիպում են ունեցել ԽՄԿԿ առաջին քարտուղար Ն. Խրուշչովի հետ: Այդ հանդիպումը նախաձեռնած ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Յա. Զարոբյանը ցանկանում էր ԽՍՀՄ ղեկավարին ցույց տալ աշխարհասփյուռ հայության միասնությունը և ներկայացնել Արևմտահայաստանի, Ղարաբաղի ու Նախիջևանի տարածքների վերադարձի հարցում սիլիցիումյան հայ ազդեցիկ գործիչների կարծիքները: Հանդիպմանը հանդես են եկել Ջաուիկ Խանղադյանը (քարտեզագետ, Ֆրանսիա), Արամ Դեյրմենջյանը (Արգենտինա), Կարլոս Խրլակյանը (Բրազիլիայի պառլամենտի պատգամավոր), Արթին Ջերեջյանը (Լիբանանի Ս.Դ. Հնչակյան կուսակցության կոմիտեի քարտուղար), Համբարձում Բերբերյանը (Ռամկավար ազատական կուսակցության կենտրոնական վարչության անդամ), Հովհաննես Աղբաչյանը (Լիբանանի Կոմկուսի Կենտկոմի անդամ): Ս.Դ. Հնչակյան և Ռամկավար ազատական կուսակցությունների ներկայացուցիչներն իրենց ելույթներում բարձրացնում են Արևմտյան Հայաստանի և «ներքին հողերի» հարցերը[120]: Ի պատասխան՝ Ն. Խրուշչովն ասում է. «Մեր երկրի ներսում ազգային հարց գոյություն չունի, այն լուծված է և լուծված է շատ լավ: Ահա և ես մոտենում եմ ազգային հարցի լուծմանը, արդեն ոչ թե Խորհրդային Միության շրջանակներում, այլ մեր երկրի սահմաններից դուրս: Դա շատ բարդ հարց է: Դուք շատ լավ հասկանում եք, որ ինչպիսի պատճառաբանություն էլ մենք հիմա բերենք հայկական հողերի և հայերի իրավացիության մասին, այնուամենայնիվ, այն երկրները, որոնք տիրապետել են ձեր հողերին, մեր պատճառաբանությունների հետ երբեք չեն համաձայնվի, ուրեմն, եթե որոշենք, պետք է որոշենք միայն ուժով, և եթե մենք կանգնենք այդ ուղու վրա, ապա դա կործանիչ ուղի է, որովհետև այդ դեպքում մեր դեմ պրոպագանդա կկազմակերպեն, որ մենք ոչ

[120] «Զարթօնք» (Բեյրութ), 22. V. 1985; Վիրաբյան Ա., Հանդիպումներ խորհրդային պետության ղեկավարների հետ. - «Բանբեր Հայաստանի Արխիվների», 2003, թ. 1, էջ 156-173:

միայն ուզում ենք միավորել հայկական հողերը, այլև մենք դա օգտագործում ենք պատերազմ հրահրելու համար: Հայ ժողովրդի վերամիավորման հարցը կորոշվի, կլուծվի, բայց դրա համար հարկավոր է ունենալ համբերություն: Պատերազմով պետք չէ լուծել այդ հարցը. գիտակցությամբ, համակարգի սոցիալիստական առավելությունների վրա պետք է լուծել այդ հարցը»[121]: Ըստ էության, Խրուշչովն ընդունում էր, որ Թուրքիան զավթել է հայկական տարածքները, սակայն, միաժամանակ հասկացնում էր, որ հարցի լուծման միակ ճանապարհը պատերազմն է, ինչից ԽՍՀՄ-ը խուսափում էր, քանի որ հույս ուներ բարելավել խորհրդա-թուրքական հարաբերությունները:

1961-1962 թթ. ԽՍՀՄ-ի և Թուրքիայի հարաբերություններում բարելավում այդպես էլ չի նկատվում, ավելին՝ Կարիբյան ճգնաժամի պատճառով էլ ավելի է լարվում: Եվ, ինչպես վերը նշվեց, միայն 1964 թ. թուրք-ամերիկյան հարաբերություններում նկատվող լարվածությունն է նպաստավոր պայմաններ ստեղծում ԽՍՀՄ-ի և Թուրքիայի միջև կապերի ջերմացմանը: 1964 թ. նոյեմբերին պաշտոնական այցով Մոսկվայում գտնվող Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ֆ. Էրքինը և խորհրդային կառավարությունը համատեղ հաղորդագրություն են տարածում, որում ասվում է. «ԽՍՀՄ-ը և Թուրքիան համաձայն են ամեն ճիգ դործադրել, որ երկու երկրների միջև ամրապնդվեն բարիդրացիական հարաբերություններ՝ հիմնված անկախության, տարածքային ամբողջականության և իրավունքների հավասարության հիման վրա»[122]: 1965 թ. հունվարի 4-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Ն. Պոդգորնին Անկարա կատարած պատասխան այցի ընթացքում ևս հաստատում է, որ «խորհրդա-թուրքական սահմանը կոչված է դառնալու բարեկամության ամրապնդման խորհրդանիշ»[123]: Խորհրդային կառավարության հայտարարությունները Թուրքիայի տարածքային ամբողջականության անքակտելության վերաբերյալ, ըստ էության, վկայում են, որ պաշտոնական Անկարան վախենում էր, որ հայկական տարածքների պահանջի հարցը կրկին օրակարգում կհայտնվի և Մոսկվայից երաշխիքներ էր կորզում Թուրքիայի տարածքի ամբողջականության վերաբերյալ:

---

[121] Նույն տեղում:

[122] «Правда», 28. XI. 1964.

[123] «Правда», 09. I. 1965.

Փոխարենը՝ ԽՍՀՄ-ը Թուրքիայից երաշխիքներ էր պահանջում, որ վերջինս կարգելի Ա.Մ.Ն-ին ու ՆԱՏՕ-ին Թուրքիայի տարածքում ռազմաբազաներ կառուցելը: Թուրքական մամուլը տեղեկացնում է, որ երկրի իշխանությունները հրաժարվել են բավարարել խորհրդային կողմի պահանջը[124]: Այնուհանդերձ, 1965 թ. հունվարի 14-ին պաշտոնական Անկարան հայտարարում է, որ չի մասնակցելու գարնանը նախատեսված ՆԱՏՕ-ի զինավարժություններին[125]:

1965 թ. ընթացքում ԽՍՀՄ-ը շարունակում է Թուրքիային սիրաշահելու քաղաքականությունը: Այդ են վկայում մայիսի 18-ին ԽՍՀՄ-ի արտաքին գործերի նախարար Ա. Գրոմիկոյի՝ Անկարա կատարած պաշտոնական այցի ընթացքում արած հայտարարությունները: Նա խորհուրդ է տալիս հետևել «Աթաթուրքի և Լենինի օրինակին», նույնիսկ առաջարկում է վերագծել խորհրդա-թուրքական սահմանը[126]: Մայիսի 22-ի խորհրդա-թուրքական համատեղ հայտարարության մեջ նշվում է. «Երկու կողմերը իրենց հարաբերությունները կառուցում են անկախության, տարածքային ամբողջականության, իրավահավասարության հարգման և միմյանց ներքին գործերին չմիջամտելու սկզբունքի հիման վրա»[127]: Օգոստոսի 9-16-ը պատասխան այցով Խորհրդային Միությունում գտնվող Թուրքիայի վարչապետ Ալի Սուաթ Հայրի Ուրգյուփլուն մեկ անգամ էլ է «ստիպում» Մոսկվայի իշխանություններին հայտարարել, որ «ճանաչում են Թուրքիայի տարածքային ամբողջականությունը»[128]: Ավելին՝ երկու երկրների կառավարությունները հաստատում են, որ ցանկանում են «զարգացնել բարիդրացիական հարաբերություններ»[129]:

Չնայած նման հայտարարություններին՝ պաշտոնական Մոսկվան հետևում և, նույնիսկ շատ հաճախ, խրախուսում էր Սփյուռքում Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցի միջոցառումների նախապատրաստման աշխատանքները: Դրա խոսուն վկայությունն է 1964 թ. ՀԽՍՀ արտաքին գործերի նախարարության կողմից պատրաստված «Հայկական գաղութների մասին» դրույթյունը, որը ԽՍՀՄ-ի արտաքին դերատեսչությանը տեղեկացնում էր. «1965 թ.

---

[124] «Milliyet» (İstanbul), 11. I. 1965.
[125] «Milliyet», 15. I. 1965.
[126] «Правда», 23.V.1965.
[127] Նույն տեղում:
[128] «Правда», 17.VIII.1965.
[129] Նույն տեղում:

լրանում է 1915 թ. Թուրքերի կողմից հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանության 50-րդ տարելիցը: Սփյուռքում գործող հայկական կազմակերպությունները ձևավորել են հատուկ կոմիտեներ, որոնք կազմակերպելու են միջոցառումներ՝ նվիրված Մեծ Եղեռնի տարելիցին: Նախատեսվում է ստեղծել ընդհանուր մի կոմիտե, որը իրավասու կլինի Հայկական հարցը բարձրացնել տարբեր միջազգային կառույցներում»[130]: Ավելին՝ վաստաթղթում նշվում է, որ սփյուռքահայ և արտասահմանյան մամուլն իրազեկում է, որ արտերկրում ապրող հայերն այդ կոմիտեների միջոցով պատրաստվում են դիմել ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեային, որպեսզի վերջինս Հայոց ցեղասպանության հարցը վեր հանի 1965 թ. ՄԱԿ-ի ստեղծման 20-ամյակին նվիրված նիստում[131]: Սփյուռքահայերը դիմում են նաև ՄԱԿ-ի անդամ երկրների կառավարություններին՝ խնդրելով հայերի անունից Հայկական հարցը 1965 թ. ներկայացնել կառույցում: Միայն Հնդկաստանի վարչապետ Ջավախարլալ Ներուն է արձագանքում և խոստանում այն վեր հանել ՄԱԿ-ում[132]: Սակայն նա չի կարողանում կատարել խոստումը, քանի որ 1964 թ. մայիսի 27 –ին մահանում է:

1964-1965 թթ. ընթացքում հայերը կրկին փորձեր են անում ՄԱԿ-ի անդամ երկրների աջակցությունը ստանալու խնդրո առարկա հարցում: Եվ թեպետ անդամ երկրներն ընդունում էին Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայերի նկատմամբ Թուրքիայի իրականացրած ոճրագործությունների փաստը, սակայն, չցանկանալով վատացնել հարաբերությունները նրա հետ, նախընտրում են այս հարցում չեզոքություն պահպանել: Ինչ վերաբերում է Խորհրդային Միությանը, ապա այդ երկրի վերադաս մարմինները սփյուռքահայերի խնդրագիր-դիմումներին պատասխանում էին, որ այդ հարցում ԽՍՀՄ-ը նախընտրում է չեզոքություն պահպանել, քանի որ վախենում է իրեն մեղադրեն տարածքային ծավալապաշտության մեջ: Նաև ասվում է. «Ավելի ճիշտ կլինի, որ Հայկական հարցը ՄԱԿ-ում բարձրացվի չեզոք երկրի կողմից»[133]:

Այնուամենայնիվ, Խորհրդային կառավարությունը հայ եկեղեցուն թույլատրում է Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցի հետ կապված միջոցառումներ իրականացնել երկրում և երկրից

---

[130] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 359 (Մինիստրի տեղակալի տեղեկանքը «Հայկական գաղութների մասին», 16. 07.1964 թ.), թ. 3:
[131] Նույն տեղում:
[132] Նույն տեղում:
[133] Նույն տեղում:

դուբս: Այդ է վկայում 1964 թ. օգոստոսի 17-ի Վազգեն Ա. կաթողիկոսի կոնդակը՝ «նվիրված Համաշխարհային առաջին պատերազմի ընթացքում արևմտահայ ժողովրդի նահատակությանը», որով 1965 թ. հռչակվում է «սուգի և աղոթքի տարի Հայ եկեղեցու և ժողովրդի համար»[134]: Փաստաթուղթը բաղկացած է հինգ կետից: Դրանք են՝

«ա. Յառաջիկայ 1965 տարին հռչակուի մեր Եկեղեցիին եւ համայն մեր ժողովուրդին համար ազգային սուգի եւ աղօթքի տարի,

բ. Հայաստանեայց բոլոր եկեղեցիներուն մէջ, ապրիլ 24-ին տեղի ունենան կրօնական յատուկ արարողութիւններ եւ հոգեհանգստեան պաշտօններ, աղօթելու համար մեր բիւրաւոր նահատակներու հոգւոց խաղաղութեան եւ լուսաւորման համար,

գ. Ս. Էջմիածնի Մայր տաճարին մէջ այսուհետեւ պիտի մատուցուի յատուկ սուրբ պատարագ ամէն տարի ապրիլ 24-ին,

դ. բոլոր Հայ եկեղեցական համայնքներուն եւ դաղութներուն մէջ, Հայ եկեղեցւոյ հովանիին ներքեւ, անխտիր բոլոր հայկական միութեանց համերաշխ գործակցութեամբ, կազմակերպուին համազգային յուշի եւ յարգանքի հանդիսաւոր հաւաքոյթներ, դասախոսութիւններ, գրական նիստեր Հայ եւ այլազգի հասարակութեանց համար, նուիրուած Ապրիլեան Եղեռնին,

ե. Հայ եկեղեցական իշխանութիւնները, ազգային – հասարակական կազմակերպութիւնները, պատմագիտական – գրական – մշակութային հիմնարկները եւ Հայ մամուլը իրենց սեպուհ պարտքը համարեն խօսքով ու գործով ոդեկոչելու նուիրական յիշատակը մեծ եղեռնի տարիներուն մարտիրոսացած Հայ ժողովուրդին, Հայ հոգեւորականներուն եւ գրական հասարակական մեծանուն գործիչներուն, հրապարակելով Հայ եւ այլազգի հեղինակներու պատմական վկայութիւնները, վաւերաթուղթերը, ուսումնասիրութիւնները, յուշերը եւ գրական-գեղարուեստական գործերը»[135]:

Հաշվի առնելով այն իրողությունը, որ առանց խորհրդային կառավարության թույլտվության Հայ եկեղեցին իրավասու չէր նման որոշում կայացնել, կարելի է վստահորեն ասել, որ վերջինս ստացել էր այդ համաձայնությունը: Չի բացառվում, որ այդ կերպ խորհրդային Միությունը փորձում էր վերահսկել Սփյուռքում

[134] ՀԱԱ, ֆ. 409 (Էջմիածնի վերագույն հոգևոր խորհուրդ), ց. 1, գ. 520 (Վազգեն Ա Կաթողիկոս կոնդակը՝ 1915 թ. Հայկական Եղեռնի 50-ամյակի առթիվ. 1964 թ. օգոստոսի 17), թ. 1:
[135] Նույն տեղում:

նախապատրաստվող Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցին նվիրված միջոցառումները: Որպես փաստարկ կարող է ծառայել այն, որ Վազգեն Ա-ի 1965 թ. Շրջագայություններին վերաբերող հաշվետվություններում շատ հաճախ խոսվում էր սփյուռքահայ քաղաքական և հասարակական կազմակերպությունների նախատեսած ծրագրերի մասին: Ավելին, նկատենք, որ Սփյուռքի քաղաքական ուժերի հետ ունեցած առանձնաղրույցներում կաթողիկոսը հիմնականում պահանջում էր, որ օտարերկրյա պետությունների և միջազգային կառույցների համար պատրաստվող փաստաթղթերը չկրեն հակախորհրդային բնույթ և որ 50-րդ տարելիցի միջոցառումները չօգտագործեն հակախորհրդային քարոզչության համար: ՀԽՍՀ կառավարությանն առընթեր կրոնի գործերի պետական խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանի հաշվետվություններում այդ մասին միշտ նշվում էր. «Օգտագործելով իր հեղինակությունը՝ Վազգեն Ա փորձել է սփյուռքում գործող քաղաքական կուսակցությունների գործունեությունն ուղղել ի նպաստ ԽՍՀՄ-ի քաղաքական շահերի: Խորհուրդ է տվել չօգտագործել 50-րդ տարելիցին նվիրված միջոցառումները հակախորհրդային տրամադրություններ սերմանելու համար»[136]: Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ պաշտոնական Մոսկվան վախենում էր, որ նախապատրաստվող միջոցառումները արևմտյան պետությունների կողմից կօգտագործվեն հակախորհրդային քարոզչություն իրականացնելու համար, և կաթողիկոսի գործունեության հիմնական նպատակներից էր կանխել դա:

Բացի այդ, տարբեր երկրներում գտնվող ԽՍՀՄ-ի դեսպանատներից ստացված հաշվետվություններում նույնպես նկատվում է վերոգրյալ մոտեցումը: Այսպես, 1965 թ. օգոստոսին 25-ին Ֆրանսիայում ԽՍՀՄ-ի դեսպանատան առաջին քարտուղար Լևոն Մանասերյանի ուղարկած գրության մեջ մանրամասն չարդարված է ֆրանսահայ Մշակութային Միության ղեկավարներից Մ. Մալյանի և ՀՅԴ կուսակցության առաջնորդ Հ. Սամուելյանի միջև կայացած զրույցի բովանդակությունը: Հանդիպման ընթացքում կողմերը շատ հաճախ օգտագործում են «50-րդ տարելիցի միջոցառումները չեն վնասում ԽՍՀՄ-ի քաղաքականությանը»[137],

---

[136] ՀԱԱ, ֆ. 823, ց. 7, գ. 77 (Գրագրություն ԽՍՀՄ եկեղեցու գործերի խորհրդի հետ...), թ. 9:
[137] ՀԱԱ, ֆ. 326 (Արտաքին գործերի նախարարության), ց. 1, գ. 379 (Ֆրանսիայի ԽՍՀՄ դեսպանության առաջին քարտուղարի Լ. Մանասերյանի և ՀՀԴ կուսակցության առաջնորդ Հ. Սամուելյանի միջև կայացած զրույցի գրառումները «կուսակցության գործունեության մասին», 25.08.1965), թ. 6-7:

«... գործունեությունը որևէ կերպ չի հակասում ԽՍՀՄ-ի և Խորհրդային Հայաստանի շահերին»[138] արտահայտությունները: Ավելին՝ զրուցողները մատնանշում են, որ սկսված գործընթացը Թուրքիայի վրա ճնշում գործադրելու միջոց է, որը կստիպի Անկարային «ավելի խոսուն լինել» Մոսկվայի հետ[139]:

Հնարավոր է, որ խնդրո առարկա հարցում խորհրդային կառավարության անհանգստությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ դեռևս 1964 թ. հուլիսի 16-ին ՀԽՍՀ Կենտկոմի առընթեր Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի տնօրեն Ծ. Աղայանը, ՀԽՍՀ ԳԱ արևելագիտության սեկտորի վարիչ Հ. Ինճիկյանը և ՀԿԿ Կենտկոմի գաղափարախոսության բաժնի վարիչի տեղակալ Ջ. Կիրակոսյանը ՀԿԿ Կենտկոմին ներկայացրած «Արևմտյան Հայաստանում հայերի զանգվածային բնաջնջման 50-ամյակի միջոցառումների անցկացման մասին» առաջարկ-նամակում որպես Մեծ Եղեռնի տարելիցը Խորհրդային Հայաստանում նշելու անհրաժեշտության համոզիչ փաստարկ էին բերում ՀՅԴ գործոնը, գրելով. «Հակահեղափոխական, ազգայնական Դաշնակցությունն կուսակցությունը ամեն կերպ փորձում է հարցը հակախորհրդային տրամադրությունների բորբոքման նպատակով օգտագործել: .... Հայերի զանգվածային կոտորածների 50-ամյակը լռության մատնելը քաղաքականապես ճեռնտու չի լինի»[140]: Այս առաջարկ-նամակը, գրեթե նույնությամբ, 1964 թ. սեպտեմբերի 18-ին Յա. Զարոբյանն ուղարկել է Ն. Խրուշչովին[141]: Այլ կերպ ասած՝ Խորհրդային Հայաստանի իշխանությունները, չհարկելով հայկական Սփյուռքի, մասնավորապես ՀՅԴ-ի ազդեցիկ գործոնը, Կրեմլին հասկացնում էին, որ Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցի միջոցառումների անցկացման դեպքում ԽՍՀՄ-ը ճեռք կբերի Սփյուռքի քաղաքական աջակցությունը, իսկ հակառակ դեպքում սփյուռքահայության շրջանում կուժեղանա հակախորհրդային տրամադրվածությունը: Անշուշտ, դա միակ պատճառը չէր, որ Մոսկվան թուլյատրում է միջոցառումների անցկացումը:

Խորհրդային Հայաստանի իշխանությունների ճեռնարկած գործունեությունը սպասված արդյունքն էր տվել. Կառավարությունը և կաթողիկոսը հնարավորություն էին ստացել կազմակեր-

---

[138] Նույն տեղում, թ. 7:
[139] Նույն տեղում:
[140] Հարությունյան Ա., Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցը և Երկրորդ Հանրապետությունը, Երևան, 2015, էջ 22:
[141] Նույն տեղում, էջ 23:

պելու Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցի միջոցառումները, ինչից էլ լիուլի օգտվեցին: Արդյունքում՝ Վազգեն Ա կաթողիկոսը ծավալում է բավականին լայնածավալ գործունեություն. 1964 թ. սեպտեմբերի 24-ին նա Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին պատարագներ մատուցելու խնդրանքով նամակներով դիմում է Հռոմի պապ Պողոս VI-ին[142], Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսիին[143], Քենթրբերիի արքեպիսկոպոս և Համայն Անգլիայի միտրոպոլիտ Մայքլ Ռեմզիին, Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար Վիսեր Հուֆտին[144]: Նամակներում գրված էր. «Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և Համայն հայ ժողովուրդը հառաջիկա տարի պիտի հիշատակեն հինգամյակը Արևմտյան Հայաստանի (Թուրքական Հայաստանի) մոտ երկու միլիոն հայերի նահատակության, որ սկիզբ առան 24 ապրիլ 1915 թվականին: ... Նորագույն պատմության մեջ առաջին ցեղասպանության մեծ ոճիրն էր, որ կատարվեց: Նահատակված հայ ժողովրդի միակ մեղքն էր, որ նա կամեցել էր այս աշխարհի վրա ապրել իբրև քրիստոնյա և ազատ ազգություն»[145]: Այնուհետև՝ «առաջնորդված քրիստոնեական գութի և արդարության զգացումից»՝ բոլորին հորդորում էր ապրիլի 24-ին իրենց «աղոթքները միացնել մեր աղոթքներին՝ երկու միլիոն նահատակ քրիստոնյա հայերի հոգիների խաղաղության համար»[146]: Նկատենք, որ կաթողիկոսի կոչը հասավ իր նպատակին. 1964 թ. նոյեմբերի 18-ին Հռոմի պապը Վատիկանի Ս. Պետրոսի եկեղեցում մատուցում է Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրության տարածքում կոտորածի ենթարկված հայերի հիշատակին պատարագ[147]: Այդ միջոցառումը լայնորեն լուսաբանվեց սփյուռքահայ, արևմտյան և թուրքական մամուլում[148]:

Խորհրդային կառավարությունն ակնդետ հետևում էր Վազգեն Ա կաթողիկոսի կազմակերպած և մասնակցած՝ հայոց ցեղասպա-

---

[142] ՀԱԱ, ֆ. 823 (ՀՀ կառավարության առընթեր կրոնի գործերի պետական խորհուրդ), ց. 7, գ. 73 (Հաշվետվություն Վազգեն Ա կաթողիկոսի նամակագրության մասին, 1964-1965 թթ.), թթ. 1–2:

[143] Նույն տեղում, թթ. 3–4:

[144] Ամենայան Հայոց Վեհափառ Հայրապետի նամակը Քույր եկեղեցիների Հոգևոր պետերին ապրիլի Մեծ Եղեռնի 50-ամյակի առթիվ. - «Էջմիածին», 1964, ԺԱ, էջ 8-9:

[145] Նույն տեղում, էջ 8:

[146] Նույն տեղում:

[147] ՀԱԱ, ֆ. 823 (ՀՀ կառավարության առընթեր կրոնի գործերի պետական խորհուրդ), ց. 7, գ. 73 (Հաշվետվություն Վազգեն Ա կաթողիկոս նամակագրության մասին, 1964-1965 թթ.), թ. 9:

[148] Նույն տեղում:

նուէյան 50-րդ տարելիցին նվիրված միջոցառումներին: ԽՍՀՄ-ի Նախարարների խորհրդին առընթեր Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Վ. Ռյազանովին Կ. Դալլաքյանի տված հաշվետվությունում մանրամասն ներկայացվում է Հայաստանում և, հատկապես երկրից դուրս՝ հայկական գաղթօջախներում, Ամենայն Հայոց կաթողիկոսի իրականացրած աշխատանքները[149]: Նշվում է, որ 1965 թ. հունվար-փետրվար ամիսներին Վազգեն Ա կաթողիկոսն այցելել է հայկական որոշ գաղթօջախներ՝ Ադիս Աբեբա, Կահիրե, Փարիզ ու Լոնդոն, և ծանոթացել տարելիցի հետ կապված նախապատրաստվող միջոցառումներին[150]: Ավելին՝ 1965 թ. հունվարին Վազգեն Ա.-ն անձամբ է տալիս Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցի միջոցառումների մեկնարկը արտերկրում: Այսպես, հունվարի 24-ին Եթովպիայի մայրաքաղաք Ադիս Աբեբայի Սուրբ Երրորդության Մայր տաճարում Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Խորեն Ա Բարոյանը պատարագ են մատուցում ի հիշատակ Մեծ եղեռնի 1,5 միլիոն զոհերի: Այդ արարողությանը ներկա են եղել Եթովպիայի կայսր Հայլե Սելասիե I-ը, երկրի բարձրաստիճան այրեր և օտարերկյա դիվանագետներ: Միջոցառման ավարտից հետո մասնակիցները հանդիսավոր երթ են կատարել դեպի քաղաքային հրապարակ ու ծաղկեպսակ դրել Անհայտ զինվորի հուշարձանին: Այդ կերպ՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելով 1.5 միլիոն հայ նահատակների հիշատակին[151]: Այս իրադարձությունը լուսաբանվել է ինչպես եթովպիական, այնպես էլ թուրքական, արտասահմանյան և սփյուռքահայ մամուլում:

Տեղեկացնենք նաև, որ ավելի վաղ՝ հունվարի 20-ին, Վազգեն Ա.-ն և Խորեն Ա.-ն առանձնաղրույց են ունեցել կայսր Հայլե Սելասիե I-ի հետ և խոսել Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայերի նկատմամբ թուրքերի իրականացրած կոտորածների մասին: Հանդիպման ընթացքում կայսրը վերհիշել է, որ հայերի կոտորածների մասին առաջին անգամ լսել է Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո, երբ թագաժառանգ էր: Այդ օրերին նա հրամայել է ընդունել հայ գաղթականներին և ապահովել բնակարաններով: Հայլե Սելասիե I-ը ցանկություն է

---

[149] ՀԱԱ, ֆ. 823 (ՀՀ կառավարությանն առընթեր կրոնի գործերի պետական խորհուրդ), ց. 7, գ. 82 (1965 թ. Վազգեն Առաջինի արտասահման կատարած ուղևորությունների հաշվետվությունները):
[150] Նույն տեղում, թ. 13:
[151] Նույն տեղում, թթ. 15-16:

հայտնել ծանոթանալու 1915 թ. դեպքերի փաստագրական նյութին, և Խորեն Ա-ն խոստանում է այն տրամադրել[152]: Կաթողիկոսները, իրենց հերթին, կայսրին խնդրում են Հայոց ցեղասպանության հարցը բարձրացնել ՄԱԿ-ում: Վերջինս, սակայն, չի խոստանում կատարել նրանց խնդրանքը՝ բերելով հետևյալ պատճառաբանությունը. «ՄԱԿ-ում նման հարցի բարձրացումը բավականին դժվար խնդիր է: Պետք է հաշվի առնել այն փաստը, որ Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ է: Ջնայած այս հարցում ես պաշտպանում եմ հայերի արդարացի պահանջը, սակայն չեմ խոստանում հարցը բարձրացնել ՄԱԿ-ում»[153]: Ավելին՝ նկատենք, որ կայսրը չի թաքցնում, որ Մուստաֆա Քեմալ Աթաթուրքն իր մտերիմ ընկերն է եղել[154]:

Այդ նույն օրը՝ հունվարի 20-ին, Վազգեն Ա-ն Ադիս Աբեբայում հանդիպում է Բեյրութից ժամանած Ռամկավար ազատական կուսակցության առաջնորդ Բ. Թովմասյանին: Կողմերը քննարկում են Հայոց ցեղասպանության տարելիցի հետ կապված միջոցառումների ծրագրերը: Բ. Թովմասյանը, մասնավորապես, ասում է. «Մենք հասկանում ենք, որ Խորհրդային Հայաստանը չի կարող որևէ տարածքային պահանջ ներկայացնել Թուրքիային, սակայն մենք՝ արտասահմանում ապրողներս, պետք է օգտագործենք ցանկացած իրավիճակ մեր պահանջը ներկայացնելու համար: Մենք հույս ունենք, որ Խորհրդային Հայաստանի և ԽՍՀՄ-ի կառավարությունները չեն խոչընդոտի մեր գործին»[155]: Նա Վազգեն Ա-ին նաև հայտնում է, որ տարածքային պահանջատիրության հարցը համատեղ ներկայացնելու համար Բեյրութում փորձ է արվել միավորել Ռամկավար ազատական, ՀՅԴ և Ս.Դ. Հնչակյան կուսակցություններին: Բանակցությունները, սակայն, ավարտվել են անհաջողությամբ, քանի որ ՀՅԴ-ն դեմ է արտահայտվել Արևմտյան Հայաստանը ՀԽՍՀ-ին միացնելուն՝ պատճառաբանելով, որ ԽՍՀՄ-ը հրաժարվել է այդ տարածքից[156]:

Վազգեն Ա կաթողիկոսն իր շրջագայության մյուս կայաններում՝ Կահիրեում, Փարիզում և Լոնդոնում, դարձյալ հանդիպումներ է ունենում տեղի հայ քաղաքական և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, ծանոթանում Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցին նվիրված նրանց մի-

[152] Նույն տեղում, թ. 15:
[153] Նույն տեղում:
[154] Նույն տեղում:
[155] Նույն տեղում, թ. 27:
[156] Նույն տեղում:

ցառումների ծրագրերին: Արտերկիր կատարած ուղևորության վերաբերյալ պատրաստված կաթողիկոսի հաշվետվությունում նշվում է, որ տարելիցի կապակցությամբ սփյուռքահայերի միջոցառումների հիմնական նպատակն էր՝ «հիմնավոր փաստերով օտարերկրացիներին ծանոթացնել Հայոց ցեղասպանությանը, պահանջել Արևմտյան Հայաստանի ազատագրումը և դիմել տարբեր պետությունների բարձրաստիճան այրերին ու համաշխարհային ճանաչում ունեցող գործիչներին, որպեսզի վերջիններս իրենց ձայնը բարձրացնեն ի նպաստ Հայկական Դատի»[157]: Վազգեն Ա.-ն բարձր է գնահատում սփյուռքահայերի գործունեությունը, չնայած այն կարծիքին էր, որ քաղաքական նման լուրջ հարցով չեն կարող զբաղվել «փոքր հանձնաժողովները»: Ըստ նրա՝ հայկական տարածքների «ազատագրման» հարցը համայն հայության խնդիրն է և «հաջողության հասնելու համար անհրաժեշտ է ընդհանուր հաճնաժողով ձևավորել, որը միջազգային ատյաններում հանդես կգա հայ ժողովրդի անունից»[158]:

Հայկական գաղթօջախներում Վազգեն Ա.-ի հանդիպումները և Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցին նվիրված միջոցառումների ծրագրերի նախապատրաստումը լուրջ անհանգստություն է առաջացնում ինչպես Թուրքիայում, այնպես էլ խորհրդային դիվանագետների շրջանում: 1965 թ. մարտին Անգլիայում ԽՍՀՄ-ի դեսպանատունը հաղորդում էր, որ հայկական կոտորածների 50-րդ տարելիցի հետ կապված միջոցառումների կազմակերպումը լայնածավալ քննարկումների թեմա է դարձել և լուրեր են տարածվել, որ բոլոր հրահանգները գալիս են Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա.-ից: Խորհրդային դիվանագետները նախազգուշացնում էին, որ դա կարող է բավականին լուրջ խնդիրներ առաջացնել հետագայում[159]:

ՀԽՍՀ կառավարությանն առընթեր կրոնի գործերի պետական խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը ապրիլի 15-ի պատասխան գրության մեջ, հայտնում էր, որ կաթողիկոսը միջոցառումների կազմակերպման վերաբերյալ որևէ հրահանգ չի տվել: Ինչ վերաբերում էր 1964 թ. օգոստոսի 17-ի նրա կոնդակին, ապա այն ամենևին չպետք է դիտվի որպես տարելիցը նշելու հրահանգ, քանի որ սփյուռքահայերն արդեն իսկ պատրաստվում էին այն

---

157 Նույն տեղում, էջ 55:
158 Նույն տեղում:
159 ՀԱԱ, ֆ. 823 (ՀՀ կառավարությանն առընթեր կրոնի գործերի պետական խորհուրդ), ց. 7, գ. 77 (Գրագրություն ԽՍՀՄ եկեղեցու գործերի խորհրդի հետ...), թ. 10:

նշել[160]: Բացի այդ, կոնդակը տարածվում էր միայն Հայկական եկեղեցիների վրա, և Վազգեն Ա-ն իրավասու էր նման հրահանգ տալ[161]: Արխիվային այս փաթեթին կցված է նաև Կ. Դալլաքյանի ապրիլի 20-ի գրությունը, որում նա ԽՍՀՄ-ի նախարարների խորհրդին առընթեր Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Վ. Ռյազանովին էր փոխանցում Վազգեն Ա-ի ապրիլի 24-ի ելույթի տեքստը[162], որտեղ 1915 թ. դեպքերը որակվում էին որպես «20-րդ դ. առաջին ցեղասպանություն»[163]: Նկատենք, որ ելույթի տեքստն արժանացել է հավանության, քանի որ խորհրդային կառավարության կողմից էական որևէ փոփոխություն և դիտարկվում չի արվել:

Մեծ եղեռնի 50-րդ տարելիցը Խորհրդային Հայաստանում և Սփյուռքում նշվում է ազգովի: 1965 թ. ապրիլի 24-ին Էջմիածնի Մայր տաճարում ԱՄՆ-ից, Անգլիայից, Ֆրանսիայից, Սիրիայից, Լիբանանից և Հունաստանից հաղարավոր ուխտավորների ներկայությամբ հանդիսություններ են տեղի ունենում: Վազգեն Ա-ն պատարագ է մատուցում, կատարում հոգեհանգիստ՝ «Հայ ժողովրդի հավաքական մարտիրոսագրության հիսունամյակին նվիրված», ապա Մայր տաճարի հյուսիսային կողմում կատարվում է Եղեռնի նահատակների հուշարձանի հիմնաքարի օրհնություն, որի կառուցումը պետք է ավարտվեր նույն թվականի հոկտեմբերին[164]:

1965 թ. ապրիլի 24-ին Երևանում անցկացվում է հուշ-երեկո, տեղի է ունենում ժողովրդի ինքնաբուխ մեծածավալ ցույց: Ավելի ուշ Հայաստանում կառուցվում է Ծիծեռնակաբերդի հուշարձանը, Սարդարապատի կոթողը, հրատարակվում են պատմական ուսումնասիրություններ, կազմակերպվում դիտաժողովներ[165]: Սփյուռքում ևս նույնանման միջոցառումներ են իրականացվում. կառուցվում են հուշարձաններ, անցկացվում հրապարակային ցույցեր, մեծ տերությունների և միջազգային կառույցների ղեկավարներին փոխանցվում հուշագիր-նամակներ, Հայոց ցեղասպանության վերաբեր-

---

160 Նույն տեղում, թթ. 8-9:
161 Նույն տեղում, թ. 9:
162 Նույն տեղում, թթ. 11-12:
163 Նույն տեղում, թ. 11:
164 Հանդիսություններ Մայր Աթոռում ապրիլյան եղեռնի հիսնամյակի առթիվ.- «Էջմիածին», 1965, ԵԶԷ, էջ 106-113:
165 Խորհրդային Հայաստանում կազմակերպված միջոցառումներին մանրամասն ծանոթացիք Ավագ Հարությունյանի «Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցը և երկրորդ Հանրապետությունը» աշխատությունից:

յալ հրատարակվում են բազմաթիվ դրքեր՝ հիմնականում ցեղասպանությունը վերապրածների հուշագրություններ:

Վերը նշված բոլոր միջոցառումները լայնորեն լուսաբանվել են օտարերկրյա, այդ թվում՝ թուրքական մամուլում: Հատկապես լայն արձագանք են ստանում ապրիլի 24-ին Նյու Յորքում, Բեյրութում, Տորոնտոյում, Փարիզում, Բուենոս Այրեսում, Սան Պաուլոյում և Մոնտեվիդեոյում անցկացված բազմահազրանոց ցույցերը[166]: Նկատենք, որ Թուրքիայի կառավարությանը դեռևս 1964 թ. դեկտեմբերին էր տեղեկացված Բեյրութում նախապատրաստվող հայերի ցույցի մասին[167]: Ավելի ուշ՝ 1965 թ. ապրիլի 2-ին, Բեյրութում ԱՄՆ-ի դեսպանատունն իր կառավարությանը հայտնում էր, որ Լիբանանի իշխանությունները թույլատրել են իր երկրում ապրող հայերին ապրիլի 25-ին անցկացնել «1915 թ. զոհված հայերի հիշատակին նվիրված ցույց»[168]: Միջոցառմանը մասնակցել է 20 հազարից ավել մարդ[169]:

Նյու Յորքում փողոց դուրս եկած հայ ցուցարարների թիվը համեմատաբար քիչ էր, այն հասնում էր 2-3 հազարի: Տեղի ունեցածը, սակայն, լայն արձագանք ստացավ ամերիկյան մամուլում: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ ամերիկահայերը տարելիցին նվիրված նախապատրաստական աշխատանքները սկսել էին 1964 թվականից և այդ ուղղությամբ բավականին լուրջ քարոզչություն էին իրականացրել: Ինչպես միշտ, նամակներ էին հղել ԱՄՆ-ի սենատի և կոնգրեսի ներկայացուցիչներին՝ խնդրելով ճանաչել Հայոց ցեղասպանությունն ու ապրիլի 24-ն ընդունել «Հայ նահատակների ոգեկոչման օր»: Արդյունքում՝ 1965 թ. ապրիլի 4-ից մայիսի 5 ընկած ժամանակահատվածում արձագանքեցին Սենատի և Կոնգրեսի 40-ից ավելի օրենսդիրներ[170]: Հատկանշական է նաև, որ ապրիլի 26-29-ին հայ ժողովրդին իրենց խորը ցավը հայտնեցին շուրջ 25 անդամ, այդ թվում՝ սենատոր Էդուարդ Քենեդին, կոնգրեսական Ջերալդ Ֆորդը[171]:

1965 թ. ի նպաստ Հայոց դատի՝ հուշագիր-նամակներով մեծ տերությունների և ՄԱԿ-ին են դիմում Բեյրութում գործող Հայոց

---

[166] Ահարոնյան Գ., Խոհեր հիսունամեակի ավարտին, Բեյրութ, 1966, էջ 224:
[167] «Զարթօնք», 22. XII.1964: Dadrian V., The Events of April 24 in Moscow-How They Happened and Under What Circumstances. - «Armenian Review», 1967, vol. 20, № 2, pp. 9-10.
[168] «Զարթօնք», 26. IV.1965:
[169] Նույն տեղում:
[170] Ահարոնյան Գ., Խոհեր հիսունամեակի ավարտին, էջ 91-96:
[171] Նույն տեղում, էջ 114-121:

Հողային դատի Հետապնդման կենտրոնական Հանձնախումբը, Հայկական դատի ամերիկահայ Հանձնախումբը, Ցրանսիայի՝ Թուրքահայերի իրավունքների պաշտպանության կոմիտեն և այլ կազմակերպություններ[172]: Այսպես, 1965 թ. դեկտեմբերի 9-ին Հայկական դատի ամերիկահայ Հանձնախումբը «The New York Times» թերթում հրապարակում է, «Հիշողության տարին մոտենում է ավարտին» («A Year of Memory Comes to a Close») խորագիրը կրող Հայտարարությունը, որում ԱՄՆ-ին կոչ էր արվում «պաշտպանել Հայերի արդարացի պահանջը»[173]:

Ցրանսահայերի իրականացրած գործունեության արդյունքում՝ ապրիլի 23-27-ին մամուլը, մասնավորապես, «Le Figaro»-ն, «Le Monde»-ը, «La Croix»-ը, «L'Aurore»-ն, «L'Humanité»-ն, անդրադառնում են 1915 թ. դեպքերին՝ դատապարտելով Հայերի կոտորածները[174]: Ավելին՝ ապրիլի 24-25-ին «Le Figaro» թերթում Ջորջ Դյուփուայի հրատարակած Հոդվածում Առաջին Համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրությունում Հայերի նկատմամբ իրականացված կոտորածները որակվում են որպես «Հիսուն տարի առաջ՝ 20-րդ դարի առաջին ցեղասպանություն»[175]: Հայագետ Ֆրեդերիկ Ֆեյդին էլ ապրիլի 23-ին «Le Monde» թերթում տպագրած Հոդվածում դատապարտելով Հայոց ցեղասպանությունը՝ գրում էր, որ Հայերը Հակառակ իրենց փոքրաթիվ լինելուն՝ ամենուրեք նպաստում են Համաշխարհային քաղաքակրթության գործին[176]:

1965 թվականից օտարերկրյա խորհրդարաններում դրվում է նաև Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձևերի ընդունման սկիզբը: Հարավային Ամերիկայում բնակվող մեր Հայրենակիցները 1960-ական թվականների սկզբին բավականին լայնածավալ գործունեություն էին ծավալում: Հատկանշական է 1964 թ. մարտի 28-29-ին Ուրուգվայի մայրաքաղաք Մոնտեվիդեոյում հրավիրված վեհաժողովը, որին մասնակցում էր 65 պատվիրակ՝ Ուրուգվայի, Արգենտինայի և Չիլիի Հայկական գաղթօջախներից: Բրազիլիայում տեղի ունեցած Հեղաշրջման պատճառով տեղի Հայ Համայնքի պատվիրակությունը չէր ժամանել: Վեհաժո-

---

[172] Նույն տեղում, էջ 225:
[173] «The New York Times», 09. XII. 1965.
[174] ՀԱԱ, ֆ. 57 (Ամենայն Հայոց կաթողիկոսի դիվան), ց. 5, գ. 231 (Փաստաթղթեր Հայկական Հարցի մասին), թթ. 33-37:
[175] Նույն տեղում, թ. 33:
[176] Նույն տեղում, էջ 34:

ղովի մասնակիցներն իրենց ելույթներում կոչ էին անում միավորել Լատինական Ամերիկայի, Լիբանանի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և այլ երկրներում գործող հայկական կազմակերպությունների աշխատանքներն ու համատեղ ուժերով հանդես գալ Հայկական հարցում: Ավելին՝ ստեղծվում է Հարավ Ամերիկյան հայկական կազմակերպություն, որի նպատակն էր կազմակերպել Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցի հետ կապված Արդենտինայի, Ուրուգվայի, Բրազիլիայի և Չիլիի հայկական կազմակերպությունների համատեղ միջոցառումները[177]: Լատինական Ամերիկայի հայկական դաղթօջախների աշխատանքը Հայկական հարցում բավականին մեծ է, նրանք ոչ միայն բարձրացնում էին հայկական տարածքների հարցը, այլև աշխատում էին հանրությանը հասանելի դարձնել 1915 թ. Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ կատարված ոճրագործությունները[178]:

Արդյունքում՝ 1965 թ. ապրիլի 20-ին Ուրուգվայի խորհրդարանն առաջինն է ընդունում 1915 թ. եղեռնագործության վերաբերյալ պատմական № 13.326 «Հայ նահատակների ոդեկոչման օր» խորագիրը կրող փաստաթուղթը: Այդ ժամանակ ոչ ոք չէր պատկերացում, թե որքան հեռահար և երկարամյա գործընթացի սկիզբ դրեցին Լատինական Ամերիկայի քաղաքական գործիչները:

Մոնտեվիդեոյի № 13.326 փաստաթուղթը, հիրավի, կարելի է բնորոշել որպես պատմական, չնայած այն չէր ընդգրկում Ցեղասպանության ելույթը: Որոշման հինգ կետերով, մասնավորապես, սահմանվում էր.

«Գալիք ապրիլի 24-ը հռչակել «Հայ նահատակների հիշատակի օր»՝ ոդեկոչելու բոլոր նրանց, ովքեր սպանվեցին 1915 թ. այդ օրը: Պետական ռադիոծառայության կայանները նշված օրը պետք է իրենց հեռարձակման մի մասը կազմակերպեն ի պատիվ նշված ժողովրդի: Հանրային ծառայության մեջ գտնվող հայ քաղաքացիները նշված օրն իրավասու են չներկայանալ աշխատանքի: Մոնտեվիդեոյի տարածաշրջանի թիվ 156 դպրոցն անվանակոչել Հայաստանի դպրոց:

Սենատի նախագահ՝ Մարտին Էչեգոյեն, քարտուղար՝ Խոսե Պաստոր Սալվանաչ»[179]:

---

[177] ՀԱԱ, ֆ. 326 (Արտաքին գործերի նախարարության), ց. 1, գ. 358 (Ուրուգվայի ՍՍՌՄ դեսպանատանը կայացած զրույցների գրառումները, 07.05.1964 - 24.08.1964), թ. 2:
[178] Նույն տեղում, թ. 3:
[179] Consejo Causa Armenia del Uruguay, Resoluciones De La Asamblea General. 22-04-65. Día de recordación de los Mártires Armenios(Ley 13.326), http://www.causaarmenia.org/?page_id=323

Ինչ վերաբերում է ԱՄՆ-ում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացին, այդ մասին խոսելիս հարկ է նկատել, որ ուսումնասիրողների կողմից հատակորեն առանձնացվել են մի քանի «ալիքներ»[180]: Այսպես, առաջինը՝ սկսվել է 1965 թ., երբ ամերիկահայ համայնքը նշում էր Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցը: Ընդ որում՝ տարելիցի միջոցառումներն աննախադեպ ծավալներ և հնչեղություն ստացան, ուստի և որոշակի արդյունքներ արձանագրվեցին: Այսպես, 1965 թ. Կալիֆորնիա նահանգի օրենսդիր ժողովն ընդունում է Ասամբլեայի թիվ 274 բանաձևը, որում ասվում էր. «... 50 տարի առաջ՝ 1915-ի ապրիլի 24-ին, Օսմանյան կայսրության կառավարությունը, իբրև Կենտրոնական դաշինքի երկրների դաշնակից, սկսել է հայ ազգի բնաջնջման սիստեմատիկ ծրագիրը: ... 1915-1918 թթ. Թուրքական Հոլոքոստի ընթացքում ողջ Հայության կեսն իր բնակավայրերից քշվել է դեպի Սիրիայի անապատները և սպանվել կամ աննկարագրելի սարսափներ կրել: ...Մարդկության պատմության մեջ չի եղել ոչ մի իրադարձություն, որն այսքան հիմնովին գրավի աշխարհի ժողովուրդների սրտակցությունը, սակայն որն այսքան չուտ մոռացվի, ինչպես հայերի թուրքական ցեղասպանությունը»[181]:

Նույն թվականին Կալիֆորնիայի նահանգապետ Էդմունդ Բրաունը հանդես եկավ հայտարարությամբ, որում նշում էր. «1915 թ. Հայկական կոտորածի հիշատակի այս օրն աշխարհը պետք է դադար տա՝ խորհելու պատմական դասերի ու նրանց համամարդկային նշանակության մասին: Ես կոչ եմ անում բոլոր կալիֆորնիացիներին միանալ մեր Հայ հարևաններին և համաքաղաքացիներին՝ նշելու այն 2 միլիոն հայերի մահը, ովքեր հալածանքների են ենթարկվել և դատապարտվել մահվան...»[182]:

Բացի այդ, 1965 թ. Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցի առթիվ Լոս Անջելեսի հայ համայնքը որոշում է հուշահամալիր կառուցել, որը պետք է դառնար զոհերի հիշատակը հարգելու մշտական վայր: Մի քանի ամիս անց Մոնթերեյլլոյի քաղաքապետարանի ժողովի որոշմամբ հանրային պուրակում տեղ է հատկացվում հուշարձանի համար, որը կառուցելու նպատակով ամերիկահայությունը հանգանակությամբ հավաքում է 125 հազար

---

[180] Միրզոյան Ա., Հայոց ցեղասպանության ճանաչումն ԱՄՆ նահանգային իշխանությունների կողմից.- «Հայաստան» (Հատուկ թողարկում), Երևան, 2005, № 2, էջ 51:
[181] Նույն տեղում, էջ 52:
[182] Նույն տեղում:

դոլար[183]: Հուշահամալիրը, որի բացումը տեղի է ունեցել 1968 թ. ապրիլին, ԱՄՆ-ում Հայոց ցեղասպանությանը նվիրված ամենամեծ կառույցն է:

1968 թ. ապրիլի 15-ին Կալիֆորնիա նահանգի օրենսդիր ժողովում Ասամբլեայի թիվ 78 համաձայնեցված բանաձևի ընդունմամբ ամերիկյան նահանգների կողմից հիմք է դրվում ոչ միայն Հայոց ցեղասպանությունը ճանաչելու, այլև դա պարբերաբար վերահաստատելու ու զոհերի հիշատակը նշելու ավանդույթին: Կալիֆորնիայի իշխանությունները պահպանեցին Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործում իրենց ունեցած հատուկ դիրքորոշումը: Բայց դա ամենևին պատահական չէր. Հայոց ցեղասպանության ճանաչման ամերիկահայության կոչին արձագանքած առաջին նահանգը Կալիֆորնիան էր, որտեղ այն ժամանակ բնակվում էր ավելի քան 400 հազար անդամ ունեցող ամերիկահայ համայնքի համեմատական մեծամասնությունը՝ շուրջ 140 հազարը[184]:

1965 թ. հունիսի 13-ին Պլովդիվի Հայոց ազգային գերեզմանատանը Վազգեն Ա-ի և Բուլղարիայի Ամենապատիվ Ս. Կիրիլ պատրիարքի հանդիսադրությամբ տեղի է ունենում Եղեռնի նահատակների հիշատակի հոգեհանգիստ և նահատակաց հուշարձանի բացում, որին ներկա էր նաև Բուլղարիայի Կրոնական գործերի խորհրդի նախագահ Մ.Քյուչյուկովը[185]:

1965 թ. հուլիսի 10-15-ին Ֆինլանդիայի մայրաքաղաք Հելսինկիում դումարված «Խաղաղության, ազգային անկախության և ընդհանուր զինաթափման համաշխարհային կոնգրեսը», որին մասնակցում էր 98 երկրի 1470 պատգամավոր, Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձև է ընդունում: Համաժողովի հիմնական աշխատանքներն սկսվել են հուլիսի 12-ին, երբ ձևավորվում է յոթ հանձնաժողով՝ օրակարգային հարցերն ուսումնասիրելու, քննելու և ընդհանուր ժողովին եզրակացություններ ու բանաձևեր ներկայացնելու համար: Հայ եկեղեցու պատվիրակությունը՝ Վազգեն Ա կաթողիկոսի գլխավորությամբ, մասնակցում էր յոթերորդ հանձնաժողովի աշխատանքներին, որի քննարկման թեման էր՝ «Խաղաղության նպաստավոր պայմանների ստեղծում:

---

[183] Molina S., Thousands commemorate Armenian genocide at site of Montebello monument, Whittier Daily News, 24.04.2012, http://www.whittierdailynews.com/general-news/20120424/thousands-commemorate-armenian-genocide-at-site-of-montebello-monument

[184] Մալխասյան Մ., Հայերն աշխարհում, Երևան, 2007, էջ 94:

[185] Վեհափառ Հայրապետը Բուլղարիայում.- «Էջմիածին», 1965, Ը-Թ, էջ 1:

Մշակույթի, կրոնի և դաստիարակության դերը ի սպաս խաղաղության. խաղաղարար կազմակերպությունների գործարար համագործակցությունը: ՄԱԿ-ի համաշխարհայնությունը, միջազգային մարմինների կառուցվածքի և աշխատանքի բարեփոխումը»[186]: Եվ թեպետ կաթողիկոսն իր ելույթում հիշատակում է 1915 թ. դեպքերը[187], սակայն Հայոց ցեղասպանությունը դատապարտող հարցի լսումներին, բնականաբար, չի մասնակցում, քանի որ նման խնդիրների քննարկումը վերապահված էր երկրորդ հանձնաժողովին, որի թեման էր՝ «Դեռևս գաղութային լուծի տակ գտնվող ժողովուրդների ազատագրում, ազգային վեհիրավության պահպանում և վերջինիս պաշտպանությունը ընդդեմ ամեն ոտնձգության»[188]:

Երկրորդ հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում էր Ֆրանսիական պատվիրակության անդամ, Փարիզում գործող Թուրքիայի հայերի իրավունքների պաշտպանության կոմիտեի քարտուղար Պարգև Մուրադյանը[189]: Նա խաղաղության համաշխարհային խորհրդի քարտուղար, ազգերի անկախության հանձնաժողովի զեկուցող (հանձնաժողովի նախագահն էր արգենտինացի գրող, հրապարակախոս Ալֆրեդո Վարելան), սիրիահայ Վարուժան Սալաթյանի հետ պահանջում են Հայոց ցեղասպանության հարցը ևս ընդգրկել նախապատրաստվող բանաձևի մեջ[190]: Դեռևս մայիս-հունիս ամիսներին Թուրքիայի հայերի իրավունքների պաշտպանության կոմիտեի նախագահ Կ. Սողոմոնյանը նամակներ է հասցեագրել խաղաղության համաշխարհային խորհրդի նախագահ պրոֆ. Ջոն Բեռնալին՝ խնդրելով Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցի հետ կապված հարցը բարձրացնել և քննարկել համաժողովում[191]: Միաժամանակ նա դիմում է Վ. Սալաթյանին իրենց այս հարցում աջակցելու համար[192]:

Հուլիսի 15-ին համաժողովի եզրափակիչ նիստում լսվում են յոթ հանձնաժողովների եզրակացություններն ու բանաձևերը, որոնցում հանրագումարի էին բերված պատգամավորների մոտեցումները քննարկված հարցերի վերաբերյալ: Երկրորդ հանձնաժողովը, որտեղ լսվել էր Հայոց ցեղասպանության հարցը, «Բռնությունը,

---

[186] Խաղաղության, ազգային անկախության և ընդհանուր զինաթափման համաշխարհային համաժողով Հելսինկի. - «Էջմիածին», 1965, Ը-Թ, էջ 67:
[187] Նույն տեղում:
[188] Նույն տեղում:
[189] ՀԱԱ, ֆ. 57 (Ամենայն Հայոց կաթողիկոսի դիվան), ց. 5, գ. 231 (Փաստաթղթեր Հայկական հարցի մասին), թ. 8:
[190] Նույն տեղում, թ. 9:
[191] Նույն տեղում, թ. 1:
[192] Նույն տեղում, թ. 23:

գաղութատիրությունը ու ցեղասպանությունը» դատապարտող իր ընդունած ծավալուն փաստաթղթում հիշատակում էր նաև Հայոց եղեռնի 50-րդ տարելիցի փաստը: Դրանում ասվում էր. «Այս տարի 50-ամյակն է Օսմանյան Թուրքիայի կողմից գործադրված հայկական կոտորածների, ազգային հարցը մի ժողովրդի բնաջնջումով լուծելու նպատակով: Այս ցեղասպանությունը խլեց կյանքը ավելի քան մեկ ու կես միլիոն ազատասեր հայերի, այսինքն հայ ժողովրդի երկու երրորդի»[193]: Այս փաստաթուղթը հատկանշական է նրանով, որ 1915 թ. դեպքերն այստեղ բնութագրվում են որպես ցեղասպանություն: Իսկ դա նշանակում է, որ 1960-ական թվականների կեսին արդեն համաշխարհային հանրությունը Օսմանյան կայսրությունում 1915 թ. հայերի կոտորածները դիտարկում էր որպես ցեղասպանություն:

Կոնգրեսին մասնակցող թուրքական պատվիրակության ճնշման ներքո բանաձևի նախնական տարբերակը վերանայվում է և դրանից հանվում հատուցման ու տարածքային պահանջատիրությանը վերաբերող հատվածը[194]: Այդ մասին տեղեկանում ենք Հելսինկիից Կ. Սողոմոնյանին ուղարկված հեռագրերից: Դրանցից մեկում ուղղակի գրված է. «... անակնկալի եկած թուրքական պատվիրակությունը ի նշան բողոքի հեռացել է նիստից և սպառնացել, որ կհեռանան համաժողովից, եթե հարցը չհանվի օրակարգից: Սակայն թուրքական կողմի փորձերը հաջողությամբ չեն պսակվել, բայց խոչընդոտել են առավել կոշտ տեքստի ընդունմանը»[195]:

1960-ական թվականներին Խորհրդային Հայաստանում և Սփյուռքում Հայոց ցեղասպանության հարցի շուրջ ղարդացող դործընթացները լայն արձագանք են գտնում թուրքական մամուլում: Սկզբնական շրջանում մամուլում տպագրված հոդվածները համաձայնեցված չէին, իսկ ավելի ուշ դարձան թուրքական ժխտողական քաղաքականության և հակահայկական քարոզչության հիմքերը: Այդ քաղաքականությունը, որոշ վերափոխումներով, շարունակվում է առայսօր:

Այդ տարիներին թուրքական մամուլում հրապարակված հոդվածներից կարելի է եզրակացնել, որ մեծ Եղեռնի 50-րդ տարելիցին նվիրված միջոցառումները, հատկապես միջազգային հանրության արձագանքն ու մասնակցությունը դրանց անակնկալի են

---

[193] Խաղաղության, ազգային անկախության և ընդհանուր զինաթափման համաշխարհային համաժողով Հելսինկի, էջ 70:
[194] ՀԱԱ, ֆ. 57 (Ամենայն Հայոց կաթողիկոսի դիվան), ց. 5, գ. 231 (Փաստաթղթեր Հայկական հարցի մասին), թ. 27:
[195] Նույն տեղում:

բերել Թուրքիայի կառավարությանը, իսկ քաղաքական շրջանակներին էլ՝ անհանգստացրել: Դա ստիպում է Թուրքիայի նախագահ Ջեմալ Գյուրսելին 1965 թ. ապրիլի 23-ին հանդես գալ հայտարարությամբ և թուրքական մամուլին կոչ անել «հետևել» իր խոսքերին: Նա ասում է. «Մամուլը պետք է եղածի պես չխորացնի և չներկայացնի հայկական խնդիրները: Պետք է գիտենա, որ հայկական կոտորածներ չեն եղել...»[196]:

Այնուամենայնիվ, թուրքական մամուլը լայնորեն անդրադառնում է 1965 թ. հայկական միջոցառումներին: Այսպես, օրինակ, «Hürriyet» գրում էր. «Ապրիլի 24-ին ամբողջ աշխարհի հանրային կարծիքի առջև Թուրքիայի դեմ պիտի միջազգային նոր պայքար մղվի: Բեյրութի եկեղեցու (խոսքը վերաբերում է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությանը. - *Ք.Մ.*) առաջնորդությամբ Փարիզի, Նյու Յորքի, Աթենքի, Լոնդոնի և Հարավային Ամերիկայի զանազան քաղաքներում «կոտորածի զոհ դարձած հայերի» հիշատակին պիտի տեղի ունենան սգո հանդեսներ՝ զոհերի հիշատակը ոգեկոչելու և «Թուրքիայի վայրագությունները ծանուցելու» համար: Այս արարողությունները, ճառերը և հրապարակված գրքույկները պետք է լուսաբանվեն ռադիոկայաններով ու հեռուստատեսությամբ»[197]: Թուրքական մամուլը հետևում էր հայության կազմակերպած միջոցառումներին՝ Բեյրութ և Սփյուռքի այլ գաղթօջախներ ուղարկելով իր թղթակիցներին: Վերջիններս դրանք լուսաբանում են հակահայկական նույն շեշտադրումներով և աղգայնամոլական հայտարարություններով:

Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցի առթիվ կազմակերպված միջոցառումներից անհանգստացած՝ արձագանքում են նաև Թուրքիայի քաղաքական գործիչները: Ապրիլի 27-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովում Կարսից ընտրված պատգամավոր Հասան Էրդողանն իր ելույթում հայտարարում է, որ կազմակերպած միջոցառումները «զայրույթ են առաջացրել Թուրքիայի արևելյան նահանգների բնակչության շրջանում»[198]: Ավելին՝ տեղեկացնում է, որ Վանի, Էրզրումի, Կարսի նահանգներից ստացել է հայերի գործողությունները քննադատող բազմաթիվ նամակներ և որ այդ տարածքների բնակիչները «չեն մոռացել 50 տարի առաջ հայերի կող-

---

[196] «Milliyet», 23. IV. 1965.

[197] «Hürriyet», 08. IV. 1965.

[198] Millet Meclisi Tutanak Dergisi, 93 Birleşim, 27.4.1965, 1. Geçen Tutanak Özeti, s. 272, https://www.tbmm.gov.tr/tutanaklar/TUTANAK/MM__/d01/c038/mm__01038093.pdf

մից կազմակերպված կոտորածները», որոնց, իբր, զոհն են դարձել հաղարավոր մուսուլմաններ[199]:

Հատկապես հատկանշական է խորհրդարանում վարչապետ Սուաթի Հայրի Ուրդյուփլուի ունեցած ելույթը, որում ասվում էր. «Հայկական ցույցերն արդյունք են հունական դրդռվածության: Կան մի շարք օտար պետություններ, որ ցանկանում են հայերին դործիք դարձնել իրենց քաղաքական խաղերում, խնդիրն այստեղից է ծագում: Գրդռիչների նպատակն է հիսուն տարի անց պատմական իրողությունները նենդափոխել և Թուրքիայի դեմ հակաքարոզչություն տանել: Մենք չահագրգիռ պետություններին բացատրել ենք, որ Հայկական հարցը որևէ կապ չունի Թուրքիայի հետ և չի կարելի պատմությունը նենդափոխել: Մեր ողջամիտ հայ հայրենակիցները չմասնակցեցին այդ միջոցառումներին և նույնիսկ ապրիլի 24-ին, այսինքն՝ հանրահավաքի օրը, Աթաթուրքի հուշարձանին ծաղկեպսակ դնելով՝ դատապարտեցին արտասահմանի մեջ տեղի ունեցող ցույցերը»[200]:

«Արտաքին ուժերի» թեզը թուրքական մամուլի կողմից ավելի վաղ էր առաջ քաշվել: Թուրք լրագրողները հրապարակած հոդվածների միջոցով փորձում էին ցույց տալ, որ Թուրքիային ուղղված մեղադրանքներն անհիմն են, ավելին՝ ամեն ինչում մեղադրում էին հույներին կամ էլ արտաքին ուժերին: 1965 թ. ապրիլի 9-ին «Hürriyet» թերթն այդ առիթով գրում է. «Հույներն են հրահրել հայերին, որպեսզի ապրիլի 24-ին «հայերի կոտորած» անվան տակ ամբողջ աշխարհում խոսվի այդ վաղեմի իրադարձությունների մասին»[201]: Ապրիլի 26-ին էլ «Akşam» պարբերականը հրապարակում է «Մատը» («Parmak») վերնագրով հոդված, որում հստակ ասվում է՝ ներկայումս հայ-թուրքական առճակատումը, ինչպես նաև Հայոց ցեղասպանության ճանաչման շուրջ ընթացող դործընթացները հրահրել են արևմտյան պետությունները:

Մի քանի տարի անց՝ 1967 թվականից, «արտաքին ուժերի» թեզը դառնում է թուրքական իշխանությունների և մամուլի կողմից ամենաչահարկվողը: Վերջիններս փորձում էին զարգացնել այն տեսակետը, ըստ որի՝ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայերի կոտորածների հիմնական մեղավորները եղել

---

[199] Նույն տեղում:
[200] «Milliyet», 28. IV. 1965.
[201] «Hürriyet», 09. IV. 1965.

են մեծ տերությունները, որոնք, Օսմանյան կայսրությունը մասնատելու նպատակով, օգտագործեցին հայերին և թշնամանք սերմանեցին երկու ազգերի միջև:

Բացի այդ, հասարակական կարծիքի վրա ազդելու համար 1965 թ. «Hürriyet»-ը Ստամբուլի հայերի հետ կարճ հարցազրույցներ էր տպագրում՝ դրանք զետեղելով «Մեր հայրենիքը Թուրքիան է, մեր դրոշը թուրքական դրոշն է, ամեն թուրքի պես կապված ենք այս երկրի հետ» խորագրի տակ: Այսպես, հարցազրույցներից մեկում Հայ կաթոլիկների կրոնապետն ասում է. «Մենք բնավ չենք ուզում, որ հիշատակները վերակենդանան... Բեյրութում ծրագրված միտինգները որևէ օգուտ չպիտի ունենան»[202]: Պոլսո Հայոց պատրիարք Շնորհք արք. Գալուստյանի խոսքը բավականին չափավոր էր. «Մեռելներին հիշելը բոլոր մարդկանց իրավունքն է ու բարոյական պարտականություն: Միայն թե հարգանքի արտահայտությունները պետք չէ, որ ազգերի սրտերում թշնամություն սերմանեն: ... Թուրքահայ համայնքի ներկայացուցիչները՝ որպես թուրքիայի քաղաքացիներ, իրենց երկրի չհավնող հակասող ցանկացած քայլ հավանություն չեն արժանացնելու»[203]: Պատրիարքի այս հայտարարությունը հրապարակվում է թուրքական առաջատար բոլոր թերթերում:

Այս ամենը, սակայն, բավարար չէին Հայկական հարցի թեման փակելու համար: Պաշտոնական Անկարային երաշխիքներ էին անհրաժեշտ: Դրա առիթը չուշացավ. 1966 թ. դեկտեմբերի 26-ին ԽՍՀՄ-ի Մինիստրների խորհրդի նախագահ Ա. Կոսիգինի՝ Թուրքիայում կատարած այցի ժամանակ վարչապետ Ս. Դեմիրելը պահանջում է, որ երկու երկրների փոխհարաբերությունները զարգանան «տարածքային ամբողջականության փոխադարձ հարգանքի հիման վրա»[204]: Մի քանի օր անց՝ 1967 թ. հունվարի 2-ին, ամերիկյան «Newsweek» շաբաթաթերթը տպագրում է «Հանդիպում Անկարայում» վերնագրով անստորագիր հոդված, որտեղ նշվում է, որ ԱՄՆ-ի կառավարությանը խիստ դժգոհ է խորհրդային բարձրաստիճան պատվիրակությանը ցուցաբերած ջերմ ընդունելությունից, թուրքական իշխանությունների որդեգրած կեցվածքից: Հոդվածում մանրամասն ներկայացվում է, թե վերջին երեք դարերի ընթացքում ինչպես են

---

[202] «Hürriyet», 16. IV. 1965.
[203] Նույն տեղում:
[204] «Milliyet», 27. XII.1966.

զարգացել Ռուսաստանի և Թուրքիայի հարաբերությունները, նկարագրվում են ռուս-թուրքական պատերազմները, հիշեցվում է, որ 1945 թ. ԽՍՀՄ-ը հավակնություններ է ունեցել սևծովյան նեղուցների նկատմամբ, ինչն էլ նոր լարվածության պատճառ է դարձել երկու երկրների միջև[205]: Նկատենք, սակայն, որ խոսք չկա Կարսի և Արդահանի պահանջի մասին, որն արվել էր նույն՝ 1945 թ.: Հոդվածի վերջում բերվում են Թուրքիայի վարչապետ Ս. Դեմիրելի հետևյալ խոսքերը. «Թուրքիայի կառավարությունը անկեղծ ցանկանում է, որ խորհրդա-թուրքական հարաբերությունները զարդանան ազդային դերիչխանության, հողային ամբողջականության, իրավունքների հավասարության և միմյանց ներքին քաղաքականության չմիջամտելու սկզբունքների հիման վրա»[206]: Հոդվածի անհայտ հեղինակը հիմնականում զարգացնում էր այն տեսակետը, որ «Թուրքիան, ինչպես և Եվրոպան Խորհրդային Միությունից այլևս անմիջական վտանգ չի տեսնում և ցանկանում է թուլացնել Ա.Մ.Ն-ի հետ կապը», միաժամանակ, առաջ է քաշելով այն թեզը, որ Անկարան փորձում է «երկակի խաղ խաղալ Արևելքի և Արևմուտքի հետ՝ տնտեսական և դիվանագիտական լավագույն պայմանները ապահովելու համար»[207]: Այսինքն՝ բացահայտ ասվում էր, որ Ա.Մ.Ն-ն հասկանում է Թուրքիայի որդեգրած խաղը և պատրաստ է հակահարվածի: Եվ օրակարգում, ինչպես միշտ եղել է նման իրավիճակներում, հայտնվում է Հայկական հարցը:

Եվ ահա, հոդվածի հրապարակումից երեք օր անց՝ հունվարի 5-ին, ամերիկյան Հայ դատի կենտրոնական հանձնախումբը մամուլում հրապարակում է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի՝ Փոքրամասնությունների խտրականության կանխման ու պաշտպանության ենթահանձնաժողովին ուղղած իր խնդրագիրը, որում կոչ էր արվում քննարկել 1915-1923 թթ. Հայոց ցեղասպանության հարցը[208]: Հունվարի 16-ին հանձախումբը ենթահանձնաժողովին է փոխանցում հուշագիր[209], հունվարի 18-22-ին էլ Նյու Յորքի ՄԱԿ-ի գրասենյակի առջև բազմահազարանոց ցույցեր է կազմակերպում, որոնցից ամենաբազմամարդը հունվարի 21-ին էր: Մասնակիցները պահանջում էին «պատժել ցեղասպանության

---

[205] Set Appointment in Ankara, «Newsweek», Vol. LXIX, No. 1, January 2., 1967, pp. 26-27.
[206] Նույն տեղում, էջ 27:
[207] Նույն տեղում, էջ 26-27:
[208] Հայ դատի աշխատանքներ, Հայ դատի կենտրոնական հանձնախումբ, Պոստոն, 1967, էջ 1-2:
[209] Նույն տեղում, էջ 3-4:

հեղինակներին», «վավերացնել Ցեղասպանության դեմ համաձայնագրի 6-րդ հոդվածը», «պաշտպանել հայության իրավունքները՝ արդարացի հատուցումով», «վերահաստատել անկախությունը այն ժողովուրդների, որոնք տառապել են ցեղասպանության ոճիրների հետևանքով» և այլն[210]:

Ամերիկահայերի այս ցույցերը արձագանք են գտնում թուրքական մամուլում: Հունվարի 24-ին «Yeni İstanbul» թերթը գրում է՝ «Հայերը համաշխարհային չափանիշով սկսել են թուրքերի դեմ»[211]:

Ամերիկյան մամուլն էլ հանդես է գալիս նոր հրապարակումներով. հունվարի 23-ին «Newsweek» շաբաթաթերթը հրապարակում է պատմաբան Զավեն Մազրլյանի «Ձեր հողը իմ հողն է» («Your Land is My Land») վերնագրով նամակը՝ Թուրքիայի վարչապետ Ս. Դեմիրելի նկարով, որի տակ գրված էր. «Դեմիրել. Ո՞ւմ տարածքն է» («Demirel: Whose Territory?»): «Թուրքիայի վարչապետ Սուլեյման Դեմիրելը հայտարարել է, որ «թուրք - խորհրդային հարաբերությունները զարգանում են տարածքային ամբողջականության սկզբունքի հիման վրա»: Ես նկատում եմ խաղաղության հաստատում անարդարության մեջ, - ասված է նամակում: - Խորհրդային կառավարությունը իրավասու չէ երաշխավորելու Թուրքիայի տարածքային ամբողջականությունը, քանի որ Հայաստանում և Սիլյուռքում 5.5 միլիոն հայեր կան: Պետք է հիշել, որ հայերը տեղահանվեցին իրենց 3000 տարվա հայրենիքից ու չպետք է մոռանալ 1915-1921 թթ. 1.5 միլիոն հայերի կոտորածները, ենթարկվելով 20-րդ դ. առաջին ցեղասպանությանը:

Հայերը չեն հրաժարվել և երբեք չպիտի հրաժարվեն այն իրավունքներից, իրենց բռնագրաված հայրենիքից, որն այսօր կոչվում է Արևելյան Անատոլիա»[212]:

Ըստ էության, այս նամակը ԱՄՆ-ի կողմից նախազգուշացում էր Թուրքիային: Դրա միջոցով Միացյալ Նահանգները մեկ անգամ էլ հիշեցնում էր Անկարային, որ գոյություն ունի Հայկական հարց, որը մոռացված չէ: Ու անհրաժեշտության դեպքում, եթե Թուրքիան չարունակի իր խաղերը, կարող է հայտնվել օրակարգում և չի բացառվում, որ կորցնի Արևմտյան Հայաստանը,

---

[210] Հայ դատի աշխատանքներ, Հայ դատի կենտրոնական հանձնախումբ, էջ 5:

[211] «Yeni İstanbul» (İstanbul), 24.I.1967.

[212] Բերված է հրատարակված նամակի ամբողջական թարգմանությունը: Տես՝ Messerlian Z., Your Land is My Land, «Newsweek», Vol. LXIX, No. 4, January 23., 1967, p. 3.

որը հայերի պատմական հայրենիքն է: Այլ կերպ ասած՝ Ա.Մ.Ն-ն սպառնում էր Թուրքիայի տարածքային ամբողջականությանը:

Նկատենք, որ «Newsweek» շաբաթաթերթում տպագրված Զ. Մսըրլյանի նամակը խմբագրական որոշակի փոփոխության էր ենթարկվել: Դա պարզ երևում է նամակի բնօրինակից, որն ամբողջությամբ հրապարակվել էր սփյուռքահայ մամուլում[213]: Նախ, թերթը չէր տպագրել նամակի այն հատվածը, որտեղ ներկայացվում էր Երևանում Մեծ Եղեռնի 50-րդ տարելիցի առնչությամբ կազմակերպված բազմահազարանոց ցույցը: Բացի այդ, հայերի թիվը 5 միլիոնից հասցվել էր 5.5-ի, իսկ զոհերի թիվը 2 միլիոնից նվազեցվել էր 1.5-ի: Վերջին պարբերության առաջին տողում ավելացվել էր «երբեք» բառը, որը սրությունն էր հաղորդել բովանդակությանը: Տեքստից, սակայն, չէր հանվել այն հատվածը, որտեղ 1915-1921 թթ. հայերի կոտորածները հստակ որակվում էին «20-րդ դ. առաջին ցեղասպանություն»: Այսինքն, այդ կերպ Ա.Մ.Ն-ն սպառնում էր Թուրքիային, որ պատրաստ է ճանաչել Հայերի ցեղասպանությունը:

Ինչպես նշվել է, Ա.Մ.Ն-ի Կալիֆորնիա նահանգի Մոնթեբելլոյի քաղաքապետարանի ժողովը 1965 թ. հայերին թույլատրել էր հանրային պուրակում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիր կառուցել: Այդ աշխատանքներն արդեն սկսվել էին և, ահա, ամերիկյան մամուլն այդ օրերին լուսաբանում էր դա: Սա էլ որոշակի ակնարկ էր Թուրքիային:

«Newsweek» թերթում հրապարակված Զ. Մսըրլյանի նամակը լայն արձագանք է գտնում թուրքական մամուլում: Հոդվածին առաջինն անդրադառնում է «Yeni Gazette»-ը: Այս թերթում տպագրված հոդվածի տեքստը թարգմանվում և հրապարակվում է սփյուռքահայ մամուլում: Այսպես, օրինակ, «Ազդակ» պարբերականի՝ «Հայկական պահանջներուն արձագանքը Թուրքիոյ մէջ» վերնագրով հրապարակման մեջ այդ թարգմանությունը բերվում է ամբողջությամբ: «Անցեալ շաբաթ, արտասահմանի հայերը, Թուրքիոյ դէմ բազմաթիւ քարոզչութիւններ ըրին: Նախ ամերիկահայ ամէնէն չատ կարդացուած մէկ պարբերաթերթին՝ «Նիւզուիք»ի մէջ պէյրութէն հայ փրոֆեսոր մը նամակ մը հրատարակեց, մեղադրելով Խորհրդային Ռուսիան, աւելի ճիշդը Թուրքիան, առարկելով որ

[213] Տես՝ «Յառաջ» (Փարիզ), 28. I. 1967, «Ազդակ», 30. I. 1967, «Զարթօնք», 31. I. 1967, «Հայրենիք» (Բոստոն), 7. II. 1967, «Արև» (Կահիրե), 15. II. 1967, «Պայքար» (Բոստոն), 15. III. 1967 և այլն:

Արեւելեան Անատոլուն Հայերունն է եւ իբր այդ՝ Ռուսիա չի կրնար երաշխաւորել Թուրքիոյ հողային ամբողջութիւնը (առանձին կուտանք այդ նամակը)»[214]: Այնուհետեւ անդրադարձ է արւում ԱՄՆ-ի Մոնթեբելլո քաղաքում Հայոց ցեղասպանութեան հուշահամալիրի կառուցմանը, հիշատակվում է Նյու Յորքի ՄԱԿ-ի չենքի առջեւ հայերի կազմակերպած բազմահազարանոց ցույցը, ավելացնելով, որ «դրանով չբավարարվելով հայերը խնդրագիր են փոխանցել ՄԱԿ-ի Մարդու իրավունքների Հանձնաժողովի Փոքրամասնութիւնների խտրականութեան կանխման ու պաշտպանութեան ենթահանձնաժողովին խնդրելով՝ Թուրքերին դատել 1915 թ. ցեղասպանութեան առթիվ, իբրեւ մարդկութեան դեմ հանցանք գործած»[215]: Հոդվածի վերջում թուրքական թերթը գրում է. «Պատմութեան մեջ 50 տարի առաջ պատահած ու մոխրացված դեպքերին վերադառնալը ցավ է պատճառում այն 77 հազ. հայերին, որոնք Թուրքիայի մեջ են ապրում իբրեւ հավատարիմ եւ լավ հայրենակիցներ: Մեր այդ հայրենակիցներն աղատ ու երջանիկ են, և նրանք են, որ ամենից ավելի յուրացրել են թուրքական մշակոյթը»[216]: Նման եղրակացութեամբ թուրքական կողմը փորձում էր հիշեցնել, որ Թուրքիայի տարածքում դեռևս ապրում են հայեր, որոնց կյանքի համար իրական սպառնալիք են Սիւյուռքում ընթացող հակաթուրքական գործողութեյունները:

Թուրքերի այս նախազգուշացումը ամենևին չկասեցրեց սփյուռքահայերի ծրագրերի իրականացումը, ընդհակառակը, նրանք պատրաստվում էին էլ ավելի լայն գործունեութեյուն ծավալել: Հունվարի 31-ին «Ազդակ» թերթը հրապարակում է «Ակնարկ. անրաժեշտ աշխատանք մը» վերնագրով անատորագիր հոդված, որում անդրադարձ է կատարվում «Newsweek»-ի վերոհիշյալ հոդվածին և չեչտվում է, որ արևմտյան մամուլը չռայլ չի եղել Հայկական հարցում և խոսել է միայն «պարագայական առիթներով»[217]: Դրանով ակնարկվում է, որ արևմտյան պետութեյունների վերաբերմունքը Հայկական հարցում փոխվել է, ինչը պայմանավորված է թուրք-ամերիկյան հարաբերութեյուններում նկատվող լարվածութեյամբ: Ավելին՝ հույս է հայտնվում, որ «Մեծ եղեռնի յիսնամեակին առթիւ արտահայտված համազգային վրդովումը ու նաեւ Միաց-

[214] «Ազդակ», 30. I. 1967:
[215] Նույն տեղում:
[216] Նույն տեղում:
[217] «Ազդակ», 31.I.1967:

յալ Ազգերուն կատարուած դիմումները որոշ արձագանք կգտնեն միջազգային մամուլի մէջ»[218]: Հոդվածի համաձայն՝ հայերն այս ուղղությամբ դեռ մեծ աշխատանք ունեն անելու. «Ունինք գիտնականներ, գրագէտներ, օտար լեզուներով արտայայտուող հրապարակագիրներ, որոնք աշխարհի ամէն անկիւն դեր մը ունին կատարելիք: Իւրաքանչիւրը դեսպան մըն է իր գտնուած միջավայրին մէջ և կրնայ քաղաքական մտայնութիւններու մէջ ի նպաստ հայկական դատին մթնոլորտ ստեղծել: Կասկած չկայ նաեւ, որ թէ բոլոր այդ ներկայացուցիչները ունեն իրենց անձնական բարեկամները, - գիտնական, գրագետ կամ հրապարակագիր, որոնց խօսքը կշիռ կրնայ ունենալ եւ որոնք պիտի զգան, թէ միջազգային խաղաղութեան եւ արդարամտութեան ի նպաստ ձայն բարձրացնելը պատուաբեր գործ մըն է»[219]: Այլ կերպ ասած՝ արտերկրում ապրող հայերին կոչ էր արվում լայնածավալ քարոզչություն իրականացնել ի նպաստ Հայկական հարցի՝ օգտագործելով սփյուռքահայ մտավորականության ուժերը, որոնք արդեն մեծ հեղինակություն էին վայելում բնակության հաստատած երկրներում:

«Newsweek»-ում հրապարակված Զ. Մսըրլյանի նամակը և սփյուռքահայերի ծավալած գործունեությունը պատճառ են դառնում, որ Հայկական հարցը կրկին հայտնվի Թուրքիայի կառավարության ուշադրության կենտրոնում: 1967 թ. հունվարի 30-ին Թուրքիայի ազգային անվտանգության խորհուրդը հնգժամյա նիստի ընթացքում կիպրական խնդրի հետ քննարկում է նաև այդ հարցը: Նիստին ներկա էին՝ Թուրքիայի նախագահ Ջ. Սունայը, վարչապետ Ս. Դեմիրելը, զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Ջ. Թուրալը, պաշտպանության նախարար Ա. Թուփալօղլուն, բարձրաստիճան այլ պաշտոնյաներ, ինչպես նաև ցամաքային բանակի, նավատորմի և օդուժի հրամանատարներ[220]: Ներկայացնելով խնդիրը՝ Ս. Դեմիրելը նշում է, որ վերջին ամիսներին Միացյալ Նահանգների և Լիբանանի հայերը հակաթուրքական քարոզչություն են իրականացնում, ինչը Թուրքիայում որոշ լարվածություն է առաջացրել[221]: Ներկաները քննարկելով հարցը՝ որոշում են հայերի միջոցառուների դեմ հակազդող քայլեր ձեռնարկել[222]: Եվ քանի որ Թուրքիայի ազգային անվտանգության խորհրդի որոշումները հիմնականում

---

218 Նույն տեղում:
219 Նույն տեղում:
220 «Մարմարա» (Ստամբուլ), 31.I.1967:
221 Նույն տեղում:
222 Նույն տեղում:

չեն բացահայտվում, կարելի է միայն ենթադրել, թե ինչի մասին է խոսվել:

Ամենայն հավանականությամբ սփյուռքահայերի վրա ճնշում գործադրելու համար օգտագործվելու էր ստամբուլահայերի գործոնը: Այդ օրերին թուրքական մամուլը տպագրում էր հակահայկական հոդվածներ, որոնք բորբոքում էին թուրք հասարակությանը: Դրանցից առանձնացնենք «Yeni Gazette»-ում լույս տեսած Հիքմեթ Բիլի[223] «Այսօր Ցեղասպանությունը ինչպե՞ս է լինում» («Bugün genosid nasıl oluyor?») վերնագրով հոդվածը: Հոդվածագիրը փորձում է հերքել Հայոց ցեղասպանության փաստը՝ հայերին մեղադրելով թուրքերին վարկաբեկելու համար: «Ցեղասպանությունը, ստուգաբանորեն, նույն հողում ապրող երկու ցեղերից մեկի բնաջնջումն է մյուսի կողմից: Ներկայումս արտերկրում ապրող հայերը կես դար առաջ Արևելյան Անատոլիայում թուրքերի կողմից ցեղասպանության ենթարկվելու մասին պնդելու հիվանդությամբ են տառապում»[224],- գրում է նա: Ապա բացահայտ հայտարարում է, որ իբր հայերը մեղավոր են տեղի ունեցածում[225]:

Հ. Բիլը խոսում է նաև Ստամբուլում ապրող հայերի մասին՝ չեչտելով, որ նրանք «Ստամբուլի և ողջ Թուրքիայի բարիքներից» ավելի են օգտվում[226], քան իրենք և հարց է ուղղում սփյուռքահայերին. «Արդյոք չեք մտածում, որ Ստամբուլում բնակվող հայերն իրենց տեղերում հանդիստ կարող են ապրել, թե՞ ոչ»[227]: Հոդվածի եզրակացությունն էլ հետևյալն է. «Այս դարում ցեղասպանությունն այլևս չի լինում նախկինի պես: Ցեղասպանությունը՝ Թուրքիայից դուրս խեղճ ու գաղթական ապրող հայերի ընտրած այս նոր ճանապարհով է կատարվում: Այլևս մեկը մյուսին հեշտությամբ չի կարողանում կոտորել, բայց կարող է օդը անշնչելի աստիճանի հասցնել: Ահա այն ամենը, որի արդյունքում Ստամբուլի մեջ ոչ մի հայ չի մնա: Որովհետև նրանց միակ ելքը հայրենիքի այս վերջին պատառից փախչելու մեջ է լինելու....»[228]: Սա արդեն ստամբուլահայությանն ուղղված բացահայտ սպառնա-

---

[223] Հիքմեթ Բիլ (1918-2003) – թուրք լրագրող, իրավաբան: Եղել է Կիպրոսի թուրքական ասոցիացիայի նախագահը, 1955 թ. սեպտեմբերի 6-7-ին Ստամբուլում հույների ու հայերի նկատմամբ իրականացված դեպքերի հրահրողներից է:

[224] «Yeni Gazette» (İstanbul), 01.II.1967.

[225] Նույն տեղում:

[226] Նույն տեղում:

[227] Նույն տեղում:

[228] Նույն տեղում:

լիք էր: Ի դեպ, մեր օրերում էլ, երբ Թուրքիան նեղն է ընկնում, Հայուհյանը հիշեցնում է այս մասին:

Ի պատասխան, երկու օր անց՝ փետերվարի 3-ին, Ստամբուլում լույս տեսնող «Ժամանակ» օրաթերթը տպագրում է Կարպիս Կ. Մուրադյանի «Ալ Հանգիստ ձգեցէք Հայերը» վերնագրով հոդվածը, որտեղ ասվում էր. «Մեր կարդ մը թուրք պաշտօնակիցները օրերէ ի վեր «Հայկական խնդիր» մը կը յուզեն եւ կը ջանան զրգռել ժողովուրդը ընդդէմ այն պարկեշտ պարտաճանաչ և երկրանուէր հաւաքականութեան որ Թուրքահայութիւն կը կոչուի: Այդ գրգռիչներէն մէկն է ահավասիկ Հիքմէթ Պիլը ...: Ի՞նչ է պատահեր վերջ ի վերջոյ եւ ի՞նչ բանով պատասխանատու կըլլայ Թուրքիոյ հայը, երբ իր ըմբռնած ձեւով իր մեռյալները կը սգայ Ամերիկայի հայը ...: ... Թուրքահայութիւնը ի՞նչ կապ կրնայ ունեցած ըլլա այդ հեռաւոր աշխարհին նոյնքան հեռաւոր մէկ ձեռնարկին հետ եւ Հիքմեթ Պիլը ի՞նչ դրդապատճառներով ելեր է «աքսոր» կամ «տարագրութիւն» կը չեվորէ ի վնաս Թրքահայոց.....: .... Կը խնդրենք ու կը պահանջենք գրգռիչներէն՝ որ ալ հանգիստ թողուն երկրին կենսունակ եւ անխոցելի մէկ տարրը, հայ հաւաքականութիւնը եւ չղրպարտեն զայն, երբ կը կարծեն թէ առիթ անցած է իրենց ձեռքը»[229]: Այս հոդվածով ստամբուլահայերն իրենց ըողոքի ձայն էին բարձրացնում՝ վորձելով հասկանալ, թե իրենք ինչու՞ պետք է պատասխան տան, երբ երկրի օրինապահ քաղաքացիներ են:

Երկու օր անց Ստամբուլում հրատարակվող «Մարմարա» օրաթերթը հաղորդում է, որ արտասահմանյան հայերի հակաթուրքական գործունեության և մամուլի հրապարակումների արդյունքում երկրի ոստիկանությունն իր պաշտպանության տակ է վերցրել Գում Գափուի Հայոց պատրիարքարանը[230]:

Բեյրութի «Զարթոնք» թերթի խմբագիր Գ. Ա.Հարոնյանը, «Թրքական ծանր գրգռութիւն Պոլսոյ Հայութեան դէմ....» վերնագրով հոդվածում անդրադառնալով «Մարմարա» թերթի հրապարակած այս լուրին, հարց է ուղղում Թուրքիայի իշխանություններին՝ «ինչու՞ է առաջացել նման պաշտպանության անհրաժեշտություն», ու ինքն էլ պատասխանում է. «Իրողութիւնը այն է, որ թրքական չատ մը թերթեր, - «Ենի Կազեթէ», «Ճումհուրիյեթ», եւ այլն, - անցնող չաբաթներուն ոչ միայն անվայել յարձակումի թիրախ դարձուցին լիբանահայութիւնը եւ ամերիկահայութիւնը,

[229] «Ժամանակ» (Ստամբուլ), 03. II.1967:
[230] «Մարմարա», 05. II. 1967: «Այգ» (Բեյրութ), 08.02.1967:

այլեւ ահավոր ըրպարտութիւն եւ ամբաստանութիւն կատարեցին պոլսահայութեան եւ յատկապէս Հայոց Պատրիարքարանին դէմ»[231]: Ավելին՝ հոդվածագիրը նշում է, որ թուրքական մամուլի համաձայն՝ արտասահմանում հակաթուրքական քարոզչությունը ֆինանսավորվել է Պոլսո Հայոց Պատրիարքարանի կողմից[232]: Այդ տեղեկությունն էլ ավելի էր դրդռել թուրք հասարակությանը հայերի դեմ, որն անշուշտ ըրպարտություն էր:

Թուրքիայում տիրող հակահայկական մթնոլորտին անդրադառնում է նաև Ստամբուլի ԽՍՀՄ-ի Գլխավոր հյուպատոսարան իր պատրաստած տեղեկանքում. «1965-1967 թթ. տեղի են ունեցել մի շարք իրադարձություններ, որոնք անդրադարձել են հայ համայնքի կյանքի վրա: Հատկապես, 1965 թ. Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցի միջոցառումները հակահայկական մթնոլորտ են ստեղծել երկրում: Թուրքական մամուլում հրատարակվել են հակահայկական հոդվածներ: Թուրքիայի կառավարությունն էլ ստիպում է երկրում ապրող հայերին հանդես գալ հայտարարություններով, որտեղ նրանք դատապարտում են սփյուռքահայերի հակաթուրքական գործունեությունը: Դրանք տպագրվում են երկրի առաջատար պարբերականներում: Ելույթով հանդես է եկել նաև Պոլսո Հայոց պատրիարք Շնորհք Գալուստյանը: Նա իր խոսքում քննադատել է սփյուռքահայերի հակաթուրքական տրամադրությունները»[233]: Այս փաստաթղթում հատակ նշված է, որ Թուրքիայում ապրող հայերը հայտարարություններ են անում կառավարության ճնշմամբ:

1967 թ. մարտին Վաշինգտոնի Թուրքիայի դեսպանատան տեղեկատվության խորհրդատու Էրդողան Ուլուսը «Պատմության ծանոթագրություն» («Footnote to History») վերնագրով պատասխան նամակ է հղում «Newsweek»-ին: Նամակագիրը ներկայացնում է հայկական հարցի վերաբերյալ պաշտոնական Անկարայի առաջ քաշած թեզը, այն է՝ ամեն ինչում մեղադրել «արտաքին ուժերին»[234]: Թուրքական մոտեցումը չափազանց հատակ է. Օսմանյան կայսրությունում հայերը և թուրքերը ապրում էին եղբայրաբար, հայերը երջանիկ և բարգավաճ էին, օտարը եկավ և լարվածություն մտցրեց, դժբախտ դեպքեր տեղի ունեցան, երկու

---

[231] « Ջարթօնք», 11. II.1967:
[232] Նույն տեղում:
[233] ՀԱԱ, ֆ. 326 (Արտաքին գործերի նախարարության ֆոնդ), ց. 1, գ. 408 (Ստամբուլի ՍՍՀՄ Գլխավոր հյուպատոսարանի փոխհյուպատոսի տեղեկանքը «Ստամբուլի Հայկական համայնքի վիճակի մասին», 16. 05.196 թ.), թթ. 2-3:
[234] Ulus E., Footnote to History, «Newsweek», vol. LXIX, № 10, March 6, 1967, p. 2.

կողմերն էլ տուժեցին: Բայց հիմա պետք է մոռանալ անցյալը, համակերպվել իրականության հետ, հատկապես այն բանի, ինչ վերաբերում է հողային հարցին: Այս թեզը արտահայտված է նաև Հ. Բիլի վերոգրյալ հոդվածում և թուրք պաշտոնյաների հայտարարություններում: Ասինքն՝ 1960-ական թվականներին դա Թուրքիայի պաշտոնական տեսակետն էր:

Ի դեպ, հետաքրքիր է, որ Է. Ուլուսի նամակը տպագրելուց հետո ամերիկյան չաբաթաթերթը, որը մինչ այդ հանդես էր գալիս հակաթուրքական հոդվածներով, ոչ միայն չի տպագրում հայերի ուղարկած պատասխան նամակը, այլև խուսափում է նրանց հետ կապ հաստատելուց: Նկատենք, որ մարտի 7-ից ապրիլի 13-ը Սփյուռքում գործող հայկական կազմակերպությունները մի քանի տասնյակ նամակներ էր հղում թերթի խմբագրությանը: Եվ միայն 134 հայ ոսկերիչների ստորագրությամբ ուղարկված նամակին են արձագանքում՝ պատասխանելով, որ թերթն իրավասու չէ մեկնաբանելու որևէ մեկի տեսակետը, բայց պատրաստ են ստացված նամակը փոխանցել Է. Ուլուսին[235]: Սա խոսում է այն մասին, որ թուրք-ամերիկյան հարաբերություններում կրկին փոփոխություններ էին տեղի ունեցել:

Սփյուռքահայերը չարունակում են իրենց գործունեությունը. 1967 թ. ապրիլին Թուրքիայի նախագահ Ջևդեթ Սունայի՝ ԱՄՆ այցի նախօրեին «New York Times» թերթում տպագրվում է Հայոց ազգային կոմիտեի կողմից նրան ուղղված նամակը, որով պահանջվում էր ճանաչել Հայոց ցեղասպանությունը[236]: Նույն պահանջը Ֆրանսահայերի կողմից առաջ է քաշվում նաև Ջ. Սունայի՝ Փարիզ կատարած այցի ընթացքում[237]: Մինչդեռ թուրքական մամուլը 1967 թ. ապրիլին լուրեր է տարածում, որ երկրի արտաքին գործերի նախարար Ի. Ջաղլայնօղլուն դրական արդյունքների է հասել ԱՄՆ-ի Մոնթեբելլոյի Հայոց ցեղասպանության հուշահամալիրի հետ կապված[238]: Սակայն իրականում դրանք սուտ լուրեր էին, քանի որ, ինչպես վերը նշվեց, այդ հուշահամալիրի բացումը տեղի է ունեցել 1968 թ.:

Եվս մեկ կարևոր հանգամանք, 1967 թ. փերվարին Թուրքիայի կառավարությունը, հիմք ընդունելով ԽՍՀՄ-ի արտաքին գործերի

---

[235] «Ջարթօնք», 14.IV.1967:
[236] «The New York Times», 19.IV.1967.
[237] «Ջարթօնք», 02.VII.1967:
[238] «Ջարթօնք», 23.IV.1967:

նախարար Ա. Գրոմիկոյի՝ երկու երկրների միջև սահմանների վերագծման մասին 1965 թ. մայիսի 18-ի առաջարկը, համաձայնվում է կնքել խորհրդա-թուրքական արձանագրություն: Այն ստորագրվում է փետրվարի 28-ին Անկարայում: Ապրիլին էլ ստամբուլահայ մամուլը, հիմնվելով թուրքական տեղեկատվության վրա, հաղորդում է, որ Թուրքիան, ԽՍՀՄ-ի հավանական հարձակումից պաշտպանվելու համար, ՆԱՏՕ-ին առաջարկել է «ամոմական ականներու դաշտեր հաստատուիլ Թուրք և ռուս սահմանին վրայ, նկատելով, որ Թուրքիա հինգ զորաբաժին ունի հոն»[239]: Դրանով իսկ փորձում էր արևմտյան դաշնակիցներին հավատացնել, որ անհանգստացած է իր տարածքային ամբողջականության հարցում և որ ամենևին չի վստահում ԽՍՀՄ-ին: Ավելին՝ անհրաժեշտության դեպքում պատրաստ է վերանայել վերջին տարիներին երկու երկրների միջև հաստատված ջերմ հարաբերությունները: Թուրքական կողմի հակասական այս քայլերը վկայում են, որ, ինչպես միշտ, պաշտոնական Անկարան փոփոխական էր իր արտաքին քաղաքականության մեջ:

1967 թ. սեպտեմբերին Թուրքիայի վարչապետ Ս. Դեմիրելը պաշտոնական այց է կատարում Մոսկվա և Բաքու՝ արժանանալով ջերմ ընդունելության: Հետագա՝ 1968-1969 թթ. խորհրդա-թուրքական բարձր մակարդակով հանդիպումներում հիմնականում քննարկվում էր սահմանի վերագծման հարցը: Թուրքական մամուլն էլ այդ առիթներով տարաբնույթ լուրեր էր տարածում, որոնք լարում էին իրավիճակը երկրում:

Ամփոփելով վերը շարադրված նյութը՝ արձանագրենք. 1960-ական թվականները դարձան Հայկական հարցի պատմության չրջադարձային էջը. Խորհրդային Հայաստանում ազգի մեծագույն ողբերգությունը վերջապես դադարեց արգելված հարց լինելուց: Միջազգային հանրության կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչելու սիյուռքահայության պայքարը դարձավ առավել դործուն: Դա Թուրքիային ստիպեց որոշ հակաքայլեր ձեռնարկել, որոնք դարձան թուրքական ժխտողական քաղաքականության ու հակահայկական քարոզչության հիմքերը:

[239] «Մարմարա», 21.IV.1967:

ԳԼՈՒԽ III

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1970-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Սփյուռքահայ գաղթօջախներում և Հայրենիքում Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցի լայնածավալ նշումը մեծ խթան հանդիսացավ հետագա տարիներին միջազգային ասպարեզում Մեծ եղեռնի դատապարտման ու ճանաչման գործում: Սփյուռք-Հայերի դնահատմամբ՝ այդ տարելիցով ամփոփվեցին նախորդ ժամանակաշրջանում խնդրո առարկա հարցում հայության ձեռքբերումները, և դրվեց այդ հարցի լուծման համար գործունեության նոր ուղիների, նոր մարտավարության սկիզբը: Այդ պատճառով 1970-1980-ական թվականները ընդունված են որպես «արմատական շրջադարձի տարիներ»[240]: 1970-ական թվականներին միջազգային ասպարեզում Հայ դատի բարեհաջող լուծումը դեռևս միայն սփյուռքահայության մենաշնորհն էր:

Սփյուռքահայ գործիչներն իրենց գործողությունները հիմնականում իրականացնում էին ավանդական ուղիով՝ որոշակի փոփոխություններով հանդերձ: Սփյուռքահայ և արևմտյան մամուլում շարունակում էին տպագրել հրապարակախոսական բազմաթիվ հոդվածներ, հրատարակել գրքեր և գրքույկներ՝ նվիրված Հայկական հարցին ու ցեղասպանությանը, կանգնեցնում էին եղեռնի զոհերին նվիրված հուշարձաններ, խնդրագիր-դիմումներ էին հղում ՄԱԿ-ին, Եվրախորհրդարանին, միջազգային բոլոր կազմակերպություններին, օտարերկրյա պետությունների նախագահներին, խորհրդարաններին ու կառավարություններին՝ Հայկական հարցը և Հայոց ցեղասպանությունը ճանաչելու ու պաշտպանելու առաջարկով: Կազմակերպում էին բազմահազարանոց ցույցեր՝ Թուրքիայից պահանջելով ճանաչել Հայոց ցեղասպանությունը:

Այդ ժամանակաշրջանում հատկապես ակտիվ գործունեություն է ծավալում սփյուռքահայ երիտասարդությունը, առաջնորդվելով՝ «Իբարու տրամաբանական ընթացքով, սկզբնական վիճակէն կանցնինք բարձրագոյն մակարդակի մը, որ ստեղծված է գաղափարախոսութեան յառաջացած չարժումին»[241]: Իշխում էր այն մոտեցումը, թե Սփյուռքը «Աղգային գետնի վրայ, վերջին չիսուն

---

[240] Խուրշուդյան Լ., Հայկական հարցը, Երևան, 1995, էջ 56:
[241] Սփյուռք. - «Երիտասարդ հայ», Պեյրութ, թիվ. 9, ապրիլ 18, 1970, էջ 3:

տարիներու ընթացքին գործածուած paramètre-ը կըհիմնուէր մէկ կողմէ ազգապահպանման ու գոյատևման գաղափարուն վրայ, մյուս կողմէն անկախ ու միացյալ Հայաստանի մը հեռանկարին վրայ: Էապես բացասական դիրքորոշում մըն էր այս, եղեռնի յառաջացուցած գոյավիճակին դէմ: Բնաջնջումի փորձին հակադարձեցինք ազգապահպանումով ու գոյատևումով: Հողերի գրավմանը հակադարձեցինք անկախ ու միացյալ Հայաստանի հեռանկարով: Այս paramètre-ը մասամբ յաջողվեցավ, որովհետև համապատասխանեց իր ժամանակի պահանջներուն»[242]: Ավելին՝ երիտասարդությունն այն կարծիքին էր, որ Սփյուռքի «տնտեսա-ընկերա-մշակութային միջավայրը ծնունդ էր տվել նոր հային»[243], որը նոր պահանջներ ու գործելաոճ ուներ:

1970 թ. ապրիլի 6-ին լիբանանահայ 400 երիտասարդ խաղաղ ցույց են կազմակերպում Բեյրութի ամերիկյան համալսարանի չենքի առջև, որտեղ պետք է տրվեր «Թուրքական չաբաթի» մեկնարկը: Ընդառաջ գնալով ցուցարարների պահանջներին՝ համալսարանի ղեկավարությունը չեղյալ է հայտարարում ծրագրված միջոցառումները: Ցույցի կազմակերպիչները հայտարարում էին, որ իրենց այդ քայլը հոգեբանական «չոկ ստեղծող ազդակ է», որ հանրային կարծիքի ուշադրությունն է հրավիրում քաղաքական որևէ խնդրի վրա[244]: Այլ կերպ ասած՝ ցույցը ոչ թե նպատակ էր, այլ նպատակին հասնելու միջոց: Այս միջոցառմանը թուրքական մամուլից առաջինն արձագանքում է «Cumhuriyet» թերթը: Հայ ուսանողներին մեղադրելով Լիբանանում հակաթուրքական գործունեությունն ծավալելու, ինչպես նաև «թուրքական չաբաթը» արգելելու մեջ՝ պարբերականը միաժամանակ տեղեկացնում էր, որ լիբանանյան թերթերից «Ալ-Անվար»-ը, «Ալ-Մուհարիր»-ը, «Ալ-Ջարիդա»-ն, «Ան-Նահար»-ը հանդես են գալիս ի պաշտպանություն հայերի, հիշատակում 1915 թ. Օսմանյան կայսրության տարածքում հայերի կոտորածների մասին[245]:

Լիբանանյան թերթերը հատկապես լայնորեն արձագանքում են 1970 թ. ապրիլի 23-ին Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված Բիքֆայայի հուշարձանի բացման արարողությանը,

---

[242] Նույն տեղում, էջ 4:
[243] Նույն տեղում:
[244] Հայ համալսարանականների ցույցը «Թրքական չաբաթին» դեմ. - «Երիտասարդ հայ», Պեյրութ, թիվ. 9, ապրիլ 18, 1970, էջ 25:
[245] «Cumhuriyet», 08. IV.1970.

որը հովանավորում էր երկրի նախագահ Շառլ Հելուին: Հայ ժողովրդին ուղղված նրա նամակն ընթերցում է զբոսաշրջության նախարար Խաչիկ Պապիկյանը: Միջոցառմանը ներկա էին Առաքելական, Կաթոլիկ և Ավետարանչական եկեղեցիների հոգևոր առաջնորդները, ինչպես նաև հոծ բազմություն[246]: Նույն օրը Բեյրութի համալսարաններում անգլերեն, ֆրանսերեն և արաբերեն լեզուներով թուուցիկներ են տարածվում, որտեղ հակիրճ տեղեկատվություն էր հաղորդվում Հայկական հարցի մասին: Բացի այդ, քաղաքի պատերի վրա Հայոց ցեղասպանությանը նվիրված պաստառներ էին փակցվում: Այս միջոցառումները մեծ արձագանք գտան երկրի հասարակության ամենալայն շրջանակներում, արդյունքում՝ ապրիլի 24-ին լիբանանահայ ուսանողների կազմակերպած բազմահազարանոց ցույցին մասնակցում էին նաև այլազգի ներկայացուցիչներ, նրանք նույնպես իրենց բողոքն էին հայտնում՝ Թուրքիայից պահանջելով ճանաչել Հայոց ցեղասպանությունը: «Milliyet»-ի Բեյրութի թղթակիցը գրում էր, թե Լիբանանի 200 հազ. հայերը պահանջում են, որ

«1. 1915 թ. Թալեաթ Փաշայի հրամանով Անատոլիայում կոտորվել է 1.5 միլիոն հայ, որոնց տարածքները գրավել են: Թուրքերը հանդիսանալով օսմանների թուռները՝ պարտավոր են ընդունել կոտորածների հանցանքը:

2. Իբրև հատուցում՝ թուրքերը հայ ժողովրդին պետք է մուծեն 20 մլն. դոլար:

3. Պետք է վերադարձնեն հյուսիսարևելյան Անատոլիայի նախկին հայկական հողերը»[247]:

Այլ կերպ ասած՝ սփյուռքահայերը Թուրքիային հստակ պահանջներ էին ներկայացնում:

Աշխարհի հայաշատ բոլոր քաղաքներում նույնպես ապրիլի 24-ի զոհերի հիշատակին նվիրված ցույցեր են կազմակերպվում, որոնք լուսաբանվում են թուրքական «Milliyet», «Hürriyet», «Cumhuriyet», «Akşam» և այլ թերթերի կողմից: Հնարավոր է, որ այս միջոցառումները, դրանց արձագանքները ստիպեցին Թուրքիայի իշխանություններին Ազգային անվտանգության խորհրդի նիստում հրատապ կարգով կրկին քննարկել Հայկական հարցը: 1970 թ. ապրիլի 24-ին Զանքայա պալատում նախագահ Ս. Դեմիրելի մաս-

[246] Եղեռնի 55-ամյակը. - «Երիտասարդ հայ», Պեյրութ, թիվ 10, մայիսի 2, 1970, էջ 13:
[247] «Milliyet», 29. IV. 1970.

նակցությամբ կայացած չորսուկես ժամանոց նիստի ընթացքում ներկաները անդրադառնում են սիյուռքահայերի կողմից կազմակերպված ապրիլյան Եղեռնի ոդեկոչման դեպքերին և միաձայն ընդունում, որ հակաթուրքական գործունեության ու քարոզչության հրահրողները օտարերկրյա ֆինանսական կազմակերպություններն են: Կառավարությունից նրանք պահանջում էին միջոցներ ձեռնարկել կանխելու հայերի «հակաթուրքական գործունեությունը»՝ կանխատեսելով, որ հետագայում դա լուրջ խնդիր կարող է դառնալ[248]: Ըստ էության, թուրքական իշխանությունները հասկանում էին, որ Հայոց ցեղասպանության ճանաչման ուղղությամբ 1960-ական թվականներին սկսված շարժումը ոչ թե մարում է, այլ, ընդհակառակը, նոր հունով է զարգանում, և որ միջազգային հանրության ու կառույցների հետաքրքրությունն այդ հարցի նկատմամբ օրեցօր մեծանում է:

1970-ական թվականներին Հայոց ցեղասպանության հարցը հայտնվում է ՄԱԿ-ի օրակարգում: Եվ եթե նախկինում այդ հարցը որևէ առիթի հետ կապված էր հիշատակվում, ապա խնդրո առարկա ժամանակահատվածում պարբերաբար դառնում է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի Փոքրամասնությունների խտրականության կանխման ու պաշտպանության ենթահանձնաժողովի[249] քննարկման թեմա: Մինչ այդ նշված ենթահանձնաժողովը բազմիցս փորձել է բարձրացնել 1915-1923 թթ. Հայոց ցեղասպանության խնդիրը, սակայն ապարդյուն:

Հիշեցնենք, որ 1967 թ. հոկտեմբերին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի Փոքրամասնությունների խտրականության կանխման ու պաշտպանության ենթահանձնաժողովի 20-րդ նստաշրջանը որոշում է ընդունում իր ծրագրի մեջ մտցնել ցեղասպանության կանխման և դրա համար պատժի հարցը: Այդ որոշումը վավերացվում է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի և Տնտեսական ու սոցիալական խորհրդի կողմից: 1971 թ. օգոստոսին ենթահանձնաժողովն իր 24-րդ նստաշրջանում Ռուանդայի ներկայացուցիչ Նիկոդեմ Ռուխաչիանկիկոյին նշանակում է այդ հարցի հատուկ զեկուցող և հանձնարարում նախապատրաստել նախնական տեղեկագիր: 1972 թ. մայիսին դա ներկայացվում

---

[248] «Ազդակ», 07. V. 1970:

[249] ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի Փոքրամասնությունների խտրականության կանխման ու պաշտպանության ենթահանձնաժողովը բաղկացած է Մարդու իրավունքների հանձնաժողովի նստաշրջաններում ընտրված փորձագետներից:

է ենթահանձնաժողովի 25-րդ նստաշրջանին[250], սակայն դրանում Հայոց ցեղասպանությունը դարձյալ չի հիշատակվում: 1972 թ. Սեպտեմբերին եգիպտական հեղինակավոր «Ալ Ահրամ» թերթի թղթակից Լևոն Քեչեյանը այդ մասին ահազանգում է, որը մեծ արձագանք է գտնում սփյուռքահայ մամուլում[251]: Եվ կրկին, ինչպես 1967 թ. «Newsweek» չաբաթաթերթի դեպքում էր, Հայոց ցեղասպանության հարցը Ն. Ռուխաչիանկիկոյի և ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղար Կ. Վալդհայմի[252] ուշադրության է ներկայացվում բելգրադահայ պատմաբան Զավեն Մսըրլյանի անձնական նախաձեռնությամբ: Նա փորձում էր ՄԱԿ-ի պատրաստվող 1973 թ. նոր տեղեկագրի մեջ ընդգրկել տալ Հայոց ցեղասպանության իրողությունը ևս: Այդ նպատակով 1972 թ. սեպտեմբերի 14-ին նամակ է հղում Ռուանդայի ներկայացուցչին: Պատասխան չստանալով՝ դեկտեմբերի 18-ին դիմում է Կ. Վալդհայմին: Այս նամակն արդեն պարունակում էր առավել ընդարձակ ակնարկ հայերի նկատմամբ թուրքերի իրականացրած ցեղասպանության վերաբերյալ՝ փաստաթղթերի, վավերագրերի և միջազգային ճանաչում ունեցող անձանց վկայություններով հաստատված[253]:

Մեկ ամիս անց՝ 1973 թ. հունվարի 22-ին, Զ. Մսըրլյանի նամակին պատասխանում է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի Փոքրամասնությունների խտրականության կանխման ու պաշտպանության ենթահանձնաժողովի պետ Ջորջ Բրանթը: Նամակագրին տեղեկացվում էր, որ ՄԱԿ-ի նոր տեղեկագիրը պատրաստելիս նրա ներկայացրած տեղեկությունները հաշվի կառնվեն, և պատմությանը վերաբերող բաժնում հայերի ցեղասպանությունը ևս կհիշատակվի[254]: Սփյուռքահայերին այդ մասին տեղեկացնում է ԱՄՆ-ում հրատարակվող «The Armenian Weekly» պարբերականում փետրվարի 8-ին Լևոն Քեչեյանի տպագրած հոդվածը: Նա գրում էր. «25 տարվա պայքարը իր դրական արդյունքն է տվել»[255]:

---

[250] Toriguian Sh., The Armenian Question and International Law, University of La Verne Press, California, 1988, p. 114.

[251] Հայկական ցեղասպանությունը ՄԱԿ-ի պաշտոնական արձանագրություններուն մեջ. - «Երիտասարդ հայ», Պեյրութ, թիվ. 88, դեկտեմբերի 1, 1973, էջ 9:

[252] Կուրտ Վալդհայմ - ավստրիացի պետական գործիչ, դիվանագետ ու քաղաքագետ: 1972-1981 թթ. զբաղեցրել է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի, իսկ 1986-1992 թթ՝ Ավստրիայի նախագահի պաշտոնը:

[253] Հայկական ցեղասպանությունը ՄԱԿ-ի պաշտոնական արձանագրություններուն մեջ, էջ 10:

[254] «The Armenian Weekly» (Watertown), 08. II.1973.

[255] Նույն տեղում:

1973 թ. հունիսի 25-ին Ն. Ռուխաչիանկիկոն ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովին ներկայացնում է «Ցեղասպանության վերաբերյալ» վերնագրով զեկուցագիրը, որտեղ խոսվում է նաև թուրքերի կողմից հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանության մասին[256]: Երկու ամիս անց՝ սեպտեմբերի 18-19-ին, ժնևում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի Փոքրամասնությունների խտրականության կանխման ու պաշտպանության ենթահանձնաժողովի 26-րդ նստաշրջանում քննարկվում է Ն. Ռուխաչիանկիկոյի՝ ցեղասպանությունները կանխելու և դրա համար պատժելու հարցին նվիրված զեկուցագիրը: Նիստը նախագահում էր Եգիպտոսի ներկայացուցիչ Ահմեդ Խալիֆան: Աշխատանքին մասնակցում էին ենթահանձնաժողովի բոլոր 27 պետությունների ներկայացուցիչները[257]:

Ենթահանձնաժողովի անդամներն անհատ փորձագետներ էին, իսկ Մարդու իրավունքների հանձնաժողովը ներկայացնում էին հետևյալ 27 պետությունները՝ Ավստրիան, Իտալիան, Ֆրանսիան, Դանիան, Հոլանդիան, ԱՄՆ-ն, Բուլղարիան, Ռումինիան, Կիպրոսը, Լիբանանը, Իրաքը, Եգիպտոսը, Իրանը, Թունիսը, Պակիստանը, Սենեգալը, Սիերա Լեոնեն, Գանան, Նիկարագուան, Պերուն, Պանաման, Դոմենիկյան Հանրապետությունը, Էկվադորը, Կոնգոն, Հնդկաստանը, Զիլին, Բելոռուսիայի ԽՍՀ-ն: Ենթահանձնաժողովում հայության իրավունքները ներկայացնող ներկայացուցիչ չկար: Ինչ վերաբերում էր Թուրքիային, ապա նա լինելով ՄԱԿ-ի անդամ՝ ենթահանձնաժողովում ներկա էր դիտորդի կարգավիճակով:

Ինչպես Ջ. Բրանթն էր տեղեկացրել, քննարկվող փաստաթղթում պատմությանը վերաբերող բաժնի (այն ընդգրկում էր 15-36-րդ պարբերությունները) 30-րդ պարբերությունն անդրադառնում էր Հայոց ցեղասպանությանը և Օսմանյան կայսրության տարածքում իրականացված հայերի ջարդը որակում էր որպես «20-րդ դարի առաջին ցեղասպանություն»[258]: Սույն բանաձևին դեմ արտահայտվեց Պակիստանի ներկայացուցիչը, սակայն ենթա-

---

[256] Study of the question of the prevention and punishment of the crime of genocide : prgress report / by Nicodème Ruhashyankiko, Special Rapporteur, Document symbol: E/CN.4/Sub.2/L.583, http://repository.un.org/handle/11176/354879

[257] Մաքրլեան Ջ., Հայերու դէմ գործուած ցեղասպանութիւնը ՄԱԿ-ի Մարդկային իրաւանց Յանձնախումբին առջեւ, Երիտասարդ Հայ, թիւ 92, 4 մայիս, 1974, էջ 12:

[258] Study of the question of the prevention and punishment of the crime of genocide : prgress report / by Nicodème Ruhashyankiko, Special Rapporteur, Document symbol: E/CN.4/Sub.2/L.583, http://repository.un.org/handle/11176/354879

հաճնաժողովի կողմից այն ընդունվեց միաձայն[259]: Այսպիսով, ՄԱԿ-ի պաշտոնական փաստաթղթում Հայոց ցեղասպանությունը հիշատակվում էր հետևյալ ձևակերպումով. «Անցնելով արդի ժամանակաշրջանին, տեսնում ենք փաստաթղթերի ամբողջական փաթեթ հայերի կոտորածների վերաբերյալ, որոնք նկարագրված են որպես «20-րդ դարի առաջին ցեղասպանություն»»[260]: Այլ կերպ ասած՝ 30-րդ պարբերությունն արձանագրում էր Հայոց ցեղասպանության պատմական փաստը, սակայն չէր դատապարտում Թուրքիային և ոչ էլ հատուցում էր պահանջում: Այստեղ նույնիսկ նշված չէր Թուրքիա անունը: Ավելին՝ որպես աղբյուր բերվում էին միայն հայ հեղինակների՝ Վ. Կորտունի, Մ. Ներսիսյանի, Տ. Բոյաջյանի և այլոց աշխատությունները[261]: Իսկ ինչ վերաբերում էր Հայոց ցեղասպանության ականատես օտարերկրացիների հուշերին և ուսումնասիրություններին, ապա դրանք չէին հիշատակվում, ինչն էլ Թուրքիայի և ԱՄՆ-ի ներկայացուցիչների կողմից հետագայում օգտագործվեց որպես հիմնական պատճառաբանություն՝ հարցը փակելու համար:

ՄԱԿ-ի պաշտոնական փաստաթղթում Հայոց ցեղասպանության անդրադարձը Թուրքիայում լուրջ անհանգստություն էր առաջացրել: Դիվանագիտական ճնշումներով և լոբբինգի միջոցով՝ պաշտոնական Անկարան փորձում է բանաձևից հանել 30-րդ պարբերությունը: Ըստ թուրքական մամուլի՝ «այս փաստաթուղթը նպաստավոր պայմաններ կարող է ստեղծել Հայկական հարցի վերաբացման համար»[262]: Ուստի Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունը և արտերկրում գործող թուրք դիվանագետները դիմում էին ՆԱՏՕ-ի և ՍԵՆՏՕ-ի անդամ երկրներին, որպեսզի վերջիններս ճնշում գործադրեն ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի Փոքրամասնությունների խտրականության կանխման ու պաշտպանության ենթահանձնաժողովի վրա՝ պաշտոնական փաստաթղթից 30-րդ պարբերությունը հանելու համար[263]: Այդ կառույցի 27 պետություններից ՆԱՏՕ-ի չրջանակում Թուրքիայի

---

[259] Մսըրլեան Զ., Հայերու դէմ գործուած ցեղասպանութիւնը ՄԱԿ-ի Մարդկային իրաւանց Յանձնախումբին առջեւ, էջ 13:
[260] Study of the question of the prevention and punishment of the crime of genocide : prgress report / by Nicodème Ruhashyankiko, Special Rapporteur, Document symbol: E/CN.4/Sub.2/L.583, http://repository.un.org/handle/11176/354879
[261] Նույն տեղում:
[262] «Milliyet», 15. X .1973.
[263] Toriguian Sh., The Armenian Question and International Law, p. 115.

դաշնակիցներն էին՝ ԱՄՆ, Ֆրանսիան, Իտալիան, Դանիան և Հոլանդիան, իսկ ՍԵՆՏՕ-ի՝ Իրանն ու Պակիստանը: Ըստ Լ. Քեչեչյանի՝ Անկարայի դիվանագիտական ճնշումները դրական արդյունք են ունեցել, և նշված պետությունների արտաքին գործերի նախարարությունները հստակ հրանհանգել են իրենց ներկայացուցիչներին՝ «Թուրքիային ամեն կերպ աջակցել 30-րդ պարբերության հարցում»[264]:

1974 թ. մարտի 6-ին տեղի է ունենում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի նիստը, որին մասնակցում էր նաև Թուրքիայի պատվիրակությունը՝ Օսման Օլչայի գլխավորությամբ[265]: Նիստը նախագահում էր ավստրիացի Ֆելիքս Էրմաքորան: Նա տեղին չի համարում պատմական բաժինը և առաջարկում է վերատաթղթից այն հանել[266]: Դրա հետ դուրս էր բերվում նաև 30-րդ պարբերությունը:

Իր ելույթում Ն. Ռուխաչիանկիկոն ընդունում է, որ պատմական բաժինը պատրաստելիս բավականին դժվար է եղել բացարձակ ճշգրտությամբ ցույց տալ ցեղասպանության դեպքերը: Մյուս կողմից՝ ըստ նրա, անհնարին է բոլոր դարերի ցեղասպանությունների ամբողջական ցուցակը ներկայացնել: Դա էլ պատճառ է դարձել, որ Հայերի ցեղասպանությունը հիշատակող 30-րդ պարբերությունը դրվի իբրև օրինակ[267]: Թուրքիայի պատվիրակության ղեկավար Օ. Օլչայն էլ պնդում է, այդ պարբերությունը, որը դրված է «հայկական որոշ շրջանակների տեսակետը պաշտպանելու նպատակով», իբր, հակասում է «պատմական ճշմարտությանը» և կրկին պահանջում է հանել 30-րդ պարբերությունը: 30 րոպեանոց իր ելույթում նա ներկայացնում է թուրքերի պաշտոնական տեսակետը՝ ամեն կերպ ժխտելով Հայոց ցեղասպանությունը[268]: Լրագրողի կարգավիճակով նիստին ներկա Լ. Քեչեչյանի նախաձեռնությամբ Օ. Օլչայի ելույթն ամբողջությամբ թարգմանվում և տպագրվում է սփյուռքահայ թերթերում:

Նկատենք, որ ի նպաստ Թուրքիայի պաշտպանության հանդես են գալիս հանձնաժողովի 27 պետությունների ներկայացու-

---

264 Նույն տեղում:

265 «Զարթօնք», 18. III. 1974: Մսըրլեան Զ., Հայերու դէմ գործուած ցեղասպանութիւնը ՄԱԿ-ի Մարդկային իրաւանց Յանձնախումբին առջեւ, էջ 14: Toriguian Sh., The Armenian Question and International Law, p. 115.

266 Նույն տեղում:

267 «Աղդակ», 19. III. 1974: «Զարթօնք», 18. III. 1974: Մսըրլեան Զ., Հայերու դէմ գործուած ցեղասպանութիւնը ՄԱԿ-ի Մարդկային իրաւանց Յանձնախումբին առջեւ, էջ 14:

268 Նույն տեղում:

ցիչներից 12-ը[269]: Նրանցից 7-ը՝ Պակիստանը, Իտալիան, Թունիսը, Նիգերիան, Ռումինիան, Ավստրիան, ԱՄՆ-ն, ուղղակի ներկայացնում են Թուրքիայի տեսակետը և պաշտպանում նրա պահանջը: Իսկ չորս պետություններ՝ Հնդկաստանը, Ցրանսիան, Իրանը և Իրաքը, Թուրքիայի պահանջը արդարացի են համարում[270]: Վերոհիշյալ երկրներից երեքում՝ ԱՄՆ-ում, Ցրանսիայում և Իրանում, կային հայկական մեծ համայնքներ, որոնցում դեռևս 1965 թ. տարվում էր Հայոց դատի լայնածավալ քարոզչություն: Այդ պետությունների դիրքորոշումը, սակայն, ի նպաստ Թուրքիայի էր և դեմ էր 30-րդ պարբերությանը: Ավելին՝ Կիպրոսը, որը 1965 թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում բարձրացրել էր Հայոց ցեղասպանության հարցը, այս դեպքում նախընտրում է չեզոքություն պահպանել: Նույնը վերաբերում է Լիբանանին: Հանձնաժողովի անդամ Բելոռուսիայի ԽՍՀ-ի, ինչպես նաև դիտորդի կարգավիճակում հանդես եկող Մեծ Բրիտանիայի և ԽՍՀՄ-ի ներկայացուցիչներն էլ առաջարկում են, որ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովը ցեղասպանության հարցը «քննարկի դռնփակ»[271]: Մասնավորապես, խորհրդային կողմը հայտարարում է. «Այս հարցը մասնագիտական է և հանձնաժողովը իրավասու չէ մասնագետների գործը քննադատելու, քանի որ հանձնաժողովի անդամները մասնագետներ չեն»[272]: Այլ կերպ ասած՝ ԽՍՀՄ-ի ներկայացուցիչը հիշեցնում էր, որ փաստաթուղթը պատրաստված է Փոքրամասնությունների խտրականության կանխման և պաշտպանության ենթահանձնաժողովի կողմից, որի անդամները փորձագետներ են ու վերջիններիս ուսումնասիրությունները և եզրահանգումները չեն կարող կասկածի տակ դրվել:

Այսպիսով՝ Թուրքիայի ակտիվ ճնշման ներքո և միջազգային ասպարեզում հայերի թույլ ազդեցության արդյունքում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովը վերամշակման համար ղեկուցագիրը վերադարձնում է Փոքրամասնությունների խտրականության կանխման և պաշտպանության ենթահանձնաժողովին:

Տեղի ունեցածը բացասական արձագանք է գտնում սփյուռքահայերի շրջանում, և հատկապես Հայ դատի հանձնախմբերն

---

[269] «Ազդակ», 03. IV. 1974:
[270] Մանրամասն տես՝ Մսըրլեան Զ., Հայերու դէմ գործուած ցեղասպանութիւնը ՄԱԿ-ի Մարդկային իրաւանց Յանձնախումբին առջեւ, էջ 16-18:
[271] «Ազդակ», 03. IV. 1974: Մսըրլեան Զ., Հայերու դէմ գործուած ցեղասպանութիւնը ՄԱԿ-ի Մարդկային իրաւանց Յանձնախումբին առջեւ, էջ 18:
[272] Մսըրլեան Զ., Հայերու դէմ գործուած ցեղասպանութիւնը ՄԱԿ-ի Մարդկային իրաւանց Յանձնախումբին առջեւ, էջ 18:

ակտիվ աշխատանքներ են ծավալում ԱՄՆ-ում ու Ֆրանսիայում[273]: Նախ քաղաքական ու հասարակական կապերի միջոցով բանակցություններ են վարում, հանդիպումներ ունենում 30-րդ պարբերության դեմ քվեարկած ու դիտորդի կարգավիճակով հանդես եկած պետությունների, մասնավորապես Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Իրանի, Կիպրոսի, Հունաստանի և ԽՍՀՄ-ի ՄԱԿ-ի պատվիրակությունների հետ[274]:

Խորհրդային Հայաստանի կառավարությունը ևս փորձում է այս հարցում իր ներդրումն ունենալ: Այսպես, 1974 թ. հոկտեմբերի 4-ին ՀԽՍՀ-ի արտգործնախարար Կ. Ուդումյանը պաշտոնապես դիմում է ԽՍՀՄ-ի արտաքին գերատեսչությանը՝ խնդրելով, որ ՄԱԿ-ում իրենց ներկայացուցիչը Մարդու իրավունքների հանձնաժողովում պաշտպանի 30-րդ պարբերությունը[275]:

1974 թ. սփյուռքահայերը, հատկապես Լիբանանի, Իրանի, Սիրիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի հայկական համայնքները, մեծ աշխատանք ծավալեցին Հայոց ցեղասպանության 59-րդ տարելիցը նշելու համար[276]: Բազմահազարանոց հայերը ցույցեր էին կազմակերպում թուրքական դեսպանատների շենքերի առջև[277], որոնք ունեցան չեզոտակի քաղաքական բնույթ և ներկայացուցչական դիմագիծ: Ցուցարարներն իրենց դժգոհությունն էին հայտնում մարտի 6-ին ՄԱԿ-ում Մարդու իրավունքների հանձնաժողովի 30-րդ պարբերությունը փաստաթղթից հանելու որոշման դեմ, բողոք-հուշագրեր են ներկայացնում թուրքական դեսպանատներին: Վերջիններս հրաժարվում էին դրանք ընդունել, ինչը ստիպում էր ցուցարարներին բարձրաձայն կարդալ փաստաթուղթը, այնուհետև դրանք փակցնել ներկայացուցչությունների փակ դռների վրա[278]:

---

[273] «Ազդակ», 21. IV. 2000:

[274] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 553 (Մինիստրության քաղաքական ինֆորմացիայի բաժնի վարիչի ինֆորմացիան Հայ գաղությաններում Մեծ եղեռնի 59-րդ ամյակին նվիրված միտինգների և ցույցերի մասին՝ ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեի վերաբերմունքը վերջինիս, 15.07.1974 թ.), թ. 3:

[275] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 555 (Մինիստրի նամակ-առաջարկությունը ՍՍՀՄ Արտաքին գործերի մինիստրի տեղակալին «ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովում սովետական ներկայացուցչի միջոցով Թուրքիայում 1915 թ. Հայկական ցեղասպանության մասին արտահայտվելու վերաբերյալ», 04.10.1974), թ. 8:

[276] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 553 (Մինիստրության քաղաքական ինֆորմացիայի բաժնի վարիչի ինֆորմացիան Հայ գաղությաններում Մեծ եղեռնի 59-րդ ամյակին նվիրված միտինգների և ցույցերի մասին՝ ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեի վերաբերմունքը վերջինիս, 15.07.1974 թ.), թ. 1:

[277] 1974 Ապրիլի ցույցերի մասին, «Ազդակ չաբաթօրյակ-դրօշակ», Պեյրութ, Ե տարի, թիվ 21, մայիսի 12, 1974, էջ 341-344:

[278] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 553 (Մինիստրության քաղաքական ինֆորմացիայի բաժնի վարիչի ինֆորմացիան Հայ գաղությաններում Մեծ եղեռնի 59-րդ ամյակին նվիրված միտինգների և ցույցերի մասին՝ ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեի վերաբերմունքը վերջինիս, 15.07.1974 թ.), թթ. 1-2:

Այդ օրերին ցույցի դուրս եկած Լիբանանի հայերը հուշադիր են ներկայացնում ոչ միայն Բեյրութում Թուրքիայի, այլև ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի դեսպանատներին ու այստեղ գտնվող ՄԱԿ-ի դրասենյակին: Ի նպաստ Հայ դատի, ցույցեր էին կազմակերպում նաև հայ երիտասարդական կազմակերպությունները, որոնք 1974 թ. ապրիլի 11-ին միավորվել և ստեղծել են Լիբանանի հայկական ուսանողական միության ասոցիացիա (այսուհետ՝ ԼՀՈՒՄԱ)[279]:

1974 թ. Բեյրութում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված ցույցերին մասնակցում էին 3000-ից ավելի հայ երիտասարդներ[280]: Այդ կապակցությամբ 1971 թվականից Լիբանանում հրատարակվող «Կանչ» հասարակական-քաղաքական և դրական չաբաթաթերթը գրում էր. «Միահամուռ նշեցինք Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցը, իսկ այժմ էլ ավելի միահամուռ կնշենք 60-րդը»[281], ինչը վկայում էր, որ հայերը չարունակելու են պայքարը:

Ըստ սիյուռքահայ մամուլի՝ երկարատև լռությունից հետո հայկական պահանջներին անդրադառնում են նաև Լիբանանի թերթերը («Ալ-Ամալ», «Ալ-Անվար», «Ալ-Մուհարիր», «Ալ-Հայաթ», «Ալ-Անբա», «Ան-Նահար»)[282]: «Ան Նահար»-ը մանրամասն նկարագրում էր ապրիլի 23-25-ին հայերի կազմակերպած միջոցառումները, պաշտպանում էր հայերի բողոքը ՄԱԿ-ում ընդունված 30-րդ պարբերությունը հանելու որոշման դեմ[283]:

Բեյրութում ֆրանսերենով հրատարակվող պարբերականները՝ «Ըorient'le lour»-ը, «Soir de Beyrouth»-ը և այլն, իրենց էջերում նույնպես անդրադառնում էին ապրիլյան միջոցառումներին: «Ըorient'le lour»-ը մատնանշում էր. «Այս տարի ապրիլի 24-ի միջոցառումները յուրահատուկ նշանակություն ունեն, քանի որ արտահայտում են հայերի բողոքը ՄԱԿ-ի անարդարության դեմ»[284]: «The Daily star»-ն էլ նկարագրում էր Բեյրութում կազմակերպված ցույցերը և հույս հայտնում, որ մեծ տերությունները, ի վերջո ականկալոտ կլինեն հայերի պահանջին[285]: Այս հոդվածները

---

279 Նույն տեղում:
280 Նույն տեղում, թ. 4:
281 Նույն տեղում:
282 Նույն տեղում, թ. 5:
283 Նույն տեղում:
284 Նույն տեղում, թ. 6:
285 Նույն տեղում:

վկայում էին, որ լիբանանյան մամուլն ու հանրությունը ևս քննադատում էին ՄԱԿ-ի մարտի 6-ի որոշումը:

Բացի այդ, թեև սփյուռքահայությունը տարանջատված էր տարբեր կազմակերպությունների միջավայրերում, կար մի բաղադրիչ, որը միավորում էր նրանց բոլորին: Դա համահայկական շահն էր, որն էլ տարաբնույթ, երբեմն նույնիսկ միմյանց դեմ պայքար մղող հայկական կուսակցությունների և կազմակերպությունների գործունեությանը հաղորդում էր համասփյուռքյան ընդգրկում: Եվ չնայած, ոչ շատ հաճախ, սակայն Հայ Դատի լուծման պայքարի շուրջ եղել են դեպքեր, երբ միավորվել և համատեղ գործունեություն են ծավալել Սփյուռքի ազդեցիկ կազմակերպությունները: Օրինակ, 1974 թ. սեպտեմբերի 2-ին Բեյրութում Հայ ազգային կուսակցությունները՝ ՀՅ Դաշնակցության բյուրոն, Ս.Դ. Հնչակյան կուսակցության և Ռամկավար ազատական կուսակցության կենտրոնական վարչությունները, անտեսելով իրենց միջև եղած տարաձայնությունները, միավորվեցին ու հրապարակեցին «Կոչ հայ ժողովրդին», որում տեղեկացնում էին, որ պատրաստվում են համազգային և միասնական կերպով նշելու Հայոց ցեղասպանության 60-րդ տարելիցը[286]: 1975 թ. մայիսի 6-ին Բեյրութում կազմակերպվում է 50 հազարանոց ցույց[287]:

Ամփոփելով, նկատենք, որ այն Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված այդ տարիների վերջին «բազմահազարանոց» միջոցառումն էր Լիբանանում, քանզի 1975 թ. ապրիլին երկրում բռնկված քաղաքացիական պատերազմի հետևանքով հայ համայնքի ժողովրդագրական և սոցիալական պատկերը չեզոտակի փոխվեց: Արդյունքում՝ 1980-ական թվականներին, Բեյրութում հայոց ցեղասպանության տարելիցի միջոցառումների մասնակիցների թիվը չի անցել 500-ից[288]:

Ֆրանսիայում ևս հայանպաստ դիրքորոշում է արձանագրվում. ֆրանսիական մամուլը դատապարտում է ՄԱԿ-ում իշխանությունների որդեգրած թուրքամետ պահվածքը: Չի բացառվում, որ այդ կերպ պաշտոնական Փարիզը փորձում էր վերականգնել թուրք-ֆրանսիական հարաբերությունները: Հիշենք, որ 1973 թ. փետրվարի 11-ին Մարսելի Պրադո պողոտայի վրա

---

[286] ՀԱԱ, ֆ. 326 (Արտաքին գործերի նախարարության), ց. 1, գ. 546 (Լիբանանի հայկական համայնքը, 10.12. 1974թ.), թթ. 9-10: Կոչ հայ ժողովրդին.- «Երիտասարդ հայ», թիւ 98, 28 սեպտեմբեր, 1974, էջ 5-6:

[287] Մսըրլեան Զ., Հայկական հարցի հոլովույթը 1939-2010, Պէյրութ, 2011, էջ 141:

[288] «Արարատ» (Բեյրութ), 5. V. 1980: «Զարթօնք», 29. IV. 1985:

գտնվող Սուրբ Սահակ և Սուրբ Մաշտոց Թարգմանչաց հայկական տաճարի բակում Մեծ եղեռնի հուշակոթողի[289] բացումը թուրք-ֆրանսիական հարաբերությունների սրման պատճառ էր դարձել: Կոթողի կառուցման գաղափարն ու իրագործումը ֆրանսահայերի երկարատև ու հետևողական ջանքերի արդյունք էր: Ավելին՝ այս գործում մեծ ներդրում ուներ Մարսելի քաղաքապետը՝ Գաստոն Դեֆերը[290]:

Այս հուշարձանի կառուցման աշխատանքները սկսվել էին դեռևս 1970 թ. մայիսի 31-ին, հիմնարկեքի առաջին քարը դրել էր Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն[291]: Հուշակոթողի կառուցման գաղափարը սկզբնական շրջանում լուրջ քննարկման թեմա է եղել քաղաքի պաշտոնյաների շրջանում. նրանք պահանջում էին փոխել հուշարձանի վրա նախատեսված արձանագրության տեքստը (երկլեզու՝ հայերեն և ֆրանսերեն), որում գրված էր. «Ի յիշատակ 1915-ի թուրք ղեկավարներու ցեղասպանութեան զոհ 1.500.000 հայերուն, ի փառս Ազատութեան և Ֆրանսայի համար զոհուած դիմադրականներուն և մարտիկներուն»[292]: Պաշտոնական Փարիզը վախենում էր, որ դա կարող է լուրջ խնդիրներ առաջացնել Թուրքիայի հետ:

Ֆրանսահայերը, սակայն, հաղթահարելով խոչընդոտները, չարունակեցին իրենց պայքարը: Արդյունքում՝ հուշարձանի կառուցման հանձնախումբը կարողանում է հանդիպել և ստանալ Ֆրանսիայի վարչապետի ներկայացուցիչ՝ Երիտասարդության և սպորտի հարցերով պետական քարտուղար, խորհրդարանի հետ կապերի պատասխանատու նախարար Ժոզեֆ Կոմիտիի[293] աջակ-

---

[289] Մարսելի Ս. Սահակ և Ս. Մաշտոց Թարգմանչաց հայկական տաճարի բակում կանգնեցված Մեծ եղեռնի հուշակոթողի հեղինակներն են ճարտարապետ Ալեն Բիրյան և քանդակագործ Թորոս Ռաֆֆկլենյանը: Ի դեպ, վերջինս նաև Ֆրանսիայի Էքս ան Պրովանս քաղաքի Հայաստան հրապարակում 1983 թ. կանգնեցված Հայոց ցեղասպանությանը նվիրված հուշակոթողի հեղինակն է:

[290] Գաստոն Դեֆեր (1910-1986) - Ֆրանսիայի սոցյալիստական կուսակցության անդամ, քաղաքական գործիչ: 1953-1986 թթ. եղել է Մարսելի քաղաքապետը, 1981-1984 թթ.՝ Ծրանսիայի ներքին գործերի, 1984-1986 թթ.՝ Պլանավորման և տարածքային կառավարման նախարարը:

[291] Պատմական այցելություն. - «Էջմիածին», 1970, Ը, էջ 5: Ի դեպ, 1970 թ. հունիսի 13-ին Փարիզից ոչ հեռու գտնվող Ալֆորվիլ քաղաքում Վազգեն Ա-ի, քաղաքապետի և հայ ու ֆրանսիացի հարյուրավոր քաղաքացիների ներկայությամբ մեծ հանդիսավորությամբ բացվեց Կոմիտաս վարդապետի անվան փողոցը (տես նույն տեղում, էջ 10):

[292] «Ազդակ», 14. II.1973:

[293] Ժոզեֆ Կոմիտին ֆրանսիական քաղաքական գործիչ է, որը 1968-1969 թթ. Շաբլ դե Գոլի և 1969 -1974 թթ. Ժորժ Պամպիդուի նախագահության տարիներին զբաղեցրել է Երիտասարդության և սպորտի հարցերով պետական քարտուղարի, դրան համատեղ՝ 1972-1974 թթ. Խորհրդարանի հետ կապերի պատասխանատու նախարարի պաշտոնները:

ցուլթյունը[294]: Ավելին՝ վերջինս ցանկություն է հայտնում անձամբ ներկա լինել կոթողի բացման արարողությանը: Դա ֆրանսահայերի համար իրական մեծ հաղթանակ էր, քանի որ երկրի իշխանությունները այս հարցում պաշտպանեցին նրանց իրավունքները: Դա նաև խոսում էր այն մասին, որ Հուշարձանի բացումը խափանելու՝ թուրքերի դիվանագիտական ճնշումները ավարտվել են անարդյունք: Կոթողի բացման արարողությանը, բացի հայ համայնքի ներկայացուցիչներից ներկա էին նաև քաղաքապետ Գ. Դեֆերը, Մարսելի կաթոլիկ եկեղեցու արքեպիսկոպոսը, սենատորներ, տարբեր երկրների դեսպանատների և այլ համայնքների ներկայացուցիչներ,: Ի նպաստ Հայ դատի հնչում են ելույթներ[295]: Պետական նման աջակցությունը հանգեցնում է նրան, որ թուրքիայի կառավարությունն ի նշան բողոքի Փարիզից հետ է կանչում իր դեսպանին՝ Հասան Իշըգին[296]: Վերջինս ֆրանսիացի լրագրողներին տված հարցազրույցում հայտարարում է. «Չի կարող մնալ մի երկրում, որտեղ վիրավորանք են հասցնում իր պետությանը և որ վերադառնում է Անկարա խորհրդակցելու»[297]: Թուրքիայի արտաքին գործերի նախարարության բողոքի նոտայում ասվում էր, որ Մարսելում կազնեցված հուշարձանի վրայի գրությունը նվաստացնում է թուրքիային[298]: Ավելին՝ Թուրքիայի արտաքին գերատեսչության ղեկավար Հալուկ Բայուլկեն Ազգային մեծ ժողովում ունեցած ելույթում հայտարարում է, որ «խորհրդատվության» նպատակով հետ կանչված դեսպանը երկրում կմնա այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է:

Թուրք-ֆրանսիական հարաբերություններում ստեղծված լարված իրավիճակը լայն քննարկման թեմա է դարձել ֆրանսիական մամուլում: Փարիզում հրատարակվող «Le Figaro», «Le Monde», «La Croix», Մարսելում տպագրվող «La Marseillaise», «Le Provençal» պարբերականները հանդես էին գալիս ի շահ հայերի՝ իրենց էջերում

---

294 ՀԱԱ, Ֆ. 326 (Արտաքին գործերի նախարարության), ց. 1, գ. 519 (Ֆրանսիայի դեսպանատանը կայացած զրույցների գրառումները, 23.02.1973 թ.), թ. 1:

295 Նույն տեղում, թթ.1-2:

296 Millet Meclisi Tutanak Dergisi, 57 nci Birleşim, 14 .2 .1973, Dışişleri Bakanı Halûk Bayülken'in, Marsilya'da ermeniler tarafından dikilen ve üzerinde aleyhimizde bâzı yazılar bulunan bir anıtın açılış töreni ile ilgili gündem dışı demeci, s. 552.

297 ՀԱԱ, Ֆ. 326, ց. 1, գ. 519 (Ֆրանսիայի դեսպանատանը կայացած զրույցների գրառումները, 23.02.1973 թ.), թ. 2:

298 «Ազդակ», 14. II.1973:

ներկայացնելով 1915 թ. դեպքերը[299]: Կարելի է եզրակացնել, որ ֆրանսիական թերթերում հրատարակվող այդպիսի հոդվածները՝ երկրի հասարակության մեջ հստակ կարծիք էին ձևավորում: Այդ են, ի դեպ, վկայում ԽՍՀՄ-ի դեսպանատան զրառումները, որտեղ նշվում է, որ Մարսելում ֆրանսիացիները հանդես են գալիս կառուցված հուշարձանի օգտին, և կառավարությանը կոչ են անում չնահանջել թուրքական ճնշման ներքո[300]: Նույն աղբյուրը միաժամանակ հաղորդում էր, որ Ֆրանսիայի իշխանությունները ճնշում էին գործադրում Մարսելի քաղաքապետի վրա՝ հուշարձանի վրայից վերոհիշյալ մակագրությունը հանելու համար: Ավելին, ըստ այդ տեղեկատվության՝ չի բացառվում, որ ստեղծված իրավիճակը նոր բարդություններ առաջացնի[301]:

Ինչ վերաբերում է թուրքական մամուլին, ապա այն նույնպես մեծ աղմուկ է բարձրացնում՝ Ֆրանսիային մեղադրելով հայանպաստ քաղաքականության համար[302]: Թուրքիայի խորհրդարանում նույնպես հնչում էին երևույթը դատապարտող հայտարարություններ: Արտգործնախարարը նշում էր, որ «Մարսելում կանգնեցված հուշարձանն առաջինը չէ, նմանատիպ հուշարձաններ են կանգնեցվել այն բոլոր երկրներում, որտեղ հայերը մեծ համայնքներ ունեն»: Հիշատակում է՝ Բիլքֆայայի (Լիանանա, 1970), Մոնթեբելլոյի (Կալիֆորնիա, ԱՄՆ, 1968), Սան Պաուլոյի (Բրազիլիա,1966)[303], Դեսին Շարպիի (Լիոն, Ֆրանսիա, 1972)[304] Հայոց ցեղասպանության զոհերին նվիրված կոթողները[305]: Թուրքիայի ազգային մեծ ժողովի Ստամբուլի պատգամավոր Հ. Դոլլանն էլ իր ելույթում առաջարկել է երկրի երեսից մաքրել

---

299 ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 519 (Ֆրանսիայի դեսպանատանը կայացած զրույցների գրառումները, 23.02.1973 թ.), թ. 2:

300 Նույն տեղում:

301 Նույն տեղում:

302 «Ազդակ», 14. II. 1973:

303 Բրազիլիայի Սան Պաուլո քաղաքի Արմենիա հրապարակում կառուցված «Հիշատակի պատ» անվանումով հուշահամալիրը նվիրված է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին: Հուշապատի կառուցման աշխատանքները սկսվել են 1965 թ. ապրիլի 24-ին՝ Սան Պաուլոյի Հայ համայնքի նախաձեռնությամբ: Կառուցման աշխատանքներն ավարտվել են 1966 թ.: Պատի վրա պորտուգալերեն փորագրված է Մ. Նալբանդյանի ստեղծագործությունից:

304 Ֆրանսիայի Լիոն քաղաքի Դեսին Շարպ համայնքում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշակոթողի աշխատանքները սկսվել են 1965 թ. ապրիլի 24-ին, իսկ բացումը տեղի է ունեցել 1972 թ. հունիսի 4-ին: Հուշակոթողի վրա ֆրանսերենով և հայերենով արձանագրված է. «Ի յիշատակ 1915 ի ցեղասպանութեան 1 500 000 Հայ զոհերուն»:

305 Millet Meclisi Tutanak Dergisi, 57 nci Birleşim, 14 .2 .1973, Dışişleri Bakanı Halûk Bayülken'in, Marsilya'da ermeniler tarafından dikilen ve üzerinde aleyhimizde bâzı yazılar bulunan bir anıtın açılış töreni ile ilgili gündem dışı demeci, s. 554.

Գալիպոլիի ֆրանսիական գերեզմանոցը և հրաժարվել Ֆրանսիայի հետ ունեցած բարեկամական բոլոր հարաբերություններից[306]:

Ֆրանսիայի քաղաքական շրջանակները չարունակում էին հանդես գալ հայանպաստ հայտարարություններով՝ չթաքցնելով, որ ճանաչում և դատապարտում են Հայոց ցեղասպանությունը: Այսպես, 1974 թ. մայիսի 16-ին Ֆրանսիայի նախագահի թեկնածու Վալերի Ժիսկար դ'Էստենը Մարսելի հայկական համայնքին հղած նամակում ճանաչում էր Հայոց ցեղասպանությունը և հայտարարում. «Կը կարծեմ որ ներկայիս, ինչպէս անցեալին, Ֆրանսա պարտականութիւն ունի գործօն նպաստ մը բերելու աչխատանքի մը, որ սերտօրէն կապուած է իր աւանդութիւններուն: Իր պարտականութիւնը պիտի ըլլայ, ՄԱԿ-էն ներս, թէ այլուր, թիկունք կանգնել պատմական ճշմարտութեան և արդարութեան պահպանման»[307]: Ֆրանսիայի նախագահական ընտրարշավում հայկական հարցի արծարծումը նոր երևույթ չէր: Դեռևս 1965 թ. Հայոց ցեղասպանության 50-ամյա տարելիցի նախօրյակին հայկական հարցը Ֆրանսիայում առաջին անգամ բարձրացրին կոմունիստները՝ պահանջելով Հայոց ցեղասպանությունն անհապաղ ճանաչել և հայերին փոխհատուցում տալ[308]: Հատկանշական է, որ դա համընկնում էր Ֆրանսիայում անցկացվելիք նախագահական ընտրությունների հետ, որտեղ, ի դեպ, ձախակողմյան՝ սոցիալիստների թեկնածու Ֆրանսուա Միտերանին չհաջողվեց առավելության հասնել Շառլ դը Գոլի նկատմամբ: Մինչդեռ 1974 թ. հայկական հարցի արծարծումը դրական արդյունք է ունենում, և Վ. Ժիսկար դ'Էստենն ընտրվում է Ֆրանսիայի նախագահ: Եվ չնայած մարսելահայերին ուղղված վերը նշված հայտարարությանը՝ 1975 թ. քաղաքի ոստիկանությունն արգելում է ապրիլի 24-ի ցույցի ժամանակ հայության պահանջները ներկայացնող պաստառների վրա գրել «թուրք» և «գրավյալ հողեր» բառերը: Այդ առիթով Հայոց ցեղասպանության 60-րդ տարելիցի ոգեկոչման Մարսելի հանձնախումբը բողոքի նամակ է հղում երկրի նախագահին[309]:

1970-ական թվականներին հայկական հարցի և Հայոց պահանջատիրության ուղղությամբ ակտիվ գործունեություն են

---

[306] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 519 (Ֆրանսիայի դեսպանատանը կայացած զրույցների գրառումները, 23.02.1973 թ.), թ. 2:
[307] «Ազդակ», 10. VI. 1977:
[308] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 379 (Ֆրանսիայի ԽՍՀՄ դեսպանության առաջին քարտուղարի Լ. Մանասերյանի և ՀՀԴ կուսակցության առաջնորդ Հրանտ Սամուելյանի միջև կայացած զրույցի գրառումները «կուսակցության գործունեության մասին», 25.08.1965), թ. 3:
[309] Մարսէյլի Ցանձնախմբի բողոք նամակը Ֆրանսիայի նախագահին, «Ազդակ չաբաթօրյակ-ղրոշակ», Պէյրութ, Չ տարի, թիվ 22, 25. 05. 1975, էջ 345:

ծավալում նաև ամերիկահայերը: ԱՄՆ-ում գործում էին հայկական լոբբիստական մի շարք կազմակերպություններ, սակայն հայկական համայնքի մոտեցումները հիմնականում համակարգում են ԱՄՆ հայկական համագումարը (Armenian Assembly of America) և ԱՄՆ-ի հայ դատի հանձնախումբը կամ Հայ ազգային կոմիտեն (Armenian National Committe), որոնք «...ներկայացնում են Հայության և Հայաստանի շահերն ամերիկյան պաշտոնական ատյաններում»[310]:

ԱՄՆ հայկական համագումարը ստեղծվել է 1972 թ. և ակտիվորեն ներգրավված է Օսմանյան Թուրքիայի կողմից հայերի դեմ իրականացված ցեղասպանության միջազգային ճանաչման խնդրի աջակցմանը: Կազմակերպությունն ակտիվացնելով հայանպաստ գործունեությունը՝ Միացյալ Նահանգների ինչպես գործադիր և օրենսդիր իշխանություններում, այնպես էլ հասարակական-քաղաքական մակարդակներում՝ կազմակերպված լոբբիստական գործունեության շնորհիվ զգալի ներդրում ունեցավ Հայոց ցեղասպանության հարցի շուրջ ընթացած գործընթացներում[311]:

ԱՄՆ-ի հայ դատի հանձնախումբը կամ Հայ ազգային կոմիտեն, ինչպես արդեն վերը նշվել է ավելի հին կառույց է: Համագործակցում է այլ երկրներում գործող Հայ դատի հանձնախմբերի հետ և ներկայացնում հայության մոտեցումները ԱՄՆ-ի պետական քաղաքականության տարբեր հարցերի նկատմամբ, ինչպես նաև զանազան մակարդակի ընտրական գործընթացներում[312]: Նման գործընթացներում հայության մասնակցությունն այդ երկրի քաղաքականության վրա ազդելու հիմնական գործիքներից մեկն է: Հաճախ հայության դիրքորոշումը վճռական նշանակություն է ունենում տարբեր մակարդակի ընտրությունների ելքի վրա[313]:

Ճիշտ է, 1970-ական թվականներին վերոհիշյալ կառույցները իրենց վրա վերցրին հարցերի լուծման հիմնական ծանրությունը, միաժամանակ, բավականին ակտիվ էին նաև հայ երիտասարդները: Այսպես, 1974 թ. ապրիլի 26-ին ամերիկահայ երիտասարդները հանդիպում են ԱՄՆ-ի կոնգրեսականներ Ջ. Դանիլսոնի ու Ջ.

---

310 Հայ համայնքն ԱՄՆ-ում, Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 2010, էջ 9:
311 Եգանյան Ա., Հայաստանի Հանրապետության և ամերիկահայ լոբբիստական կառույցների համագործակցության ռազմավարական գնահատումներ / «Աշխատանքային տետրեր», ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվ. ազգային ռազմ. հետազոտ. ինստ. «Հայկական բանակ» ռազմ. հանդեսի հավելված, 1 և 2 (13-14), 2010, էջ 118:
312 Հայ համայնքն ԱՄՆ-ում, էջ 129-131:
313 Նույն տեղում:

Գոլիֆիլդի հետ և վերջիններիս վերոհիշյալ «Հայերի իրավունքների ապրիլի 24-ի միասնական կոմիտեի» անունից նրանց փոխանցում մի շարք պահանջներ. այն է՝ ԱՄՆ-ն պետք է դադարեցներ Թուրքիային տնտեսական և ռազմական օգնություն ցույց տալը, ՄԱԿ-ում պետք է բարձրացներ 1973 թ. մարտի 6-ի որոշման վերանայման հարցը, ինչպես նաև Թուրքիայում բնակվող հայերի ներկայիս կարգավիճակը[314]: Կոնգրեսականները խոստանում են այդ հարցերը ներկայացնել երկրի կառավարությանը և ստիպել պետքարտուղարությանը, որպեսզի վոխի Հայոց ցեղասպանության հարցում Թուրքիայի նկատմամբ որդեգրած քաղաքականությունը[315]: Նրանք կատարում են իրենց խոստումը և 1974 թ. մայիսի սկզբին Ներկայացուցիչների պալատին ու Սպիտակ տան վարչակարգին են ներկայացնում 1915 թ. Հայոց ցեղասպանության վերաբերյալ նյութեր[316]:

1974 թ. մայիսի 25-ին ամերիկյան «Herald Tribune» թերթը տպագրում է Ամերիկահայ ազգային խորհրդի՝ «Անմարդկայնությունը մարդու իրավունքների հանձնաժողովում» վերնագրով հայտարարությունը[317], որում կրկին դատապարտվում էր ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնախմբի մարտի 6-ի որոշումը և ԱՄՆ-ի որդեգրած թուրքանպաստ քաղաքականությունը:

ԱՄՆ-ի արտաքին գերատեսչությունը, սակայն, չէր պատրաստվում Հայկական հարցի հետ կապված վատացնել հարաբերությունները Թուրքիայի հետ: Այդ է վկայում 1974 թ. Հունիսի 5-ին պետքարտուղարության ներկայացուցիչների հետ ԱՄՆ-ի Հայ դատի հանձնախմբի պատվիրակության ունեցած հանդիպումը: Հայկական կողմը բարձրացնում է հայերին հուզող խնդիրները և փորձում պարզել Հայոց ցեղասպանության նկատմամբ Վաշինգտոնի դիրքորոշումը[318]: Ծանոթանալով հանդիպման արձանագրությանը՝ հանգում

---

[314] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 553 (Մինիստրության քաղաքական ինֆորմացիայի բաժնի վարիչի ինֆորմացիան Հայ գաղութներում Մեծ եղեռնի 59-րդ ամյակին նվիրված միտինգների և ցույցերի մասին՝ ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեի վերաբերմունքը վերջինիս, 15.07.1974 թ.), թ. 10:

[315] Նույն տեղում, թ. 11:

[316] Նույն տեղում:

[317] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 555 (Մինիստրի նամակ-առաջարկությունը ՍՍՀՄ Արտաքին գործերի մինիստրի տեղակալին «ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովում սովետական ներկայացուցչի միջոցով Թուրքիայում 1915 թ. Հայկական ցեղասպանության մասին արտահայտվելու վերաբերյալ», 04.10.1974), թ. 5:

[318] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 553 (Մինիստրության քաղաքական ինֆորմացիայի բաժնի վարիչի ինֆորմացիան Հայ գաղությաններում Մեծ եղեռնի 59-րդ ամյակին նվիրված միտինգների և ցույցերի մասին՝ ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեի վերաբերմունքը վերջինիս, 15.07.1974 թ.), թ. 11:

ենք այն եղրակացութեան, որ այդ հարցերին ամերիկացի պաշտոնեաների տված պատասխանները բացասական և խուսափողական էին: Վերջիններս հայտարարում էին, որ ԱՄՆ-ի քաղաքականութիւնը «հետամուտ է երկիրներու ներկայ դոյավիճակի պահպանման, եւ ոչ թէ՝ երկիրներու անդամահատման»[319]: Բացի այդ, 1974 թ. ԱՄՆ-ի հայ դատի հանճնախումբը բողոք-նամակ է հղում երկրի նախագահ Ռիչարդ Նիքսոնին, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կ. Վալդհայմին[320]: Այդ պաշտոնեաներին հասցեագրված իրենց նամակներում ամերիկահայերն հիշեցնում էին, որ «Հայերի դեմ գործադրված ցեղասպանութեան առաջին և գլխավոր վկաներից մեկը հանդիսանում է այդ օրերին Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան՝ Հենրի Մորգենթաուն, ավելին՝ ԱՄՆ-ի պետքարտուղարութեան արխիվները լեցուն են թուրքերի կողմից հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանութիւնը ապացուցող փաստաթղթերով»[321]: Հարկ է նշել, որ Նյու Յորքում հայերի կազմակերպած ցույցերին մասնակցում և ելույթներով հանդես էր գալիս Հ. Մորգենթաուի թոռը՝ Նյու Յորքի նահանգային դատախազ Ռոբերտ Մ. Մորգենթաուն, և ամերիկացի հասարակական ու քաղաքական գործիչներ[322], ինչը վկայում է, որ ԱՄՆ-ի թուրքանպաստ քաղաքականութիւնը դժգոհութիւն էր առաջացրել ոչ միայն ամերիկահայերի, այլև ամերիկյան հասարակութեան մեջ:

1974 թ. հուլիսի 20-ին թուրքական զորքերի՝ Կիպրոս ներխուժելուց հետո ԱՄՆ-ում ծայր առած հակաթուրքական տրամադրութիւնները նպաստավոր պայմաններ են ստեղծում Հայկական հարցը ԱՄՆ-ի ներկայացուցիչների պալատում բարձրացնելու համար: 1975 թ. հունվարի 28-ին Հանրապետական կոնգրեսական Հենրի Հելստոսկին ներկայացնում է թիվ 148 բանաձևը, որը ԱՄՆ նախագահին լիազորում էր ապրիլի 24-ը հայտարարել «Մարդու կողմից մարդու նկատմամբ անմարդկային վերաբերմունքի հիշատակի ազգային օր» և հիշել ցեղասպանութեան բոլոր նահատակներին, հատկապես հայերի այն նախնիներին, ովքեր դարձել էին 1915 թ. կոտորածների զոհ[323]:

---

[319] «Ազդակ» 24.07.1974:
[320] Նույն տեղում:
[321] 1974 Ապրիլի ցույցերի մասին, «Ազդակ չաբաթօրյակ-դրոշակ», Պեյրութ, «Ազդակ չաբաթօրյակ-դրոշակ», Պեյրութ, Ե տարի, թիվ 21, մայիսի 12, 1974, էջ 342:
[322] «The New York Times», 24. IV. 1975.
[323] H.J.Res.148 - Joint resolution to designate April 24, 1975, as National Day of Remembrance of Man's Inhumanity to Man. https://www.congress.gov/bill/94th-congress/house-joint-resolution/148

Հայոց ցեղասպանության 60-րդ տարելիցի նախօրեին՝ 1975 թ. ապրիլի 9-ին, ԱՄՆ-ի ներկայացուցիչների պալատը 19 դեմ 377 կողմ ձայների հարաբերակցությամբ ընդունում է «Անմարդկային հանցագործությունների զոհերի հիշատակի օրվա մասին» թիվ 148 բանաձևը[324] և ուղարկվում Սենատ: Ապրիլի 22-ին փաստաթուղթը ներկայացվում է Սենատի Արդարադատության հանձնախմբին, սակայն պետքարտուղարության ճնշման տակ չի վավերացվում: ԱՄՆ-ի արտաքին գերատեսչությունը պահանջում էր, որ փաստաթղթում թուրքերը չհիշատակվեին որպես «ցեղասպանություն» իրագործածներ[325]: Դեռևս քվեարկության նախօրեին՝ ապրիլի 21-ին, Անկարայում ԱՄՆ-ի դեսպանությունը պետքարտուղարությանը տեղեկացնում էր, որ Թուրքիայի իշխանությունները Ներկայացուցիչների պալատում թիվ 148 բանաձևի ընդունումն «անձնական վիրավորանք են» համարում[326]: Արդարադատության հանձնաժողովի անդամ, դեմոկրատ Ջոն Թանը նշում էր, որ պետքարտուղարության բացասական վերաբերմունքը վկայում է, որ մոտ ապագայում փաստաթուղթը հավանության չի արժանանա[327]: Այս առթիվ ամերիկացի լրագրող և հրապարակախոս Բիլ Բոյարսկին էլ «ԱՄՆ-ի դիվանագիտական տեսակետը 1915 թ. կոտորածների վերաբերյալ» վերնագրով հոդվածում գրում էր, որ Հենրի Քիսինջերի պետական քարտուղարության ջանքերն ուղղված են «պատմությունը ձևափոխելուն»[328]:

«The New York Times» թերթը ապրիլի 24-ին լուսաբանելով Նյու Յորքում Հայոց ցեղասպանության 60-րդ տարելիցի կապակցությամբ ամերիկահայերի կազմակերպված բազմահազարանոց ցույցը՝ մատնանշում էր, որ հայերից բացի, դրան մասնակցում էին նաև ԱՄՆ-ում բնակվող հույներն ու կիպրոսցիները: Վերջիններս դատապարտում էին պաշտոնական Վաշինգտոնի թուրքամետ քաղաքականությունը և պահանջում հանուն արդարության ճանաչել Հայոց ցեղասպանությունը[329]: Հույների և կիպրոսցիների պահանջին միանում էր և հոդվածի հեղինակը՝ ամերիկացի հրապարակախոս Ռիչարդ Ճ. Շեփերդը: Հոդվածում նա ԱՄՆ-ի

---

[324] Նույն տեղում:
[325] «International Herald Tribune» (Paris), 13. IV. 1975.
[326] Նույն տեղում:
[327] Մսըրլյան Զ., Ամերիկայի Միացեալ Նահանգներու արտաքին քաղաքականութիւնը եւ Հայկական հարցը (1900-2009), Պեյրութ, 2010, էջ 53:
[328] «International Herald Tribune», 13. IV. 1975.
[329] «The New York Times», 24. IV. 1975.

կառավարությանը կոչ էր անում հարգել հայերի ցավը՝ հիշեցնելով, որ ամերիկահայերի հուշերում դեռ վառ են 1915 թ. ցեղասպանության ահասարսուռ դրվագները[330]: Ըստ Ռ. Ֆ. Շեփերդի՝ ԱՄՆ-ի պետքարտուղարության կողմից թիվ 148 բանաձևին դեմ արտահայտվելը պայմանավորված էր այն հանգամանքով, որ դրա վավերացումը կարող էր բացասաբար անդրադառնալ Թուրքիայի և Հունաստանի միջև ընթացող բանակցությունների վրա[331]:

Այդ է վկայում 1975 թ. մայիսի 16-ին Վաշինգտոնում ԱՄՆ-ի նախագահ Ջ. Ֆորդի և պետքարտուղար Հ. Քիսինջերի միջև կայացած առանձնազրույցը, ըստ որի՝ կողմերը համաձայնվում են, որ Սենատում թիվ 148 բանաձևին չվավերացումը պետք է որոշակիորեն մեղմի Թուրքիայի պահվածքը[332]: Հիշեցնենք, որ 1965 թ. ապրիլի 29-ին դեռևս կոնգրեսական եղած ժամանակ Ջ. Ֆորդն ամերիկացի այն պատգամավորներից էր, ովքեր դատապարտեցին հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանությունը[333]: Սակայն նախագահ ընտրվելով՝ փոխում է իր դիրքորոշումը և պաշտպանում երկրի որդեգրած պետական քաղաքականության ուղեգիծը, որը հաստատվել էր 1940-ական թվականների վերջին:

1970-ական թվականների երկրորդ կեսը նշանավորված է իրադարձություններով: Նախ՝ 1975 թ. ապրիլի 24-ին Կիպրոսի ներկայացուցիչների պալատը բանաձև է ընդունում ապրիլի 24-ը Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր նշելու մասին: Դեռևս մարտին Նիկոզիայում տպագրվել էր «Հայաստան-Կիպրոս» վերնագրով գրքույկ, որում պատմական փաստերի հիման վրա զուգահեռներ էին անցկացվում 1915 թ. Արևմտյան Հայաստանում և 1974 թ. Կիպրոսում թուրքերի իրականացրած բարբարոսական, հակամարդկային գործողությունների միջև[334]:

Բացի այդ, 1975 թվականից սփյուռքահայերը Հայ դատի հետ կապված լայնածավալ քարոզչություն էին իրականացնում, որի նպատակն էր մի կողմից՝ հայության հիշողության մեջ վառ պահել 1915 թ. դեպքերը, մյուս կողմից՝ բևեռել միջազգային հանրության կարծիքը, օտար պետությունների և միջպետական մարմին-

330 Նույն տեղում:
331 Նույն տեղում:
332 FRUS, 1969-1976, Volume XXX, Greece; Cyprus; Turkey, 1973–1976, Washington. 2007, p. 201.
333 Tarkmanian H., The Truth About the Massacres and Deportations of the Armenian Population of the Ottoman Empire 1915-1922, Beirut, 1975, p. 24.
334 «Ազատ օր» (Աթենք), 26. III. 1975.

ների ուշադրությունը Հայկական հարցի վրա: Հիմնականում հիշեցվում էր, որ թեպետ ցեղասպանությամբ Արևմտյան Հայաստանը բռնի ուժով հայաթափվել էր, սակայն հայ ժողովուրդը՝ հանձին սփյուռքահայության, պահպանել է ազգային ինքնագիտակցությունը և պատմական Հայաստան վերադառնալու կամքը: Ավելին՝ արձանագրվում էր այն իրողությունը, որ Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես դատապարտված չէ ո՛չ միջազգային կառույցների, ո՛չ էլ համաշխարհային հանրության կողմից: Սփյուռքահայության անունից հայտարարվում էր, որ ապրիլի 24-ը այլևս չի նշվելու որպես սգի օր, այլ՝ Հայ դատի օր, շեշտը դնելով հայության արդար իրավունքների պաշտպանության վրա: Այլ կերպ ասած՝ 1970-ական թվականներին Սփյուռքում Հայկական հարցի լուծման և Հայոց ցեղասպանության ճանաչման հետ կապված դաղափարական լուրջ փոփոխություններ են տեղի ունեցել: Սփյուռքահայության նոր սերունդներն էլ, որ ծնվել էին օտար ափերում և, թվում էր, թե դրեթե ուծացել են, սակայն, սեփականացնելով իրենց հարազատների կոտորածներին ու աքսորին վերաբերող հիշողությունները, դրանք քաղաքական պահանջի ղենք են դարձնում: Արդյունքում՝ խնդրո առարկա հարցերի ուղղությամբ ձեռնարկված քայլերում նոր մարտավարություն է մշակվում: Ավանդական ուղուն զուգընթաց՝ իրականացվում է նաև ղինյալ պայքար: Սփյուռքահայ երիտասարդությունը այն տեսակետին էր, որ Հայկական հարցը լուծելու համար դիվանագիտական, քաղաքական միջոցներն անբավարար են և ղինյալ պայքարը միակ միջոցն էր, որը պետք է Հայկական հարցը հաներ փակուղուց և նորից դարձներ միջազգային հարաբերությունների օրակարգի հարց:

Շարժումը սկիզբ է առնում 1973 թվականից: Հունվարի 27-ին ԱՄՆ-ի Կալիֆորնիա նահանգի Սանտա-Բարբարա քաղաքում 73-ամյա Գուրգեն Յանիկյանը, որի ընտանիքի բոլոր անդամները զոհ էին գնացել 1915 թ. Մեծ եղեռնին, դնդակահարում է թուրք հյուպատոսին ու նրա օգնականին: Ի դեպ, դրանից առաջ Գ. Յանիկյանը նամակ էր ուղարկել տեղական մամուլին՝ բացատրելով իր արարքի շարժառիթները, որում ասվում էր, որ այդ միջոցով ձգտում էր խորտակել Հայ դատի չուրջ տասնյակ տարիներ տիրող դատապարտելի լռությունը[335]: Նա դատապարտվում է ցմահ բանտարկության, սակայն ունենում է բազմաթիվ հետևորդներ: Ըստ

[335] Հովնանյան Ռ., Գաղտնի բանակ. պատմություն կերտողները, Երևան, 2015, էջ 24:

պատմաբան Գ. Եազըճեանի՝ Գ. Յանիկյանի արձակած փամփուշտները նախանշեցին ազատագրական պայքարի միջոցն այն երիտասարդների համար, ովքեր 1965 թ. Մեծ եղեռնի 50-րդ տարելիցի միջոցառումներից արթնացել էին թմբուկներից և ելք էին փնտրում[336]: 1975 թ. ապրիլի 4-ին բանտից գրած նամակում Գ. Յանիկյանը նշում է. «Ուրախ եմ, որ ինձ հաջողվեց Արարատի գագաթից ձյունի բեկոր գլորել դեպի փեչերը, որն արդեն մեծանում է: Ուրախ եմ, որ կարողացա արթնացնել քնածներին ու միացնել մեր ցեղը իրենց ցանկության մեջ տեսնել գազանը պատժված: Ուրախ եմ, որ ինձ հաջողվեց թաղվելու պատրաստված մեր ազգի իրավունքները հանել դերեզմանից ու մաքրելով փոշուց, դնել մարդկության առաջ, որ հարցը լուծվի»[337]:

1975 թ. հունվարի 20-ին Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Բեյրութի գրասենյակի պայթեցումով՝ տրվում է զինված պայքարի մեկնարկը: «Գերի Գուրգեն Յանիկյան խմբակ» անվամբ մինչ այդ անհայտ կազմակերպությունը ստանձնում է գործողության պատասխանատվությունը: Խմբի անդամների թիվն աճում է, և այն փետրվարի 20-ին ստանում է նախ «Հայ գաղտնի բանակ», իսկ ավելի ուշ՝ «Հայաստանի ազատագրության Հայ գաղտնի բանակ» անվանումը (անգլ.՝ Armenian Secret Army for the Liberation of Armenia - ASALA, այսուհետև՝ ՀԱՀԳԲ)[338]: Կազմակերպությունը կարևոր ներդրում ունեցավ հայկական հարցը միջազգային հարաբերությունների օրակարգ մտցնելու գործում:

ՀԱՀԳԲ–ի ծրագրի առանցքը կազմում էր «Արևմտյան Հայաստանի և բռնագրավյալ մյուս տարածքների» ազատագրումը[339]: «Մյուս տարածքների» տակ նկատի ունեին Լեռնային Ղարաբաղը, Նախիջևանը և Ախալքալաքը: Կազմակերպության ծրագրում գրված էր. «Կենսական անհրաժեշտություն է, որ նորագույն հայ ազատագրական պայքարը համահայկական խորք, նկարագիր և բովանդակություն ունենա... Սակայն հայկական բռնագրավյալ հողերու ազատագրումը ինքնանպատակ երևույթ չէ և պետք չէ, որ այդպիսին ըլլա: Ազատագրումին անմիջապես պետք է որ հետևի ազատագրված հողերու և Սովետական Հայաստանի միացումը, միաձուլումը: Թե որը որին կը միանա ավելի ճշգրիտ կրնա ըսել պատ-

---

[336] «Զարթօնք», 17. II. 2005:
[337] Խուրշուդյան Լ., Հայկական հարցը, էջ 60:
[338] Օգնյանեան Ս., Հայաստանի ազատագրութեան Հայ գաղտնի բանակի գրահրատարակութիւնը, Սփյուռք, ԽՒ տարի, թիվ 95, Հունվար-դեկտեմբեր, 2010, էջ 3:
[339] Նույն տեղում:

մական տվյալ պահը կամ իրավիճակը, ինչպես նաև կրնա որոշել Սփյուռքի և Սովետական Հայաստանի մեր ժողովուրդը միասնաբար: Բայց անհրաժեշտ է գիտակցել, թե Հայ ազատագրական պայքարը, որ համահայկական խորք ունի, չի կրնար իրեն իբրև նպատակ ընտրել մեկ երկրորդ Հայաստանի մը ստեղծումը»[340]: Այսպիսով, ՀԱՀԳԲ-ը Հայկական հարցի լուծման համար մղվող պայքարի մեջ նոր որակ է մտցնում՝ ժխտելով հարցի դիվանագիտական-քաղաքական լուծման հնարավորությունը, որդեգրում է զինված պայքարի ուղին:

ՀԱՀԳԲ-ն ակտիվ գործունեություն է ծավալել 1975-1980-ական թթ.: Վերջինս պատժիչ գործողություններ է կազմակերպում Լիբանանում, Ավստրիայում, Հունաստանում, Թուրքիայում, Շվեյցարիայում, Գերմանիայում, Դանիայում, Իտալիայում, Ֆրանսիայում, Իսպանիայում, Կանադայում և ԱՄՆ-ում: Դրանք՝ հիմնականում ուղղված էին թուրքական դեսպանատների, հյուպատոսարանների, դիվանագետների, պետական պաշտոնատար անձանց, զինվորական և ոստիկանական հաստատությունների, թուրքական բիզնես միջավայրին, հատկապես՝ «Turkish Airlines» ընկերության գրասենյակներին[341]:

1975 թ. հոկտեմբերից ՀԱՀԳԲ-ից բացի, սկսում է գործել ՀՅԴ կուսակցության կողմից հովանավորված «Հայկական ցեղասպանության արդարության մարտիկներ» (անգլ.՝ Commandos of the Armenian Genocide - JCAG, այսուհետև՝ ՀՑԱՄ) կազմակերպությունը, որը նույնպես լայնածավալ զինյալ պայքար է սկսում՝ ուղղված միայն թուրք դիվանագետների և թուրքական կառավարական հաստատությունների դեմ[342]: Հոկտեմբերի 22-ին Վիեննայում այս խմբի անդամները սպանում են Ավստրիայում Թուրքիայի դեսպանին: Գործողությունից անմիջապես հետո հրապարակվում է կազմակերպության առաջին հաղորդագրությունը, որում հատկապես ընդգծված էր հետևյալ միտքը. «Մենք հայ ժողովրդի զավակներն ենք: Գործում ենք հանուն արդարության: Թուրքիայի քաղաքական ներկայացուցիչների դեմ մեր արարքը աշխարհի բոլոր մեծ ու փոքր պետություններին պիտի հիշեցնի, թե հայոց մոռաց-

---

[340] Նույն տեղում:

[341] ՀԱՀԳԲ-ի գործունեության վերաբերյալ մանրամասը տես՝ Հովնանյան Ռ., Գաղտնի բանակ. պատմություն կերտողները: Օգնյանեան Ս., Հայաստանի ազատագրութեան Հայ գաղտնի բանակ (ԱՍԱՀԱ). Վաւերագրութիւն զինեալ և հրաւարակչական գործունէութեան, Երևան, 2015:

[342] «Զարթօնք», 17. II. 2005:

ված ցեղասպանությունը անպատիժ է մնում»[343]: ՀՅԱՄ պահանջում էր Հայոց ցեղասպանության ճանաչում և Հայկական հարցի լուծում: Գտնում էր, որ Հայկական հարցի լուծման համար խաղաղ միջոցներով մղված պայքարն իրեն սպառել է, որ ստեղծված իրավիճակում «Մեր արդար դատի հետապնդման միակ միջոցը զինյալ պայքարն է»[344]:

Վերը նշված երկու կազմակերպությունը՝ ՀԱՀԳԲ-ն ու ՀՅԱՄ-ը, հիմնականում 1975-1986 թթ. զինյալ պայքարով՝ փորձում էին գրավել միջազգային հանրության ուշադրությունը: Իրենց անվանում էին հեղափոխական-ազատագրականներ, իսկ Թուրքիային ու նրա իր դաշնակիցներին՝ ահաբեկիչներ: Կարելի է արձանագրել, որ իրենց գործողությունների չնորհիվ նրանք կարողացան կրկին միջազգային քաղաքական և իրավական ասպարեզ բերել Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը: Աչխարհի առաջատար լրատվական միջոցները, անդրադառնալով ՀԱՀԳԲ-ը և ՀՅԱՄ-ն գործունեությանը, լայնորեն ու բովանդակալից անդրադարձ էին կատարում նաև Հայոց ցեղասպանության ու հայկական պահանջատիրության հարցերին:

1974 թ. մարտից Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում սփյուռքահայերի, հատկապես Հայ դատի հանձնախմբերի ծավալած աչխատանքները մասնակի հաջողություններ են գրանցում: 1975 թ. սեպտեմբերին ժնևում գումարված ՄԱԿ-ի Մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողովի Փոքրամասնությունների խտրականության կանխման և պաշտպանության ենթահանձնաժողովի 28-րդ նստաչրջանում այն պետությունների ներկայացուցիչները, որոնք 1974 թ. մարտի 6-ին պաշտպանում էին Թուրքիայի տեսակետը, այստեղ հանդես եկան ի նպաստ 30-րդ պարբերության: Միջազգային իրավունքի փորձագետի և Եկեղեցիների համաչխարհային խորհրդի ներկայացուցչի կարգավիճակով ՄԱԿ-ի այդ ենթահանձնաժողովի աչխատանքներին մասնակցած Շավարչ Թորիկյանը[345] գրում է. «1975-ին գումարուած Փոքրամասնութեանց Պաչտպան

---

[343] «Արև» (Կահիրե), 03. XI. 1981:

[344] Մարբլեան Զ., Հայկական հարցի հոլովոյթը 1939-2010, էջ 141:

[345] Շավարչ Թորիկյան - իրավաբան, միջազգային իրավունքի մասնագետ: Լիբանանում եղել է պետական բարձր պաչտոնյա, Քուվեյթում՝ կառավարության խորհրդական, ՄԱԿ-ի տարբեր հանձնաժողովներում՝ միջազգային իրավունքի խորհրդատու: 1965-1970 թթ. եղել է Լիբանանի Հայ դատի հանձնախմբի, 1974-1978 թթ. Հայ դատի կենտրոնական մարմնի նախագահ, 1975 թ.՝ Եկեղեցիների համաչխարհային խորհրդի անդամ: Մանրամասն տե՛ս Փամպուքեան Ե., Շաւարչ Թորիկեան (Հայ Դատի Անխոնջ Ցառաչապահը), «Դրոչակ», Բեյրութ, Իր տարի, թիւ 14, 23 Հոկտեմբեր, 1991, էջ 13-16:

և խտրականութեան Կանխարգիլման Ենթայանձնախումբի ժողովը յաղթանակ մը եղաւ մեզի համար, տարուած աշխատանքներուն իբրեւ արդիւնք: Ենթայանձնախումբի անդամներուն մեծամասնութիւնը եկաւ քննադատելու Մարդկային Իրաւանց կարգ մը անդամներու արտայայտութիւնները Ցեղասպանութեան տեղեկագրի 30-րդ պարպերութեան դէմ»[346]:

Ինչպես միշտ թուրքական պատվիրակութեան ներկայացուցիչը հանդես է գալիս 30-րդ պարբերութեան դեմ: Նրան, սակայն, ընդդիմանում է Շ. Թորիկյանը՝ ասելով, որ պատմական ճշմարտութիւնների պարագայում տեղին չեն քաղաքական ճնշումները, և որ ապագա ցեղասպանութիւնների կանխարգելման համար պետք է դատապարտվեն նախկինում տեղի ունեցածները: Հիշեցնելով, որ Օսմանյան կայսրութեան հայերի կոտորածը 20-րդ դարի ցեղասպանութեան առաջին դեպքն է, իր ելույթում նա մատնանշում է, որ Հայոց ցեղասպանութիւնը մարդկային գիտակցութեան համար ծանր բեռ է[347]:

Ժնևում 30-րդ պարբերութեան շուրջ քննարկումը բավականին բուռն ընթացք է ունենում. ի զարմանս Թուրքիայի՝ Ավստրիայի, Դանիայի, Մեծ Բրիտանիայի, Մեքսիկայի, Նիգերիայի, ԽՍՀՄ-ի, Ֆրանսիայի և Հարավսլավիայի փորձագետներն արտահայտվում են փաստաթղթում դրա պահպանման օգտին: Որոշվում է երեք տարով՝ մինչև 1978 թ. կայանալիք ենթահանձնաժողովի 33-րդ նստաշրջանը, սառեցնել հարցի քննարկումը[348]: Խնդրի նկատմամբ նման մոտեցումը դատապարտվում է թուրքական մամուլում:

Սիյոուքահայերն այս փոքրիկ հաղթանակից բավարարված չէին և այդ ուղղութեամբ ՄԱԿ-ում հետագա 3 տարիներին անդուլ աշխատանքներ էին տանում: Հայկական պահանջները միասնական ներկայացնելու համար 1977 թ. Ս.Դ. Հնչակյան, ՀՅԴ և Ռամկավար ազատական կուսակցութիւնները միավորեցին իրենց ջանքերը: Սևրի դաշնագրի ստորագրման 57-ամյակի առթիվ հայ քաղաքական այս ուժերը ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կ. Վալդհայմին ներկայացրին միասնական փաստաթուղթ, որում ասվում էր. «Այս առթիւ ՄԱԿ-ի ուշադրութեան կը յանձնենք թէ՝ հայ ժողովուրդը տակաւին կը սպասէ արդարութիւն, որ այս պարագային կը

---

[346] Հայասպանութիւնն և Ամերիկեան քոնկրէսը, խմբագիր՝ Շ. Թորիկեան, Պէյրութ, 1978, էջ 5:
[347] Toriguian Sh., The Armenian Question and International Law, p. 116.
[348] The Armenian Question Today. International Documents, 1983-1987, 2nd ed., L A, 1988, p 25.

նշանակէ, հայկական պատմական հողերու վերադարձը Թուրքիոյ կողմէ իրենց իրաւատիրոջ՝ հայ ժողովուրդին, հայկական ցեղասպանութեան դատապարտութիւնը ինչպես նաեւ մէկ ու կէս միլիոն կեանքերու եւ անհաշիւ նիւթական ու մշակութային վնասներու հատուցումը»[349]:

Փաստաթղթի առաքումից կարճ ժամանակ անց՝ նոյեմբերի 27-ին, Ցյուրիխի «Դոլտր Կրենտ» պանդոկում Թուրքիայի արտաքին գործերի նախարար Իհսան Սաբրի Չագլայանգլիլը գաղտնի հանդիպում է ունենում հայկական վերոհիշյալ երեք կուսակցությունների ներկայացուցիչների՝ Ա. Տեմիրճյանի (ՍԴՀԿ), Շ. Թորիկյանի (ՀՅԴ) և Բ. Թովմասյանի (ՌԱԿ) հետ[350]: Արծարծելով թուրք դիվանագետների դեմ իրականացված դործողությունների և ԱՄՆ-ում հակաթուրքական քարոզչություն տանելու հարցերը՝ նա հայկական կողմին հասկացնում է, որ անհրաժեշտության դեպքում իրենք կարող են պատասխան քայլեր ձեռնարկել: Հայկական կուսակցությունների ներկայացուցիչներն էլ իրենց հերթին բարձրացնում են Հայոց ցեղասպանության ճանաչման, հողային ու նյութական փոխհատուցման և ստամբուլահայերի դեմ գործադրվող հալածանքների խնդիրները: Ի պատասխան՝ Թուրքիայի արտաքին գերատեսչության ղեկավարը հայտարարում է. «Մենք ժառանգած ենք ցավալի սխալներով անցեալ մը ու պատրաստ ենք սրբագրելու զանոնք: Ես պատրաստ եմ պատրաստելու գետինը բանակցութեանց մեր կառավարութեան եւ ձեր միջեւ, եթէ առիկա դրուի ընդունելի պահանջքներու չըջագծէն ներս: Օրինակ, նյութական հատուցումը, վերաբնակեցումը, եւ հայերու որոշ դիւրութիւններ ընծայելը ընդունելի հարցեր են, իսկ բնաւ ընդունելի չէ հողային ձեր պահանջքը: Ոչ մէկ թուրք պիտի ընդունի այդ մէկը, նոյնիսկ դաւաճան թուրք մը»[351]:

Նկատենք, որ հանդիպումը որևէ արդյունք չի արձանագրում: Տարիներ անց այս հանդիպման մասնակից Ա. Տեմիրճյանն իր հոդվածներից մեկում գրում է, որ 1986 թ. մարտին Լոնդոնից Փարիզ մեկնող օդանավում պատահաբար հանդիպել է 1977 թ. առանձնազրույցին ներկա եղած Ի. Չագլայանգլիլի օդնական Օքթան Աքսոյին: Վերջինս ասել է, որ վարչապետ Սուլեյման

---

[349] «Ձարթօնք», 10. VIII. 1977:
[350] Տէմիրճեան Ա., Տեսակցութիւն թուրք արտաքին գործոց նախարարին հետ, Հայ-թուրքական փոխ յարաբերութեան չուրջ.- «Արարատ», Ամանորի բացառիկ, Բեյրութ, 01. I. 1995, էջ 13:
[351] Նույն տեղում:

Դեմիրելի հրահանգով արտաքին գործերի նախարարը պատրաստել և կառավարությանն է ներկայացրել հայկական կուսակցությունների ներկայացուցիչների հետ ունեցած հանդիպման վերաբերյալ զեկուցագիրը: Այն մեծ արձագանք է ունեցել, կառավարության անդամները հատկապես դեմ են արտահայտվել «Հայությեան չնորհուի որոշ դիւրութիւնները» առաջարկությանը: Օ. Աքսոյի գնահատմամբ՝ 1978 թ. հունվարին Ի. Զազլյանգլիլի հրաժարականը որոշակիորեն կապ ուներ այս հանդիպման հետ[352]:

Ինչպես նախատեսված էր, 1978 թ. սեպտեմբերին ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնախմբի փոքրամասնությունների խտրականության կանխման և պաշտպանության ենթահանձնաժողովը ներկայացնում է փաստաթղթի վերջնական տարբերակը, որտեղ, սակայն, բացակայում էր խնդրո առարկա 30-րդ պարբերությունը[353]: Չնայած սիյուռքահայերի ծավալած երկարատև աշխատանքներին՝ Թուրքիայի կառավարությունը, այնուամենայնիվ, կարողացել էր վերոհիշյալ հատվածը հանել տալ բանաձևից: Քննարկման ժամանակ զեկուցողը հայտարարում է, թե հայերի ցեղասպանության վկայություններ չեն հայտնաբերվել, և որ միակ հայտնի դեպքը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին հրեաների ցեղասպանությունն է: Նրան առարկում են Ավստրիայի, Արգենտինայի, ԽՍՀՄ-ի, Հունաստանի և Ֆրանսիայի ներկայացուցիչները, և հարցի քննարկումը կրկին հետաձգվում է մինչև 1979 թ.:

1978-1979 թթ. սիյուռքահայերն էլ ավելի լայնածավալ գործունեություն են իրականացնում: Մասնավորապես, այդ տարիներին Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման ուղղությամբ ղգալի աշխատանք է կատարում Ամերիկայի հայկական համագումարը: Դեռևս 1976 թ. վերջինիս պատվիրակությունը (անդամներ՝ Վ. Դադրյան, Դ. Փափազյան, Լ. Սարգիսյան, Տ. Սմսարյան, Ռ. Հովհաննիսյան, Ա. Սանջյան, Շ. Թորիկյան) հանդիպումներ է ունենում ԱՄՆ-ի կոնգրեսականների հետ[354]: Նույն թվականին ԱՄՆ-ում նախագահական ընտրությունների նախօրեին կազմակերպության անդամները կապ են հաստատում Դեմոկրատական

---

[352] Նույն տեղում:

[353] Study of the Question of the Prevention and Punishment of the Crime of Genocide / Prepared by Nicodème Ruhashyankiko, Special Rapporteur, E/CN.4/Sub.2/416, http://repository.un.org/handle/11176/371706

[354] «Ազդակ», 01. I. 1977:

կուսակցութիւնից ԱՄՆ-ի նախագահի թեկնածու Ջիմ Քարթերի հետ: Հոկտեմբերին Նյու Ջերսի օդանավակայանում վերջինս հանդիպում է Հ. Տերտերյանի և Լ. Սարգիսյանի հետ: ԱՄՆ-ի նախագահի թեկնածուին նրանք ծանոթացնում են Հայկական հարցին[355]: Մի քանի օր անց՝ հոկտեմբերի 21-ին, Ջ. Քարթերն ամերիկահայերին դիմում է ուղերձով, որում ասվում էր. «Ես կը համակրիմ հայ ժողովուրդի ձգտումին եւ կըմբռնեմ իրենց հայրենիքը դարձյալ ազատ տեսնելու անոնց մղումը: Աւելին եւ ուժգնօրեն կողմնակից եմ Ցեղասպանութեան Միջազգային Դաշնագիրը բարեփոխելու պահանջին: .... Իբրեւ ղեկավար Դեմոկրատական կուսակցութեան – կուսակցութիւնը Վուտրօ Ուիլսընի, մարդ մը՝ որ խոր գուրգուրանք ցուցաբերեց Հայութեան հանդէպ, ժամանակի մէջ, երբ անոնք ենթարկուած էին ծայրագոյն անարդարութեան – ես պիտի աշխատիմ որ Հայ ժողովուրդի ձայնը լսելի դառնայ, եւ թէ՝ Լիբանանի Հայութեան օդնութեան հասնելու հարցին նման խնդիրներ կարեւորութեամբ նկատի պիտի առնուին: Բայց այս նպատակները իրագործելու համար, ես պէտք պիտի ունենամ ձեր թէ՛ աջակցութեան եւ թէ՛ ցուցմունքներուն»[356]:

Անշուշտ, այս հայտարարությունը պաշտոնական բնույթ չուներ, քանի որ այդ ժամանակ Ջ. Քարտերը ընդամենը նախագահի թեկնածու էր: Այնուհանդերձ, մեր կարծիքով, նրա ուղերձը չափավոր էր ու հավասարակշռված. ճիշտ է, Թուրքիան չէր հիշատակվում որպես ցեղասպան երկիր, սակայն հստակ ներկայացվում էր Հայոց ցեղասպանության և Արևմտյան Հայաստանի վերաբերյալ Ջ. Քարտերի հայանպաստ դիրքորոշումը: 1977 թ. ԱՄՆ-ի նախագահ ընտրվելուն պես՝ Ջ. Քարտերը շարունակում է իր երկրի պետական-քաղաքական որդեգրած ուղեգիծը և դրան զուգահեռ փորձում է պահպանել ամերիկահայերի վստահությունը: Այսպես, 1978 թ. մայիսի 16-ին Սպիտակ տանն արած իր հայտարարության մեջ նա հիշատակում է 20-րդ դ. առաջին ցեղասպանությունը՝ չօգտագործելով ցեղասպանություն բառը[357]: Բացի այդ, նույն թվականի աշնանը Սեթ Մոմջյանին[358] նշանակում է ՄԱԿ-ում ԱՄՆ-ի հանձնախմբի անդամ, այնուհետև՝ Սպիտակ տան ներկայացուցիչ

---

[355] «Ազդակ», 14. XII. 1976:
[356] «Զարթօնք», 01. I. 1977:
[357] «Զարթօնք», 11. IV. 1984:
[358] Սեթ Մոմջյան - ամերիկահայ քաղաքական գործիչ: Հայտնի է որպես մարդու իրավունքների պաշտպան: 1980 թ. դարձել է կործանարար աղետների զոհերի հիշատակի հավերժացման ամերիկյան խորհրդի անդամ, 1990-ին՝ Վաշինգթոնի Ողջակիզման թանգարանի տնօրեն:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների ժնևի հանձնաժողովում: Դա թույլ է տալիս նրան մասնակցել 1979 թ. մարտին տեղի ունեցած այս հանձնաժողովի 35-րդ նիստին: Ժնև մեկնելու նախօրյակին Ս. Մոմջյանը հայտարարում է, որ գնում է որպես ԱՄՆ-ի կառավարության ներկայացուցիչ՝ հստակ մտադրությամբ վերականգնելու փաստաթղթից հանված 30-րդ պարբերությունը: Նա վստահեցնում է, որ Սպիտակ տունը խոստացել է այս հարցում աջակցել հայերին[359]:

Ժնևում կայանալիք հանձնաժողովի նիստից առաջ՝ մարտի 7-ին, ԱՄՆ-ի կոնգրեսում 30-րդ պարբերության խնդրի առնչությամբ ելույթով հանդես է գալիս Կալիֆորնիայից պատգամավոր Ջորջ Է. Դանիելսոնը՝ հայտարարելով. «Հայ ժողովրդի զավակները ծրագրավորված ոճիրի՝ ցեղասպանության ողբալի զոհեր էին: Եվ այդ ամենից հետո ջոհերի զավակները ջանքեր են գործադրում, որ կատարված չարագործությունը դատապարտվի ՄԱԿ-ի կողմից»[360]: Ջ. Է. Դանիելսոնը դատապարտում է ամերիկյան կառավարության որդեգրած քաղաքականությունը՝ հույս հայտնելով, որ կգա այն օրը, երբ Թուրքիան ստիպված կլինի ճանաչել Հայոց ցեղասպանությունը և իր սխալները սրբագրելու համար փոխհատուցում կտա հայ ժողովրդին[361]: Ապա կոչ է անում ամերիկյան կառավարությանը ՄԱԿ-ում պաշտպանել հայերի իրավունքները[362]:

Մինչդեռ մարտի 14-ին ժնևում կայացած ՄԱԿ-ի Մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողովի 35-րդ նստաշրջանի 1520-րդ նիստին ներկայացված փաստաթղթում 30-րդ պարբերությունը կրկին չի ընդգրկվում[363]: Դա առաջ է բերում Ավստրիայի, ԽՍՀՄ-ի, Ավստրալիայի, ԱՄՆ-ի, Կիպրոսի, Ֆրանսիայի, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի և Փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության միջազգային խմբի լոնդոնյան կազմակերպության պատվիրակների դժգոհությունը: Կիպրոսի ներկայացուցիչն իր ելույթում դատապարտում է 1915 թ. Օսմանյան

---

[359] Մսըրլեան Զ., 1978-1979 Հայկական Դատի հետապնդման ճամբուն վրայ.- «Ջաքճօնք», Ամանորի բացառիկ, 31. XII. 1979, էջ 10:

[360] The Armenian Genocide Must Be Reported, Congressional Record - House, 7 March, 1979, pp. 4051-4052. https://www.gpo.gov/fdsys/pkg/GPO-CRECB-1979-pt4/pdf/GPO-CRECB-1979-pt4-1-1.pdf

[361] Նույն տեղում:

[362] Նույն տեղում:

[363] Study of the question of the prevention and punishment of the crime of genocide / prepared by Nicodème Ruhashyankiko, Special Rapporteur, E/CN.4/Sub.2/416, http://repository.un.org/discover

կայսրությունում հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանությունը և խնդրո առարկա հարցում Թուրքիայի իշխանությունների որդեգրած ժխտողական պահվածքը: Ամերիկյան պատվիրակության ղեկավար էդ. Մեզվինսկին կիսում է Ս. Մոմջյանի և Կիլորոսի ներկայացուցչի հայանպաստ դիրքորոշումը՝ չեչտելով, որ Թուրքիան պետք է համակերպվի պատմական իրողության հետ[364]: Հնչած հայտարարություններից անակնկալի եկած՝ Թուրքիայի պատվիրակն իր ելույթում փորձում է հիմնավորել պաշտոնական Անկարայի տեսակետը: Նրան պաշտպանում է միայն Պակիստանի ներկայացուցիչը: Օրվա նիստը նախագահող Գանայի ներկայացուցիչը՝ Հ. Պոլը, կողմերին առաջարկում է Ն. Ռուխաչիանկիկոյին փոխանցել Օսմանյան կայսրությունում 1915 թ. ողբերգական դեպքերին վերաբերող փաստաթղթերը, որպեսզի նա ուսումնասիրի և որպես անկախ-անկողմնակալ փորձագետ որոշում կայացնի 30-րդ պարբերության վերաբերյալ: Առաջարկը դրվում է քվեարկության և 15 կողմ, մեկ դեմ հարաբերակցությամբ ընդունվում է: Այնուհանդերձ, Ռուանդայի ներկայացուցիչը 30-րդ պարբերությունն այդպես էլ չի վերահաստատում[365]: Նման մոտեցումը, ամենայն հավանականությամբ, պայմանավորված էր այն հանգամանքով, որ Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ էր և դտնվում էր ԱՄՆ-ի հովանավորության ներքո: Ըստ էության, թուրք-ամերիկյան հարաբերություններում ժամանակ առ ժամանակ նկատվող լարվածությունը կրում էր ժամանակավոր բնույթ և իրականությունն էլ այն էր, որ պաշտոնական Վաշինգտոնն այդ տարիներին երբեք չի հրաժարվել 1940-ական թվականներից որդեգրած թուրքամետ պետական-քաղաքականության ուղուց:

Ըստ ֆրանսահայ գործիչ Միհրան Մավյանի՝ «քաղաքակիրթ աշխարհն» իր դիվանագիտական բոլոր տիպի դարձվածքներով, իր կողմնակալ մտահղացումներով երբեք չի կարող սփյուռքահայությանը մոռացնել տալ այն իրողությունը, որ, այո՛, իրենք են Արևմտյան Հայաստանի միակ տերերը[366]: Այս հայտարարությունը վկայում էր, որ չնայած հիասթափությանը՝ հայերը չարունակելու էին իրենց արդար պայքարը:

---

[364] Մսըրլեան Զ., 1978-1979 Հայկական Դատի հետապնդման ճամբուն վրայ, «Զարթօնք», Ամանորի բացառիկ, 31. XII. 1979, էջ 10:
[365] Նույն տեղում:
[366] «Աշխարհ» (Փարիզ), 28. IV. 1979:

1979 թ. ապրիլի 24-ին աշխարհի հայերը կրկին թուրքական դեսպանատների մոտ բողոքի ցույցեր կազմակերպեցին՝ Անկարայի կառավարությունից պահանջելով ճանաչել հայության իրավունքները և ընդունել հայերի դեմ իր նախնիների գործած ցեղասպանության պատասխանատվությունը: Բողոքի այդ միջոցառումներին հայերից բացի մասնակցում էին այլ երկրների քաղաքական գործիչներ և քաղաքացիներ:

Այսպիսով, 1970-ական թվականներին ՄԱԿ-ում Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման ուղղությամբ տարված աշխատանքները դրական արդյունք չտվեցին: Այդ տասնամյակը, այնուամենայնիվ, կարելի է բնութագրել որպես «արմատական շրջադարձի տարիներ»: Սփյուռքահայ քաղաքական միտքը պայքարի առաջին պլան է մղում հայոց ցեղասպանության դատապարտման հարցը՝ գտնելով, որ Եղեռնի ընդունումն ու դատապարտումը հանգեցնելու է Հայկական հարցի լուծման անհրաժեշտությանը: Ավելին՝ այդ տարիներին մշակված նոր մարտավարության շնորհիվ հայերի պահանջները սկսեցին լայնորեն քննարկել արտասահմանյան մամուլում, տարբեր պետությունների խորհրդարաններում և կառավարություններում, ինչպես նաև միջազգային կառույցներում: Արդյունքում՝ 1970 թ. Հայկական հարցի լուծման և Հայոց ցեղասպանության ճանաչման ուղղությամբ ձեռնարկված քայլերը միավորներ բերեցին 1980-ական թվականներին:

ԳԼՈՒԽ IV

ՀԱՑՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 1980- ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1980-ական թվականներին Հայկական հարցի լուծման և Հայոց ցեղասպանության ճանաչման ուղղությամբ սփյուռքահայության ձեռնարկած քայլերը դրական որոշակի արդյունքներ դրանցեցին: Դրանք ոչ միայն միջազգային կառույցներում և օտարերկրյա որոշ երկրների խորհրդարաններում Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձևերի ընդունումն էին, այլ և այն, որ խնդրո առարկա թեման շատ հաճախ բարձրացվում էր անմիջականորեն Արևմուտքի քաղաքական գործիչների, ցեղասպանագետների, պատմաբանների և այլոց կողմից, ինչը բավականին բացասաբար էր ընդունվում Թուրքիայում:

1970-ական թվականների վերջին և 1980-ականներին Հայկական հարցի շուրջ ընթացող գործընթացներն անհանգստացնում էին ոչ միայն Թուրքիային, այլև Հյուսիսատլանտյան դաշինքի՝ ՆԱՏՕ-ի բարձրաստիճան պաշտոնյաներին: Այդ է վկայում 1978 թ. այս կազմակերպության դլխավոր քարտուղար Ջոզեֆ Լունսի նամակը կառույցի անդամ երկրների կառավարություններին, որտեղ հատակ հրահանգ էր տրվում զսպել հույների և հայերի գործունեությունն «ընդդեմ թուրք ազդի»: Ըստ նրա՝ փորձ է արվում ներկայիս թուրքերի ուսերին դնել «նախորդ սերնդի մեղքերը»: Ավելին՝ հասկացնում է, որ հայերի պահանջած տարածքները՝ Բիթլիսը, Էրզրումը և Կարսը, կենսական նշանակություն ունեն ոչ միայն Թուրքիայի, այլև արևմտյան պետությունների համար[367]: Այլ կերպ ասած՝ այդ տարածքները Արևմուտքին պաշտպանում էին ԽՍՀՄ-ից, ըստ այդմ՝ կարևոր հենակետեր էին, որոնք չէին պատրաստվում զիջել Խորհրդային Միությանը կազմի մեջ մտնող Խորհրդային Հայաստանին:

Իրականում, սակայն, ԽՍՀՄ-ի պահվածքը չէր տարբերվում ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի թուրքամետ քաղաքականությունից: 1921 թ. Մոսկվայի պայմանագրի 60-ամյակի առթիվ ԽՍՀՄ-ի առաջնորդ Լ. Բրեժնևի՝ Թուրքիայի ղեկավար Ք. Էվրենին 1981 թ. հղած շնորհավորական հեռագրում, մասնավորապես, ասվում էր. «Խորհրդային Միությունը ցանկանում է էլ ավելի զարդացնել խորհրդա-

[367] «Ազատ օր», 05. V. 1978:

թուրքական հարաբերությունները, հիմնվելով՝ հավասարության, դերիշխանության, անկախության, տարածքային ամբողջականության սկզբունքների վրա»[368]: Այսինքն՝ պաշտոնական Մոսկվան դարձյալ հաստատում էր, որ ճանաչում է Թուրքիայի տարածքային ամբողջականությունը և տարածքային որևէ պահանջ չունի նրանից:

Ինչ վերաբերում է սփյուռքահայերի գործունեությանը, ապա ավանդական ուղուց և զինյալ պայքարից բացի, այլ գործոններ էլ էին ի հայտ եկել, որոնք մեծացրել էին համաշխարհային հանրության հետաքրքրությունը Հայոց ցեղասպանության նկատմամբ: 1970-ականների վերջին և 1980-ականներին եվրոպական մի շարք երկրներում՝ հատկապես Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, գործող մարդու իրավապաշտպան կազմակերպությունները ճնշում էին գործադրում իրենց կառավարությունների վրա՝ Հայոց ցեղասպանությունը ճանաչելու պահանջով: Այսպես, Լոնդոնում գործող «Փոքրամասնությունների պաշտպանության միջազգային խումբը»[369], որը գրքույկներ էր հրատարակում միջազգային հասարակական կարծիքին ներկայացնելով ազգային փոքրամասնությունների խնդիրները, 32-րդը նվիրում է հայերին՝ «The Armenians»[370]: Դրա հեղինակներն էին անգլիացի պատմաբաններ՝ Դ. Լանգը և Ք. Ջ. Ուոքերը: Գրքույկում խոսվում է Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայերի նկատմամբ իրականացված զանգվածային սպանությունների մասին, մատնանշելով, որ դրանք «կղզիացված պատահարներ» չէին, այլ եղել են «ամիսներով, եթե ոչ տարիներով մեծ զգուշությամբ մտածված և ծրագրավորված»[371]: Ջեկուցագրի տեսքով հրատարակված այս գրքույկը լույս է տեսել 1976 թ., այնուհետև վերահրատարակվել է 1977, 1978, 1981 և 1987 թվականներին: Նոր հրատարակություններում հիմնականդերն ավելի խորացված էր ներկայացվում, վերջինում՝

---

368 «Правда», 16. III. 1981.

369 «Փոքրամասնությունների պաշտպանության միջազգային խումբը» («Minority Rights Group International») ստեղծվել է 1969 թ. Լոնդոնում «The Observer» թերթի գլխավոր խմբագիր և սեփականատեր Դեյվիդ Ասթորի կողմից: Հիմնական նպատակն էր պաշտպանել ազգային փոքրամասնությունների իրավունքները նրանց նկատմամբ իրականացվող ոտնձգությունները հրապարակումների միջոցով հասանելի դարձնելով միջազգային հանրությանը և դրանով իսկ ստիպելով տվյալ կառավարություններին փոխել իրենց քաղաքականությունը: Կազմակերպությունը խորհրդատվական կարգավիճակ ունի ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհրդում (ECOSOC) և դիտորդի կարգավիճակ՝ Մարդու և ժողովուրդների իրավունքների Աֆրիկայի հանձնաժողովում: Մանրամասն տե՛ս http://minorityrights.org/

370 The Armenians, by David Marshall Lang, Christopher J. Walker, London: Minority Rights Group, MRG Report No. 32, fifth edition, 1987, http://minorityrights.org/wp-content/uploads/old-site-downloads/download-871-Download-full-report.pdf

371 Նույն տեղում, էջ 8:

անդրադարձ է կատարվում նաև Լեռնային Ղարաբաղում սկսված դործընթացներին[372]:

Բացի այդ, 1980-ական թվականներին եվրոպական որոշ երկրներում քաղաքական դործիչները բավականին հաճախ են սկսում բարձրացնել Հայոց ցեղասպանության դատապարտման հարցը: Հարկ է նշել, որ Թուրքիայում 1980 թ. իրականացված ռազմական հեղաչրջումից հետո հարաբերությունների վատթարացում է նկատվում Եվրոպական տնտեսական համագործակցության (ԵՏՀ) հետ, ժամանակավորապես սահմանափակվում են Թուրքիայի քաղաքացիների մուտքը Համագործակցության երկրներ: Չի բացառվում, որ դա ևս առիթ է դառնում այդ պետություններում հայանպաստ արտահայտությունների չրջանառության և դիրքորոշումների արտահայտման համար:

Եվրոպական երկրներից հատկապես Ֆրանսիայում է առավել հաճախ բարձրացվում Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը: Հայկական հարցի հայտնվելը Ֆրանսիայի արտաքին քաղաքականության օրակարգում նոր երևույթ չէր: Ինչպես նշել ենք, դեռևս 1965 թ. Հայոց ցեղասպանության 50-ամյա տարելիցի նախօրյակին Հայկական հարցը Ֆրանսիայում առաջին անգամ բարձրացնում են կոմունիստները՝ կառավարությունից պահանջելով նրա անհապաղ ճանաչումը և հայերին փոխհատուցում տալը: Հատկանշական է, որ դա համընկավ Ֆրանսիայում նախատեսված նախագահական ընտրությունների հետ, որտեղ ձախակողմյան՝ սոցյալիստների ուժերի թեկնածու Ֆ. Միտերանին չի հաջողվում առավելության հասնել Շ. դը Գոլի նկատմամբ, ապա երկրորդ անգամ՝ 1974 թ., Վ. Ժիսկար դ'Էստենին:

Նախագահական ընտրություններում երրորդ անգամ անընդմեջ չպարտվելու համար սոցյալիստներին անհրաժեշտ էր ստանալ ֆրանսաբնակ հայերի աջակցությունը: Դրանով էլ էր պայմանավորված 1981թ. հերթական նախագահական ընտրությունների նախաչեմին Մարսելի «Ապրիլի 24-ի» Մեծ եղեռնի հուչակոթողի մոտ Ֆ. Միտերանի հայտարարությունն ու կոչը. «Մենք՝ ընկերավարներս (խոսքը՝ սոցյալիստների մասին է. - *Ռ.Մ.*) պէտք է պահանջենք, որպէսզի Ֆրանսիան ճանչնայ 1915-ի հայերի ցեղասպանութիւնը եւ հանդէս գանք Հայկական հարցի արդարացի լուծման համար»[373]:

---

372 Նույն տեղում, էջ 24-25:
373 Նույն տեղում:

Մինչ այդ Փարիզում և Լիոնում ֆրանսահայ համայնքը հանդիսավոր նշում է մեկուկես միլիոն արևմտահայերի ցեղասպանության 65-րդ տարելիցը: Այսպես, ապրիլի 20-ին Փարիզի Նոտր-Դամ եկեղեցում պատարագ է մատուցվում 1915 թ. զոհերի հիշատակին, որին ներկա են եղել հինգ հազարից ավելի հայեր և օտարերկրացիներ: Պաշտոնական հյուրերի թվում են եղել «Պապական նվիրակը, Եվրոպայում Հայոց Հայրապետական պատվիրակ Սերովբե արք. Մանուկյանը, Փարիզի արքեպիսկոպոս կարդինալ Ֆրանսուա Մարթին, Ֆրանսիայի արտաքին գործոց նախարարության ներկայացուցիչը, Լիբանանի դեսպանը և այլք»[374]:

Ապրիլի 24-ին Լիոն քաղաքի ցույցին մասնակցում էին երեք հազար մարդ, այդ թվում՝ Ռոնայի դեպարտամենտից խորհրդարանի պատգամավոր Շառլ Էռնյուն[375], Վիլլորբանի քաղաքապետ Ժան Պոպերեն[376], Ռոնի պատգամավոր Միշել Նուարը[377], ովքեր սոցյալիստական կուսակցության անդամներ էին: Նրանցից ձևավորված պատվիրակությունը Լիոնում Թուրքիայի հյուպատոս Օքան Ժեզերի կողմից ընդունելության չի արժանանում, թեպետ կար պայմանավորվածություն: Ավելին՝ թուրք դիվանագետը կազմակերպում է հակահայկական ցույց, որտեղ տարածվում են Շ. Էռնյուին, Ժ. Պոպերեին, Մ. Նուարին վարկաբեկող թռուցիկներ: Վերջիններս էլ հասնում են նրան, որ հունիսի 2-ին նախագահ Վ. Ժ. դ՛Էստենը և արտաքին գործերի նախարար Ֆ. Պոնսեն թուրք հյուպատոսին վտարում են երկրից[378]:

Սոցիալիստների նման պահվածքը և Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում ցուցաբերած աջակցությունը ֆրանսահայերի շրջանում մեծացնում է երկրի՝ նրանց նկատմամբ հարգանքն ու վստահությունը: Արդյունքում՝ 1981 թ. Ֆրանսիայի նախագահական ընտրություններում հայկական համայնքը պաշտպանում է Ֆ. Միտերանի թեկնածությունը, որն էլ դառնում է երկրի նախագահ: Այնուհետև Ֆրանսիայի բարձրաստիճան պաշտոնյաներն ավելի հաճախ են սկսում խոսել Հայոց ցեղասպանության մասին: Բացի այդ, 1980-ական թվականներին Ֆրանսիայում ակտիվ գործունեություն էր ծավալել «Ֆրանս-Հայկական համերաշխության»

---

374 «Ապագա» (Մարսել), 07.VI.1980:
375 Շառլ Էռնյու - 1981-1985 թթ. զբաղեցրել է պաշտպանության նախարարի պաշտոնը:
376 Ժան Պոպերե - Ֆրանսիայի միասնական սոցյալիստական կուսակցության հիմնադիրներից է:
377 Միշել Նուար - 1989-1995 թթ. զբաղեցրել է Լիոնի քաղաքապետի պաշտոնը:
378 «Արարատ» (Բեյրութ), 24. VIII.1984:

(«Solidarité franco-armenienne») կազմակերպությունը, որը ստեղծվել էր 1976 թ. Փարիզում, և որի շարքերում էին 200-ից ավելի անվանի գործիչներ:

Թուրքական մամուլն իր հերթին սկսում է հակահայկական և հակաֆրանսիական քարոզչություն: 1980 թ. օգոստոսի 10-ին «Hürriyet» թերթի սյունակագիր Օքթայ Էքիշը գրում էր, որ կառավարությունը համապատասխան քայլեր չի ձեռնարկում իրենց դեմ ուղղված մեղադրանքները հերքելու համար: Նա իշխանություններին մեղադրում է նաև այն հարցում, որ վերջիններս անտարբեր են եղել և Անկարայի կամ Ստամբուլի հրապարակներից մեկում մինչօրս չեն կանգնեցրել մի հուշարձան, որը կխորհրդանշեր այն վայրագությունները, որ ֆրանսիացիները կատարել են Արևելքում կամ Աֆրիկայում[379]: Ըստ մամուլի՝ կառավարությունը պարտավոր է վճռական քայլեր կատարել չեզոքացնելու համար արտասահմանյան հրապարակումների ազդեցությունը, որոնք վարկաբեկում են Թուրքիային[380]: Ավելին՝ այն կարծիքն է գերակշռում, որ կառավարությունը տարիներ ի վեր անհրաժեշտ կարևորություն չի տվել Հայկական հարցին[381]: Կրկին լայն շրջանառության մեջ է դրվում այն թեզը, որ 20-րդ դարասկզբին հայ-թուրքական բախումները հրահրել է Արևմուտքը[382]:

Հայկական հարցի հետ կապված թուրք-ֆրանսիական հարաբերությունները էլ ավելի են լարվում 1981 թ., երբ Ֆրանսիայի կառավարության անդամները սկսում են նախագահ Ֆ. Միտերանին հիշեցնել նախագահական քարոզարշավի ընթացքում հայերին տված նրա խոստումները: 1981 թ. Սեպտեմբերի 18-ին Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Կլոդ Շեյսոնը «Le Figaro» թերթին տված հարցազրույցում ասիսոսանք է հայտնում, որ Անկարայի կառավարությունը չարունակում է ժխտել Հայոց ցեղասպանության իրողությունը, միաժամանակ հայտարարում է «թե ներկայիս Թուրքիայի կառավարությունը պատասխանատու չէ 60 տարի առաջ հայ ժողովրդի կրած ողբերգության համար»[383]: Արտաքին գերատեսչության ղեկավարի այս տեսակետը սուր քննադատության է ենթարկվում մի շարք նախարարների կողմից: Հատկապես հայանպաստ

---

[379] «Hürriyet», 10.VIII.1980.
[380] «Մարմարա», 13.VIII.1980:
[381] «Զարթօնք», 30.VIII.1980:
[382] «Hürriyet», 21.VIII.1980.
[383] «Le Figaro» (Paris), 18. IX. 1981.

հայտարարությամբ հանդես էին գալիս Ներքին գործերի նախարար Գ. Դեֆերը և պաշտպանության նախարար Շ. Էռնյուն: Գ. Դեֆերը չեշտում էր. «Ֆրանսիայի կառավարությունը կը ճանչնայ ցեղասպանությունը, որուն զոհ գնացին հայերը» և վստահեցնում, որ Ֆրանսիան օգնելու է հայերին[384]: Շ. Էռնյուն էլ հիշեցնում էր Հայ դատի հետապնդման գործում ֆրանսահայերին տված Միտերանի խոստումները[385]: Այս երկու գործիչները երբեք չեն թաքցրել հայերի նկատմամբ ունեցած իրենց համակրանքը և Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում մշտապես հետաքրքրություն են ցուցաբերել:

Գ. Դեֆերի և Շ. Էռնյուի հայտարարությունները մեծ աղմուկ և իրարանցում են առաջացնում թուրքական մամուլում: Եվ եթե նախկինում իշխանությունները ուշադրության չէին արժանացնում այն հանգամանքին, որ նրանք մասնակցում էին ապրիլի 24-ի միջոցառումներին և հանդես էին գալիս ի պաշտպանություն Հայ դատի, ապա այժմ իրավիճակը փոխվել էր՝ խոսքը ուժային նախարարների մասին էր: 1981 թ. հոկտեմբերին ֆրանս-թուրքական հարաբերությունները այն աստիճան են սրվում, որ Թուրքիայի արտաքին գործերի նախարար Իլթեր Թյուրքմենը Ֆրանսիայի կառավարությանը բողոք հայտնելու նպատակով իր մոտ է հրավիրում այդ երկրի դեսպանին: Նա Շ. Էռնյուին անվանում է «անգիտակից» ու «խելագար»[386]: «Hürriyet» թերթն էլ հրապարակում է ֆրասիացի քաղաքական հինգ գործիչի՝ Շառլ Էռնյուի, Գաստեն Դեֆերի, Ժան Պոպերենիի, Ժոզեֆ Նֆրանչեսկի, Լուիս Մերմազի նկարները՝ նրանց անվանելով Թուրքիայի թշնամիներ[387]:

Ֆրանսիացի գործիչների պաշտպանությամբ հանդես են գալիս «Le Monde», «Le Figaro», «Paris Match» թերթերը: Առաջին երկուսը գրում են, որ վերը նշված ֆրանսիացի գործիչները հավատարիմ են իրենց գաղափարներին և Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում հետաքրքրություն դրսևորել սկսել են ավելի վաղ՝ մինչև սոցիալիստական կուսակցության իշանության գալը[388]: «Le Monde»-ը, խոսելով Հայկական հարցի մասին, չեշտում է, որ Թուրքիան ազգային հերոս է համարում Թալեաթ փաշային, որը

---

[384] «Առաջ», 16. XI. 1981:
[385] Նույն տեղում:
[386] «Արարատ», 24. VIII.1984:
[387] «Hürriyet», 15. X.1981.
[388] «Արարատ», 24. VIII.1984:

ծրագրել և իրականացրել է 1915 թ. Հայոց ցեղասպանությունը[389]: «Paris Match»-ն էլ հիշեցնում էր, որ 1914 թ. Օսմանյան կայսրությունում ապրում էր 2 400 000 հայ, մինչդեռ 1920-ական թվականներին երկրում մնացել էր 67 հազար: «Թուրքահայաստանը գործնականում ջնջվել է աշխարհագրական քարտեզի վրայից»[390], - ահա թերթի եզրահանգումը: Իսկ Անկարայում Ֆրանսիայի դեսպան Ժ. Ռուլոնը թուրք լրագրողներին տված հարցազրույցում հայտարարում է, որ իր երկրի կառավարությունը թուրքիային բացեիբաց տեղեկացրել է, որ համաձայն չէ Հայկական հարցում նրա որդեգրած քաղաքականությանն ու հատկապես Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին «տեղի ունեցած ողբերգական իրադարձություններին տված գնահատականներին»[391]:

Այսպիսով, Հայոց ցեղասպանության հարցում Ֆրանսիայի դիրքորոշումը հստակ էր, չնայած կառավարությունը չէր շտապում այն օրինականացնել: Նկատենք, որ խնդրո առարկա թեման բարձրացվում էր անմիջականորեն ֆրանսիացի գործիչների կողմից, և շատ հաճախ քաղաքական դաշտում ֆրանսահայերը չէին երևում: Եվ այնպիսի թյուր տպավորություն էր ստեղծվում, որ վերջիններս կապ չունեին տեղի ունեցող զարգացումների հետ, և որ երկրի քաղաքական ուժերն ընդամենը պաշտպանում էին իրենց քաղաքացիների շահերը: Մինչդեռ իրականում ֆրանսահայերի դերը բավականին մեծ էր, և երկրի կառավարությունը, այդ թվում՝ նախագահը հաշվի էին նստում հատկապես այն իրողության հետ, որ հայկական համայքը բավականին մեծ ընտրազանգված է: Այդ են վկայում քաղաքական գործիչների հայտարարությունները և մամուլում տեղ գտած հրապարակումները:

1982 թ. ֆրանսիական մամուլը հաղորդում էր, որ Հայոց ցեղասպանության 67-րդ տարելիցի առիթով Ֆրանսիայում բազմահազարանոց ցույցեր են տեղի ունեցել: Մարսելում զոհերի հիշատակին կանգնեցված հուշակոթողի մոտ տեղի ունեցած հանդիսության ժամանակ Ներքին գործերի նախարար Գ. Դեֆերը, իր խոսքն ուղղելով ֆրանսահայ չուրջ 300 հազարանոց համայնքին, բացատրել է ֆրանսիական կառավարության պահվածքը. «Ֆրանսան պիտի օդնե ձեզի ձեր դատի հաղթանակին համար, սակայն ձեղմէ

---

[389] Նույն տեղում:
[390] Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առջև, հ. 2, Երևան, 1983, էջ 451: «Paris Match» (Paris), 04. XI.1981.
[391] «Milliyet», 06. III. 1982.

կխնդրեմ հասկանալ, թե ֆրանսական կառավարությանը չի կրնար ընդունիլ, որ բարուրյան դիմվի ձեր դատին նման վեհ դատի մը հաղթանակին համար»[392]: Նա հայտնում է նաև, որ կառավարությունը հավանություն է տվել Փարիզի կենտրոնում հայկական կոթող կառուցելուն:

Մամուլը հիշեցնում է, որ Փարիզի և Անկարայի միջև լարվածություն է առաջացել 1981 թ. հոկտեմբերին հայ հասարակայնության առջև պաշտպանության նախարար Շ. Էռնյուի արած հայտարարությունից հետո, որում նա ասում է. «Գերման վարչապետ մը ծունկի եկավ ներողություն խնդրելու համար հրեաներու դեմ նացիներուն կողմե գործված ոճիրներու համար. ե՞րբ թուրք մը միևնույնը պիտի ընե»[393]:

1984 թ. հունվարի 7-ին Սուրբ Ծննդյան կապակցությամբ Վիեն քաղաքի հայկական գաղթօջախ այցելության ժամանակ նախագահ Ֆ. Միտերանը, խոսելով Հայոց ցեղասպանության մասին, հայտարարում է, որ դժվար է 1915 թ. ցեղասպանության հետքերը մաքրել[394]:

1984 թ. գարնանը Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա.-ն եվրոպական գաղթօջախներով իր շրջագայության ընթացքում մասնակցում է Փարիզի շրջակայքում՝ Ալֆորվիլ քաղաքում, Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշարձանի բացմանը: Ֆրանսահայերից բացի, արարողությանը ներկա էին քաղաքապետ Ժոզեֆ Ֆրանչեսկին և պետական նախարարներ[395]:

Հուշարձանի բացումը ֆրանս-թուրքական հարաբերություններում նոր ճգնաժամի պատճառ է դառնում: Մայիսի 2-ին՝ կառավարության նիստից հետո, պաշտոնական Անկարան բողոքի նոտա է ներկայացնում Ֆրանսիային կառավարության, իսկ մայիսի 3-ին էլ չեղյալ է հայտարարում առևտրի նախարար Էդիտ Կրեսոնի Անկարա կատարելիք պաշտոնական այցը[396]: Եվ չնայած պաշտոնական Փարիզը ուղիներ էր փնտրում ֆրանս-թուրքական հարաբերությունները բարելավելու նպատակով, այնուամենայնիվ, չարունակում էր հայտարարել, որ Ֆրանսիան ընդունում է 1915 թ. Օսմանյան կայսրությունում ապրող հայերի ցեղասպանության իրողությունը[397]:

---

392 «Շարժում», 12. V. 1982:
393 Նույն տեղում:
394 «Ջարթօնք», 10. I. 1984:
395 «Ջարթօնք», 5. V.1984:
396 Նույն տեղում:
397 Նույն տեղում:

Չկարողանալով կանխել ցեղասպանության նոր հուշարձանի բացումը՝ Անկարան իր բողոքն է հայտնում ոչ միայն Ֆրանսիայի, այլև ԽՍՀՄ-ի կառավարությանը: 1984 թ. Մայիսին Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունը Անկարայում ԽՍՀՄ-ի դեսպան Վլադիմիր Լավրովին իր դժգոհությունն է արտահայտում Վաղգեն Ա-ի Փարիզ կատարած այցի կապակցությամբ: Ի պատասխան՝ խորհրդային դիվանագետը հայտնում է, որ Ամենայն հայոց կաթողիկոսն ազատ է իր գործունեության մեջ, և որևէ մեկը իրավունք չունի արգելքներ դնել նրա առջև, հատկապես՝ այցելությունների հարցում[398]:

Այսպիսով, Թուրքիայի արտաքին գործերի նախարարության փորձերը՝ Ֆրանսիայում հայոց ցեղասպանության հարցի շուրջ ընթացող գործընթացները, մասնավորապես 1915 թ. զոհերի հիշատակին նվիրված հուշարձանների տեղադրումը կասեցնելու ուղղությամբ, դրական արդյունք չեն տալիս: Ընդ որում՝ 1986 թ. Փետրվարի 16-ին Մոնպելիե քաղաքում հանդիսավորությամբ բացվում է ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հերթական հուշարձանը, որի վրա հայերեն ու ֆրանսերեն գրված է. «1,5 միլիոն հայ նահատակներու հիշատակին»[399]: Հուշակոթողը կազմված է 12 սյուներից, որոնց վրա փորագրված են Եղեռնի զոհ նշանավոր հայերի անունները: Թուրքական մամուլը հուշակոթողի կառուցումը որակում է՝ «Ֆրանսիայի հերթական վիրավորանքը»[400]:

Պաշտոնական Փարիզը շարունակում էր հանդես գալ հայանպաստ հայտարարություններով: 1985 թ. ապրիլի 24-ին Մեծ եղեռնի 70-րդ տարելիցի կապակցությամբ Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Ռոլան Դյուման երկրի Ազգային ժողովում վերահաստատում է նախագահ Ֆ. Միտերանի՝ 1984 թ. Հունվարի 7-ին Հայոց ցեղասպանության վերաբերյալ արտահայտած հրապարակային դիրքորոշումը[401]:

Նույն օրը Լիոնում շուրջ երեք հազար մարդ, այդ թվում՝ Ֆրանսիացի պաշտոնյաներ, հավաքվել էին քաղաքի Սեն-Ժան մայր տաճարում: Պատարագի արարողության ավարտից հետո թափորն ուղևորվում է Բելքուռ հրապարակ: Այստեղ՝ Ծիծեռնակաբերդի հուշարձանի նմանակ կոթողի մոտ, ցեղասպանությունը վերապրած

---

[398] «Զարթօնք», 18. VIII.1984:
[399] «Լրաբեր» (Նյու Յորք), 8. III. 1986:
[400] «Արարատ», 22. III. 1986:
[401] «Արարատ», 29. IV. 1985:

70 տարեց տղամարդ վառվող ջահերը փոխանցում են պատանիներին: Արարողությունը խորհրդանշական էր. 70 տարեցները խորհրդանշում էին պայքարի 70 տարին, և պայքարի չարունակականությունը: Այդ կերպ տարեց ֆրանսահայերը հասկացնում էին, որ եթե իրենց օրոք Հայոց հարցը չլուծվի, ապա պայքարը չարունակելու են ապագա սերունդները՝ մինչև վերջնական հաղթանակի հասնելը[402]:

Հայոց ցեղասպանության 70-րդ տարելիցը նշում են նաև Իտալիայում, Շվեյցարիայում, Գերմանիայում, Արգենտինայում, ԱՄՆ-ում, Կանադայում և հայաշատ այլ երկրներում: Ապրիլի 27-ին «Hürriyet» թերթն առաջին էջում տպագրում է «Կալիֆորնիայի մեջ Հայաստան» վերնագրով հոդված, որում անդրադառնում է նահանգում Եղեռնի տարելիցի առթիվ տեղի ունեցած ցույցերին: Նկարագրելով Լոս Անջելոսում կայացած ցույցը՝ թերթն իր զայրույթն է հայտնում Կալիֆորնիայի նահանգապետ Ջորջ Դոքմենջյանի[403] կողմից ապրիլի 24-ը սուգի օր հայտարարելու և այս առթիվ հանրային չենքերի վրայից ԱՄՆ-ի դրոշները իջեցնելու համար: Թերթը մանրամասն նկարագրում է Բեյրութում տեղի ունեցած «քաղաքական հավաքը» և մեջբերումներ է կատարում արտասանված ելույթներից: Նկարագրելով Նյու Յորքում, Կանադայում, Փարիզում և հայկական այլ գաղթօջախներում տեղի ունեցած ցույցերը, արձանագրելով, որ թուրքական դրոշներն ամենուրեք այրվել են, վիրավորական արտահայտություններ էին հնչել Թուրքիայի հասցեին, «Hürriyet»-ը կառավարությունից պահանջում է հակաքայլեր ձեռնարկել[404]: Թուրքական հասարակությանը հատկապես զայրացնում էր այն իրողությունը, որ հայերի հետ ցույցի էին դուրս գալիս այլազգի ներկայացուցիչներ, որոնք նույնպես հանդես էին գալիս Հայոց ցեղասպանության ճանաչման պահանջով:

Պաշտոնական Անկարան և թուրք հանրությունը անհանգստացած էին ԱՄՆ-ում ընթացող գործընթացներից: Նրանք վախենում էին, որ դրանք կարող են Ֆրանսիայի նման դուրս գալ վերա-

---

402 Նույն տեղում:

403 Ջորջ Դոքմենջյան - հայազգի ամերիկյան պետական ու քաղաքական գործիչ, իրավաբան: 1967-1979 թթ. Կալիֆորնիայի նահանգային սենատոր, 1979-1988 թթ.՝ ընդհանուր դատախազ: 1982-1991 թթ. զբաղեցրել է Կալիֆորնիայի նահանգապետի պաշտոնը: 1985 թ. Ջ. Դոքմենջյանի նախաձեռնությամբ ապրիլի 24-ը նահանգում հայտարարվում է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր: 1990 թ. նա հատուկ հայտարարագրով ապրիլի 24-ը հռչակում է Հիշատակի պետական օր և համայն մարդկությանը կոչ է անում միանալ հայ զոհերի հիշատակի այդ տուրքին:

404 «Hürriyet», 27. IV. 1985.

հսկողությունից: Եվ չնայած այն փաստին, որ 1984 թ. Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում որոշակի հաջողություններ են գրանցվում նաև ԱՄՆ-ում, սակայն Սպիտակ տան վարչակազմի քաղաքականությունը չէր փոխվել. պաշտոնական Վաշինգտոնը բացահայտ թուրքամետ քաղաքականություն էր վարում, և միայն ընտրությունների նախօրեին էին ամերիկյան քաղաքական գործիչները շահարկում հայկական հարցը՝ փորձելով ստանալ ամերիկահայերի ձայները: Այդ է վկայում 1980 թ. ապրիլի 15-ին «Հայրենիք» թերթին ԱՄՆ նախագահի թեկնածու Ռոնալդ Ռեյգանի հղած նամակը, որում խոսվում է Հայոց ցեղասպանության մասին, ապա՝ նշվում. «1980-ը պետք է ըլլայ այն ժամանակաշրջանը՝ երբ ամերիկահպատակ հայերու ձայները լսուին կառավարական խորհուրդէն ներս. պետք է ըլլայ այն չրջանը՝ երբ ամերիկացիք եւ ազատ աշխարհի իրենց դաշնակիցները որոշում առնեն թէ 1915-ի ողբերգութիւնը ամենեւին պիտի չկրկնուի: Ես կը միանամ ամերիկահայ համայնքին՝ հանդիսավոր յիշատակութեանը համար 1915-ի նահատակներուն»[405]: Իրանյան զարգացումները[406] ազդում են նախագահ Ջ. Քարտերի հեղինակության վրա և ԱՄՆ-ի նախագահական ընտրություններում հաղթում է Ռ. Ռեյգանը: Նա, ինչպես իր բոլոր նախորդները, չարունակում է երկրի որդեգրած քաղաքական ուղին՝ չնայած ժամանակ առ ժամանակ հանդես էր գալիս ի նպաստ Հայ դատի: 1981 թ. ապրիլի 22-ին ամերիկահայերին ուղղված թիվ 4838 ուղերձում Ռ. Ռեյգանն օգտագործում է «Հայոց ցեղասպանություն» ձևակերպումը[407]: Ապրիլի 28-ին Հայոց ցեղասպանության 66-րդ տարելիցի հետ կապված մեծ թվով օրենսդիրներ կոնգրեսում հանդես են գալիս ի նպաստ Հայոց ցեղասպանության ճանաչման, իսկ զոհերին նվիրված հիշատակի աղոթքը կարդում է ԱՄՆ-ի արևմտյան թեմի առաջնորդ Վաչե արք. Հովսեփյանը: Արարողությունն ավարտում է կոնգրեսական Ջորջ Դանելսոնը՝ հետևյալ խոսքերով. «Աշխարհը չպետք է մոռանա 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը՝ 1915 թ. Հայերի ցեղասպանությունը»[408]:

---

[405] «Հայրենիք», 16. IV. 1980:

[406] Հիշեցնենք, որ 1979 թ. փետրվարի 4-ին Թեհրանում արմատական ուղղության ուսանողությունը գրոհում է ԱՄՆ-ի դեսպանատան վրա և աշխատակիցներին պատանդ վերցնում: Վերջիններիս ազատ են արձակում միայն 1981 թ. հունվարին:

[407] «The New York Times», 25. IV. 1981.

[408] Մսըրլեան Ջ., Ամերիկայի Միացյալ Նահանգներու արտաքին քաղաքականութիւնը եւ Հայկական հարցը (1900-2009), էջ 57:

Թուրքիայի կառավարությունը հերթական անգամ սպառնում է ԱՄՆ-ին, որ նման դիրքորոշումը կարող է թուրք-ամերիկյան հարաբերություններում հանդեցնել լուրջ բարդությունների՝ ընդհուպ Թուրքիայի ՆԱՏՕ-ից[409] դուրս գալուն: Մուսուլմանական երկրներից ՆԱՏՕ-ի միակ անդամը Թուրքիան էր, որը նաև աշխարհաքաղաքական կարևոր դիրք էր զբաղեցնում: Իհարկե, նման սպառնալիքները նպաստում էին հայերի ցեղասպանության հարցի քննարկման հետաձգմանը: Նկատենք, որ Թուրքիայի կառավարությունը միայն սպառնալիքներով չէր բավարարվում, նաև ակտիվ քայլեր էր ձեռնարկում դիտական ոլորտում: Այդպիսին էր, օրինակ, «69 դիտնականների» հայտարարությունը, որի համար խթան հանդիսացավ 1980 թ. մարտի 29-ին Թուրքիայի ու ԱՄՆ-ի միջև տնտեսության և պաշտպանության ոլորտներում համագործակցության պայմանագրի ստորագրությունը: Դրանով ԱՄՆ-ի միջին-նարևելյան քաղաքականության մեջ Թուրքիային վերապահվում էր հատուկ ընդգծված դեր:

ԱՄՆ-ի պետքարտուղարությունն ամեն կերպ պաշտպանում էր ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիայի շահերը: 1982 թ. օգոստոսի 2-ին ԱՄՆ-ի արտաքին գերատեսչության «Bulletin» թերթը հրապարակում է «Հայկական ահաբեկչություն. ուրվագիծ» վերնագրով փաստաթուղթը[410]: Տեղեկանքում ներկայացվում էր 1975-1982 թթ. ՀԱՀԳԲ-ի և ՀՅԱՄ-ի ղեկավար պայքարը՝ նշելով, որ վերջիններս ստանձնել են «170 ահաբեկչական դեպքերի պատասխանատվությունը»[411]: Փաստաթղթին կցված է հավելված, որի բովանդակությունը հատուկ քննարկման թեմա է դառնում ԱՄՆ-ի սենատում: Հավելվածում խոսվում էր այն մասին, որ Հայոց ցեղասպանության վերաբերյալ փաստաթղթերը կարող են լինել ոչ հստակ, և «քանի որ 1915 թ. Փոքր Ասիայում տեղի ունեցած իրադարձությունները կասկածահարույց են, պետքարտուղարությունը հավանություն չի տալիս այն պնդումներին, թե թուրքական կառավարությունը ցեղասպանություն է իրականացրել հայերի նկատմամբ»[412]: Նման փաստարկի համար հիմք է հանդիսանում վերը նշված «69 դիտնականների» հայտարարությունը, որով կասկածի տակ էր դրվում

---

[409] Նույն տեղում:
[410] Armenian Terrorism: A Profile, U.S. Department of State Bulletin, no.2065, August 1982, pp. 31-35, https://babel.hathitrust.org/cgi/pt?id=msu.31293008122362;view=1up;seq=35
[411] Նույն տեղում, էջ 31:
[412] Նույն տեղում, էջ 35:

Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության փաստը[413]: Մինչդեռ իրականում, այդ, «69 դիտնականներից» միայն չորսն են իրենց ուսումնասիրություններում անդրադարձել ցեղասպանության ժամանակաշրջանին. նրանք են՝ Ստան Ջորդ Շոուն, նրա ազգությամբ թուրք կինը՝ Եզալ Կուրալ Շոուն, վերջիններիս նախկին ուսանող Ջ. Մակարտին և Ֆ. Ստոդարտը՝ Միջին Արևելքի ինստիտուտի տնօրենը: Հետաքրքրական է, որ Հայտարարության տակ ստորագրած դիտնականների մեծ մասն իրենց ուսումնասիրությունների համար դրամաշնորհներ են ստացել թուրքական կազմակերպություններից:

«69 դիտնականների» այս ցուցակը ստիպել է Ամերիկայի հայկական կազմակերպություններին կատարել հետաքննություն: Հայկական համագումարի ուսումնասիրությունների արդյունքում պարզվում է, որ Հայտարարության տակ ստորագրած դիտնականներից չատերը անգամ տեղյակ չէին, որ դրա տակ դրված են իրենց ստորագրությունները [414]:

Ամերիկյան մամուլում հավելվածի չուրջ ծավալված քննարկումները, հատկապես ամերիկահայերի և ամերիկացի սենատորների ու կոնգրեսականների ներկայացրած բողոքները «Bulletin»-ի խմբագրությանը ստիպում են հաջորդ՝ 1983 թ. սեպտեմբերյան համարում պաշտոնապես հերքում տալ՝ նշելով, որ ««Հայկական ահաբեկչություն. ուրվագիծ» տեղեկանքը չի արտահայտում պետքարտուղարության դիրքորոշումը և ներկայացնում է այն կազմած հեղինակի սեփական կարծիքը»[415]:

Հիմնվելով հայկական կազմակերպությունների նամակ-դիմումների վրա՝ ԱՄՆ-ի Ներկայացուցիչների տան նախագահ Թոմաս Օ՛Նիլը 1982 թ. դեկտեմբերի 9-ին նամակ է հղում ԱՄՆ-ի պետքարտուղար Ջորջ Շուլցին՝ առաջարկելով գրավոր հստակեցնել 1915-1923 թթ. Հայոց ցեղասպանության վերաբերյալ պետքարտուղարության պաշտոնական դիրքորոշումը[416]: Հստակ պատասխան չստանալով՝ նա ենթադրում է, որ այդ կառույցի քաղաքականությունը չի փոխվել[417]: Ավելի ուշ՝ Մեծ եղեռնի 68-րդ տարելիցի կապակցությամբ ելույթ ունենալով Կոնգրեսում, վստահեցնում է,

---

[413] «Լրաբեր», 15. X.1982:
[414] Նույն տեղում:
[415] Editor's Note, U.S. Department of State Bulletin, vol. 82, no.2066, September 1982, Content https://babel.hathitrust.org/cgi/pt?id=osu.32437010892731;view=1up;seq=207
[416] «Ձարթօնք», 25. II.1983:
[417] «Ձարթօնք», 13. IV.1983:

որ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը չարունակելու է մնալ Ներկայացուցիչների պալատի ուշադրության կենտրոնում: Ըստ նրա՝ «քանի դեռ իրենք աչալուրջ են, անհնարին կլինի թաքցնել հայերի հետ կատարվածը»[418]:

Միացյալ Նահանգների օրենսդիրները պատրաստ էին «թուրքերի կողմից հայերի ջարդերը» որակել որպես ցեղասպանություն, սակայն Սպիտակ տան վարչակազմն այդ հարցում հստակ դիրքորոշում ուներ: Դա են վկայում 1980-ականների գործընթացները: Նախ՝ հիշենք, որ 1983 թ. ապրիլի 21-ին ԱՄՆ-ի կոնգրեսում ի նպաստ Հայոց ցեղասպանության ճանաչման հանդես եկան 24 սենատոր և 65 կոնգրեսական: Նրանց պահանջն էր՝ պաշտոնապես ընդունել Հայոց ցեղասպանությունը և ապրիլի 24-ը հռչակել զոհերի հիշատակի օր[419]: Արդյունքում՝ կոնգրեսական էնթոնի Կոելհոն Ներկայացուցիչների պալատ է ներկայացնում 247 բանաձևը[420]: Պետքարտուղարության ճնշման ներքո Կոնգրեսում այդ բանաձևն այդպես էլ չի ընդունվում:

Ներկայացուցիչների պալատում 247 բանաձևի քննարկումների հետ կապված՝ հետաքրքիր տեղեկություններ կան ամերիկացի պաշտոնաթող դիվանագետ Ա. Ջ. Կարերի՝ 2009 թ. դեկտեմբերին տված հարցազրույցում[421]: 1984-1986 թթ. ԱՄՆ պետքարտուղարությունում նա զբաղվում էր Թուրքիայի հետ հարաբերությունների համակարգմամբ: Ըստ նրա, երբ 1983 թ. կոնգրեսական Է. Կոելհոն Ներկայացուցիչների պալատ էր ներկայացրել հիշյալ բանաձևը, թուրքական իշխանություններն ակտիվ չփումների մեջ են եղել ամերիկյան վարչակազմի ներկայացուցիչների հետ՝ բանաձևի ընդունումը կանխելու համար: Մասնավորապես, թուրքական իշխանություններն ԱՄՆ պետքարտուղարին հայտնել են, որ բանաձևի ընդունումը զգալի վնաս կհասցնի երկկողմ հարաբերություններին: Ինչպես նշում է նախկին դիվանագետը, իրեն հանձնարարվել է քայլեր ձեռնարկել բանաձևի ընդունումը կանխելու ուղղությամբ: Ա. Կարերի հաղորդած տեղեկությունների համաձայն՝ այդ հարցում որոշակի օժանդակություն է ստացել հրեական լոբբիս-

---

[418] Նույն տեղում:

[419] «Լրաբեր», 26. IV.1983: Մսըրլեան Ջ., Ամերիկայի Միացյալ Նահանգներու արտաքին քաղաքականութիւնը եւ Հայկական հարցը (1900-2009), էջ 60:

[420] A joint resolution designating a day of remembrance for victims of genocide, http://thomas.loc.gov/cgi-bin/bdquery/z?d098:SJ00087

[421] Former Diplomat Reveals Secret State Dept. Attacks on 1980s Genocide Resolutions, http://www.armenianweekly.com/2009/12/09/former-diplomat-reveals-secret-state-dept-attacks-on-1980%E2%80%99s-genocide-resolutions/

տական կազմակերպութիւններից, որոնք չէին ցանկանում «ցեղասպանութեան ենթարկվածի կարգավիճակը կիսել այլ ժողովուրդների հետ»[422]:

247 բանաձևը օրակարգում հայտնվեց մեկ տարի անց՝ 1984 թ. ապրիլի 11-ին, սակայն արժանացավ նախորդի ճակատագրին: ԱՄՆ-ի արտաքին գերատեսչությունն այդ հարցում իր գործողությունները մեկնաբանում էր հետևյալ կերպ. «Առաջին՝ ոչ մեկ արժէք կը տեսնէ 1915-ի դէպքերու բնորոշման մէջ, երկրորդ՝ բանաձեւը ժխտական հետեւանքներ պիտի ունենայ Մ. Նահանգներ – Թուրքիա հարաբերութիւններուն մէջ, եւ երրորդ՝ բանաձեւերու վաւերացումը պիտի քաջալերե ահաբեկչութիւնները»[423]:

Ամերիկահայերը, հաշվի առնելով այն փաստը, որ 1984 թ. ընտրական տարի է, լայնածավալ գործունեություն են ծավալում և հայկական կազմակերպությունների (Հայկական համագումար ու Հայ դատի կոմիտե), Կալիֆորնիայի նահանգապետ՝ Ջորջ Դուքմեջյանի և ազդեցիկ այլ ամերիկահայերի ջանքերի շնորհիվ սեպտեմբերի 10-ին բանաձևը կրկին հայտնվում է Կոնգրեսի օրակարգում: Ավելին՝ Ներկայացուցիչների պալատը հավանության է արժանացնում «Մարդու կողմից մարդու նկատմամբ անմարդկային վերաբերմունքի հիշատակման միջազգային օր» անցկացնելու թիվ 247 բանաձևը[424]:

ԱՄՆ-ի կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի ընդունած այս որոշումը լայն արձագանք է գտնում Թուրքիայում: Երկրի նախագահ Քենան Էվրենը ցասումնալից նամակ է գրում Ռոնալդ Ռեյգանին, որում ամերիկյան գործընկերոջ ուշադրությունն է հրավիրում երկկողմանի հարաբերությունների ոլորտում բացասական հետևանքների անխուսափելիության վրա՝ նման «անչրջահայաց քայլի» դեպքում[425]: Սեպտեմբերի 12-ին էլ Անկարայում ԱՄՆ դեսպան Շորաուս Հյուփեն հրավիրվում է Թուրքիայի ԱԳՆ, որտեղ այդ գերատեսչության ղեկավար Վ. Հալեֆօղլուն նրան բողոքի նոտա է ներկայացնում[426]: Այլ կերպ ասած՝ հայ դատի վերաբերյալ Թուրքիայի որդեգրած սցենարը կրկնվում է:

---

[422] Նույն տեղում:
[423] «Ջարթօնք», 20. IV.1984:
[424] A resolution expressing the sense of the House of Representatives that the foreign policy of the United States should take account of the genocide of the Armenian people with the objective of preventing any future genocide anywhere in the world, and for other purposes. http://thomas.loc.gov/cgi-bin/bdquery/z?d098:HE00587
[425] Şenol Kantarcı, Amerika Birleşik Devletleri'nde Ermeniler ve Ermeni Lobisi, İstanbul, 1911, s. 208.
[426] «Milliyet», 12. IV. 1984.

Դիվանագիտական ճնշումից բացի, թուրքական մամուլը հակաամերիկյան արշավ է ծավալում: Չնայած այդ ամենին՝ ԱՄՆ-ի սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը վավերացնում է բանաձևը և փաստաթղթում նույնիսկ հավելում կատարում, ըստ որի՝ ամերիկյան արտաքին քաղաքականությունը նկատի է առնելու Հայոց ցեղասպանության իրողությունը: Սակայն այս անգամ ևս միջամտում է պետքարտուղարությունը՝ Սենատին հասկացնելով, որ չպետք է նեղացնել ԱՄՆ-ի հավատարիմ դաշնակից Թուրքիային[427]: Արդյունքում՝ Սենատ ուղարկված բանաձևն այդպես էլ չի քննարկվում:

1985 թ. մարտի 24-ին ԱՄՆ-ի նախագահ Ռ. Ռեյգանը թուրքական «Cumhuriyet» թերթին տված հարցազրույցում ասում է, որ չէր պատրաստվում վավերացնել Հայոց ցեղասպանության առնչվող բանաձևը, եթե այն ընդունվեր Սենատի կողմից[428]: Այս հայտարարությունը քննադատվում է ինչպես ամերիկահայ, այնպես էլ ամերիկյան մամուլի և օրենսդիրների կողմից: Այսպես, «The New York Times» թերթը, անդրադառնալով Հայոց ցեղասպանության հարցում Սալիտակ տան վարչակազմի որդեգրած պահվածքին, դատապարտում է հատկապես պետքարտուղարության դիրքորոշումը: Խնդրո առարկա հարցում պարբերականն անընդունելի է համարում «ենթադրյալ» բառի օգտագործումը և խորհուրդ է տալիս կառավարությանը «հասկանալ հայերի ցավը»[429]: «The Boston Globe»-ն էլ գրում է, որ նման հայտարարություններով ԱՄՆ-ի կառավարությունը վիրավորում է ցեղասպանության զոհերին: Թերթն ամերիկացի պաշտոնյաներին առաջարկում է ներողություն հայցել հայերից՝ «անզգա վերաբերմունքի համար»[430]:

1980-ական թվականների երկրորդ կեսին Հայկական համադումարի գործունեության արդյունքում ԱՄՆ-ում սկսվում է Հայոց ցեղասպանության ճանաչման հերթական ալիքը: 1986-1987 թթ. Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչում են Մասաչուսեթս (1986 թ. փետրվարի 19-ին՝ նահանգապետ Մայքլ Դուկակիսի հայտարարությամբ), Միչիգան (1986 թ. ապրիլի 13-ին՝ նահանգապետ Ջեյմս Բլենչարդի հայտարարությամբ) և Մերիլենդ (1987 թ. ապրիլի 24-ին՝ նահանգապետ Ուիլյամ Շեֆերի հայտարարությամբ) նահանգները:

---

427 «Wall Street Journal» (New York), 02. X. 1984.
428 «Cumhuriyet», 24. III. 1985.
429 «The New York Times», 29. IV. 1985.
430 «The Boston Globe» (Boston), 18. IV. 1985.

Վերլուծելով 1980-ական թվականներին Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության ճանաչման խնդրի շուրջ ձեռնարկված միջոցառումները՝ հանգում ենք այն եզրակացության, որ միջազգային հանրության չրջանում այդ հարցերի վերաբերյալ փոխվել էր վերաբերմունքը, ինչը դժվարեցնում էր Թուրքիայի փորձերը՝ կանխելու օտարերկրյա խորհրդարաններում և միջազգային կազմակերպություններում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացները: Ստորև անդրադառնում ենք այդ գործընթացին:

Ինչպես վերը նշվել է, 1975 թ. ապրիլի 24-ին Կիպրոսի Ներկայացուցիչների պալատը բանաձև է ընդունում այդ օրը Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր նշելու մասին: 1982 թ. ապրիլի 29-ին նույն մարմինը հայ ժողովրդի նկատմամբ իրականացված ոճիրը բնորոշում է որպես ցեղասպանություն: 1982 թ. բանաձևը կազմված էր սեղմ նախաբանից և հինգ հոդվածից. «Կիպրոսի Ներկայացուցիչների պալատը 1915 թ. սկսված և թուրքական անցյալ վարչակարգի կողմից կազմակերպված հայ ժողովրդի ցեղասպանության տարելիցի կապակցությամբ. 1) սարսափով նշում է և անկեղծորեն դատապարտում հայ ժողովրդի հանդեպ կատարված ոճիրը, որը բնութագրվում է որպես ցեղասպանություն և որն արմատախիլ արեց հայերին իրենց նախնիների հողերից: 2) պաշտպանում է հայ ժողովրդի անխախտ իրավունքների լիարժեք վերականգնումը: 3) ընդգծում է երկարատև բարեկամական համակեցությունը և եղբայրական համագործակցությունը Կիպրոսի հայերի հետ, ինչպես նաև նրանց ներդրումը մեր երկրի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում: 4) Համարում է այս համակեցությունն իբրև Կիպրոսի բոլոր ժողովուրդների խաղաղ համակեցության իրական հնարավորության ակներևություն՝ անկախ լեզվի, կրոնի կամ ազգային ծագման: 5. Միաժամանակ անհրաժեշտ է համարում դատապարտել նույն ոճիրը, որը կատարվեց Կիպրոսի ժողովրդի հանդեպ՝ 1974 թ. թուրքական ներխուժումից հետո»[431]:

1983 թ. հուլիսի 24-ից օգոստոսի 10 Կանադայի Վանկուվեր քաղաքում տեղի է ունենում Եկեղեցիների համաշխարհային խորհրդի վեցերորդ համագումարը, որին մասնակցում էր նաև Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի ղեկավարած պատվիրակությունը: Վերջինս առաջարկում է, որ խորհրդի Մարդկային իրավունքների հանձնաժողովը բանաձև ընդունի «Հայերի դեմ

[431] Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը- arminter. am/?p=940

գործած ցեղասպանության վերաբերյալ»[432]: Համագումարը, որին մասնակցում էին հարյուր երկրի քրիստոնյա եկեղեցիների երեք հարյուր պատգամավոր, ձայների մեծամասնությամբ ընդունում է «Հայոց ցեղասպանության մասին» զեկույցը: «... Մենք ևս մեկ անգամ պետք է հիշենք դարասկզբին Թուրքիայում մեկուկես միլիոն հայերի ողբերգական կոտորածները և մյուս կես միլիոնի բռնագաղթն իրենց պատմական հայրենիքից»[433], - արձանագրված է փաստաթղթում: Մի քանի տարի անց՝ 1989 թ. մայիսին, Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի Սան-Անտոնիոյում (ԱՄՆ) կայացած համագումարը հատուկ որոշում է ընդունում հայերի ցեղասպանության մասին՝ կոչ անելով խորհրդի բոլոր անդամներին «դիմել իրենց երկրների կառավարություններին ճնշում գործադրելու Թուրքիայի վրա՝ հայերի ցեղասպանության փաստը ճանաչելու նպատակով»[434]: Թուրքիայից նաև պահանջվում էր «ազատել զավթած Հայաստանը և ապահովել իրենց հայրենիք վերադառնալու սփյուռքահայերի իրավունքը», «ձեռնամուխ լինել վերջին 75 տարում երկրում ավերված ավելի քան երկու հազար տաճարների ու եկեղեցիների վերաշինմանն ու վերանորոգմանը»[435]:

1984 թ. ապրիլի 13-16-ին Փարիզի Սորբոնի համալսարանում ժողովուրդների մշտական ատյանը[436] դատական նիստ է հրավիրում, որտեղ անդրադառնում է հայերի ցեղասպանության խնդրին: Դատարանի կազմում ընդգրկվել էին միջազգային ճանաչում ունեցող, ազգությամբ ոչ հայ 13 անձ, այդ թվում՝ Խաղաղության նոբելյան մրցանակակիրներ իռլանդացի Շոն Մաք-Բրայդը և արգենտինացի Ադոլֆո Պերես Էսքիվելը, Կենսաբանության գծով նոբելյան մրցանակակիր ամերիկացի Ջորջ Ուայլդը[437]: Հարցը ներկայացնելիս ելույթներով հանդես են եկել պրոֆ. Ռ. Հովհաննիսյանը, Թ.

---

[432] «Արարատ», 19 X. 1983:

[433] Բարսեղյան Լ., Տարեգրություն Հայոց ցեղասպանության պաշտոնական դատապարտման և ճանաչման (1915-2003 թթ.), Երևան, 2004, էջ 44:

[434] Բարսեղյան Լ., Միջազգային հանրությունը դատապարտում է Հայոց ցեղասպանությունը, Երևան, 1998, էջ 26:

[435] Կիրակոսյան Ա., Հայկական հարցը և Հայոց ցեղասպանությունը, Երևան, 2006, էջ 37:

[436] Ժողովուրդների մշտական ատյանը ստեղծվել է 1976 թ. Հռոմում ժողովուրդների ինքնագիտակցության բարձրացմանն աջակցելու, համաշխարհային հասարակայնության կողմից քաղաքական որոշակի խնդիրների ընկալմանը նպաստելու, ժողովուրդներին հանուն իրենց իրավունքների պայքարի ոգեշնչելու նպատակով: Ատյանը տարբեր երկրների ներկայացուցիչներից բաղկացած հասարակական դատարան է, որի կազմում ընդգրկված են հայտնի գիտնականներ, իրավաբաններ, լրագրողներ, քաղաքական և հասարակական գործիչներ: Ատյանի ընդունած որոշումներն ունեն հանձնարարականի բնույթ (մանրամասն տես «Հայկական հարց» հանրագիտարան, Երևան, 1996, էջ 147):

[437] «Զարթօնք», 18. IV. 1984:

Հոֆմանը, Ք. Ուոքերը, Իվ Տերնոնը, ցեղասպանությունը վերապրած չորս անձինք և ուրիշներ: Ներկայացնելով թուրքական տեսակետները՝ նրանք փաստերով, վկայություններով և տրամաբանական վերլուծություններով հերքում էին դրանք և ապացուցում ցեղասպանության՝ կանխամտածված, կազմակերպված ու գործադրված լինելը[438]:

Հարցի քննարկման ժամանակ ելույթով հանդես է եկել նաև ՄԱԿ-ի Մարդու իրավունքների բաժնի նախկին տնօրեն Թեոդոր Կ. Վան Բովենը[439]: Նրա դիրքորոշումը, ինչպես նկատում են սիյուռքահայ թերթերը, վճռական դեր է ունեցել բանաձևի ընդունման գործում: Նա հայտարարում է.

«ա. Ցավալի է, որ սխալ հասկացված պետական շահերը, որոնք արտահայտվեցան Մարդկային իրավունքներու հանձնախումբի 1974-ի ժողովեն առաջ և այդ ժողովի ընթացքին, այնքան կարևոր դեր խաղացին հայ ժողովուրդի ողբերգությունը ծածկելու մեջ:

բ. Ցավալի է նաև և վնասակար մարդկային իրավունքներուն, ինչպես նաև ժողովուրդներու իրավունքներուն, երբ պետական շահերը կվտանգեն մասնագէտներու անկախությունը և պարկեշտությունը:

գ. Անհատներու, խմբակցություններու և ոչ պետական կազմակերպություններու հակազդեցության չնորհիվ, մարդկության խիղճը արթուն մնաց, պատմական ճշմարտությունը չթաղվեցավ, պետությունները սրբագրեցին իրենց կեցվածքը և նոր ճանապարհներ կբացվին ՄԱԿ-ի առջև ճշմարիտին և արդարին պաշտպանության համար»[440]:

Եռօրյա նիստերից հետո, ծանոթանալով ներկայացված փաստաթղթերին, կողմ ու դեմ վկայություններին, ինչպես նաև նկատի առնելով իրավաբանների, օրենսդիրների և պատմաբանների կարծիքները, Ժողովուրդների մշտական ատյանը՝ ապրիլի 16-ին Ցրանսիայի Սենատի դահլիճում բարձրաստիճան այրերի, միջազգային մամուլի ներկայացուցիչների և բազմահազարանոց

---

438 «Աչխարհ», 28. IV. 1984:

439 Թեոդոր Կորնելուս Վան Բովեն – հոլանդացի իրավաբան, միջազգային իրավունքի պրոֆեսոր: 1977 թ. նչանակվել է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների բաժնի տնօրեն: 1986-1991 թթ. դարձել է ՄԱԿ-ի հատուկ զեկուցող՝ Մարդու իրավունքների համընդհանուր բռնության զոհերի իրավունքների վերականգնման հարցով, իսկ 2001-2004 թթ.՝ խոշտանգումների հարցով: Նա նաև իրավաբանների միջազգային հանձնաժողովի անդամ է:

440 Թորիկյան Շ., Հայկական ցեղասպանությանը և միջազգային իրավունքը.- «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1990, № 2, էջ 12:

Հայ Հասարակության ներկայությամբ հրապարակեց կառույցի որոշումը: Ըստ որի՝ հայ ազգաբնակչության խմբերի բնաջնջումը բռնագաղթի և կոտորածի ճանապարհով ցեղասպանության Հանցագործություն է, որը չունի վաղեմության ժամկետ՝ համաձայն «Ցեղասպանության Հանցագործությունը կանխարգելելու և դրա համար պատժի մասին» 1948 թ. դեկտեմբերի 9-ի Կոնվենցիայի սահմանման: Բացի այդ, նշվում է, որ այդ Հանցագործության մեջ մեղավոր է երիտթուրքերի կառավարությունը, մյուս կողմից էլ Հայերի ցեղասպանությունը որակվում է որպես «միջազգային Հանցագործություն», որի համար պետք է պատասխանատվություն կրի թուրքական ներկայիս պետությունը, առանց պատրվակելու այն Հանգամանքը, թե նախկին ու ներկա պետությունների միջև Հաջորդականություն չկա՝ պատասխանատվությունից խուսափելու համար[441]:

Հասկանալի է, որ ժողովուրդների մշտական ատյանի որոշումը իրավաբանական որևէ ուժ չուներ, թեպետ, բավականին կշիռ ունեցող մարմին էր: Նման փաստաթղթի ընդունումը, անշուշտ, բարոյական Հաղթանակ էր սփյուռքահայության Համար, ինչը ստիպում է Հայկական կազմակերպություններին էլ ավելի ակտիվ գործունեություն ծավալել: Ավելին՝ այն մեկ անգամ էլ վկայում էր, որ միջազգային Հանրությունը ճանաչել ու դատապարտել է Հայոց ցեղասպանությունը:

1984 թ. օգոստոսի 7-ին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների Հանձնաժողովի Փոքրամասնությունների խտրականության կանխման ու պաշտպանության ենթահանձնաժողովի՝ ցեղասպանության կանխման և դրա Համար նոր զեկուցող անգլիացի՝ Բենջամեն Ուայթեքերը[442] իր ելույթում Հայտարարում է. «Ցավում եմ, որ 1973 թ. պատրաստած զեկուցագրից Հանվել է 30-րդ պարբերությունը, որում Հիշատակվում էր 20-րդ դարի կարևոր ցեղասպանություններից մեկը: Հետևաբար, իմ կողմից վերամշակված տարբերակում Հիշատակվում է նաև այդ ցեղասպանությունը»[443]:

---

[441] «Ջարթօնք», 17. V.1984: Խուրշուդյան Լ., Հայկական Հարցը, էջ 64-65:

[442] Բենջամեն Ուայթեքեր - բրիտանացի քաղաքական գործիչ, իրավաբան: 1966 թվականից բրիտանական խորհրդարանում եղել է պատգամավոր: 1971 թ. նշանակվել է Ազգային փոքրամասնությունների խմբի գործադիր տնօրեն, Հրատարակել է տասնյակ ուսումնասիրություններ համաշխարհային փոքրամասնությունների մասին, այդ թվում՝ Հայերի: 1975 թ. որպես բրիտանական փորձագետ նշանակվել է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների Հանձնաժողովի Փոքրամասնությունների խտրականության կանխման և պաշտպանության ենթահանձնաժողովում, իսկ ավելի ուշ՝ Հայերի ակտիվ մասնակցությամբ ընտրվել է Հատուկ զեկուցող:

[443] «Ջարթօնք», 01.I.1984:

1985 թ. օգոստոսի 5-30-ը ժնևում ընթացող ՄԱԿ-ի Փոքրամասնությունների խտրականության կանխման և պաշտպանության ենթահանձնաժողովի 38-րդ նստաշրջանում Բ. Ուայթեքերը ներկայացնում է վերանայված և թարմացված զեկույց, որի 24-րդ պարբերությունում Հայոց ցեղասպանությունը որակվում է որպես ցեղասպանության օրինակ 20-րդ դարում: Զեկուցագրում հիշատակվում էր 20-րդ դարի ցեղասպանության 9 դեպք: Հայերի ցեղասպանության մասին գրված էր. «... անկախ իշխանությունների և վկաների արժանահավատ դնահատմամբ, հայ բնակչության կեսից ավելին, ըստ երևույթին, սպանվել կամ մահվան քարավաններ է ուղարկվել: Դա հաստատվում է ԱՄՆ-ի, Գերմանիայի և Մեծ Բրիտանիայի արխիվային փաստաթղթերով, ինչպես նաև այն ժամանակ Օսմանյան կայսրությունում ներկայացված, այդ թվում նրա դաշնակից Գերմանիայի, դիվանագետների վկայություններով»[444]: Բանգլադեշի, Եգիպտոսի, Հորդանանի, Մարոկոյի և եվրոպական մի շարք երկների ներկայացուցիչներ իրենց ելույթներում տեղին չեն համարում փաստաթղթում Հայոց ցեղասպանության հիշատակումը՝ ակնարկելով, որ Թուրքիան հանդիսանում է ՆԱՏՕ-ի անդամ: Օգոստոսի 19-ին իրենց հիմնավորումներով հանդես են գալիս նաև՝ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Միջազգային հարցերի հանձնախմբի ներկայացուցիչ Շ. Թորիկյանը, Գերության դեմ Մարդու իրավունքների պաշտպանության ընկերության անդամ Հ. Պալյանը, Բնիկների համաշխարհային ընկերության ներկայացուցիչ Հ. Սասունյանը, Ազգերի և ժողովուրդների միջև եղբայրական միության միջազգային չարժման անդամ Ռ. Մալխասյանը[445]:

Օգոստոսի 29-ին Բ. Ուայթեքերի կազմած զեկուցագիրը քվեարկության է դրվում. 24-րդ պարբերության կողմ քվեարկում են 14 երկրի փորձագետ (Արգենտինա, Ֆրանսիա, ԱՄՆ, Մեքսիկա, Հարավսլավիա, Չինաստան, Ճապոնիա, Նիգերիա, Եթովպիա, Գանա, Հնդկաստան, Բելգիա, Կանադա և Էկվադոր) դեմ՝ մեկ (ԽՍՀՄ) և ձեռնպահ՝ 4 (Բանգլադեշ, Եգիպտոս, Հորդանան, Մարոկո)[446]:

---

[444] Revised and updated report on the question of the prevention and punishment of the crime of genocide : corrigendum / prepared by B. Whitaker, E/CN.4/Sub.2/1985/6/Corr.1
[445] «Զարթօնք», 03.IX.1985:
[446] Report of the Sub-Commission on Prevention of Discrimination and Protection of Minorities on Its Thirty-Eighth Session, Geneva, 5-30 August, 1985, http://undocs.org/en/E/CN.4/Sub.2/1985/57

Քվեարկության արդյունքները հաստատում էին, որ ենթահանձնաժողովը արձանագրել և ընդունել է Բ. Ուայթեքերի զեկուցագիրը, սակայն փաստաթուղթը այդպես էլ չի ներկայացվում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի վավերացմանը: Դա կրկին պայմանավորված էր այն հանգամանքով, որ աշխարհաքաղաքական իրավիճակը Թուրքիայի շուրջ մնում էր անփոփոխ: Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ էր ու իբրև այդպիսին՝ ԱՄՆ-ի դաշնակիցը: Թեպետ փաստաթուղթը չներկայացվեց հանձնաժողովի վավերացմանը, բայց այն արդեն հաղթանակ էր, քանի որ նստաշրջանում ընդունված զեկուցագրի 24-րդ պարբերության մեջ «1915-1916 թթ. հայերի օսմանյան ջարդը» որակվեց որպես ցեղասպանության օրինակ:

Սփյուռքահայերը հաջողություն են գրանցում նաև 1987 թ. հունիսի 18-ին, երբ Եվրախորհրդարանը հատուկ բանաձև է ընդունում Հայկական հարցի քաղաքական լուծման մասին: Նկատենք, որ կառույցում Հայոց ցեղասպանության հարցը քննարկման էր դրվել դեռևս 1983 թ. սեպտեմբերի 19-ին. սոցիալիստներ Պ. Դյուպորը (Ֆրանսիա) և Է. Գլինը (Բելգիա) ներկայացնում են «Հայկական հարցի քաղաքական լուծման վերաբերյալ» օրինագիծը: 1984 թ. հունվարի 22-ին այն քննարկվում է Եվրախորհրդարանի քաղաքական հարցերի հանձնաժողովի նիստում: Փաստաթղթում նշվում է, որ Եվրախորհրդարանը «ԵՏՀ-ի (Եվրոպական տնտեսական համայնքի. – *Ք.Մ.*) նախարարների խորհրդից պահանջում է.

- Հայտարարել ցեղասպանությունը ճանաչելու մասին,
- Հասնել այն բանին, որպեսզի թուրքական կառավարությունը ընդունի 1915 թ. ցեղասպանության պատմական փաստը,
- Համոզել Թուրքիայի կառավարությանը, որ թուրք-հայկական խնդրի արդարացի ու հիմնավոր լուծումը հնարավոր է միայն քաղաքական երկխոսության միջոցով,
- Հասնել նրան, որ ՄԱԿ-ը նույնպես ընդունի նույնանման հայտարարություն»[447]:

Հանձնաժողովի որոշ անդամներ առաջարկում են հարցն ընդգրկել Թուրքիայի վերաբերյալ Եվրախորհրդարանին ներկայացվելիք ընդհանուր զեկուցագրի մեջ: Սակայն Գերմանիայի Ֆեդե-

[447] Կիրակոսյան Ա., Ակնարկներ Հայկական հարցի և Եղեռնի միջազգային ճանաչման պատմության, Երևան, 2006, էջ 183-184:

րատիվ Հանրապետությունից ընտրված պատգամավորների դործունեության արդյունքում օրինագծի քննարկումը հետաձգվում է մինչև 1984 թ. հունիսը՝ խորհրդարանական ընտրությունների ավարտը: Դրան հետևում է 200 նշանավոր ֆրանսիացիների՝ Հայոց ցեղասպանությունը ճանաչելու վերաբերյալ ԵՏՀ-ին ուղղված պահանջը: Կոչի նախաձեռնությունը պատկանում էր «Solidarité franco-armenienne» կազմակերպությանը[448]: Փաստաթղթի տակ ստորագրել էին անվանի դրողներ, գիտնականներ, քաղաքական դործիչներ, դերասաններ, բեմադրիչներ: Կոչում, մասնավորապես, ասվում էր. «20-րդ դ. առաջին ցեղասպանությունից արդեն 68 տարի է անցել: Մինչդեռ հայերը մինչ օրս սպասում են, որ արդարությունը դործի կդրվի իրենց նկատմամբ ևս»[449]:

1984 թ. հոկտեմբերի 16-ին սոցիալիստական ֆրակցիայի նախագահ Ա. Սաբին (Ֆրանսիա), Քաղաքական հարցերի հանձնաժողովի փոխնախագահ Ժ. Շարղատը, Է. Գլինը և ուրիշներ կրկին Եվրախորհրդարանի քննարկմանն են ներկայացնում Հայկական հարցի մասին օրինագիծը: Դեկտեմբերին Հանձնաժողովը էթնիկական խնդիրների մասնագետ Ժակ Վանդեմյոլբրուքին (Բելգիա) հանձնարարում է համակողմանիորեն ուսումնասիրել հարցը և համապատասխան դեկուցագիր պատրաստել[450]:

Եվրոպական կառույցում քննարկումները շարունակվում էին. 1985 թ. նոյեմբերի 30-ին գիտության ու մշակույթի ականավոր մի շարք եվրոպացի դործիչներ կրկին նամակով դիմում են Ֆրանսիայի նախագահ Ֆ. Միտերանին՝ խնդրելով հայերի ցեղասպանությունը դատապարտող օրինագիծը ներկայացնել դեկտեմբերի 2-3-ը Լյուքսեմբուրգում կայանալիք Եվրոպական խորհրդի հերթական նիստին: Փաստաթուղթը ստորագրել էին Ա. Մորավիան (Իտալիա), Շ. Մաք-Բրայդը (Իռլանդիա), Ա. Պերես Էսքիվելը (Արգենտինա), Ջ. Ուայլդը (ԱՄՆ), Գ. Գրասը (ԳՖՀ), Ֆ. Ռիկոն (Բելգիա) և ուրիշներ[451]: Նամակում նշված էր, որ Հայոց ցեղասպանության «ճանաչումը պետք է բխի նաեւ մարդկային իրավանց տիեզերա-

---

[448] «Ազգային մշակույթ» (Բեյրութ), 24. VI. 1984:
[449] «Le Monde» (Paris), 16. V. 1984.
[450] «Ջարթոնք», 11.I.1985:
[451] Կիրակոսյան Ա., Սաֆրաստյան Ռ., Եվրոպական Խորհրդարանի բանաձևը «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին».- «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1988, №2, էջ 55: Կիրակոսյան Ա., Ակնարկներ Հայկական հարցի և Եղեռնի միջազգային ճանաչման պատմության, էջ 184: «Ազդակ», 02.XII.1985:

կան իրաւունքներուն կառչած եւրոպական բոլոր երկիրներեն»[452]: Ի դեմս՝ Թուրքիայի ձեռնարկած քայլերի, 1985 թ. դեկտեմբերի 16-ին Ցրանսիայի արտաքին գերատեսչության ղեկավար Ռոլան Դյուման Բրյուսելում կայացած Եվրոպական տնտեսական Համայնքի արտաքին գործերի նախարարների ժողովին առաջարկում է պատգամավորների հանձնախումբ ստեղծել, որը փաստերի հիման վրա հիմնավոր եզրակացություն կտա 1915 թ. ցեղասպանության վերաբերյալ[453]: Դրան ուղղված թուրքական պատասխանը չի ուշանում. հաջորդ օրը՝ դեկտեմբերի 17-ին, Թուրքիայի արտաքին գործերի նախարարության խոսնակ Յ. Էրալփը դատապարտում է արված առաջարկը՝ տեղեկացնելով, թե թուրքական արխիվները բաց են պատմաբանների առջև[454]:

1985 թ. դեկտեմբերին Ժ. Վանդեմյոլբրուքին Եվրախորհրդարանի քաղաքական հարցերի հանձնաժողովի քննարկմանն է ներկայացնում իր պատրաստած զեկուցագիրը, որի քննարկումը 1986 թ. փետրվարին կրկին հետաձգվում է՝ հանձնաժողովի անդամների կողմից տեքստում ուղղումներ կատարելու պատրվակով[455]: Վերջապես, 1987 թ. փետրվարի 25-ին Հանձնաժողովը ձայների մեծամասնությամբ՝ 25 կողմ, 23 դեմ և 2 ձեռնպահ, հավանություն է տալիս ներկայացված օրինագծին՝ միաժամանակ փաստաթղթում «ցեղասպանություն» բառը փոխարինելով «անարդարություն»-ով[456]:

Այս փաստաթուղթը դժգոհություն է առաջացնում Հայ դատի հանձնախմբերում, որոնք անմիջապես նամակներով դիմում են եվրոպական երկրների կառավարություններին: Նրանց աջակցում է կաթողիկոս Վազգեն Ա.-ն: Նա դիմում է Եվրոպական խորհրդարանի նախագահին ու Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գլխավոր քարտուղարին և խնդրում միջազգային ասպարեզում պաշտպանել Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը[457]:

Ի վերջո, Եվրախորհրդարանի պատգամավորներին խնդրո առարկա կոչով կրկին դիմում է «Solidarité franco-armenienne» կազմակերպությունը: Կառույցի ներկայացրած փաստաթղթի տակ իրենց ստորագրություններն էին դրել գրողներ Ֆ. Սագանը, Է. Իոնեսկոն և Ա. Թրուայան, երգիչ Շ. Ազնավուրը, պատմաբան Իվ

---

[452] «Ազդակ», 02.XII.1985:
[453] «Ազդակ», 18. XII. 1985:
[454] Նույն տեղում:
[455] «Զարթօնք», 04.I.1986:
[456] «Զարթօնք», 27.II.1987:
[457] Հաղորդագրություն. - «Էջմիածին», 1987, Ե-Զ, էջ 5:

Տերնոնը, Նոբելյան մրցանակի դափնեկիրներ Ա. Լվոֆն ու Լ. Նոելը և ուրիշներ: Նրանք խորհրդարանին կոչ էին անում. «Որպես ցեղասպանություն որակել բնաջնջման այն ծրագիրը, որն իրականացվել էր հայերի նկատմամբ, և այդպիսով տեղ հատկացրել մարդկության ու Եվրոպայի հիշողության մեջ նրանց, ովքեր դեռևս դերեզման չունեն այս աշխարհում»[458]:

1987 թ. հունիսի 18-ին Ստրասբուրգում Եվրախորհրդարանը 68 կողմ և 60 դեմ հարաբերակցությամբ հավանության է արժանացնում «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևը: Փաստաթուղթը, որի ընդունումը մեծ գոհունակություն է պատճառում ողջ հայությանը, պարունակում էր նաև դրույթներ, որոնցով դատապարտվում էր հայկական ինքնյալ պայքարը:

Եվ այսպես, Եվրոպական խորհրդարանը հայերի նկատմամբ 1915-1917 թթ. Օսմանյան կայսրության տարածքում տեղի ունեցածը որակում էր «ցեղասպանություն, միաժամանակ նշում, որ ժամանակակից Թուրքիան պատասխանատու չի կարող համարվել Օսմանյան կայսրության հայ բնակչության ողբերգության համար և ամենայն հաստատակամությամբ ընդգծում է, որ պատմական այդ իրադարձությունների ճանաչումը որպես ցեղասպանություն առիթ չի կարող լինել քաղաքական, իրավական կամ նյութական որևէ պահանջի այսօրվա Թուրքիայի նկատմամբ»[459]: Բացի այդ, Եվրախորհրդարանը պահանջում էր՝ ճնշում գործադրել թուրքական կառավարության վրա՝ 1915 թ. կազմակերպված հայերի ցեղասպանությունը ճանաչելու համար և նպաստել Թուրքիայի ու հայերի լիազոր ներկայացուցիչների միջև քաղաքական երկխոսությունն հաստատելու գործին[460]: Մատնանշվում էին մարդու իրավունքների խախտումները, ժողովրդավարության բացակայությունը Թուրքիայում: Բանաձևը պահանջում էր, որ «Թուրքիայում ապրող հայկական փոքրամասնության նկատմամբ արդարացի վերաբերմունք լինի նրա ազգային ինքնատիպության, լեզվի, դավանանքի, մշակույթի և կրթական համակարգի հարցում...»[461]: Որոշակի տեղ էր տրվում պատմական հուշարձանների պահպանությունը բարե-

---

[458] Կիրակոսյան Ա., Սաֆրաստյան Ռ., Եվրոպական խորհրդարանի բանաձևը «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին».- «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1988, №2, էջ 56:

[459] Հայոց ցեղասպանության դատապարտումը միջազգային կազմակերպությունների կողմից (1984-1987 թթ.), կազմող և ներածականի հեղինակ Լ. Բարսեղյան, Երևան, 1999, էջ 9:

[460] Նույն տեղում:

[461] Նույն տեղում:

լավելու անհրաժեշտությանը: Եվրախորհրդարանը ԵՏՀ անդամ երկրներին կոչ էր անում հռչակել «20-րդ դարում գործադրված ցեղասպանության ու մարդկության դեմ հանցագործությունների զոհերի հիշատակի օր»[462]: Բանաձևում միաժամանակ դատապարտվում էր «1973-1986 թվականների ընթացքում հայկական խմբավորումների անիմաստ ահաբեկչությունը, ինչպես նաև՝ բազմաթիվ մահափորձեր, որոնց հետևանքով զոհվեցին կամ վիրավորվեցին շատ անմեղ մարդիկ, ինչը դատապարտվեց հայ ժողովրդի ճնշող մեծամասնության կողմից», իսկ «առանձին կազմակերպությունների կողմից ի գործ դրվող բոլոր բռնի գործողություններն ու ահաբեկչական ձևերը հատկանշական չեն հայ ժողովրդին»[463]:

Սփյուռքահայ մամուլը զոհունակությամբ տեղեկացնում էր, որ 1987 թ. հունիսի 18-ին Ստրասբուրգում Եվրախորհրդարանի նիստում ձայների մեծամասնությամբ ընդունվել է Հայոց ցեղասպանության մասին բանաձևը[464]: Ֆրանսիական մամուլն ու ռադիոկայաններն էլ անմիջապես հայտնել են՝ երկու տարվա ձգձգումից հետո բանաձևը վերջնականապես ընդունվել է: Ավելին՝ հաղորդում էին, որ շուրջ երկու հազար հայեր հավաքվել են Ստրասբուրգի խորհրդարանի առջև ու մեծ խանդավառությամբ դիմավորել են այդ որոշումը՝ երգելով «Մարսելյոզ» և հայ ազգային երգեր[465]:

Հուլիսի 10-ին «Արարատ» թերթը հրատարակում է Եվրախորհրդարանի բանաձևի ամբողջական տեքստը[466]: Սփյուռքահայ մամուլի բոլոր օրգանները վերատպում են այդ հաղորդագրությունը:

Ինչպես և ասվել է, բանաձևի ընդունումը հերթական դժգոհություն է առաջացնում Թուրքիայում: Նախ՝ Ստրասբուրգում գտնվող Թուրքիայի խորհրդարանական պատվիրակությունը մամուլի ասուլիս է հրավիրում՝ հայտարարելով. «Հայկական ընդունված բանաձևը կհիմնվեր պատմական զեղծումներու և նենգափոխությանց վրա»[467]: Ապա թուրքական կառավարության հայտարարության մեջ պաշտոնական Անկարան մերժում է բանաձևը՝ այն բնութագրելով որպես «կողմնակալ» ու «ռասիստական» փաստա-

462 Նույն տեղում:
463 Նույն տեղում:
464 «Զարթօնք», 20.VI.1987: «Նոր աշխարհ» (Ամենք), 23.VI.1987:
465 Նույն տեղում:
466 «Արարատ», 10.VII.1987:
467 «Սարդարապատ» (Բուենոս Այրես), 08.VII.1987:

թուղթ[468]: Թուրքիայի նախագահ Ք. Էվրենն էլ Անկարայում, Սվաղում, Խարբերդում և այլ քաղաքներում ունեցած իր ելույթներում մեղադրում է Եվրախորհրդարանի անդամներին, որ թույլատրել են նման որոշում ընդունել, որը «հարվածում է ՆԱՏՕ-ի դաշնակցին»: Նա հիշեցնում է 1920-1921 թթ. Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերը, վստահեցնում, որ Հայկական հարցը փակված է և իրեն զարմացնում է, թե ինչու են այսօր այն արծարծում[469]:

Մինչդեռ Եվրախորհրդարանի բանաձևը միջպետական կազմակերպության կողմից ընդունված պաշտոնական առաջին փաստաթուղթն էր, որում Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ երիտթուրքական կառավարության հանցավոր գործողությունները Օսմանյան կայսրության հայ բնակչության նկատմամբ որակվում են որպես ՄԱԿ-ի 1948 թ. «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիայով սահմանված ցեղասպանության դրսևորում: Թուրքիան, փաստորեն, ելնելով այն իրողությունից, որ Եվրոպական խորհրդարանը, ինչպես նաև ՄԱԿ-ը իրավական տեսանկյունից պատժամիջոցների կիրառման իրավունքներով օժտված չեն, հրաժարվում է բանաձևի գոյության փաստն ընդունելուց:

1980-ական թվականներին թուրք ղեկավարությունը, ոչ միայն չարունակում էր իր ժխտողական քաղաքականությունը, այլև ամեն կերպ փորձում էր հիմնավորել հայերի՝ թուրքերին ենթադրյալ կոտորելու փաստը: 1984 թ. հոկտեմբերի 8-11-ը Էրզրումի համալսարանում կայանում է դիտաժողով՝ նվիրված «Հայ-թուրքական պատմական հարաբերությունների»: Զեկուցումներով հանդես են գալիս պրոֆեսորներ, դիվանագետներ, զինվորականներ և այլք: «Զարթօնք» թերթի դնահատմամբ. «Ըստ էության հակահայ մոլուցքը և հակագիտական ու հակապատմական մոտեցումն է, որ տիրապետող եղած է բոլոր ելույթներուն, առանց բացառության»[470]: Ելույթ ունեցողների հիմնական թեզն էր՝ հերքել Հայոց ցեղասպանության փաստը՝ հայտարարելով, թե, իբր, «հայերը օտար պետությանց եւ հատկապես Ռուսիո կողմե դրդռվելով ապստամբան

[468] Կիրակոսյան Ա., Սաֆրաստյան Ռ., Եվրոպական Խորհրդարանի բանաձևը «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին».- «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1988, №2, էջ 58: Կիրակոսյան Ա., Ակնարկներ Հայկական հարցի և Եղեռնի միջազգային ճանաչման պատմության, էջ 187:
[469] «Զարթօնք», 28.VI.1987:
[470] «Զարթօնք», 14. XI.1984:

ըլլալով՝ բախումներու ընթացքին իրենցմէ 300 հազար անձեր կորսնցուցած են իրենց կյանքը, մինչդեռ այս կռիվներու հետևանքով երկու միլիոն թուրքեր ըսպաննված են եղեր»[471]: Այդ «թեզը» հավաստի դարձնելու համար սկսեցին հուշարձանը հուշարձանի հետևից կանգնեցնել, այսպես կոչված, «հայերի կոտորածների զոհերի համար»: 1986 թ. հոկտեմբերին Թուրքիայի նախագահ Ք. Էվրենն Էրզրումի նահանգի Ալաճա գյուղի հուշարձանի բացման արարողության ժամանակ նշում է. «... քաղաքական վերիվայրումներու եւ տագնապներու հետ միասին, սկսած են նաեւ հայերու հողային պահանջները... եթէ այդպէս ուժ մը ունին թող գան ու առնեն եւ մենք ալ տեսնենք ... այնքան առաջ կերթան՝ ամբողջ աշխարհին ըսելու թէ Ապրիլ 24-ը Հայոց ցեղասպանութեան օր հռչակեն: Մինչդեռ թուրքերն են, որ բուն սպանդին ենթարկուած են: Ասիկա այժմ սփռված ենք ամբողջ աշխարհին ցոյց տալ՝ մենք ալ մեր կարգին յուշարձաններ բանալով»[472]: Մինչ այդ՝ սեպտեմբերի 27-ին, Անկարայում ավարտվել էր «Թուրքիայի պատմագիտական 10-րդ համագումարը», որտեղ փորձ է արվել հիմնավորել, որ ներկայիս Անատոլիան, այսինքն՝ Արևմտյան Հայաստանը հայերի հայրենիքը չէ[473]:

Միջազգային հանրությունը, սակայն, չէր կիսում թուրքական տեսակետները և իր գործունեությամբ հակազդում էր թուրքիայի քաղաքականությանը: 1980-ական թվականներին տեղի ունեցան միջազգային մի շարք գիտաժողովներ, որոնցում Հայոց ցեղասպանության հարցը դրված էր ուղղակի օրակարգերում կամ էլ գրավում էր դրանց աշխատանքների կարևոր բաժինը: Այսպես, 1982 թ. Թել-Ավիվում կայացավ «Բնաջնջման և ցեղասպանության միջազգային կոնֆերանս», 1987 թ. Աթենքում՝ «Հայկական հարցը և թուրքական ծավալապաշտությունը», 1988 թ. Օքսֆորդում՝ գիտնականների միջազգային կոնֆերանս՝ «Հիշել հանուն ապագայի» խորագրով, 1989 թ. Կալիֆորնիայի համալսարանում միջազգային սիմպոզիում՝ «Հայերի ցեղասպանություն. Պատմություն, քաղաքականություն, բարոյագիտություն» թեմաներով, նաև՝ 1990 թ. Երևանում՝ «Հայերի ցեղասպանություն. պատմություն, տեսություն, քաղաքական պատասխանատվություն» օրակարգով[474]:

---

[471] Նույն տեղում:
[472] «Զարթօնք», 10. X.1986:
[473] «Զարթօնք», 18. XI.1986:
[474] Դալլաքյան Կ., Հայ սփյուռքի պատմություն, Երևան, 1992, էջ 172:

Միաժամանակ, խնդրո առարկա ժամանակաշրջանում հրատարակվել է հայ ժողովրդի պատմության, Հայկական հարցի, Հայոց ցեղասպանության վերաբերյալ մեծաքանակ դրականություն: 1980 թ. Լոնդոնի «Croom Helm» հրատարակչությունը տպագրում է Քրիստոֆեր Ջ. Ուոքերի «Հայաստան. ազգի վերապրումը» խորագրով աշխատությունը՝ նվիրված հայ ժողովրդի պատմությանը, մասնավորապես՝ Հայկական հարցում եվրոպական տերությունների քաղաքականությանը, Հայոց ցեղասպանությանը, Հայաստանի առաջին հանրապետությանը, Խորհրդային Հայաստանի և Սփյուռքի պատմությանը: Հեղինակը հատուկ հետաքրքրություն է ցուցաբերել նաև հայ ժողովրդի ժամանակի պատմության նկատմամբ՝ այցելել է Վան, Կարս, Անի, Երևան, Էջմիածին: Գրքում զետեղված են աչքի ընկած ավելի քան 120 անվանի հայ մարդկանց համառոտ կենսագրական տեղեկություններ ու քարտեզներ[475]:

Հարկ է ընդգծել, որ հանրային, թե գիտական քննարկումների նախապատրաստական աշխատանքներին առավելապես մասնակցություն են բերել Սփյուռքի կազմակերպությունները՝ կուսակցություններն ու քաղաքական հոսանքները, միջմիութենական մարմինները, հայ դատի հանձնախմբերը, հայագիտական հաստատություններն ու անհատ գիտնականները, հայկական բարեգործական ընդհանուր միությունը, Ամերիկայի հայկական համաժողովը:

1987 թ. Արևմտյան Բեռլինում ստեղծվել է հայկական տեղեկատվության և փաստագրության կենտրոն, որի նպատակն էր ժողովել հայ ժողովրդի պատմության, ցեղասպանության հետ առնչվող վավերագրեր, փաստական նյութեր և դրանք մատուցել համաշխարհային հասարակայնությանը, օժանդակել մասնագետներին: Ինչպես հայտնում է Աթենքում հրատարակվող «Երևան» թերթը, կենտրոնի տրամադրության տակ էր 1894-1922 թթ. հայերի դեմ գործադրված հալածանքների վերաբերյալ փաստագրական հավաքածու, 1915-16 թթ. Մեծ եղեռնին վերաբերող շուրջ 200 լուսանկար, հայ ժողովրդի պատմության, մշակույթի, ազգագրության, ճարտարապետական կոթողների վերաբերյալ այլևայլ նյութեր: Կենտրոնի կազմակերպիչներն էին Ժիրայր Քոչարյանը և Թեսսա Հոֆմանը[476]: Ի դեպ Համանման կենտրոն 1983 թվականից գործում էր Փարիզում[477]:

---

[475] Walker Ch., Armenia: The Survival of a Nation, London, 1980.
[476] «Երևան» (Աթենք), 07. II. 1987:
[477] «Հառաջ», 12. X. 1983:

1987 թ. մայիսի 9 -11-ը Վիեննայում Հայկական համագործակցության միության Ավստրիայի մասնաճյուղը և Արևմտյան Բեռլինում գործող Հայկական տեղեկատվության և փաստագրության վերոհիշյալ կենտրոնը հրավիրում են համագումար՝ Թուրքիայի ազգային քաղաքականությունը քննելու համար: Դրա չարժառիթը եղել է Հելսինկիի համաձայնությանը նվիրված հերթական հանդիպումը: Նիստերին մասնակցել են թղթակիցներ Գերմանիայից, Շվեյցարիայից, Ավստրիայից, Հունաստանից, Կիպրոսից, Բուլղարիայից և Մարդու իրավունքների պաշտպանության տարբեր ազգերի կազմակերպությունների ներկայացուցիչներ: Եղել են բազմաթիվ ելույթներ: Հույն պատմաբան Կոստանդինոս Ֆոթիատիսն իր զեկուցման մեջ նշում էր. «Հայերը և հույները կազմել են երբեմնի փոքրասիական ամենամեծ թվաքանակ ունեցող քրիստոնյա ժողովուրդները, իսկ այժմ 1915-1922-ի կոտորածներից հետո կազմում են աննշան փոքրամասնություն և ապրում են հիմնականում Կ. Պոլսում: Հայերի թիվը այսօր կազմում է 60 000, հույներինը՝ 3500 և Սև ծովի ափին՝ բռնի իսլամացած կամ դաղտնի քրիստոնյա հույները՝ 400 000»[478]:

1988-1990 թթ. Խորհրդային Հայաստանում ծավալված ազգային-ժողովրդավարական շարժումն ու Ղարաբաղի հարցը համայն հայության ուշադրության կենտրոնում էր: Բայց անուշադրության չէր մատնված և հայկական հարցը, որը չոշափելի զարգացումներ է գրանցում ինչպես Խորհրդային Հայաստանում, այնպես էլ Սփյուռքում, ինչը լրջորեն անհանգստացնում է Թուրքիային: 1988 թ. նոյեմբերի 22-ին Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհուրդն ընդունում է «Օսմանյան Թուրքիայում հայերի 1915 թ. ցեղասպանության դատապարտման մասին» օրենքը: Դատապարտելով հայերի ցեղասպանությունը որպես մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործություն՝ ապրիլի 24-ը հայտարարվում է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր: Առաջարկություն է ներկայացվում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը՝ 1915 թ. ցեղասպանությունը ճանաչելու և դատապարտելու մասին[479]: Չնայած, որ գործընթացը Խորհրդային Հայաստանում սկսվել էր ավելի վաղ[480]:

---

[478] «Զարթօնք», 22. VII.1987:

[479] Բարսեղյան Լ., Հայոց ցեղասպանության հրապարակայնորեն դատապարտման և ճանաչման ժամանակագրություն (1915-2004 թթ.), Երևան, 2001, էջ 35:

[480] Մանրամասն տե՛ս Հարությունյան Ա., Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցը և Երկրորդ Հանրապետությունը, էջ 126-134:

1986 թվականից Հայոց ցեղասպանության ճանաչման դիրքորոշումից հեռացած Ֆրանսիան՝ 1988 թ. նախագահական ընտրություններին ընդառաջ կրկին օրակարգ է մտցնում Հայկական հարցը: Ֆրանսահայերի ու երկրի քաղաքական գործիչների կոչերին միանալով՝ արտաքին գործերի նախարար Շառլ Պասկուան հայտարարում է. «Թուրքիայի ներկա իշխանությունները հայերու հետ կարող են լեզու գտնել միայն այն օրը, երբ ընդունեն, որ 1915 թ. իրենց երկրի ղեկավարները պատասխանատու են տեղի ունեցած անգթությունների և ցեղասպանության համար: Թեև իրենք ուղղակի մասնակցություն չունեն տեղի ունեցածում, սակայն հանդիսանում են ժառանգներն իրենց պատմության և հայրենիքի»[481]: 1989 թ. դեկտեմբերին «Solidarité franco-armenienne» կազմակերպության նախաձեռնությամբ կազմակերպված ցեղասպանության հարցի քննարկման միջազգային համաժողովում ֆրանսիացի քաղաքական գործիչներ Սիմոն Վեյլը, Լուի Մերմազը, Ալեն Քարինոն, Ֆրանսիայի մարդասիրական աշխատանքների պետական նախարար Բեռնար Քուշները 1915 թ. դեպքերն որակեցին ցեղասպանություն[482]: Այս ամենը վկայում էր, որ պաշտոնական Փարիզը վերադառնում էր 1980-ական թվականների սկզբին Հայկական հարցում որդեգրած քաղաքականությանը:

Համանման զարգացումներ են տեղի ունենում ԱՄՆ-ի ներկայացուցիչների պալատում. այստեղ սկսվում է Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման գործընթացի հերթական ալիքը: Սկզբում՝ 1989 թ., դա դրսևորվում է հիմնականում ԱՄՆ-ի Կոնգրեսում շրջանառվող համապատասխան՝ Ներկայացուցիչների պալատի թիվ 36 համատեղ, թիվ 417 համատեղ և Սենատի թիվ 212 համատեղ բանաձևերով, դրանց շուրջ ծավալված աննախադեպ բուռն քննարկումներով, իսկ 1990 թ. Հայոց ցեղասպանության 75-րդ տարելիցի կապակցությամբ նախագահ Ջորջ Բուշ-ավագի պաշտոնական ուղերձով: ԱՄՆ-ի նախագահը 1915-1923 թթ. Օսմանյան կայսրության իշխանությունների կողմից իրականացված քաղաքականությունն անվանում է «մարդկության դեմ հանցագործություն»: Մինչդեռ 1988 թ. նախագահի թեկնածու եղած ժամանակ՝ ընտրապայքարի ընթացքում, խոստանում էր ընտրվելու դեպքում ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Իրականությունը,

[481] «Le Monde», 24. II.1988.
[482] «Ազդակ», 12. XII. 1989.

սակայն, այն էր, որ ժամանակին ամերիկահայերին նման խոստումներ էին տվել Ջ. Քարտերը և Ռ. Ռեյգանը: Նախագահ Ջ. Բուշ-ավագը, ինչպես և Ջ. Քարտերը չեն կատարում նախընտրական խոստումը և իրենց ուղերձներում 1915-1923 թթ. Իրադարձությունները չեն որակում որպես ցեղասպանություն: Թեև պետք է ասել, որ ԱՄՆ նախագահի՝ հայերի կոտորածները որպես ցեղասպանություն բնորոշելու գործոնի դերը չպետք է գերագնահատել: Հարկ է հիշել, որ 1981 թ. նախագահ Ռ. Ռեյգանն իր թիվ 4838 ուղերձում օգտագործել էր հենց «Հայոց ցեղասպանություն» ձևակերպումը, որը, սակայն, ամենևին էլ չէր աղդարարել ամերիկյան գործադիր իշխանությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումն ու ԱՄՆ-ում այդ գործընթացի ավարտը: Միաժամանակ պետք է նկատել, որ հենց Բուշ-ավագի վարչակազմի գործուն միջամտությամբ էր, որ վերը նշված բանաձևերը չէին ընդունվում ԱՄՆ-ի կոնգրեսում: Նա ևս ստիպված էր Անկարայի ճնշումների ներքո զիջումների գնալ: 1989 թ. Թուրքիայի արտգործնախարար Մ. Յիլմազը սպառնում էր Վաշինգտոնի հետ հարաբերությունները սառեցնել, եթե Կոնգրեսը վավերացնի Հայոց ցեղասպանության վերաբերյալ բանաձևը[483]: Հակահայկական ելույթներով հանդես են գալիս Թուրքիայի նախագահ Ք. Էվրենը, վարչապետ Թ. Օզալը[484]: Թուրքական մամուլն էլ լայնածավալ քարոզչություն էր իրականացնում: «Hürriyet» թերթը եղրակացնում է, որ հայերի գլխավոր նպատակն է. «Ստանալ Թուրքիայի արևելյան ու հարավարևելյան 22 նահանգները»[485]:

Ինչևէ, Վաշինգտոնում խնդրո առարկա հարցի աստիճանական մարումից հետո, ամերիկահայ կազմակերպությունների ակտիվ գործունեության արդյունքում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը փոխանցվում է նահանգներին և հսկայական ծավալներ է ընդունում: Հայոց ցեղասպանության ճանաչումը վերահաստատում են Կալիֆորնիան, Կոլորադոն, Միչիգանը, Նյու Ջերսին, Մասաչուսեթսը և Մերիլենդը: Զուգահեռաբար Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես առաջին անգամ ճանաչում են 13 ամերիկյան նահանգներ. աննախադեպ երևույթ, որը հետագա-

---

[483] Киракосян А., Сафрастян Р., Геноцид армян и османские архивы. - «Коммунист» (Ереван), 18. IV. 1990.
[484] «Զարթօնք», 14. IV. 1989.
[485] «Hürriyet», 21. XI. 1989.

յում էլ մնաց անկրկնելի: Այսպես, Հայոց ցեղասպանությունը ճանաչած նահանգների չարքում իրար հետևից հայտնվեցին Վիսքոնսինը, Օկլահոման, Իլինոյսը, Ռոդ Այլենդը, Փենսիլվանիան, Ալյասկան, Վաշինգտոնը, Արիզոնան, Օրեգոնը, Վիրջինիան, Քոնեքթիքութը, Նյու Հեմփշիրը և Ֆլորիդան: Դրանով իսկ Հայոց ցեղասպանությունը ճանաչած ու դատապարտած ամերիկյան նահանգների թիվը 1990 թ. հասավ 20-ի:

Եվ չնայած Միացյալ Նահանգների կոնգրեսի Ներկայացուցիչների պալատում չի հաջողվում նոր առաջընթաց գրանցել, այնուհանդերձ, ԱՄՆ-ի կոնգրեսականների և սենատորների զգալի մասի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը դիտարկվում է որպես խիստ հրատապ հարց, որից նրանք չեն պատրաստվում հրաժարվել[486]: Ավելին՝ 1991 թ. ապրիլի 20-ին ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշ-ավագը հայտարարում է ամերիկահայերին, որ միանում է բոլոր նրանց, ովքեր Ապրիլի 24-ն ընդունում են որպես հայ ժողովրդի 1.5 միլիոնից ավելի զոհերի հիշատակի օր[487]:

Այսպիսով, Հայոց ցեղասպանությունը, լինելով 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը, դարի վերջին տասնամյակի ընթացքում դառնալով զանազան երկրների խորհրդարանների, կառավարությունների, զանգվածային լրատվության միջոցների բուռն քննարկումների առարկա, վերածվեց միջազգային դիվանագիտության հարցի, որի միջազգային ճանաչմանն ու դատապարտմանը հասնելը դարձավ հայության գերագույն խնդիրներից մեկը:

---

[486] Բարսեղյան Լ., Ամերիկայի Միացյալ Նահանգները, Հայոց ցեղասպանության դատապարտումը և Թուրքական հակազդեցությունը, Երևան, 2001, էջ 7- 8:
[487] Նույն տեղում, էջ 8:

ԱՄՓՈՓՈՒՄ

1921-1991 թթ. միջազգային ասպարեզում Հայ դատի հետապնդման խնդիրը բացառապես սփյուռքահայության «մենաշնորհն» էր, թեպետ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ 1945 թ., ԽՍՀՄ-ը իր քայլերով Թուրքիային հասկացրեց, որ հայկական տարածքների հիմնախնդիրը բնավ էլ փակված չէ և անհրաժեշտության դեպքում կարող է օրակարգում հայտնվել: Ավելին՝ խնդրի լուծման գործում Մոսկվան մեծ տեղ էր հատկացնում հայկական եկեղեցուն և Սփյուռքին:

1946 թ. սկսված «սառը պատերազմը», սակայն, բացասական անդրադարձ ունեցավ գործընթացի վրա: Թուրքիան, ի դեմս ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի, ձեռք բերեց դաշնակիցներ, որոնք էլ պարտավորվեցին պաշտպանել նրա տարածքային ամբողջականությունը: Ստեղծված պայմաններում Հայկական հարցը հայտնվեց փակուղում և 1950-ականներին վերջինիս լուծման ուղղությամբ զարգացումներ չգրանցվեցին: Սփյուռքահայության պայքարն առավել գործուն դարձավ 1960-ական թվականների կեսերից՝ Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցի նախօրեին:

Մինչև 1970-ական թվականները Հայկական հարցն աշխարհասփյուռ հայության կողմից ընկալվում էր որպես հայկական հողերի՝ վերադարձման պայքարի խնդիր, այնուհետև վերածվեց ցեղասպանության միջազգային ճանաչմանն ու հատուցմանն ուղղված չարժման՝ ստանալով «Հայ դատ» անվանումը:

1960-1970-ական թվականներին Սփյուռքում գործող հայ ազգային կուսակցությունները, կազմակերպությունները, Հայ դատի հանձնախմբերը, հայկական եկեղեցին լայն գործունեություն են ծավալում Հայկական հարցի քարոզչության ուղղությամբ՝ ձգտելով այն դարձնել միջազգային հարաբերությունների օրակարգի հարց: ԱՄՆ-ում, Ֆրանսիայում և այլ

երկրներում այն արտահայտվեց մշակութային ներթափանցման ու համաշխարհային հանրության կարծիքը Հայ դատի օգտին ձևավորելու փորձերի տեսքով, ինչպես նաև տվյալ երկրի կառավարման համակարգի վրա ուղղակի ազդեցության ճանապարհով:

Բացի այդ, Հայ դատի լուծման և Հայոց ցեղասպանության ճանաչման հրամայականը սփյուռքահայ որոշ շրջանակներում աստիճանաբար ի հայտ բերեց արմատական տրամադրություններ, որոնց հետևանքով 1970-ական թվականներին Սփյուռքում սկիզբ առավ գինյալ պայքարի փուլը, որը շարունակվեց մինչև 1980-ական թվականների երկրորդ կեսը:

Նույն ժամանակահատվածում՝ 1970-1980-ական թվականներին, նկատելիորեն ավելանում էր համաշխարհային հանրության հետաքրքրությունը հայկական հարցի նկատմամբ, սկսվում են քննարկումներ միջազգային տարբեր կազմակերպություններում, գիտական և հասարակական խորհրդաժողովներում: Ավելին՝ վերոհիշյալ բոլոր պարագաներում պետությունների, հասարակական, թե գիտական մակարդակներով քննարկումների նախապատրաստական աշխատանքներին առավելագույն մասնակցություն ունեցան Սփյուռքի կազմակերպությունները՝ կուսակցությունները, Հայ դատի հանձնախմբերը, հայագիտական կենտրոնները, անհատ գիտնականները և այլն:

Սփյուռքում Հայոց ցեղասպանությունը միջազգայնորեն ճանաչելուն միտված գործընթացներն այդ տարիներին թուրքիային ստիպեցին որոշ հակաքայլեր ձեռնարկել, որոնք կարճ ժամանակ անց դարձան թուրքական ժխտողական քաղաքականության և հակահայկական քարոզչության հիմքերը: Հենց այդ քաղաքականությունն է որոշ վերափոխումներով և հավելումներով շարունակվում նաև ներկայումս:

Այսպիսով՝ չնայած սփյուռքահայերի ձեռք բերած որոշ հաջողություններին, այնուամենայնիվ, արմատական շրջադարձ Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության ճանաչման

համար մղվող պայքարում չկատարվեց: Սակայն 1940-1980-ական թվականներին նրանց գործունեության արդյունքում Հայոց ցեղասպանության խնդիրը, դառնալով միջազգային կազմակերպությունների, տարբեր պետությունների խորհրդարանների, կառավարությունների, դանդվածային լրատվության միջոցների բուռն քննարկումների առարկա, վերածվեց միջազգային դիվանագիտության հարցի՝ սկիզբը դնելով Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործընթացին (Ուրուգվայ, Կիպրոս, Եվրախորհրդարան և այլն):

РЕЗЮМЕ

В 1921-1991 гг. в международной сфере решение Армянского вопроса было исключительной «привилегией» Армянской диаспоры (Спюрка), хотя и после Второй мировой войны СССР своими действиями давал понять Турции, что вопрос армянских земель остается открытым и в случае необходимости может быть внесен в повестку дня. Более того, в решении этого вопроса Москва особо подчеркивала роль армянской церкви и Спюрка.

Между тем политическая ситуация, возникшая в связи с «холодной войной» в 1946 г., весьма негативно сказалась на этом процессе. Турция обрела союзников в лице США и Великобритании, которые обязались защитить ее территориальную целостность. В создавшихся условиях Армянский вопрос зашел в тупик и в 1950-х годах не было предпринято каких-либо действий для его решения.

До 1970-х гг. Армянский вопрос воспринимался Спюрком как вопрос борьбы за возврат армянских земель, а впоследствии это вылилось в движение по международному признанию Геноцида, получившее название «Ай дат».

Действовавшие в Спюрке в 1960-1970-х годах армянские национальные партии, организации, комиссии по Армянскому вопросу, армянская церковь развернули широкую деятельность по пропаганде Армянского вопроса, стремясь превратить его в вопрос повестки дня международных отношений. В США, Франции и других странах это проявилось в виде культурного влияния и попыток сформирования позитивного отношения международной общественности к Армянскому вопросу, равно как и в форме прямого давления на правительства данных стран.

Помимо этого, императив решения Армянского вопроса и признания Геноцида выявил радикальные настроения в некоторых кругах представителей Спюрка, и в результате 1970-е годы в Армянской диаспоре стали начальным этапом вооруженной борьбы, длившейся до второй половины 1980-х годов.

В этот же период, в 1970-1980-ые гг., заметно возрос интерес международной общественности к Армянскому вопросу, который стал предметом дискуссий в различных международных организациях, на научных и общественных форумах. В подготовке к этим дискуссиям (как на общественном, так и научном уровне) наиболее активное участие принимали организации Диаспоры – партии, комиссии по Армянскому вопросу, арменоведческие центры, а также отдельные ученые и т.д.

Развернувшийся в Спюрке процесс по международному признанию Геноцида армян заставил Турцию предпринять ряд контрдействий, заложивших основу антиармянской пропаганды и политики отрицания Геноцида со стороны Турции. Эта политика, с некоторыми изменениями, проводится и сейчас.

Таким образом, определенные сдвиги, имевшие место благодаря действиям Армянской диаспоры, не стали поворотным моментом в борьбе за признание Геноцида и решение Армянского вопроса. Тем не менее, в 1940-1980-х годах благодаря деятельности представителей Армянской диаспоры вопрос Геноцида армян, являясь предметом бурных дискуссий международных организаций, парламентов и правительств разных стран, а также средств массовой информации, стал вопросом международного дипломатического уровня, положив тем самым начало процессу признания и осуждения Геноцида армян (Уругвай, Кипр, Европарламент и т.д.).

SUMMARY

In 1921-1991 the Armenian diaspora had the exclusive «monopoly» in pursuing the Armenian cause in international arena although after World War II USSR made it clear to Turkey that the issue of the Armenian territories is not taken off the table and if necessary it can be brought back to agenda. Moreover, Moscow was greatly highlighting the role of the Armenian Church and Diaspora in resolving the issue.

Meanwhile «Cold War» started in 1946 had a negative influence on the process. Turkey gained new allies in face of the USA and the Great Britain who pledged to protect the territorial integrity of Turkey. In these conditions the Armenian cause was deadlocked and in 1950s there was no progress towards its resolution. The struggle of the diaspora Armenians became more productive starting mid-1960s on the eve of the 50th memorial date of the Armenian genocide.

Before 1970s the Armenian cause had been perceived by Armenians around the world as an issue of strugglingfor returning Armenian lands: later it expressed itself as a movement aimed at international recognition of the genocide and compensationgetting the name «Hay Dat» (The Armenian Cause).

In 1960-1970s Armenian national parties, organizations, Hay Dat Committees operating in Diaspora and the Armenian Church conducted a wide range of activities towards the propaganda of the Armenian cause seeking to bring it into the agenda of international relations. In USA, France and other countries this was expressed in cultural penetration and trying to shape the world public opinion in favor of the Armenian cause as well as through direct impact on the public administration system of countries.

Besides, the need to resolve the Armenian cause and to recognize the Armenian genocide gradually led to radical sentiments among some circles of the Armenian diaspora as a result of which in 1970s the phase of armed struggle began in the Diaspora which continued till the 2nd half of 1980s.

At the same time, in 1970-1980s, there was a significant growth of interest among world community towards the Armenian cause; new discussions began in different international organizations, scientific and social conferences. Moreover, in all above-mentioned cases Diaspora organizations – parties, Hay Dat committees, centers for Armenian studies, individual scientists etc. have had a maximum participation on state, social and scientific levels.

The processes aimed at recognition of the Armenian genocide in diaspora during those years made Turkey take some counter-measures which short time later became the basis for the Turkish denial policy and anti-Armenian propaganda. That same policy with some transformations and additions continues at present, too.

Thus, despite some success gained by Diaspora Armenians, there was no radical change in the struggle for the Armenian cause and the recognition of the Armenian genocide. However, as a result of their activities in 1940-1980s the issue of the Armenian genocide, becoming a topic of hot discussions for international organizations, parliaments, governmentsof different states as well as means of mass media, turned into an issue of international diplomacy starting the process of recognition and condemnation of the Armenian genocide (Uruguay, Cyprus, Council of Europe etc.).

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ԱՐԽԻՎՆԵՐ

ա. Արխիվային նյութեր

Հայաստանի Ազգային արխիվ

1. Ֆ. 1 (ՀԿԿ կենտկոմի ֆոնդ), ց. 034, գ. 95 (Նյութեր Սան-Ֆրանցիսկոյի հայկական հուշագրի վերաբերյալ):
2. Ֆ. 57 (Ամենայն հայոց կաթողիկոսի դիվան), ց. 5, գ. 231 (Փաստաթղթեր հայկական հարցի մասին):
3. Ֆ. 326 (Արտաքին գործերի նախարարության ֆոնդ), ց. 1, գ. 74 (ՍՍՀՄ ժողովրդական կոմիսարների Սովետի 1945 թ. նոյեմբերի 21-ի, նո. 2947 որոշումը «Արտասահմանյան երկրներից հայերի ներգաղթի հետ կապված միջոցառումների մասին»):
4. Ֆ. 326 (Արտաքին գործերի նախարարության ֆոնդ), ց. 1, գ. 359 (Մինիստրի տեղակալի տեղեկանքը «Հայկական գաղութների մասին»):
5. Ֆ. 326 (Արտաքին գործերի նախարարության ֆոնդ), ց. 1, գ. 379 (Ֆրանսիայի ԽՍՀՄ դեսպանության առաջին քարտուղարի Լ. Մանասերյանի և ՀՀԴ կուսակցության առաջնորդ Հրանտ Սամուելյանի միջև կայացած զրույցի գրառումները «Կուսակցության գործունեության մասին»):
6. Ֆ. 326 (Արտաքին գործերի նախարարության ֆոնդ), ց. 1, գ. 358 (Ուրուգվայի ՍՍՌՄ դեսպանատանը կայացած զրույցների գրառումները):
7. Ֆ. 326 (Արտաքին գործերի նախարարության ֆոնդ), ց. 1, գ. 408 (Ստամբուլի ՍՍՀՄ Գլխավոր հյուպատոսարանի փոխհյուպատոսի տեղեկանքը «Ստամբուլի հայկական համայնքի վիճակի մասին»):
8. Ֆ. 326 (Արտաքին գործերի նախարարության ֆոնդ), ց. 1, գ. 519 (Ֆրանսիայի դեսպանատանը կայացած զրույցների գրառումները):
9. Ֆ. 326 (Արտաքին գործերի նախարարության ֆոնդ), ց. 1, գ. 546 (Լիբանանի հայկական համայնքը):
10. Ֆ. 326 (Արտաքին գործերի նախարարության ֆոնդ), ց. 1, գ. 553 (Մինիստրության քաղաքական ինֆորմացիայի բաժնի վարիչի ինֆորմացիան Հայ գաղութներում Մեծ եղեռնի

59-րդ ամյակին նվիրված միտինգների և ցույցերի մասին՝ ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեի վերաբերմունքը վերջինիս):

11. Ֆ. 326 (Արտաքին գործերի նախարարության ֆոնդ), ց. 1, գ. 555 (Մինիստրի նամակ-առաջարկությունը ՍՍՀՄ Արտաքին գործերի մինիստրի տեղակալին «ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովում սովետական ներկայացուցչի միջոցով Թուրքիայում 1915 թ. Հայկական ցեղասպանության մասին արտահայտվելու վերաբերյալ»):
12. Ֆ. 409 (Էջմիածնի դերադույն հոգևոր խորհրդի ֆոնդ), ց. 1, գ. 520 (Վազգեն Ա Կաթողիկոսի կոնդակը՝ 1915 թ. Հայկական Եղեռնի 50-ամյակի առթիվ):
13. Ֆ. 409 (Էջմիածնի դերադույն հոգևոր խորհրդի ֆոնդ), ց. 1, գ. 807, (Գևորգ Ջ կաթողիկոսի նամակը Ի. Ստալինին):
14. Ֆ. 454 (Զորեքչյան Գևորգ - Ամենայն Հայոց կաթողիկոսի ֆոնդ), ց. 1, գ. 157 (Գևորգ Ջ կաթողիկոսի «Հայ ժողովրդի արդար դատի և բռնադատված իրավունքների մասին» կոնդակը):
15. Ֆ. 823 (ՀՀ կառավարությանն առընթեր կրոնի գործերի պետական խորհրդի ֆոնդ), ց. 1, գ. 19 (ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Հովհաննիսյանի 1947 թ. ապրիլի 14-ի գրությունը ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ս. Կարապետյանին):
16. Ֆ. 823 (ՀՀ կառավարությանն առընթեր կրոնի գործերի պետական խորհրդի ֆոնդ), ց. 1, գ. 26 (Գևորգ Ջ կաթողիկոսի տեղեկագիրը Արտավազդ արք. Սյուրմեյանի Անգլիական եկեղեցու առաջնորդին հուշագրով դիմելու կապակցությամբ):
17. Ֆ. 823 (ՀՀ կառավարությանն առընթեր կրոնի գործերի պետական խորհուրդի ֆոնդ), ց. 7, գ. 73 (Հաշվետվություն Վազգեն Ա Կաթողիկոս նամակագրության մասին, 1964-1965 թթ.):
18. Ֆ. 823 (ՀՀ կառավարությանն առընթեր կրոնի գործերի պետական խորհուրդ), ց. 7, գ. 77 (Գրագրություն ԽՍՀՄ եկեղեցու գործերի խորհրդի հետ...):
19. Ֆ. 823 (ՀՀ կառավարությանն առընթեր կրոնի գործերի պետական խորհուրդի ֆոնդ), ց. 7, գ. 82 (1965 թ. Վազգեն Առաջինի արտասահման կատարած ուղևորությունների հաշվետվությունները):

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ

1. Обзор турецкой прессы, февраль-июнь, Об отношениях между Турцией и СССР, 1946.

Архив внешней политики Российской Федерации

1. Ф. 06, оп. 7, п. 2, д. 31 (Из дневника В. Молотова. Прием посла Турецкой Республики С. Сарпера. 07.06.1945 г., 18.06.1945 г.), 38 л.
2. Ф. 06, оп. 7, п. 47, д. 762 (К советско-турецким отношениям. 18.08.1945 г.), 18 л.

բ. Հրապարակված փաստաթղթեր

Armenian National Council of America

1. A Memorandum Relating to the Armenian Question, New York, April, 1945, 11 p.
2. A Memorandum on the Armenian Question, Presented to the Council of Foreign Ministers, March 7, 1947, New York, 1947, 7 p.
3. An Appeal, To the Member Governments and Their delegates to the United Nations, July 1, 1947, New York, 1947, 5 p.
4. Memorandum Proposed Aid to Greece and Turkey presentedto the Government of the United States by the Armenian National Council of America, New York, 1947, 6 p.
5. Text of memorandum to the Big Three in session in Potsdam, Germany, July 17, 1945, New York, 1945, 3 p.
6. Text of memorandum sent to the Council of Ministers for Foreign Affaires in London, September 15, 1945, New York, 1945, 3 p.
7. Text of memorandum sent by cabel to the Assembly of the United Nations in London by the Armenian National Council of America and by the Conference of Armenian Compatriotic Societies in New York, January 31, 1946, New York, 1946, 2 p.
8. Text of speech of Senator Chareles W. Tobey in Carnegie Hall, April 28, 1946, New York, 1946, 4 p.
9. Text of speech of Congressman Emanuel Celler, New York, 1946, 6 p.
10. Text of speech of Congressman Charels R. Savege, New York, 1946, 4 p.
11. Text of speech of Councilman Stanly M. Isaacs, New York, 1946, 4 p.
12. Press Release No 123, Extracts of speech delivered by the Reverend Robert W. Searle at Carnegie Hall, April 28, 1946, New York, 1946, 4 p.
13. The Armenian Cause, New York, 1945, 4 p.

14. The Case of the Armenian People, Memorandum to the United Nations Conference on International Organization in San Francisco, June 4, 1945, New York, 1945, 7 p.
15. The Resolution to the United Nations Submitted by the World Armenian Congress, New York, 1947, 11 p.
16. Armenian National Council-Alexandria, Armenian Claims in the light of documents, Memorandum submitted to the United Nations organization meeting in London, January 10, 1946, Alexandria, 1946, 6 p.

Armenian National Committee

1. Հայ դատի աշխատանքներ, Հայ դատի կենտրոնական Հանձնախումբ, Պոստոն, 1967, 27 էջ:
2. Consejo Causa Armenia del Uruguay, Resoluciones De La Asamblea General. 22-04-65. Día de recordación de los Mártires Armenios (Ley 13.326), http://www.causaarmenia.org/?page_id=323

United Nations

1. Convention on the Non-Applicability of Statutory Limitations to War Crimes and Crimes against Humanity, A/RES/2391 (XXIII), http://www.un.org/Docs/asp/ws.asp?m=A/RES/2391%20(XXIII)
2. Nineteenth Session, 1321st Plenary Meeting, Monday, 25 January 1965, New York, p. 8, http://www.un.org/ga/search/view_doc.asp?symbol=A/PV.1321
3. Nineteenth Session, 1323rd Plenary Meeting, Tuesday, 26 January 1965, New York, p. 18, http://daccessddsny.un.org/doc/UNDOC/GEN/NL6/605/72/PDF/NL660572.pdf?OpenEl ement
4. Nineteenth Session, 1325th Plenary Meeting, Wednesday, 27 January 1965, New York, pp. 6-7, http://www.un.org/ga/search/ view_doc.asp?symbol=A/PV.1325
5. Report of the Sub-Commission on Prevention of Discrimination and Protection of Minorities on Its Thirty-Eighth Session, Geneva, 5-30 August, 1985, http://undocs.org/en/E/CN.4/Sub.2/1985/57
6. Revised and updated report on the question of the prevention and punishment of the crime of genocide: corrigendum / prepared by B. Whitaker, E/CN.4/Sub.2/1985/6/Corr.1

7. Study of the Question of the Prevention and Punishment of the Crime of Genocide / Prepared by Nicodème Ruhashyankiko, Special Rapporteur, E/CN.4/Sub.2/416, http://repository.un.org/handle/11176/ 371706
8. Study of the Question of the Prevention and Punishment of the Crime of Genocide : Prgress Report / by Nicodème Ruhashyankiko, Special Rapporteur, Document symbol: E/CN.4/Sub.2/L.583, http://repository.un.org/handle/11176/354879

United States Congress

1. A joint resolution designating a day of remembrance for victims of genocide, http://thomas.loc.gov/cgi-bin/bdquery/z?d098:SJ00087
2. A resolution expressing the sense of the House of Representatives that the foreign policy of the United States should take account of the genocide of the Armenian people with the objective of preventing any future genocide anywhere in the world, and for other purposes. http://thomas.loc.gov/cgi-bin/bdquery/z?d098:HE00587
3. H.J.Res.148 - Joint resolution to designate April 24, 1975, as National Day of Remembrance of Man's Inhumanity to Man. https://www.congress.gov/bill/94th-congress/house-joint-resolution/148
4. State of California. The Lagislature. Assembly Resolution 274. 1965.
5. The Armenian Genocide Must Be Reported, Congressional Record - House, 7 March, 1979, https://www.gpo.gov/fdsys/pkg/GPO-CRECB-1979-pt4/pdf/GPO-CRECB-1979-pt4-1-1.pdf

Türkiye Büyük Millet Meclisi

1. Millet Meclisi Tutanak Dergisi, 93 Birleşim, 27.4.1965, 1. Geçen Tutanak Özeti, https://www.tbmm.gov.tr/tutanaklar/TUTANAK/ MM __ /d01/c038/mm__01038093.pdf
2. Millet Meclisi Tutanak Dergisi, 57 nci Birleşim, 14.2.1973, Dışişleri Bakanı Halûk Bayülken'în, Marsilya'da ermeniler tarafından dikilen ve üzerinde aleyhimizde bâzı yazılar bulunan bir anıtın açılış töreni ile ilgili gündem dışı demeci, https://www.tbmm.gov.tr/tutanaklar/ TUTANAK/MM__/d03/c033/mm__03033057.pdf

«Էջմիածին» ամսագիր

1. Ամենայան Հայոց Վեհափառ կաթողիկոս Տ. Տ. Գևորգ Զ-ի դիմումը երեք մեծ տերություններուն ղեկավարներին. - «Էջմիածին», 1945, ԺԱ.-ԺԲ, էջ 8-10:
2. Ամենայան Հայոց Վեհափառ Հայրապետի նամակը Քուր եկեղեցիների հոգևոր պետերին ապրիլի Մեծ Եղեռնի 50-ամյակի առթիվ, «Էջմիածին», 1964, ԺԱ, էջ 8-9:
3. Խաղաղության, ազգային անկախության և ընդհանուր զինաթափման համաշխարհային համաժողով Հելսինկի.-Էջմիածին, 1965, Ը-Թ, էջ 66-72:
4. Հաղորդագրություն, «Էջմիածին», 1987, Ե-Զ, էջ 5:
5. Հանդիպումներ Մայր Աթոռում ապրիլյան եղեռնի հիսնամյակի առթիվ, «Էջմիածին», 1965, Ե–Է, էջ 106-114:
6. ՍՍՌՄ ժողովրդական Կոմիսարների Սովետի նախագահ Ի.Վ. Ստալինի ղրուցը Ամենայն Հայոց Հայրապետության Ազգընտիր Տեղակալ Տ. Գևորգ արքեպիսկոպոսի հետ. - «Էջմիածին» (պաշտոնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսության), 1945, Գ-Դ, էջ 5-6:
7. Վեհափառ Հայրապետը Բուլղարիայում, «Էջմիածին», 1965, Ը-Թ, էջ 8-26:

գ. Հրատարակված փաստաթղթերի ժողովածուներ

1. Թեհրան, Յալթա, Պոտսդամ (Հակահիտլերյան կոալիցիայի երկրների երեք կոնֆերանսների) փաստաթղթերի ժողովածու, Եր., «Հայաստան», 1970, 446 էջ:
2. Համառոտ տեղեկություն Համաշխարհային Հայկական քոնգրեսի ապրիլի 30-մայիսի 4, 1947, Նյու Յորք, Ամերիկահայ ազգային խորհուրդ, 1947, 41 էջ:
3. Հայ ազգային դատը, Թուրքական Հայաստանի ազատագրմանը վերաբերող վավերաթղթեր, Փարիզ, «Տեր Հակոբյան», 1946, 141 էջ:
4. Հայոց ցեղասպանության դատապարտումը միջազգային կազմակերպությունների կողմից (1984-1987 թթ.), կազմող և ներածականի հեղինակ Լ. Բարսեղյան, Երևան, Հայոց ցեղասպանության ինստիտուտի Հրատ., 1999, 49 էջ:

5. Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում, Կազմող Վ. Քոչարյան, Երևան, Հեղինակային Հրատարակություն, 2014, 208 էջ:
6. Армения и советско-турецкие отношения в дипломатических документах 1945–1946 гг. // Под редакцией Армана Киракосяна, Ер., «Тигран Мец», 2010, 357 с.
7. Барсегов Ю., Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарии, т. 2, М., «Гардарики», 2005, 633 с.
8. Служба Внешней Разведки Российской Федерации, Архив СВР России, Сборник документов (1935-1945), М., СВР РФ, 2006, 498 с.
9. Советский Союз на международных конференциях периода Великой Отечественной войны, т. VI, М., «Политиздат», 1980, 551 с.
10. Foreign relations of the United States diplomatic paper, the Conference of Berlin (the Potsdam Conference), 1945, vol. 1, Washington, 1960, 1821 p.
11. Foreign relations of the United States diplomatic paper, 1945. The Near East and Africa, vol. VIII, Washington, 1969, 2234 p.
12. Foreign relations of the United States diplomatic paper, 1946. The Near East and Africa, vol. VII, Washington, 1969, 2306 p.
13. Foreign relations of the United States diplomatic paper, 1964–1968, Cyprus; Greece; Turkey, United States Government Printing Office, vol. XVI, Washington, 2000, 1589 p.
14. Foreign relations of the United States diplomatic paper, 1969–1976, Greece; Cyprus; Turkey, vol. XXX, Washington, 2007, 1747 p.
15. The Armenians, by David Marshall Lang, Christopher J. Walker, London: Minority Rights Group, MRG Report No. 32, fifth edition, 1987, 28 p., http://minorityrights.org/wp-content/uploads/old-site-downloads/download-871-Download-full-report.pdf
16. The Armenian Question Today. International Documents, 1983-1987, L A, 1988, 78 p.

ԳՐՔԵՐ ԵՎ ՀՈԴՎԱԾՆԵՐ

ա. Գրքեր

1. Ա.Հարոնյան Գ., Մեծ երազի ճամբուն վրայ ..., Պէյրութ, «Ատլաս», 1964, 224 էջ:
2. Ա.Հարոնյան Գ., Խոհեր հիսնամյակի ավարտին (1915-1965), Պեյրութ, «Ատլաս», 1966, 348 էջ:
3. Անդրեասյան Ա., Սփյուռքը և հայրենիքը, Պէյրութ, «Զարթօնք», 1962, 261 էջ:
4. Անդրեասյան Ա., Հայկական դատի նոր հանգրվանը, Պէյրութ, «Զարթօնք», 1967, 100 էջ:
5. Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, ԲԴ, 1997, 433 էջ:
6. Բարսեղյան Լ., Ամերիկայի Միացյալ Նահանգները, Հայոց ցեղասպանության դատապարտումը և թուրքական հակազդեցությունը, Երևան, Հայոց ցեղասպանության ինստիտուտի հրատ., 2001, 113 էջ:
7. Բարսեղյան Լ., Հայոց ցեղասպանության հրապարակայնորեն դատապարտման և ճանաչման ժամանակագրություն (1915-2000 թթ.), Երևան, Հայոց ցեղասպանության ինստիտուտի հրատ., 2001, 77 էջ:
8. Բարսեղյան Լ., Միջազգային հանրությունը դատապարտում է Հայոց ցեղասպանությունը, Երևան, Հայոց ցեղասպանության ինստիտուտի հրատ., 1998, 28 էջ:
9. Բարսեղյան Լ., Տարեգրություն Հայոց ցեղասպանության պաշտոնական դատապարտման և ճանաչման (1915-2003 թթ.), Երևան, Հայոց ցեղասպանության ինստիտուտի հրատ., 2004, 114 էջ:
10. Դալլաքյան Կ., Հայ սփյուռքի պատմություն, Երևան, «Զանգակ-97», 2004, 288 էջ:
11. Դարբինյան Ա., Հայ աղատագրական չարժման օրերն, Փարիզ, «Արաքս», 1947, 640 էջ:
12. Զաքարեան Յ., Կարս (պատմա-աշխարհագրական տեսութիւն), Երուսաղէմ, «Սրբոց Յակոբեանց», 1946, 48 էջ:

13. Էլճանեան Ա., Հայ կաթոլիկ Պատրիարքարանի դիրքը Խորհրդային Հայաստանին, ներդաղթին և հայկական դատին հանդեպ, Պէյրութ, «Կայծ», 1946, 49 էջ:
14. Թոփուզեան Հ., Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմութիւն (1841–1946), եր., «Խորհրդային դիտութիւն», 1986, 371 էջ:
15. Խուբչուդեան Լ., Հայկական հարցը, Երևան, ԵՊՀ հրատ., 1995, 100 էջ:
16. Կիրակոսյան Ա., Ակնարկներ Հայկական հարցի և Եղեռնի միջազգային ճանաչման պատմության, Երևան, Տիգրան Մեծ, 2006, 264 էջ:
17. Կիրակոսյան Ա., Հայկական հարցը և Հայոց ցեղասպանությունը, Երևան, «Նորավանք», 2006, 103 էջ:
18. Կիրակոսյան Զ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առջև, Գիրք երկրորդ, Երևան, «Հայաստան» հրատ., 1983, 464 էջ:
19. Կյուրեղյան Լ., Կարս և Արդահան, պատմական հավատիք և հայրենավանդ իրավունք, Վենետիկ, «Բազմավեպ», 1949, 28 էջ:
20. Հայ համայնքն ԱՄՆ-ում, Երևան, «Նորավանք», 2010, 220 էջ:
21. «Հայկական հարց» հանրագիտարան, եր., 1996, 428 էջ:
22. Հարությունյան Ա., Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցը և Երկրորդ Հանրապետությունը, Երևան, «Նորավանք», 2015, 164 էջ:
23. Հովհաննիսյան Ա., Հայերի ուծեզրկման գործընթացը Օսմանյան կայսրությունում և քեմալական Թուրքիայում, Երևան, «Գիտություն», 2016, 150 էջ:
24. Հովնանյան Ռ., Գալտնի բանակ. պատմություն կերտողները, Երևան, Ծորտունա-Համշեն տպ., 2015, 144 էջ:
25. Մալխասյան Մ., Հայերն աշխարհում, Երևան, Ա.Հ., 2007, 144 էջ:
26. Մխիթարյան Ս., Հայկական հարցը արխիվային պրպտումների վերլուծումներով, Փարիզ, «Պ. Էլեկյան», 1968, 159 էջ:
27. Մսըրլյան Զ., Մսըրլյան Զ., ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և հայկական հարցը (1900–2009), Պէյրութ, «Սիփան» հրատ., 2010, 260 էջ:
28. Մսըրլյան Զ., Հայկական հարցի մասին, Պէյրութ, «Մշակ», 1978, 286 էջ:

29. Մսըրլեան Զ., Հայկական հարցի հոլովոյթը 1939-2010, Պէյրութ, «Սիփան» Հրատ., 2011, 352 էջ:
30. Զորմիսյան Լ., Կուսակցությունները, Պէյրութ, «Մշակ», 1965, 308 էջ:
31. Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն. Ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876- 1920 թթ.), Երևան, «Լուսակն» Հրատ., 2009, 248 էջ:
32. Սերոբյան Մ., Մեր պայքարը հայ ազատագրության ուղիով, Կահիրե, «Նոր աստղ», 1948, 383 էջ:
33. Սերոբյան Մ., Հայաստանի անկախության առթիվ, Կահիրե, «Նոր աստղ», 1950, 119 էջ:
34. Սիմոնյան Հր., Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ), Երևան, ԵՊՀ Հրատ., 2009, 436 էջ:
35. Վրթանես Զ., Հայկական հարցը այսօր, Նյու Յորք, «Ամերիկահայ ազգային խորհուրդ», 1945, 189 էջ:
36. Օգնայեան Ս., Հայաստանի ազատագրութեան հայ գաղտնի բանակ (ԱՍԱԼԱ). Վաւերագրութիւն գինեալ և հրատարակչական գործունէաթեան, Երևան, Նուշիկյան ասոցիացիա, 2015, 152 էջ:
37. Гасанлы Дж., СССР-Турция: от нейтралитета к холодной войне. 1939–1953, М., «Центр Пропаганды», 2008, 680 с.
38. Российско-турецкие отношения: история, современное состояние и перспективы, М., «Политиздат», 2003, 197 с.
39. Atamian S., The Armenian Community, New York, Philosouical, 1955, 479 p.
40. Dadrian V., The History of the Armenian Genocide. Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus, Providence, R.I., Berghahn Books, 1995, 480 p.
41. Mendelssohn P., The Nuremberg Documents. Some aspects of German war policy, 1939–1945, London, Allen & Unwin, 1946, 423 p.
42. Tarkmanian H., The Truth About the Massacres and Deportations of the Armenian Population of the Ottoman Empire 1915-1922, Beirut, National Committee of Lebanon, 1975, 79 p.
43. Toriguian Sh., The Armenian Question and International Law, University of La Verne Press, California, 1988, 189 p.
44. Truman H., Memories by Harry Truman, year of decision, New York, Doubleday & Co, 1955, 1190 p.

45. Vertanes Ch., Armenia Reborn, New York, Armenian National Council of America, 1947, 216 p.
46. Walker Ch., Armenia: The Survival of a Nation, London, St. Martin's Press, 1980, 446 p.
47. Zubok V., Pleshakov C., Inside the Kremlins Cold War. From Stalin to Khrushchev. Harvard University Press, 1996, 276 p.
48. Arcayürek C., Şeytan Üçgeninde Türkiye, Ankara, Bilgi Yayınevi, 1987, 386 s.
49. Deliorman A., Türklere Karşı Ermeni Komitecileri, İstanbul, Boğazıçı basım ve yayinevi, 1973, 335 s.
50. Kantarcı Ş., Amerika Birleşik Devletleri'nde Ermeniler ve Ermeni Lobisi, İstanbul, Aktüel Yay, 2004, 416 s.

բ. Հոդվածներ

1. Եղանյան Ա., Հայաստանի Հանրապետության և ամերիկահայ լոբբիստական կառույցների համագործակցության ռազմավարական գնահատումները/ «Աշխատանքային տետրեր», ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվ. ազգային ռազմ. հետազոտ. ինստ. «Հայկական բանակ» ռազմ. հանդեսի հավելված, 1 և 2 (13-14), 2010, էջ 115-126:
2. Եղեռնի 55 –ամյակը. - «Երիտասարդ հայ»,Պեյրութ, թիվ. 10, մայիսի 2, 1970, էջ 13-16:
3. Թորիկյան Շ., Հայկական ցեղասպանությունը և միջազգային իրավունքը.- «Պատմա-բանասիրական հանդես», 1990, № 2, էջ 3-13:
4. Կիրակոսյան Ա., Ժողովրդների մշտական ատյանը Հայերի ցեղասպանության մասին.- «Ակունք», 1991, հ. 5-6, էջ 8-11:
5. Կիրակոսյան Ա., Սաֆրաստյան Ռ., Եվրոպական Խորհրդարանի բանաձևը «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին». - Բանբեր Հայաստանի Արխիվների, 1988, №2, էջ 54-58:
6. Կոչ հայ ժողովրդին.- «Երիտասարդ հայ», թիւ 98, 28 սեպտեմբեր, 1974, էջ 5-7:
7. Հայ համալսարանականների ցույցը «Թրքական չաքաթին» դեմ. - «Երիտասարդ հայ», Պեյրութ, թիվ. 9, ապրիլ 18, 1970, էջ 25:

8. Հայկական ցեղասպանութիւնը ՄԱԿ-ի պաշտօնական արձանագրութիւններուն մէջ. - «Երիտասարդ Հայ», Պէյրութ, թիվ. 88, դեկտեմբերի 1, 1973, էջ 4-15:
9. Միրզոյան Ա., Հայոց ցեղասպանության ճանաչումն ԱՄՆ նահանգային իշխանությունների կողմից. - «Հայաստան» (Հատուկ թողարկում), Երևան, 2005, № 2, էջ 50-58:
10. Մսըրլեան Զ., 1978-1979 Հայկական Դատի Հետապնդման ճամբուն վրայ.- «Զարթօնք», Ամանորի բացառիկ, Պէյրութ, դեկտեմբերի 31, 1979, էջ 9-13:
11. Մսըրլյան Զ., Արեւմտահայ բռնագրաված հողերու հարցը, 1921-1971. - «Հայկազյան հայագիտական հանդես», Պէյրութ, 1971, էջ 17-41:
12. Սփյուռք. - «Երիտասարդ Հայ», Պէյրութ, թիվ. 9, ապրիլ 18, 1970, էջ 3-6:
13. Վիրաբյան Ա., Հանդիպումներ խորհրդային պետության ղեկավարների հետ. - ԲՀԱ, 2003, էջ 156-173:
14. Տէմիճեան Ա., Տեսակցութիւն թուրք արտաքին գործոց նախարարին հետ, Հայ-թուրքական փոխյարաբերութեան չուրջ, Արարատ, Ամանորի բացառիկ, Հունվարի 1, 1995, էջ 11-15:
15. Օգնայեան Ս., Հայաստանի աղատագրութեան Հայ գաղտնի բանակի գրահրատարակութիւնը. - Սփյուռք, ԽՌ տարի, թիվ 95, Հունվար-դեկտեմբեր, 2010, էջ 3-9:
16. Փամպուքեան Ե., Շաւարշ Թորիկեան (Հայ Դատի Անխոնջ Յառաջապահը), Դրոշակ, ԻԲ տարի, թիւ 14, 23 Հոկտեմբեր, 1991, էջ 13-16:
17. Балиев А., Мечта о «Великой Армении». В 1945–1948 гг. Сталин готовился отобрать у Турции армянские земли. – Аналитический интернет-журнал РПМонитор, http://www.rpmonitor.ru/ru/detail_m.php?ID=9766, 2008.
18. Киракосян А., Сафрастян Р., Геноцид армян и османские архивы, Коммунист, 18 апреля, 1990.
19. Корхмазян Р., Территориальные проблемы советско-турецких отношений на Берлинской (Потсдамской) конференции руководителей трех союзных держав – СССР, США и Великобри-

тании. - Страны и народы Ближнего и Среднего Востока, Ереван, 1996, № 16, с. 20-33.
20. Dadrian V., The Events of April 24 in Moscow–How They Happened and Under What Circumstances, Armenian Review, 1967, Vol. 20, No. 2, pp. 5-19.
21. Molina S., Thousands commemorate Armenian genocide at site of Montebello monument, Whittier Daily News, 24.04.2012, http://www.whittierdailynews.com/general-news/20120424/thousands-commemorate-armenian

գ. Պարբերականներ

1. «Ազատ օր» (Աթենք), 1975, 1978:
2. «Ազգային մշակույթ» (Բեյրութ), 1984:
3. «Ազդակ» (Բեյրութ), 1965, 1967, 1970, 1972, 1973, 1974, 1976, 1977, 1985, 1987, 1989, 1993, 2000:
4. «Ազդակ շաբաթօրյակ-դրոշակ», (Բեյրութ), 1974, 1975:
5. «Այգ» (Բեյրութ), 1967:
6. «Աշխարհ» (Փարիզ), 1979, 1984:
7. «Ապագա» (Մարսել), 1980:
8. «Արարատ» (Բեյրութ), 1984, 1985, 1986, 1987:
9. «Արևելք Տարեգիրք» (Հալեպ), 1948:
10. «Արև» (Կահիրե), 1967, 1981,
11. «Երևան» (Աթենք), 1987:
12. «Զարթօնք» (Բեյրութ), 1964, 1965, 1967, 1970, 1973, 1974, 1977, 1979, 1983, 1984, 1985, 1986, 1987, 2005:
13. «Ժամանակ» (Ստամբուլ), 1967:
14. «Ժողովուրդ» (Փարիզ), 1945:
15. ժողովրդի ձայն (Բեյրութ), 1945:
16. «Լրաբեր» (Նյու Յորք), 1982, 1983, 1986:
17. «Հայրենիք» (Բոստոն), 1967, 1980:
18. «Հառաջ» (Փարիզ), 1946, 1967, 1981, 1983:
19. «Մարմարա» (Ստամբուլ), 1967, 1980:
20. «Նոր աշխարհ» (Աթենք), 1987:
21. «Շարժում» (Բուենոս Այրես), 1982:
22. «Պայքար» (Բոստոն), 1967:
23. «Սարդարապատ» (Բուենոս Այրես), 1987:

24. «Սովետական Հայաստան» (Երևան), 1945:
25. «Известия» (Москва), 1945, 1946.
26. «Правда» (Москва), 1945, 1964, 1965, 1967, 1985.
27. «International Herald Tribune» (Paris), 1975.
28. «Newsweek» (New York), 1967.
29. «The Armenian Weekly» (Watertown), 1973.
30. «The Boston Globe» (Boston), 1985.
31. «The Economist» (London), 1945.
32. «The New York Times» (New York), 1945, 1946, 1965, 1967, 1969, 1974, 1975, 1978, 1981, 1984, 1985, 1988.
33. «Wall Street Journal» (New York), 1984.
34. «Le Figaro» (Paris), 1981.
35. «Le Monde» (Paris), 1984.
36. «Paris Match» (Paris), 1981.
37. «Cumhuriyet» (İstanbul), 1965, 1970, 1985.
38. «Hürriyet» (İstanbul), 1974. 1965, 1980, 1985.
39. «Milliyet» (İstanbul), 1965, 1966, 1967, 1970, 1973, 1978, 1982, 1983, 1984,
40. «Yeni İstanbul» (İstanbul), 1967.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՏՔ 5

ԳԼՈՒԽ I.
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ - ԹՈՒՐՔԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԸ (1940-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ)... 13

ԳԼՈՒԽ II.
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 50-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1960-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 45

ԳԼՈՒԽ III.
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1970-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 81

ԳԼՈՒԽ IV.
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 1980- ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 113

ԱՄՓՈՓՈՒՄ 146

РЕЗЮМЕ 149

SUMMARY 151

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 153

ՔՐԻՍՏԻՆԵ ՖԵԼԻՔՍԻ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ՍՓՅՈՒՌԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՆՉԵՎ ԽՍՀՄ ՓԼՈՒՋՈՒՄԸ

КРИСТИНЕ ФЕЛИКСОВНА МЕЛКОНЯН

АРМЯНСКИЙ ВОПРОС И АРМЯНСКАЯ ДИАСПОРА ДО РАСПАДА СССР

CHRISTINE F. MELKONYAN

THE ARMENIAN QUESTION AND THE ARMENIAN DIASPORA BEFORE THE COLLAPSE OF THE USSR

Խմբագիր՝ Ն.Ա. Խաչատրյան

Ստորագրված է տպագրության՝ 20.03.2018
Թուղթը՝ «օֆսեթ»: Տպագրությունը՝ օֆսեթ, Ձևաչափ՝ (60x84) 1/16:
Շարվածքը՝ համակարգչային:
Տառատեսակը՝ Grqee Nor_U: 10.5 տպ. մամ.:
Պատվեր՝ 103: Տպաքանակ՝ 200

Հայաստանի Ազգային Պոլիտեխնիկական Համալսարանի տպարան
Երևան, Տերյան 105
Հեռ.՝ 52-03-56

Типография Национального Политехнического Университета Армении
Ереван, ул. Теряна 105 Тел.: 52-03-56

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0514411

F
A103652











